ՎԱՉԳԵՆ Ա ԿԱԹՈՂԻԿՈՍ

ԳԱԼԻՔԻ ՏԵՍԻԼՔՈՎ

ԳԻՐՔ ԵՐԿՐՈՐԴ

244
Վ-13

244
Կ-13

Տ. Տ. ՎԱԶԳԵՆ Ա
ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

ԳԱԼԻՔԻ ՏԵՍԻԼՔՈՎ

ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ, ՀՈԴՎԱԾՆԵՐ

ԳԻՐՔ ԵՐԿՐՈՐԴ

ՄԱՅՐ ԱԹՈՌ Ս. ԷՋՄԻԱԾԻՆ
1998

КАТОЛИКОС ВСЕХ АРМЯН
ВАЗГЕН I

В ПРЕДВИДЕНИИ БУДУЩЕГО

ИССЛЕДОВАНИЯ, СТАТЬИ

КНИГА ВТОРАЯ

CATHOLICOS OF ALL ARMENIANS
VASKEN I

8273

VISION OF THE FUTURE

STUDIES, ARTICLES

PART II

Նվիրվում է Վեհափառ Հայրապետի
ծննդյան ութսունհինգամյակին

Посвящается 85-летию со дня
рождения Его Святейшества

Dedicated to the 85-th anniversary
of His Holiness

ԵՐԿՈՒ ԽՈՍՔ

Մայր Աթոռ Ս. Էջմիածնի Գերագույն Հոգևոր Խորհուրդս հաճույքն ունի ընթերցողին ներկայացնելու Ամենայն Հայոց Կաթողիկոս Տ. Տ. ՎԱԶԳԵՆ Ա-ի «Գալիքի տեսիլքով» ընդհանուր խորագիրը կրող հոդվածների ժողովածուի սույն՝ երկրորդ հատորը: Այն 1988 թ. Մայր Աթոռ Ս. Էջմիածնում հրատարակված՝ վերոհիշյալ անվանումը կրող ժողովածուի շարունակությունն է:

Ժողովածուի մեջ ընդգրկված են Վեհափառ Հայրապետի Բուխարեստում հրատարակած հոդվածները «Հերկ» ամսագրում և այլ ռումինահայ թերթերում՝ Կ. Պալճյան, Լևոն, Կ. Պ., Պ. ստորագրություններով:

Գերագույն Հոգևոր Խորհուրդս հույս է հայտնում, որ Հայոց Հայրապետի շուրջ վաթսուն տարի առաջ մտավոր աշխատանքի արդյունքը՝ «Գալիքի տեսիլքով» խորագիրը կրող երկհատոր ժողովածուն կարող է օգտակար լինել ինչպես Մայր Հայրենիքի, այնպես էլ գաղթաշխարհի հայության մտավոր-հասարակական կյանքն ուսումնասիրողներին:

ԳԵՐԱԳՈՒՅՆ ՀՈԳԵՎՈՐ ԽՈՐՀՈՒՐԴ

ԲՍԱՆ ՏԱՐԻ ՀԵՏՈ

Հայաստանի պարտված Հանրապետության ու կորսված անկախության քսանամյակը կը լրանա այս տարի:

Պատմա-քաղաքական ծանոթ դեպքերու հետևանքով ու դժոխային պայմաններու մեջ, 1918 թվականի մայիսի 28-ին, Ռուսահայաստանը ինքզինքը հռչակեց հայ անկախ պետություն: Մայիսի 28-ի նախօրյակին հայ բանակը իր ուժը ցույց էր տվեր թշնամիին, և հայ զինվորին պողպատե բազուկին շնորհիվ հայ ժողովուրդը իր կամքը պարտադրեր էր թուրքին: Սարդարապատի, Ղարաքիլիսայի ու Բաշ-Ապարանի հայ հերոսական դիմադրություններեն հետո, Թուրքիա ստիպվեցավ ստորագրել հաշտությունը ու ճանչնալ հայերու պետությունը, դարեր շարունակ այդ նույն հայերը իբրև ճորտեր ու ստրուկներ հպատակեցուցած ըլլալե հետո:

Դարավոր ուժեղ թշնամին, վերջապես, կուգար հայուն ըսել՝ «հարգանք քեզ»:

Հայաստանի Հանրապետությունը տևեց երկու և կես տարի, մինչև 1920-ի նոյեմբերը: Իրմե անհամեմատ ուժեղ պետություններ զայն մեռցուցին: Թուրքը, հիմա զորացած, ալ չէր հանդուրժեր հայերու պետությունը ու կը սպառնար բնաջինջ ընել նաև անոր բնակչությունը: Իսկ համայնավար Ռուսիան, փոխանակ օգնելու և փրկելու հայ ընկերվարական պետությունը, եկավ ու պարզապես գրավեց զայն, հայկական մեռնող անկախության վրայեն ձեռք երկարելով ֆաշական Թուրքիո: Իսկ անդին, հայերու «մեծ» դաշնակիցները, օրվան ախոյանները, Անգլիա և Ֆրանսա կը մրցեին իրարու հետ, սիրաշահելու համար... Թուրքիան:

Այսօր վեր կենալ ու հայհոյել թուրքին, որովհետև հարձակեցավ Հայաստանի վրա, հայհոյել ռուսին, որ չպաշտպանեց Հայաստանի անկախ Հանրապետությունը, հայհոյել դաշնակիցներուն, որովհետև օգնության չհասան հայերուն, անիծել մեր ճակատագիրը կամ հանցավորներ ու պատասխանատուներ փնտրել հայ ժողովրդի ղեկավարներուն մեջ, առնվազն միամիտի գործ է: Պետք չէ կորսնցնենք իրատեսության զգացումը:

Թուրքը հարձակեցավ, որովհետև մեր դարավոր թշնամին էր և կուզեր վերապրող հայության դիակներուն վրայեն իր ճամփան բանալ դեպի Ադրբեջան ու թուրանական ժողովուրդներ: Խորհրդային Ռուսաստանը չօգնեց հայ հանրապետության, որովհետև ստիպված էր թուրքին բարեկամությունը պահելու. ան կըրցավ մնացած հայության միայն ֆիզիկական գոյությունը փրկել՝ գրավելով ու զոհելով հայ պետության անկախությունը: Անգլիա, Ֆրանսա չմիջամտեցին ու լռեցին, որովհետև շահ ունեին Թուրքիան սիրաշահելու, տնտեսական և քաղաքական նկատումներով:

Այս պայմաններու մեջ միայն բիրտ ուժը կրնար փրկել հայ պետությունը: Իսկ Հայաստանը այդ ուժը չուներ:

Ամեն բան պարզ է ու բացատրելի: Իմաստ չունին ոչ լացն ու կոծը, ոչ միամիտ վրդովումները, ապառնալիքները, ոչ ալ ճակատագրապաշտ բացականչությունները: Իմաստ չունին և անպարկեշտ են նաև այն բոլոր դատումները, որոնք կը ձգտին անկախության խորտակման պատճառները վերագրել հայ քաղաքական մարդոց: Հայ քաղաքական մարդիկ կրնան սխալներ գործած ըլլալ անփորձությանց հետևանքով: Անոնք իրենց կարելին ըրած են սակայն: Ու վատություն պիտի ըլլար ամբաստանել մարդիկ միայն անոր համար, որ իրենց գործը չհաջողեցավ, երբ լավ գիտենք, թե այդ անհաջողության պատճառները արտաքին եղած են: Շատ մը ժողովուրդներ անկախություն ստացան կամ միացյալ դարձան ոչ որովհետև ավելի իմաստուն առաջնորդներ ունեցան կամ ավելի զոհաբերության և ուժի ապացույցներ տվին, այլ իրենց իդեալները իրականացուցին, որովհետև իրենց ազգային շահերը և հաղթող մեծ պետություններու շահերը զուգադիպեցան:

Իսկ հայ ժողովուրդի պարագային, ստեղծված աննախատեսելի պայմաններուն մեջ, շահերու այդ զուգադիպումը տեղի չունեցավ:

Ու հայկական անկախ պետությունը չդիմացավ:

Մայիս 28-ի անկախության զուտ քաղաքական իրական արժեքն ալ, բնական է, կորսնցուց իր ուժը Հայաստանի համար: Հայաստանի որևէ իշխանություն, որ անկախ չէ, չի կրնար ու հետ այսու ալ պիտի չկրնա պաշտոնապես ոգեկոչել մայիս 28-ը:

Սակայն մայիս 28-ի արժեքը հոս չի դադրիր, այլ ասկե կը սկսի: Մայիս 28-ի նման օրերու իմաստը և խորհուրդը կը գլեն ու կանցնին զուտ քաղաքական-դիվանագիտականի սահմանները: Մայիս 28-ը իր ազգային բարոյական արժեքով է, որ այսօր ինքզինքը մեզի կը հարկադրե:

Մայիս 28-ի ստեղծման պատմութենեն մեզի կը մնա երկու բան: Նախ՝ հայ ժողովուրդի հերոսական ճիգի պատմական իրողությունը, որով ան իր սեփական ուժով ապահովեց և փրկեց իր կյանքը, իր հայրենիքն ու իր իրավունքը: Ասիկա մեր ազգային մեծ հպարտություններեն մին է ու մեր պատմության մեջ պիտի մնա որպես անխախտ վեմ մը, ուր արձանագրված է հայ ժողովուրդի ուժի, հերոսության ու հաղթանակի պատմությունը:

Երկրորդ արժեքը որ կը մնա մայիս 28-են, ինքը անկախության գաղափարն է: Թե այդ անկախությունը անապասելիորեն հռչակվեցավ, խռովահույզ կյանք մը ապրեցավ ու միայն երկուքուկես տարի կրցավ դիմանալ, ոչինչով չեն ազդեր անկախության գաղափարին վրա: Բավ է, որ այդ պատմական դեպքը պահ մը դրապես իրականացավ: Այդ պահը ժամանակի չափով չի չափվիր: Անոր ազգային-բարոյական արժեքն ու խորհուրդը կը մնան ամբողջական և հավասար են դարի մը, հավասար են ամբողջ պատմության մը: Պահեր կան, որոնք ազգեր կը ստեղծեն իրենցմե վերջ: 1918-են ասդին մայիս 28-ը միշտ ներկա է հայ ժողովուրդի մեջ, նաև անոնց մեջ, որոնք չեն տոներ զայն, նաև այսօրվան Հայաստանին մեջ:

Պատմական նման դեպքերը չեն մեռնիր: Պատմությունը ավելի ուժեղ է, քան մարդիկ, ու խորհուրդը կապրի ինքզինքը ուրիշ անունի տակ պահած: Ճիշտ է, ժամանակաշրջաններ կըրնան գալ, երբ պայմանները չեն թույլատրեր, որ գաղափարը լրիվ իրականանա, սակայն անմիջապես, երբ պայմանները փոխվին ու նպաստավոր կերպով դասավորվին, այն ատեն մարդիկ կը հասկնան գաղափարին և խորհուրդ դարձած պատմության ներկայությունը և ուժը:

Բազմաթիվ են նման օրինակներ ժողովուրդներու կյանքին մեջ: Օրինակ՝ Տրանսիլվանիոն ռումենները իրենց՝ մոտ հազար տարվան ստրկության շրջանին մեջ միայն երկու-երեք ամսվան համար ազատագրվեցան ու միացան մայր երկրին, Միհայ Վիդիազուի օրով: Այս երեք ամիսներու անկախության փաստը, սակայն, գաղափար դարձած, երեք դար շարունակ կենդանի մնաց ժողովուրդի հոգիին մեջ: Եվ մեծ պատերազմեն առաջ Ռումանիոն պաշտոնական վարիչները, արտաքին-քաղաքական աննպաստ պայմաններու տակ, հրապարակավ կը հայտարարեին, թե ռումեն ժողովուրդը որևէ սահմանային խնդիր չունի Ավստրո-Հունգարիոն հետ, թե իրենք կը մերժեն ընդունիլ Տրանսիլվանիոն ռումեններու ազատագրման հարցը: Բայց մյուս կողմեն, նույն վարիչները անուղղակի միջոցներով ժողովուրդին մեջ վառ կը պահեին Տրանսիլվանիոն ազատագրման ու միացման իդեալը:

Իսկ երբ նոր պայմաններ ստեղծվեցան, այդ նույն մարդիկ

պատերազմ հոչակեցին՝ հանուն Տրանսիլվանիոյ ռումեններու ազատագրման:

Պայման է ուրեմն, որ մեր վիճակին մեջ գտնվող ժողովուրդը իր պատմության ոգիովը ու խորհուրդովը հոգեպես զինված մնա, քաղաքական ինչ պայմաններու մեջ ալ գտնվի: Այսօր մեր հայրենիքը ծանր օրեր կապրի և գուցե դեռ երկար ատեն ալ ան չկարենա հասնիլ մայիս 28-ի խորհուրդի իրականացման, սակայն այնքան ատեն, որ հոն կա ու կաճի մեր ժողովուրդը, ինչքան ատեն կը շինե ու կը ստեղծագործե և կը պահե իր պատմության գիտակցությունը, մենք չենք կրնար չհավատալ, թե այդ ներկան մեծագույն գրավականը չէ վաղվանին: Ահա թե ինչու համար այսօր, երբ կը վերհիշենք կորսված անկախության պատմությունը, լեցուն հավատքով ու լավատեսությունով մեր ազգի և՛ ներկայի, և՛ ապագայի վրա, կուզենք անգամ մը ևս գոչել.—

Թող ապրի՛ մեր Հայաստանը.

Թող մնա՛ մայիսի 28-ի խորհուրդը՝ որպես անոր ապագայի աստղը:

Պ.

Բուխարեստ, «Հերկ», 1938, մայիս

ՈՒՐ ԵՍ ԼՈՒՍԱՎՈՐԻՉ

«Վերստին մեր ժանիգոտ ճակատագրի առաջ ենք կանգնած ճակատ առ ճակատ»:

Լենինականի մեծ երկրաշարժի առթիվ Ա. Ահարոնյանի այս խոսքերը կը հիշենք ամէն անգամ որ Հայաստանեն լուրը կառնենք նոր «մերկացումներուն»:

Ճիշտ է թե երևույթը նոր չէ: Խ. Հայաստանի կյանքի սկիզբեն իսկ, բազմաթիվ եղած են հեռացումները, բանտարկությունները, աքսորները ու նույնիսկ մահապատիժները, որոնք սակայն տեսակետե մը բացատրելի—ոչ արդարանալի— կըլլային:

Արդարև անոնցմե գրեթե բոլորը գոնե չափով մը քաղաքական հանգամանք ունեին:

Օրվան ռեժիմը չէր հանդուրժեր, որ «հին»են որևէ հետք մնա: Համայնավար տեսակետեն նույնպես բացատրելի էր այն խաչակրությունը զոր սկսան հոն հայ եկեղեցիին դեմ և որուն արդյունքը հայ հոգևոր կյանքի մահը եղավ:

Քաղաքական, տնտեսական-ընկերային և կրոնական ասպարեզներեն անդին անցան սակայն օրվան իշխանության ոտընձգությունները:

Քաղաքական մարդոց որոշումով փոփոխության ենթարկվեցավ լեզվի ուղղագրությունը, Հայոց պատմությունը ու անոր ավանդելու ձևը և գլխատվեցավ մեր անցյալի գրականությունը:

Այս բոլորը եղան: Մնացած էր սակայն հայ հոգիին վերջին կռվանը, արվեստը, մասնավորապես նոր սաղմնավորվող բանաստեղծությունը, ուր նոր ուժեր ի հայտ կու գային, շատերը տաղանդավոր:

Սկսեր էին մեզ հասնիլ նմուշներ Ալազանեն, Մահարիեն, Չարենցեն, Սարյանեն, Բակունցեն, Նորենցեն և դեռ ուրիշներեն, մեր առջև բանալով հույսի ու հավատքի նոր հորիզոններ:

Ահա սակայն, այդ հորիզոններու լույսն ալ կը մարի:

Մենք այս դառն իրողության կը մոտենանք առանց որևէ քաղաքական դիտումի:

Եվ ճիշտ ատոր համար՝ Խ. Հայաստանի մեջ ազգային խղճի ու ոգիի դեմ ցարդ կատարված մահափորձերեն ամենեն մտահոգիչը ու ամենեն հուսահատեցուցիչը կը նկատենք հայ բանաստեղծության ու արվեստին դադարումը:

Մեզի համար հայ բանաստեղծությունը վերջին, սակայն ամենեն թանկագին գրականն էր հայ ոգիի կենդանության, հայ ոգիի ստեղծագործ գոյության:

Արվեստը, հայ ցեղի ստեղծագործ ուժերու դարավոր ասպարեզը, մանավանդ իր քաղաքական ստրկության շրջաններուն, արվեստը, հայ հոգիի բոլոր գեղեցկություններուն և արժեքներուն մարմնացումը՝ արվեստը, հայ ազգային դիմագծի ու ոգիի գոյության վերջին հնարավորությունը, արվեստը որուն շնորհիվ հայը **ինքզինքը** պահեց—և պահեց որպէս մշակութային ու քաղաքակրթիչ արժեք—բազմաթիվ բարբարոս արշավանքներու ընթացքին, բազմաթիվ օտար լուծերու տակ, ու ցարերու ու սուլթաններու օրով, այդ արվեստը այսօր մեր հայրենիքի մեջ ազատ չէ ու կախում ունի Կրեմլինի գրչի շարժումեն:

Իսկ այդ արվեստի ամենամեծ ծառաները կյանքեն քշված կամ բանտարկված են, իսկ անոնց գրականությունը պարզապես խաչված:

Այս կը նշանակե ուղղակի սպաննել հայ բանաստեղծությունը ու արվեստը և անոր հետ մեկտեղ մարել հայ հոգիին վերջին ճրագը:

Ի տես այս նոր զուլումին, սահմռկած զգացումներով, ո՛չ ժամանակ, ո՛չ ալ սիրտ ունինք այլևս հարցնելու թէ ինչո՛ւ համար այս բոլորը, որո՞նք են պատասխանատուները և ո՞ւր են թագնված ոճրագործները:

Իր հոգին, իր կյանքին իմաստը կորսնցուցած մարդու մը պես, կանգնած մեր կյանքի խորխորատին առաջ կաղաղակենք. **հա՛յ հոգի, ո՞ւր կը տանին քեզ, հայ ոգի, ո՞ւր կուզեն թաղել քեզ:**

Ո՞ւր է մեր «Լուսավորչի անմար կանթեղ»ը, որ

«Կախ է ընկած առանց պարան
Արագածի կատարին,
Ու սեղանից հրսկայական
Լույս է տալիս աշխարհին»:

Դեռ հավատա՞նք արդյոք թե՝

«Ոչ մարդկային ձեռ կը հասնի
Էն անավոր բարձունքին,
Եվ ոչ քամին կը հանգցնի՝
Վիշապ-քամին անագին»:

ԼԵՎՈՆ

Բուխարեստ, «Հերկ», 1937, օգոստոս-սեպտեմբեր

ԻՆՉԻ ԿԸ ՀԱՎԱՏԱՆՔ

Ժամանակ պիտի գա, երբ մարդիկ պիտի ափսոսան, որ չապրեցան մեր դարը ու երանի պիտի տան մեզի, որ զայն ապրեցանք:

Մանավանդ ետպատերազմյան շրջանը անշուշտ որ պատմության ամենեն հետաքրքրականներեն մին պիտի մնա: Այս տարիներուն ընթացքին է, որ տեղի կունենա փլուզումը այն կառուցվածքին, որուն համար մտածող մարդկությունը մեկ քանի դար շարունակ տքներ էր:

Ազատականություն, ժողովրդապետություն, ընկերվարություն, սոցիալ դեմոկրատիզմ, սենտիմենտալիզմ, համայնավարություն և դեռ ուրիշ նման գաղափարներու հոսանքներ կողք կողքի կամ դեմ առ դեմ կը զարգանային, որպեսզի մարդկային ընկերության հին դրությունները խորտակվին, կյանքը վերանորոգվի, կառուցվի նորը՝ ավելի գեղեցիկ, ավելի արդար, ավելի «մարդկային»:

Նոր շենքը կը թվեր որ սկսած է բարձրանալ ու քաղաքակրթությունը հառաջադիմել: Եվրոպան կապրեր լավատեսության, բարգավաճման ու հարատև վերելքի զգացումի օրեր:

Ահա սակայն մեծ պատերազմը:

Դիմակները ընկան վար: Քաղաքակրթությունը նետվեցավ մեկ կողմ: Մարդուն մեջ արթնցավ նախամարդը ու մեռավ խիղճը: Մեռան նաև գեղեցիկ հույսերը, մեռավ լավատեսությունը:

Նախապատերազմյան սերունդները ապրեր էին պատրանքի մը մեջ, զոր պատերազմը եկավ փարատելու: Մարդիկ չէին ճանչնար ինքզինքնին, չէին ճանչնար «իրական» իրականությունը ու կորորվեին ապագայով մը, որ երազ էր, կը սնանեին մտքերով, որոնք կոչված էին առաջին իսկ ցնցումին փլչելու ու թաղելու իրենց ավերակներուն տակ այդ բոլոր մտացածին նշանաբանները:

Ու այդ ցնցումը եկավ:

Ի՞նչ մնաց հին երազներեն:

Գրեթե ոչինչ: Ժողովուրդները հրաժարեցան մտքի վերացական կառուցումներեն, ձգեցին պատերազմի դաշտին վրա ցնորքները ու վերադարձան իրենց տունը, ավելի քան երբեք իրատես: Ամեն ժողովուրդ մնաց այն հիմնական դրամագլուխով, զոր իրեն թողած էին իր պապերը, այն արժանիքներով ու հատկություններ-

րով, որոնք կը բղխեին իրենց արյունեն ու հոգեն, այն իդեալներով, որ դպրերու պատմությունը իրենց կը ձգեր որպես ճակատագիր, լավ կամ խորթ, ու մանավանդ այն հույսերով ու հավատքով, որոնք կոչված էին ժողովուրդներու պատմության մեջ ժամանակը կուանելու, ավելի երջանիկ ապագայի մը ի խնդիր:

Հայ ժողովուրդը, ավելի քան ուրիշ որևէ ժողովուրդ, եղավ հուսախաբ:

Հուսախաբ իր բարեկամներեն, հուսախաբ արդարության և ճշմարտության սկզբունքներեն, հուսախաբ քաղաքակիրթ մարդկության խղճեն և, ինչ որ անավոր է, հուսախաբ նույնիսկ ինքզինքեն: Այնքան հուսախաբ, որ կարծես այլևս որոշած է չհավատալ ոչ մեկ բանի ու ենթարկվիլ ամեն բանի՝ նկատելով «փոքրագույն չարիք»:

Հուսալքումը ու բարոյալքումը կը բնորոշեն ետպատերազմյան հայ կյանքը, թե՛ Հայաստանի և թե՛ մանավանդ գաղութներու մեջ:

Հայ ժողովուրդը ծռեց իր գլուխը, թուլցան բազուկները ու ծունկ չոքեց դաժան ճակատագրին առջև՝ ճարահատ:

Հայաստանի հանրապետության անկումը, անոր խորհրդայնացումը, Էջմիածնի մահը, ազգային խղճի դեմ հոն կատարվող մահափորձերու հանդուրժումը, հայ համայնավար ղեկավարներու հայրենասիրական ժեսթերուն որպես դավաճանական «բոռվաքացիա» մեկնաբանվելը, ապին՝ գաղութներու մեջ ծայրահեղության հասնող ներքին կռիվները, Հնչակյան կուսակցության կազմալուծումը, Ռամկավար կուսակցության անարյունությունը ու հոգեվարքը, Հ. Հ. Դաշնակցության «բան մը ընելու» անվճռականությունը, երիտասարդության հանդես չգալը, հայ հարուստ դասակարգի ազգային հրապարակեն ձեռք քաշելը ու իր պատյանին մեջ ապրիլը, մեկ խոսքով գաղութահայության ինքզինքը չկարենալ կազմակերպելու փաստը. ահա այնքան նշաններ, ընդհանրապես, մեր ազգին բարոյալքումի, ամլության ու կազմալուծման:

Այս բոլոր իրողությունները, այս բոլոր առարկայական ու ենթակայական տվյալները մեզ կը ներկայացնեն անդամահատվող, հոգեպես կազմալուծվող, իր միավորությունը կորսնցուցած, ավերակի մը վերածված հայ ժողովուրդ մը:

Բայց արդյոք նոր վերակառուցում մը պիտի սկսի՞: Ավերակ պատմութենեն մեզի մնացած արժեքները պիտի ծառայե՞ն արդյոք որպես ատաղձ հայ նոր կյանքի մը: Կեդրոնախույս այս շրջանին պիտի հաջորդե՞ արդյոք ավելի ներդաշնակ ու հավաքման շրջան մը, որ տանի հին հայ ազգը դեպի պատմական նոր ու ինքնատիպ համադրության մը:

Նոր ազգային վերածնունդ մը արդյոք պիտի գա՞:

Մենք կը հավատանք ատոր։

Հուսալքումը, բարոյալքումը ժողովուրդներու կյանքին մեջ որքան որ «բացատրելի» ըլլան, կու գան ու կերթան սերունդի մը հետ։

Մենք ուրախությամբ կուզենք հաստատել որ այդ է ու պիտի ըլլա նաև մեր պարագան։

Այս թերթին գլխավոր նպատակներեն մին պիտի ըլլա դիտել, վերլուծել հայ կյանքը ու գտնել, երևան հանել բոլոր երևույթները ու ազդանշանները, որոնք լավատեսություն ու հավատք կը ներշնչեն ու որոնք զարգանալով և՛ հայրենիքի մեջ և գաղութներու մէջ պիտի տանին մեզ դեպի միացում, դեպի նույն ազգային հունը։

Իրապես հուսալքումը, բարոյալքումը կապված են հին սերունդին հետ։

Հոչակավոր «այլևս անելիք չունինք» ըսողները, ապացուցած են ու կապացուցանեն իրենց «անելիք չունենալը»։ Երիտասարդությունը երբեք չի կրնար ըսել «անելիք չկա»։

Հայ ապագայի համար ատաղձ կառուցանել նյութական, և, մանավանդ, մտավոր ու հոգևոր իմաստով, ահա մեր օրերուն մեծ խնդիրը։

Կառուցանել՝ ցեղին հոգիեն բղխող զգացումներու թելադրանքին տակ։

Կառուցանել՝ ազգին պատմութենեն ժայթքող ոգեկան հիմունքներու վրա։

Կառուցանել՝ ժողովուրդի ինքնուրույն մշակույթի գանձեն ներշնչված ոճով։

Մենք կը հավատանք հայ ցեղի հոգիի կենսունակության։

Մենք կը հավատանք մեր պատմութենեն մեզի եկող պատգամներուն։

Մենք կը հավատանք, մանավանդ, որ բոլոր նոր հայերը պիտի հասնին միևնույն լուսավոր կետին, տեղ մը, ապագային մեջ։

Չի կրնար ըլլալ, որ հայ պատմությունը մեռնի ինչքան ատեն, որ հայ հայրենիք մը ու հայ ժողովուրդ կան։ Ուշ կամ կանուխ՝ անցողակի ու ժամանակավոր ձևերը կը մաշին, կը փոխվին, ու կը մնա տևականը, հիմնականը, անհրաժեշտը։

Հազարամյա պատմությունը վերստին կը զարթնի ամենուն հոգիներուն մեջ ու հայ ժողովուրդը իր պատմության սանձերը իր ձեռքը առած, իր սեփական մեկ հայրենիքին մեջ կը պանա դեպի իր հայկական ապագան։

Պ.

Բուխարեստ, «Հերկ», 1937, հուլիս

ՌՈՒՍԱՀԱՅ, ԹՐՔԱՀԱՅ

Մեր հին սերունդի մոտ մտայնությանց մնացորդներ կան, զորս մենք պարզապես չենք հասկնար ու պիտի մերժենք հասկընալ:

Այդ մնացորդներեն մին է Ռուսահայ Թրքահայ ատելությունը: Ավելորդ է ըսել, որ գուցե պատմականորեն բացատրելի՝ անցյալի մեջ, այսօր, սակայն, այդ ատելությունը մեզի կը ներկայանա զզվելի, ժամանակավրեպ և ամուլ հոգեբանություն մը: Այս հոգեբանությունը որ կողմը որ իր ախտավոր գլուխը ցույց տա պետք է կրակով այրել ու տեղը վիթրիոլով հականեխել...

Ինչ կը վերաբերի մեզ, երիտասարդներուս, մենք ոչ ռուսահայ ենք, որ թրքահայ: Նոր սերունդը գրեթե ամբողջությամբ ծնած ու հասակ նետած է Ռուսահայաստանեն ու Թրքահայաստանեն դուրս. ան վարժված է ինքզինքը ճանչնալ որպես հայ, որուն օտարները կըսեն «արմեն». ան գիտե թե ընդարձակ երկիր մը ունեցող ժողովուրդի մը մնացորդն ու ժառանգորդն է. որ այսօր թվով փոքրացած է, սակայն հայրենիք մը ունի (մեկ հայրենիք), որ այո՛ փոքր է, բայց բոլոր հայերուն հայրենիքն է, որ պիտի մեծնա ու մենք անխտիր՝ հոն պիտի երթանք ապրելու համար նոր պատմության ու նոր ապագայի վերակառուցումը:

Այնքա՞ն պարզ են այս խնդիրները: Ու կը զարմանանք, թե մարդիկ կան, որ դեռ հայ ժողովուրդի Ռուսահայ-Թրքահայ հատվածականության հոգեբանության տեղ կու տան, սնունդ կու տան:

Մենք կը սիրենք և թրքահայը, մենք կը սիրենք և ռուսահայը:

Ահա թե ինչու հայ ենք և միայն հայ:

Պ.

Բուխարեստ, «Հերկ», 1937, հուլիս

ՄԵՐ ՀԱՑՐԵՆԻՔԸ

Մեր սկզբունքային տեսակետը ճշտելե հետո, մեր հայացքը դարձնենք նախ Հայաստանին, որմե պետք է սկսի ամեն հայ երիտասարդի ազգային մտահոգությունը ու մտածումը: Մենք ալ կը գտնենք ա՛յս անհրաժեշտ՝ ամեն մտահոգությանց մեկնակետ ունենալ մեր հայրենիքը, ամեն դատումի մեջ, ամեն եզրակացության մեջ չհեռանալ անոր ներկայի և մանավանդ ապագայի շահերեն:

* * *

Փիլիսոփա մը ըսած է—«Մարդը այն կենդանին է, որ գիտե հարցեր տալ»:

Իսկ երբ երիտասարդ ես, հարցումներ տալու ձգտումը ավելի զորավոր է, ավելի բուռն է (արդյո՞ք, ուրեմն, երիտասարդը ավելի «մարդ» է): Ասկե զատ, հարցումներ տալու երևույթը կախված է նաև պատմական շրջանեն: Ժամանակաշրջաններ կան երբ հարցումները նվազ են. մարդիկ նոր խնդիրներու առաջ կեցած չեն, մարդոց համար հարցերը լուծված կը թվին, կյանքի վերջին իմաստները գտնված ըլլալ կը կարծվին: Այդպիսի ժամանակաշրջան մը եղած է, օրինակ, արևմուտքի միջին դարը, Պապի թագավորության շրջանը: Ժամանակաշրջաններ կան սակայն, երբ մարդիկ կը կորսնցնեն կյանքի հավասարակշռության ու ներդաշնակության զգացումը, կապրին փլուզումներու, խարխափումներու, փնտրտուքներու, «նոր խորհուրդ մը գտնելու» հերոսական շրջան մը:

Ահա այդ ատեն մարդկային խղճին ու մտքին առջև կը բացվին անհամար հարցումներով լի նոր հորիզոններ: Մարդը կը կասկածի ամեն բանի վրա, չի հավատար ոչինչի, կը սուզվի բնազդներուն մեջ, մինչև իր նախնական զգացումները, կուզե թափանցել ավելի խորը իրերուն և երևույթներուն մինչև սկզբնական խորհուրդը գոյության, և ահա ստոյգ համար ամեն հին ձևով «գիտցված» գաղափարի և երևույթի առաջ կանգ կառնե որպես անծանոթին առաջ ու կը հարցնե—ի՞նչ են դուն:

8273

2—72

Կը սկսի տառապանքը մարդուն, տառապանքը հարցումներուն, գուցե ամենեն մարդկայինը բոլոր տառապանքներուն:

Ավելորդ է ըսել, որ մենք ևս կապրինք նման պատմական շրջան մը. նախ որպես հետպատերազմյան մարդ և մանավանդ որպես հայ մարդ: Ակներև է, որ աշխարհը տագնապի մեջ է, ավելի ճիշտ, քաղաքակիրթ մարդկության մշակույթը, բովանդակ հոգին տագնապի մեջ է: Ահա թե ինչու հետպատերազմյան մտածողները (մանավանդ պարտված ժողովուրդներուն մեջ), ձգած դասական, նորբ խնդիրները, իրենց հայացքը կը դարձնեն դեպի նախնական հարցումները, հիմնական հարցումները ու հարց կու տան ի՞նչ է կյանքը, ի՞նչ է մարդը, ի՞նչ է ընկերությունը, ի՞նչ է ցեղը, ինչո՞ւ կապրինք, մա՞րդ ըլլալ թէ կենդանի, հառաջդիմություն կա՞ մարդկային կ՚անքի մեջ և այլն:

Միայն պարտված, շվարած, հավատաբեկ մարդը կրնա այս հարցումները իրեն ընել:

Ներկա մարդը կը հարցնե ու կը տառապի՝ քամելով իր միտքը ու հոգին, որովհետև մարդը, ինչքան ալ ամեն բան կորսընցնե, իր մեջ կը մնա **հույսը, նոր հավատքի մը լույսը, նոր կյանքի մը հավատքը:**

Հա՞պա հայ մարդը:

Արդյոք կա՞ ավելի պարտված ժողովուրդ մը քան հայ ժողովուրդը: Հետևաբար ո՞վ արդյոք պիտի կրնա չափել անոր հոգիին տառապանքը, անոր խռովքն ու տագնապը: Անշուշտ մեր հետպատերազմյան հայ կ՚անքը ու սպասե դեռ իր «նոր տառապանքի երգիչը», իր «նոր տագնապի» փիլիսոփան, իր «նոր ողբերգության» զգացումի և մտքի սենֆոնին:

* * *

Մեր ապրած ողբերգության գլխավոր երեսներեն մեկը մեր այսօրվան հայրենիքի՝ Խ. Հայաստանի և մեր միջև փոխհարաբերության հարցն է:

Հայրենիք երթալու հնարաւորություն չկա և շատոնց հաշտված ենք այդ արգելքին հետ: Սակայն ինչ որ ողբերգության մը կը վերածե մեր դրությունը, մանավանդ երիտասարդներուս կյանքը, անկարելիությունն է ազգային, մշակութային, ոգևոր կապին:

Ու կը խորհինք, մեր միտքը կը տանջենք ինչպես ընենք, որ Խ. Հայաստանը, այս իմաստով, գեթ մեր հայրենիքը դառնա:

Գիտենք հայեր կան, հայ կազմակերպություններ կան մեր գաղութներուն մեջ, որոնք կը կարծեն իրական հայրենասիրությունը գործնական հողի մը վրա դրած ըլլալ: Սակայն եթե քիչ մը խորանանք խնդիրներու և երևույթներու մեջ կը հաստատենք, որ

պատրանքներ են այդ բոլորը: Ամեն բան խոսքով կը սկսի ու խոսքով ալ կը վերջանա առանց հոգին շաղախելու: Այդ հայրենասիրությունը իրական չէ և ոչ ալ գործնական հողի վրա, իսկ հանախ ալ հայրենասիրություն իսկ չէ:

Բացի «Բարեգործական»ի նյութական գովելի օժանդակություններեն և անցյալի մեջ կատարված ներդաղթներեն, ոչ մեկ հուսատու գործ:

Բայց մեր փնտրածը ուրիշ բան է. մեր փնտրածը իրական հայրենիքն է, որ իր ցիրուցան զավակներուն ձեռք երկարեր, փրկելու համար զանոնք ստույգ ավազախրումեն, որ սկսած է արդեն: Մեր հոգիները փրկեր գեթ:

Եվ ընդհանուր խոսքերու մեջ չմնալու համար հիշենք հոս երեք պարագաներ, երեք փորձեր՝ Պուքրեշահայ երիտասարդության կողմե, գեթ հայրենիքեն խապրիկ մը, կենդանության նշան մը ստանալու համար:

Ռումանահայ Ուսանողներու Միությունը երկու անգամ (1933-ին և 1934-ին) դիմած է Հայաստանի վարչապետին, որպեսզի հնարավորություն մը գտնվի մշակութային գետնի վրա կապ մը ստեղծելու Հայաստանի հետ. դիմումը կատարված է մեծ հույսերով ու խանդավառ զգացումներով, բոլորովին անկուսակցական երիտասարդներու կողմե. իսկ երկրորդ նամակը Հայաստան հղված է Ռումանահայ «ՀՕԿ»ի կեդրոնական մարմնի անդամի մը հանձնարարականով և Փարիզի «ՀՕԿ»ի կեդրոնի միջոցով, որպեսզի որևէ քաղաքական կասկած չըլլա: Բայց ո՛չ մեկ պատասխան Հայաստանեն: Անցյալ տարի՝ 1936-ին նույնպիսի փորձ մը ըրած է Պուքրեշի Հ. Մ. Ը. Մ.-ը Հայաստանի «ֆիզկուլտուրա»ին դիմելով. ան հղած է գեղեցիկ ալբոմ մը և ողջույնի նամակ մը Հայաստանի մարզիկ եղբայրներուն: Ալբոմը և նամակը ղրկված են Հայաստան «ՀՕԿ»ի կեդրոնական մարմնի անդամի մը, պր. Ֆ.ին հետ, օգտվելով անոր Հայաստան կատարած ճամփորդութենեն: Ոչ մեկ պատասխան և ո՛չ իսկ պարզ հավաստագիր մը, նվերը ստացված ըլլալուն համար: Իսկ երբ պ. Ֆ., որ անձամբ հանձնած է ալբոմը և նամակը ֆիզկուլտուրայի վարիչին, պնդած է որ գոնե քանի մը տող տան ստացած ըլլալնուն համար, Հայաստանի երիտասարդական շարժման վարիչը պատասխանած է — Հարկավոր չի. եթե հարկ լինի մենք ուղղակի կը գրենք նրանց:

Եվ այսպեսով ալ վերջացած է:

Արդ՝ մենք որպես հայ երիտասարդներ, որ կը սիրենք ըսել թե հայրենիք մը ունինք, բնական չէ՞ որ կասկածինք ու հարց տանք մեզ, թե մենք՝ **գաղութահայ երիտասարդներս**, հայրենիք ունի՞նք: Թե Խորհրդային Հայաստանը մեր հայրենի՞նքն է իրոք:

Սովորական իմաստով հայրենիք կը կոչվի ծննդավայրը՝ ուր ծնած, սնած ու մեծցած ես. այս իմաստով բնական է Հայաստանը մեր հայրենիքը չէ և ոչ իսկ մեր հայրերունը:

Ինչպես քիչ վերը ակնարկեցինք, Հայաստանասիրության ձև մը ևս կա, որ զարգացած է մանավանդ որոշ գաղութներու մեջ, ըստ որում Հայաստանը լոկ գաղափարի հայրենիք մը է և մեր հայրենասիրությունը կը լուծվի պարզ «բարեկամությամբ» մը հանդեպ օրվան իշխանության, զուտ քաղաքական իմաստով:

Ահա խորհուրդը, զոր կու տա մեզի Ամերիկայի «Բանվոր»ը իր մեկ խմբագրականին մեջ.—

«Հայաստանի հետ ենք, անոր ջերմ պաշտպանը՝ որովհետև Հայաստանը խորհրդային է, բանվոր դասակարգի տիրապետության տակ սոցիալիզմ կը կառուցե: Ասոր մեջ է մեր բարեկամության հիմքը: Եթե Հայաստանը ըլլար կապիտալիստական դրության տակ, հոն իշխեր Դաշնակ կամ Ռամկավար ռեժիմ մը, մենք կը կռվեինք անոր դեմ ձեռք տալով վրացի բանվորին, Ադրբեջանցի աշխատավորին: Խորհրդային Միությունը, որուն մեկ անդամն է Խորհրդային Հայաստանը, միջազգային բանվորներու հայրենիքն է»:

«Ուրեմն խորհրդային իշխանության լավագույն ծառայությունը միայն հոն ապրելով, անոր շինարարության անձամբ մասնակցելով չէ միայն, որ կը տրվի, այլ **առավելապես** ա՛յն գործով, որ կարմիր գծեն դուրս կը կատարեն կռվելով կապիտալիզմի դեմ» և այլն:

«Երբ այս է համայնավարի դերն ու կոչումը, ապա ի՞նչ ըմբռնումով հայ համայնավար մտաւորականները պետք էր երթալ ի Հայաստան»: («Բանվոր», 13 մայիս, 1934):

Ուրեմն պարզ է այս տեսակետը:

Խորհինք սակայն քիչ մը և կրկին հարց տանք մեզի թէ ի՞նչ ըսել է հայրենիք:

Մեզի համար բացարձակ ակներև է, որ հայրենիքի գաղափարը գոյության իմաստ կը կունենա միայն ազգային—օրգանական—ոգեպաշտ տեսակետի մը մեջ: Այլապես ան, կեղծ բառ մըն է, պարզապես սխալ գործածված՝ մտքերը շփոթեցնելու ծառայող և կամ ամուլ պոլիտիկոսություն՝ առանց հոգեկան հարազատության հիմքի:

Հայրենիքը օրգանապես ազգի մը օրրանն է և դուն ո՛ւր ալ ծնած ըլլաս, ո՛ւր ալ ապրիս, որ պետության քաղաքացին իսկ ըլլաս, քու օրգանական հայրենիքդ կը մնա քո ցեղիդ, քո նախահայրերուդ հողը, հոգ չէ թե այդ հողին որ մասը ըլլա:

Այդ հայրենիքը, նյութական հայրենիքը, կը թափանցե մարդու մեջ, կը կազմե անջնջելի պատկեր մը ցեղին հոգիին մեջ, որ կը

փոխանցվի սերունդե սերունդ. հայրենիքը կը դառնա անբաժանելի մասը մարդու հոգեբանության, կը դառնա՝ ցեղային միավորի մը հավաքական-հոգեկան բարձր ապրումներուն հորիզոնը:

Նյութական հայրենիքը տակավ հոգիիդ խառնվելով, կը ծնի նոր իրականություն մը, կենդանի հայրենիք մը, որուն կմախքը աշխարհագրական հայրենիքն է և որուն մարմինը, սակայն, կազմված է ազգին բոլոր սերունդներու կյանքվը, որ պատմությունն է, հոգեկան բոլոր գանձերովը, որ ավանդություններն են, բոլոր արժեքներովը, որ ընտրյալներն են ստեղծագործ և մանավանդ այն՝ մահ չունեցող, աներևույթ ներքին ուժովը՝ **ոգին** որ ցեղին ընդերքներեն կու գա որպես տեսակ մը կույր «élan vital», որպես առաջին տեսիլք, որպես ճառագայթում. ու կը մնա որպես հրեղեն պատկեր՝ դրոշմված ցեղին հոգիին մեջ, որ կապրի, կը վառե այդ հոգին, ստեղծելով արժեքը, մարդկային բարձր արժեքները, ազգային-օրգանական կերպին (ոճին) օրենքներովը:

Հետո կանցնի սերունդե սերունդ, հյուսելով հեքիաթը ցեղին, պատմությունը ու պետական կյանքը ազգին և մանավանդ ստեղծելով կոթողները, կատարները, արժեքները անոր մտքին ու հույզերուն:

Այդ ոգին միշտ ներկա է ազգին մարմնին մեջ, ան արյունն է ազգ-հայրենիք մարմնին:

Երկիր-ժողովուրդ-ոգի՝ ահա ոգիացած հայրենիքը, իրական հայրենիքը:

Ու այդ ոգիացած հայրենիքը, որ մեջդ թափանցած է, այժմ կը զգաս ինչպես ան՝ կարծես աշխարհ մը ն է, որ քու հոգիիդ կը ծնի, քեզմե կը բուսնի, հասակ կառնե, կը տարածվի դեպի սարերն ու դաշտերը, ջուրերն ու երկինքը հայրենիքիդ, դեպի պատմությունը հին, **դեպի** արժեքները ազգին, դեպի ապագան մշուշապատ... Այդ զգացումը քեզ կը հափշտակե, կառնե կը տանի իրեն հետ ու դուն, անհատ, կը կորսուիս անոր անհունությանը մեջ...

Հայրենիքը ամբողջ էությանդ շարունակությունը կը դառնա: Հոգեկան միջոցը (espace), որուն մեջ կապրիս: Եվ այդ պարագային այդ հոգիացած հայրենիքը կը դառնա՝ տերը անհատի բոլոր հոգիի ուժերուն, ներշնչողը՝ բոլոր գործերուն ու մղիչ ուժը՝ դեպի գործ և ստեղծագործություն: Անհատի գործերն են, ազգային հավաքականության համար իմաստ ու խորհուրդ ստացող ստեղծագործ հիգերն են, որ կը բնորոշեն իրական ոգեկան հայրենասիրությունը: Հայրենասեր ըլլալ, հայրենիքի հետ կապ ստեղծել, ըսել է այդ՝ ազգային-հավաքական ոգեկան գծով կապված ըլլալ հայրենի աշխարհին, անոր կյանքին, սատարել անոր

ոգեկան ստեղծագործության, ու նվիրվիլ անոր ապագան և անմահությունը ապահովելու գաղափարին:

Աշխարհագրականորեն կարելի է Հայաստանեն հեռու գըտնըվիլ և սակայն հայրենիքին համար, հայրենիքին հետ ու անոր մեջ ապրիլ, ինչպես ըրին Մխիթար Աբբան և անոր արժանավոր հաջորդները, որոնք մեր այս անհայրենիքության օրերուն մեզի կրնան որպես դասական օրինակ ծառայել: Ինչպես և կարելի է Երևանի մեջ նստիլ ու շատ հեռու ըլլալ իրական Հայաստանեն:

Հայ երիտասարդության մեջ դժբախտաբար, սակայն, ոգիացած հայրենիքի պատկերը դժգույն է այսօր. այդ հայրենիքով կապրի գուցե փոքրաթիվ ընտրանի մը, իսկ լայն զանգվածը, օտար ազդեցության տակ կը թուլանա ու պետք կը զգա արտաքին օժանդակության անհրաժեշտորեն, այսինքն կոնկրետ և անկեղծ կապի մը Հայաստանի ու անոր ժողովրդին հետ:

Եվ սակայն այդ կապը հնարավոր չէ եղած ցարդ: Հայաստանը մեր ազգային խղճին առաջ իր դռները փակած է ու կը մերժե մեր հայրենիքը ըլլալ: Կը մերժե առանց սակարկության մեր «հոգևոր Հայաստան»ը դառնալ, ինչպես պիտի ըսեր իդեալիստ Տերյանը:

Հուսախափ չենք սակայն:

Չենք գիտեր ինչպես, բայց կը հավատանք, որ օր մը կյանքը մեզ պիտի ժպտի վերջապես: Կը հավատանք, որովհետև մեր մեջ, ըսենք հոս անկեղծորեն, ավելի զորեղ քան «տեսակետները», հայրենաբաղձության ՀՀգացումն է. այն՝ դարերով ծարավ մնացած զգացումը, որ մեզի փոխանցված է մեր բոլոր այն նախնիքներեն, որոնք ապրեցան Հայաստանի հողին ու լույսին կարոտով ու մեռան անհայրենիք:

Եթե Հայաստան երթալը անհնար է, պահանջը կը զգանք գեթ հեռուեն հայրենիք մը ունենալու, հոգեպես անոր կյանքին մեջ զգալու ինքզինքնիս, անկե հոգի առնելու, անոր հոգի տալու: Այսօր ազգ ենք, Հայաստան մը ունինք: Բայց Հայաստանը **ազգին** կեդրոնը չէ: Կամ ինքզինքը մեր կեդրոնը չի նկատեր. և ահա մենք իրապես անհայրենիք կը զգանք ինքզինքնիս: Եթե մեր մեջ դեռ կենդանի է Հայաստանը, այդ մեր **անհատական** ճիգն է, մեր վերացական հայրենասիրության մը ուժն է: Մեր հայրենասիրությունը, ոգեպես ալ հայրենի հողեն կտրվելով, կը զգանք ինչպես տակավ անարյուն կը դառնա ու մահամերձ:

Եթե այս ողբերգական վիճակը շարունակվի ու հայ նոր սերունդը գաղութներու մեջ փճանա, գլխավոր պատասխանատուն պիտի մնա Հայաստանի այսօրվան իշխանության քաղաքականությունը:

Մեր մեջ այդ մահվան զգացումն է որ կաղաղակե։
Հայաստանը ե՞րբ պիտի դառնա մեր հայրենիքը։
Եվ ինչպե՞ս։
Մինչ այդ, առանց որևէ նախապաշարումի մեր ձեռքը երկարած կը մնա դեպի Ան։

Կ. ՊԱԼՃՅԱՆ

Բուխարեստ, «Հերկ», 1937, դեկտեմբեր

ՀԱՅՐԵՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ

Ուրիշ անգամ մը ալ այս էջերեն ընդգծեր էինք քաղաքական բառին այլասեռումը մեր մեջ: Քիչ չեն այնպիսիները, որոնք քաղաքականություն և հայրենասիրություն իրաու կը հակադրեն:

Ի՜նչ տարօրինակություն: Անշուշտ արդյունք մը հայ ժողովուրդի քաղաքացիական դաստիարակության պակասին: Գուցե պատասխանատվության բաժին ունին նաև մեր քաղաքական կուսակցությունները, որոնք հաճախ հոս հոն իրենց գործով և գործելակերպով կը վարկաբեկեն քաղաքականի գաղափարը:

Ինչ որ ալ ըլլա սակայն, գիտակից մեկը մասնակի երևույթներե պետք չէ խաբվի ու թյուր եզրակացություններու հասնի:

Քաղաքակիրթ եվրոպացիին շատոնց ծանոթ է, որ մարդը քաղաքական էակ մըն է բնական կերպով: Այսինքն ամեն մարդ ընկերային բնազդե մղված կը կապվի հասարակության մը, ինքզինքը կամբողջացնե անով ու օրգանապես կապրի ա յդ ամբողջության հետ, հողամասի մը վրա, որ հայրենիքն է:

Երբ անհատ մը հոգեկան և մասնավոր զարգացման մը հետևանքով իր ազատ կամքով կը հասնի իր հավաքականության, այսինքն իր ազգին ու իր հայրենիքին շահերուն գիտակցությանը, անոր իդեալները ըմբռնելու և անոնցմով ապրելու գիտակցությանը, ա.դ անհատը կը դառնա քաղաքական մարդ, նույնիսկ եթե քաղաքական կուսակցությ.ան մը անդամը չէ:

Ճիշտ և լավ ըմբռնված հայրենասիրությունը, ազգասիրությունը քաղաքական վերաբերմունքներ են:

Գերման մեծ մտածող մը Rutzonhofer, իր մեկ գործին մեջ կըսե՝ **«Քաղաքական երևույթը բնության մեկ ուժն է ընկերության մեջ, որուն արմատները կը գտնվին մարդուն կենսաբանական, հոգեբանական և ընկերային բնությանց մեջ: Իր կարիքներուն համար ընկերությունը կամք մը ունի, որպեսզի կարենա հասնիլ իր բնական նպատակներուն: Այդ ուժը քաղաքական երևույթն է:**

Ֆրանսացի նորագույն ընկերաբան մը՝ G. Tarde, կը հիշե, **«Քաղաքական ուժը ազգի մը մեջ, է ա՛յն ինչ որ է գիտակցական կամեցողությունը անձի մը ուղեղին մեջ»:**

Բայց մեր քակաքաղաքականները ուրիշ պատճառաբանություն մըն ալ ունին: Կը կարծեն, որ քաղաքական խնդիրներով ուժեղ և երջանիկ ժողովուրդները միայն իրավունքն ունին զբաղելու, իսկ մենք՝ հայերս... ժամանակ չունինք:

Մեծ սխալ: Որովհետև հակառակն է ճիշտը: Ժողովուրդ մը քաղաքական դաստիարակության մը, այսինքն հավաքական գիտակցության և հավաքական կամեցողության պետք ունի մանավանդ իր ծանր օրերուն:

Անա երեք պատմական օրինակներ մեր աչքին առաջ:

Ֆրանքո-գերման 1871ի պատերազմեն հետո, երբ Ֆրանսա չափազանց կերպով պարտված էր զինվորական և քաղաքական տեսակետեն ու ծանր տագնապի ժամանակաշրջան մը կապրեր, մեծ հայրենասեր մը՝ Boutmy, պարտութենեն քանի մը օր վերջն իսկ կը հիմնե հռչակավոր քաղաքական դպրոց մը «Ecole libre des sciences politiques»ը: Կարճ ժամանակի մեջ այս դպրոցը կը դառնա ազգային ընդհանուր ուշադրության կեդրոնը: Ու Ֆրանսայի նոր սերունդներու քաղաքական մեծ դեմքերեն շատերը, որոնք վերակազմեցին պետությունը ու փայլուն կերպով ազգային «revanche»ը իրականացուցին, վերև հիշված քաղաքական դըպրոցեն անցեր էին:

Մեծ պատերազմեն հետո, երբ Գերմանիա պարտվեցավ ու ներքին անկումներու թատր մը եղավ, անոր ղեկավարները անհրաժեշտ սեպեցին հիմնել նոր քաղաքական դպրոց մը «Hochschule fur Politik» անունով, որուն նպատակը եղավ նպաստել գերման ազգային գիտակցությունը ապրեցնելու ու անոր կամքը կազմակերպելու: Իսկ վերջերս գերման նոր իշխանությունը այդ դըպրոցը պետական մեծ հաստատության մը վերածեց:

Վերջապես թարմ օրինակ մըն ալ Յուգոսլավիան է: Ծանոթ է, որ նոր պետություններեն ամենեն խռովանուզ կյանք ապրողը այս պետությունն է, ներքին պայքարներուն պատճառավ: Հակառակ մոտ քսան տարիներու միացյալ անկախ կյանքին, Յուգոսլավ ժողովուրդները ազգային միակամ գիտակցության մը չեն հասած դեռ: Անա այդ ներքին ներդաշնակությունը ու միավորությունը իրականացնելու համար պետությունը ստեղծած է քաղաքական դպրոց մը, որուն խիստ մեծ կարևորություն կը տրուի: Այս դպրոցը իր առաջին շրջանավարտները տվավ քանի մը շաբաթ առաջ ու վկայականները Յուկոսլավիո վարչապետը անձամբ բաշխեց՝ ընդգծելով այս դպրոցին կարևորությունը ազգային-պետական գիտակցությունը ապրեցնելու տեսակետեն:

Հարկ կա՞ ցուցնելու քաղաքական լուրջ դաստիարակության մը անհրաժեշտությունը մեր մեջ:

Կա՞ ժողովուրդ մը, որ ավելի քան մենք, պետք ունենա հավաքական ազգային գիտակցության մը ու իր ազգային իրավունքներուն տիրանալու կամեցողության:

Մանավանդ այս օրերուն, երբ արյունած սրտով ականատես կըլլանք թե ինչպես մեր հայրենիքի մեջ, հայ քաղաքական մտքի մը վերջին հետքերը վերջին հարվածները կը ստանան:

Ու այս առթիվ իրավունք չունի՞նք հարցնելու նաև մեր հին քաղաքական կուսակցություններուն, մանավանդ երկուքին, որոնք կապրին ու կարևոր տեղ ունին գաղութահայ կյանքին մեջ.—

— Ի՞նչ կընեք: Ու՞ր են Ձեր քաղաքական դպրոցները, ո՞ւր են Ձեր հայ քաղաքական գիտակցությունը ամրացնող ու զարգացնող ձեռնարկները, ո՞ւր են Ձեր քաղաքական դաստիարակություն մը ստացած «նորերը»: Դուք, որ նյութական և բարոյական բավարար միջոցներ ունիք, ի՞նչի կը վատնեք զանոնք:

Հա՛յ քաղաքական միտք:

Հոն, մեր հայրենիքին մեջ, քեզ թաղած են ու այն գլուխը, որուն ուղեղին մեջ կայծի մը նման կը զարթնիս, ուսերուն վրան չի մնար:

Ասդին, գաղութներուն մեջ, քաղաքական կուսակցություններն իսկ քեզ կը պահեն իրենց դարակներուն մեջ ու կանտեսեն նոր սերունդին քաղաքական մտածումի մը մշակման հարցը:

Այո՛, ավելի քան երբեք, հայ ժողովուրդը պետք ունի քեզի:

Որովհետև լավ գիտքնանք, որ քաղաքական գիտակցութենեն ու կամեցողութենեն կը սկսի իրական և գործնական հայրենասիրությունը:

Պ.

Բուխարեստ, «Հերկ», 1938, հունվար

ՔՐԻՍՏՈՆՅՈՒ ԸԼԼԱԼ

Կար ժամանակ երբ մարդիկ կրոնքը, հետևաբար և քրիստոնեությունը, կը նկատեին որպես տեսակ մը նախապաշարում: Նոր հասարակարգեր «կառուցանել» փորձող ընեսաբաններ, անցյալ դարուն երկրորդ կեսին մանավանդ, կրոնքը դուրս կը հանեին ընկերային կեանքեն: Իսկ Լենինը, այսօրվան Խ. Միության ճարտարապետը, կրոնքը և քրիստոնեությունը կը դատապարտեր ըսելով, որ այն ժողովուրդներու համար տեսակ մը թույն, օփիում է շահագործվող դասակարգը քնեցնելու և թունավորելու համար:

Բնական է այս հակակրոնական հոսանքներու ազդեցությունը եկած է նաև մեր մեջ:

Մեր կյանքի մեջ, նույնիսկ հիմա գաղութներու մեջ, քրիստոնեությունը շատ մտավորականներու կողմե կը նկատվի տիրացություն, խավարամտություն կամ առնվազն հետամնացություն: Ավելին, կարծես մեր եկեղեցին ալ ազդված է այս հոսանքեն ու կարծես կամչնա իր կրոնականութենեն և կաշխատի... աշխարհականանալ: Չե՞ք նկատած, որ մեր հայ Լուսավորչական եկեղեցին շատ կը խոսի իր ազգային դերին մասին, որ իր գոյությունը կարծես տեսակ մը արդարացնել կը փորձե միայն այդ ձևով: Մեր եկեղեցին կարծես համարձակությունը չունի ըսելու թե այո՛ իմ գոյության իմաստը ամեն բանե առաջ քրիստոնյա հավատքին մեջ է: Իրերու այս կացության մեջ բնական է, որ ժողովուրդն ալ թերի քրիստոնյա ըլլա: Եվ իրապես մեր թերի քրիստոնյա ըլլալու նշանները բազմաթիվ են: Մենք հարազատ քրիստոնեական դաստիարակություն չենք ստանար, առիթն ալ չունինք ստանալու: Ոչ մեր ազգային վարժարանները, ոչ մեր մամուլը, ոչ մեր գրականությունը, ոչ մեր հանրային մշակութային կազմակերպությունները մեզի չեն տար քրիստոնեական դաստիարակություն մը: Թող ներվի մեզի, եթե նույնիսկ համարձակինք ըսելու, թե ոչ իսկ մեր եկեղեցվո բեմը այդ դաստիարակչական դերը լրիվ չի կատարեր:

Գիտենք, որ գուցե շատեր, մեր այս տողերը կարդալով, մեզ պիտի նկատեն հետադեմ: Բայց մենք կը մնանք մեր տեսակետին վրա, որովհետև, նախ տարրական լրջության զգացում մը կը պարտադրե մեզի ունենալ այս մտածումները, կամ քրիստոնյա ենք կամ չենք: Կարելի չէ հայ լուսավորչական մնալ և սակայն մտքով

ու հոգիով օտար ըլլալ անոր հիմնական գաղափարներուն ու ոգիին: Կարելի չէ քրիստոնյա ըլլալ «ըստ սովորության», «ըստ ավանդության» ու այսպիսով եկեղեցին վերածել բրածո իրականության մը: Լուրջ մարդու գործ չէ այդ:

Այս մտածումները կունենանք ամեն անգամ երբ աչքի առաջ կը բերենք այն ինչ որ կը պատկանի եվրոպական մշակույթին ու կյանքին մեջ: Հիրավի Եվրոպան շատոնց արդեն վերադարձած է դեպի կրոնք. դեպի քրիստոնեություն: Եվ այդ վերադարձը կը կատարվի նախ գիտական մարդոց ուսումնասիրությանց հիման վրա:

Այն առասպելը, թե կրոնքը տնտեսական շահերու ծառայող միջոց մըն է տիրապետող դասակարգի ձեռքին, շատոնց սնանկացած է:

Նախնական մարդոց հասարակական կյանքը ուսումնասիրած գիտնականները — մանավանդ ֆրանսական ընկերաբանական նոր դպրոցը, իր գլուխը ունենալով Տյուրքեյմ, Լեվի-Պրյուլ ապացուցած են, որ կրոնական զգացումը ինքնուրույն բնական և անհրաժեշտ երևույթ մըն է առանց որու ընկերային կյանքը հնարավոր իսկ չէ:

Իսկ քրիստոնեությունը անբաժանելի է եվրոպական մշակույթեն: Առանց քրիստոնեական բարոյականի և ոգիի, արևմտյան մշակույթը կը մեռնի իր հիմքեն ու կը սկսի բարբարոսությունը:

Անոնք, որ անաստվածության և մարքսիզմի դեմ պայքարեցան ու կը պայքարին դեռ, կը պայքարին միաժամանակ ի խնդիր արևմտյան դարավոր մշակույթի արժեքներու պահպանման:

Սակայն քրիստոնեությունը իրոք անհրաժեշտորեն և օրգանապես հիմունքն է արևմտյան մշակույթին:

Ահա հիմնական հարցը:

Փորձենք քանի մը ապացույցներ բերել ի նպաստ այս ճիշտ տեսակետին, հիմնվելով ժամանակակից երկու մտածողներու գործերուն վրա: Առաջինը ֆրանսացի Ժիլսոն՝ «Միջնադարյան փիլիսոփայության ոգին» գիրքով, երկրորդը՝ գերմանացի Հայնց Հայմզեթ, «Արևմտյան բնազանցության վեց մեծ խնդիրները» գործով: Այս երկու հեղինակներն ալ կապացուցանեն թե ինչպես արևմտյան նորագույն մշակույթը իր փիլիսոփայությունով, արվեստով, գիտությունով, արդյունքներն են քրիստոնյա մտածման և ոգիի հեղաշրջման: Իսկ տնտեսագետ Վ. Զոմպարտ և ուրիշներ ապացուցած են այն խոշոր դերը, զոր կատարած է գալվինականությունը և բողոքականությունը եվրոպական տնտեսական կյանքի վրա:

Վազգեն վարդապետ Պալճյան

Զմոռնանք, որ նորագույն գիտությունը հիմնողները՝ Դեկարդ, Բեկոն, Պասկալ և ուրիշներ մեկնած են կրոնական խնդիրներե։ Վերև հիշված երկու հեղինակները՝ Ժիլսոն, Հայմզեոթ կը գտնեն բազմաթիվ հիմնական գաղափարներ, որ արևմտյան մշակույթի և գիտության հիմունքը կը կազմեն, կու գան քրիստոնեական վարդապետութենեն և մտածումեն։

Առաջին՝ **պատճառականության** սկզբունքը (principe de causalité) արդյունքն է քրիստոնյա մտածումին։ Հոս է որ առաջին անգամ մարդիկ խորհած են առաջին պատճառի մասին, որ Աստված էր։ Այս քրիստոնյա գաղափարը ծնունդ տված է պատճառաբանության սկզբունքին, որ իր կարգին հիմունքն է նորագույն գիտության։ Սուրբ Թոմա դե-Ակուին կըսեր, թե պատճառի և արդյունքի միջև պետք է կապ մը ըլլա այնպէս ինչպես ստեղծողի և ստեղծվածի միջև։ Այս պատճառականության գաղափարը, որ քրիստոնյա մտածողներու հղացումն է, Բեկոն կը կիրառե՝ բնությունը ճանչնալու նպատակավ ու այսպեսով հիմք կը դնե նորագույն գիտության։ Ու Բեկոն նորագույն գիտությանց հայրը կը նկատվի։

Ուրիշ մեկ հիմնական քրիստոնյա գաղափար մը՝ **ստեղծագործության** գաղափարն է։ Առաջին անգամ ըլլալով քրիստոնեությունն է, որ աշխարհը կը նկատե որպէս Աստուծո կողմե ազատ կերպով ստեղծված իրականություն մը։ Հետևաբար բնությունը կը դառնա Աստուծո ստեղծագործություն, բնությունը ճանչնալու գործը՝ աստուածային գործ։ Ահա, ա՛յս ոգին մարդը կը մղե դեպի բնություն, դեպի իրականության ճանաչում, որ արևմուտքի հիմնական մեկ ձգտումն է։ Մարդ սկսավ Աստվածը փնտրել անոր ստեղծագործության, այսինքն բնության մեջ։

Բայց եթե Աստված ազատ կամքով ստեղծող մըն է, ուրեմն մարդն ալ, որ Աստուծո ստեղծած էակն է և անոր պատկերը երկրի վրա, նույնպես ազատ կամք մը ունի և ստեղծագործելու ուժերով օժտված է։ Ահա այն եզրակացությունը, որ արևմուտքի մարդը կը մղե դեպի Վոլյունտարիստ գաղափարաբանություններ, որոնք կը հատկանշեն եվրոպական մշակույթը։

Ազատության, մարդկային անհատական ազատության գաղափարը նույնպես քրիստոնյա գաղափար մըն է։ Առանց քրիստոնեության հնարավոր չէր կրնար ըլլալ Կանտի կամքի ինքնավարության մեծ գաղափարը, Ֆիխտեի Վոլյունտարիզմը և նորագույն ակտիվիստ տեսությունները։

Առանց քրիստոնեության ոգիի հնարավոր չէր կրնար ըլլալ Ֆաուստի տիպարը, որ նորագույն արևմտյան մարդը առաջնորդող պատկերն է։

Քրիստոնեության մեկ ուրիշ մեծ նպաստը՝ մարդուն ներքին աշխարհին նվաճումն է: Ներքին խիղճը, ենթակայանը, քրիստոնեության գյուտերն են: Հոգին ավելի մոտ է Աստուծո, որովհետև ան է Աստուծո պատկերը մարդուն մեջ: Հետևաբար հոգին աստվածային, ստեղծագործող ուժեր ունի: Այս գաղափարն է, որ զարգանալով կը տանի դեպի դարտեղյան գաղափարապաշտության և բանապաշտության: Ու կարելի՞ է արևմտյան քաղաքակրթությունը ըմբռնել առանց բանապաշտության սկզբունքներուն, որոնք այդ քաղաքակրթության հիմնական հավատամքներն են:

Քրիստոնյա գաղափար մըն է նաև եվրոպական մշակույթին և ոգիին ամենեն թանկագին գաղափարը, որ **անձնավորության** գաղափարն է: Քրիստոնյա Աստվածը անձնավորություն մըն է, նույնպես և անոր ստեղծած մարդը: Մարդը ևս անձնավորություն է, որովհետև ազատ և ստեղծագործող անհատականություն մըն է:

Բարոյական անձնավորության կատարելագործումը քրիստոնյա իդեալն է:

Սուրբ Թոմաս կըսեր. «անձնավորությունը ամենանկատեալ իրականությունն է բնության մեջ»:

«Անձնավորությունը իր ընկերային, ինչպես նաև բարոյական ձևին մեջ կը կազմեն այսօր եվրոպական քաղաքակրթության բեվեռներեն մին» կրսե Մ. Ոալեա իր վերջին գրքին մեջ (Psihologie si Viata — 1930): Վերջապես հիշենք և **ապագայի** գաղափարը, որ նույնպես քրիստոնեության հիմնական հավատքեն կը բղխի: Երկնային արքայության տեսությունով, քրիստոնեությունն մարդկության առաջ կը բանա ապագայի հեռանկարը:

Ապագայի, շարժումի, հեղաշրջումի, դինամիզմի գաղափարները բոլորն ալ քրիստոնյա մտայնության և մտածումի արդյունքներն են, որոնք այսօր անբաժանելի են արևմտյան մշակույթի ոգիեն:

Հիշեցինք միայն քանի մը մտքերը վերև անվանված հեղինակներուն, ցուցնելու համար այն լուրջ վերաբերմունքը, զոր ունին գիտնականները և մեծ մտածողները հանդեպ մարդկության այն մեծագույն արժեքին, որ քսան դարերու ուժն ունի, որ պատմության մեջ ճանչցված բարձրագույն մշակույթին հիմունքն իսկ կը կազմե ու կը կոչուի քրիստոնեություն:

Ի՞նչ կըլլար եթե, վերջապես, սնգամ մըն ալ մենք լրջորեն վճռեինք քրիստոնյա ըլլալ...

Կ. ՊԱԼՃՅԱՆ

Բուխարեստ, «Հերկ», 1938, ապրիլ

ՔԱՋԱԶՆՈՒՆԻՆ ԵՎ ՄԵՆՔ

Ազգային իդեալով ապրող հայերը, ուրեմն հայ ժողովուրդի ստվար մեծամասնությունը, 1920-են ասդին, բաժնվեցան երկուքի՝ քաղաքական նոր և անսպասելի պայմաններու ստեղծման փաստին առաջ: Այս երկու մասերը լավագույն կերպով բնորոշած ըլլալ կկարծենք, եթե զանոնք անվանենք քաջազնունիական և հակաքաջազնունիական:

Երբ հայ մարդուն մեջ քաջազնունիականությունը այլասերվեցավ, ան դարձավ ամեն բան ժխտող հակադաշնակցական մը կամ ապազգային մը, իր զանազան ձևերուն ու անուններուն տակ, իսկ երբ հայ մարդուն մեջ հակաքաջազնունիականությունը այլասերվեցավ, ան դարձավ հայաստանատյաց մը կամ պարզապես հայ կյանքն հրաժարած դասալիք մը:

Մեծամասնությունը սակայն (կկարծենք) պահեց իր հավասարակշռությունը, ու ամեն մեկը իր գիտակցության լույսին տակ ու խղճին առջև զսպեց իր մեջի Քաջազնունին, ստեղծեց հարաբերական ներդաշնակություն մը այս անհուսափելի ու ճակատագրական իրականության առջև: Այսպիսով, ամեն ողջամիտ հայ ողբերգություն մը ապրեցավ ու կապրի դեռ: Այդ ողբերգությունը մեր օրերու հայուն պատմական ժառանգությունն է: Մենք ևս կզգանք մեր մեջ Քաջազնունի մը, որ անընդհատ շարժման մեջ է, կզարնե մեր մտքի ու զգացումի բոլոր թելերուն՝ զանոնք փրրցնել ապառնալով:

Ինչպես ամեն հայու մեջ, մեր մեջի երկվության հավասարակշռությունը կայուն չէ, ենթակա է միշտ խախտելու և տագնապի ենթարկելու մեր միտքը, մեր ազգային խիղճը, մեր բովանդակ հոգին: Սակայն, այնուամենայնիվ, հավասարակշռությունը պետք է կայունացնել: Ինչպե՞ս: Մեկ պարզ միջոց կա: Խոսքի ճստիլ Քաջազնունիին հետ: Խնդիրները քննել պաղարյունությամբ իր բոլոր կողմերով և եզրակացության մը հանգիլ, գոնե ժամանակավոր կերպով:

Հոլն. Քաջազնունին, կասկած չկա, որ մեր օրերու ամենալուրջ քաղաքական մտածողներեն մին է: Անոր երկու գրությունները՝ «Դաշնակցությունը այլևս անելիք չունի»-ն և «Ռուսաստա՞ն թե Թուրքիա»-ն մեր պատմության մեջ պիտի մնան որպես

անկյունաքարեր։ Անոր մեծագույն արժեքը այն է, որ կրցած է կատարյալ ձևով ու հստակությամբ ըմբռնել պատմականորեն ստեղծված հայ ժողովուրդի նոր քաղաքական դրությունը, որով ան մինչև այսօր ալ կհանդիսանա որպես մեկ կողմը վերև հիշված երկվության, ամենեն բնորոշ, ամենեն լրիվ ու լուրջ ձևով։ Այս բոլորը չեն նշանակեր, սակայն, որ Քաջազնունիին մտքերը պետք է ընդունիլ որպես պատգամ ու իր եզրակացությունները՝ որպես անվիճելի ճշմարտություններ։ Ո՛չ, ինքը՝ Քաջազնունի կըսե, թե գոհ պիտի ըլլա, եթե իրավունք չունենա։ Վստահ ենք, որ այդ խոսքը ըսված է ամենայն անկեղծությամբ ու լրջությամբ։

Հետևաբար Քաջազնունիին, իրեն իսկ կտակն է՝ ձգված հայ նոր սերունդներուն. փնտռել ու գտնել նոր երևույթներ, կյանքի նոր պայմաններ, նոր խնդիրներ, որոնք գան փոխելու կամ ուղղումներու ենթարկելու իր դրած խնդիրները և վերլուծումներուն եզրակացությունները։ Քաջազնունիին կտակը, իր հեղինակին իսկ թելադրանքով, միշտ բաց ու վերաքննելի դատ մըն է, զոր պետք է դատե ամեն հայ մարդ, ամեն հայ երիտասարդ ի մասնավորի, պետք է դատե անընդհատ, առանց վերջնականապես գոհանալու, մինչև որ իրականանա Քաջազնունիին իղձը, այսինքն՝ մինչև որ այլևս ինքը իրավունք չունենա, մինչև որ այլևս ամեն հայու մեջ Քաջազնունին մեռնի, երկվությունը չքանա։ Այն ատեն հանդիսավորապես պետք է թաղել Քաջազնունին՝ պատվո տեղ մը տալով անոր հիշատակին։

Մինչ այդ, փորձենք քննել, ներկա իրերու վիճակին ու պայմաններուն մեջ, Քաջազնունիին եզրակացությունները։

Նախ ըսենք, թե այսօր այլևս մեզ քիչ կհետաքրքրեն Քաջազնունիի՝ Հայ Հեղափոխական Դաշնակցության անցյալի ու Հայաստանի Հանրապետության կյանքի մասին ըրած քննադատությունները ու դատողությունները։ Այդ մասին իր ատենին պատասխանած են պ.պ. Վ. Նավասարդյան, Ռ. Դարբինյան և Ս. Վրացյան։ Մանավանդ վերջին հեղինակին գրքով («Խարխափումներ», 1924), որ կկարծենք ամենեն հաջող պատասխանն է Քաջազնունիին ուղղված, խնդիրը այդ տեսակետեն լուսաբանված ու փակված կարելի է համարել։ Ինչ որ Քաջազնունիի մեջ միշտ վերաքննության ենթակա կգտնենք և որ անոր մտածումներուն էական մասը կկազմե, չի վերաբերիր անցյալին, այլ հայ ժողովուրդի քաղաքական ապագային, անկախ նույնիսկ Հայ Հեղափոխական Դաշնակցության գոյութենեն։ Սխալ է կարծել, թե Քաջազնունի փորձած է ապացուցանել միայն Հայ Հեղափոխական Դաշնակցության «անելիք չունենալը»։ Ո՛չ։ Ան կուզե ապացուցանել շատ ավելին, այն է՝ առհասարակ հայ քաղաքական մտածողության մը անելիք չունենալը։ Որովհետև Քաջազնունին Հայ

Հեղափոխական Դաշնակցության «անելիք չունենալը» ապացուցանելու համար նախապես կժխտե ընդհանրապես ոչ բոլշևիկ քաղաքական կազմակերպության մը գոյության հնարավորությունը և իրավունքը: Իր դատողություններու շարքին էությունը կկայանա հետևյալ հիմնական մտքերուն մեջ. Ա) Հայաստանը անհրաժեշտորեն պետք է կցվի կա՛մ Խորհրդային Ռուսիո, կա՛մ Թուրքիո, որովհետև ուրիշ հնարավորություն չկա: Բ) Բնական է, որ Հայաստանը նախընտրե Խորհրդային Ռուսաստանը: Գ) Հայ բոլշևիկները միակ ուժն են, որ կրնան հասկցվիլ Խորհրդային Միության հետ: Ու կեզրակացնե. հայ բոլշևիկները Հայ Հեղափոխական Դաշնակցության ժառանգորդներն են ու հետ այսու միայն անոնք կրնան վարել, ու իրավունքը ունին վարելու, հայ ժողովուրդի քաղաքական կյանքը: Ուրեմն հայ ժողովուրդը, ոչ միայն Հայաստանը, պետք է իր ճակատագիրը հանձնե Ռուսիո համայնավար կուսակցության ձեռքը, հետևի անոր պատգամներուն ու գործադրե անոր պահանջը, այսինքն՝ լուծե հայ քաղաքական կուսակցությունները, որովհետև ընդդիմադիր կուսակցություններու գոյությունը արտոնված չէ, հրաժարի սեփական քաղաքական մտածողութենե և ազգային իդեալե և այլն: Հիմնվելով այս տվյալներուն վրա, Քաջազնունին կեզրակացնե. «Հայ Հեղափոխական Դաշնակցությունը անելիք չունի»:

Քաջազնունիի դատողություններուն ծանրության կեդրոնը իր վերջին եզրակացության մեջ չէ սակայն, այլ մտքերուն ու նախեզրերուն մեջ, որոնց վրա ինք կհիմնվի իր այս վերջին խոսքը արտասանելու համար: Հիմնականը այն չէ, թե «Հայ Հեղափոխական Դաշնակցությունը անելիք չունի», այլ այն, թե «անելիք չկա» ընդհանրապես:

Հայ ժողովուրդի ներկայի ու ապագայի բոլոր խնդիրները, բոլոր «անելիքները» պիտի կատարվին բոլշևիկներու ձեռքով: Ասկե հետո, ուրեմն, ըստ Քաջազնունիի, ամեն բան հայ բոլշևիկներու անելիքն է: Անկե դուրս ոչինչ կմնա:

Լսելե հետո Քաջազնունիին խոսքը իր հիմնական կետին մեջ, խնդիրը քննության առնենք: Հայաստանի Հանրապետության նախկին վարչապետի վերև հիշված երկու գիրքերը կարդացողը անշուշտ կնկատե, որ հոն արձանագրված բոլոր դատողություններու և եզրակացություններու շարքը կվերաբերի հայ ժողովուրդի ունենալիք այսօրվան արտաքին քաղաքականության (orientation) կամ ավելի ճիշտ՝ կվերաբերի Հայաստանի արտաքին քաղաքականության այսօր և միայն այդքան: Ասկե զատ ուրիշ ոչինչ կըսե և ոչինչ կուզե ապացուցանել ան: Արդ՝ անմիջապես հարց մը կծագի. արդյոք ժողովուրդի մը, ան ալ դարավոր կյանք ապրած ժողովուրդի մը ներկա կյանքին, ապագա-

յին ու պատմության համար «օրվան արտաքին քաղաքականությունը» ամեն բան կպարփակե՞, ամեն կարիք կբավարարե՞ ու ամեն խնդիր կլուծե՞: Անշուշտ ո՛չ: Արտաքին քաղաքականությունը, այսինքն՝ դիվանագիտական հաշիվը, նույնիսկ եթե բացարձակ ճիշտ եղած հաշիվ մըն է հոգուտ ժողովուրդի մը «օրվան շահերուն», ստեղծագործ արժեք մը չէ ինքն իր մեջ: Պատմությունը, այսինքն՝ ժողովուրդի մը հավիտենական դիվանագետները չէ, որ կկառուցանեն, այլ ժողովուրդը ինքը՝ իր մտքի ու հոգիի այլ կողմերով և ոչ թե արտաքին քաղաքականության մը հաշիվներով: Արտաքին քաղաքականություն մը կրնա փրկարար դեր կատարել արտաքին վտանգի մը պահուն, որով, սակայն, ան միշտ չի նույնանար ժողովուրդի կյանքին ու պատմության հիմնական, տևական և անհրաժեշտ ձգտումներուն հետ: Ժողովուրդի մը մեջ այնքան իղձեր, այնքան սերեր կան, այնքան թաքնված ներուժ հուզումներ կհորդին և այնքան մտքի ու հոգիի գոհարներ կհորինվին, որ կարելի չէ զանոնք անտեսել արտաքին քաղաքականության մը դիվանագիտական հաշիվներու հարկադրանքին տակ, մանավանդ երբ այդ հարկադրանքը կուգա այդ նույն ժողովուրդի թշնամիի կողմե: (Ինքը՝ Քաջազնունի իր եզրակացությունները կարդարացնե, անդադար առարկելով, թե՝ «Մյուս կողմը թուրքն է և մեզմե ուժեղ, իսկ երրորդ ուժ չկա»: Արտաքին քաղաքականության տեսակետեն այսօրվա պայմաններու մեջ հարկադրված ենք ուրեմն բոլշևիկներու հետ երթալու, քանի որ մյուս կողմը ավելի վատ է: Ռուսը գոնե մեր ֆիզիկական գոյությունը կապահովե: Այս մտահոգությունները արդար են և ճիշտ, սակայն խնդիրը չի փոխվիր, հարկադրանքը կմնա հարկադրանք): Ամեն ժողովուրդ արտաքին քաղաքականության կողքին կվարե նաև ի՛ր քաղաքականությունը, այսինքն՝ ներքին քաղաքականություն մը: Հ. Քաջազնունի տող մը անգամ չի հիշեր սակայն հայ ժողովուրդի ներքին քաղաքականության մասին: Ահա թե ինչու մենք պարտավոր ենք այստեղ հաստատել ու արձանագրել, թե մեր առաջին վարչապետը իր գիրքերուն մեջ ի հայտ կուգա միայն որպես դիվանագետ և բնավ երբեք լրիվ քաղաքական մարդ: Հիմնական առարկությունը, որ կարելի է ընել Քաջազնունիին, այն է, որ հաշվի չէ առած, թե հայ ժողովուրդը պետք ունի նաև ներքին քաղաքականության մը: Գիտենք, որ Հայաստան այսօրվա պայմաններուն մեջ 1920-են ասդին, և այսօր ալ դեռ, պետք ունի այդ արտաքին քաղաքականության, որպեսզի գեթ ժողովուրդի ֆիզիկականը ապահովե, սակայն երբ ակներևորեն կտեսնվի, որ այդ արտաքին քաղաքականությունը նույն ժողովուրդին հոգեկան գոյությունը ծրագրված ձևով կհալածե, զայն մահամերձ դարձնելու աստիճան, այն ա-

տեն պետք է կողմ մը ունենաս, կամ եթե չունիս, պետք է ստեղծես, որ պահպանե այդ ոգին ու զայն ապրեցնե, ինչքան ալ արտաքին պայմանները խորթ ըլլան: Հայ ազգը այսօր պետք ունի, հետևաբար, արտաքին քաղաքականության կողքին ու անոր ընդդեմ, ներքին քաղաքականության մը: Հայաստանի արտաքին քաղաքականությունը այսօր պիտի մնա դեռ նույնը ու պիտի ապահովե ժողովուրդին ֆիզիկական գոյությունը (թեև հոս ալ անստույգ կետեր կան ու հարցեր, որ մենք զանց կրնենք), իսկ ներքին քաղաքականություն մը ալ անհրաժեշտ է, որ ապահովե հայ ժողովուրդին հոգեկանը: Այլ խոսքով, իրերու այսօրվան վիճակը կհարկադրե, որ մեր ժողովուրդի արտաքին ու ներքին քաղաքականությունները իրարմե անջատվին ու վարվին տարբեր մարդոց կողմե: Մեր քաղաքական մարդոց իմաստութենեն ու հայրենասիրութենեն կախված է բնականաբար, որ այդ՝ այսօր հակադիր քաղաքականությունները—արտաքին ու ներքին—կարելի եղածին չափ ներդաշնակվին ու այնպիսի ճանապարհով մը առաջ տարվին, որ ապագային իրարու հանդիպին ու նույնանան: (Արդյոք Աղասի Խանջյան այդ գիտակցությո՞ւնը ուներ): Պատմության մեջ ուրիշ ժողովուրդներ ալ հաճախ գտնված են երկու անջատ հակադիր քաղաքականություններ վարելու անհրաժեշտության առաջ և հաջողած են, անջատ քալելով հանդերձ, միևնույն հեռավոր նպատակին հասնիլ: Կարգապահ, գիտակից ու հեռատես ժողովուրդները միայն կրնան այդ՝ «Getrennt marschieren, zusammen schlagen»-ի քաղաքականությունը կիրառել: Հայ ժողովուրդը կրնա՞: Փաստը այն է, որ ցարդ չկրցավ ու հավանական է դեռ ատեն մը գոնե չկարենա՝ մանավանդ ինչքան ատեն որ մեր երկրի արտաքին քաղաքականությունը վարող կողմը, այսինքն՝ Հայաստանի համայնավար ղեկավարությունը, սկզբունքով ազգային ապրում ու մտահոգություն չունի, կամ եթե կոնկրետ կերպով ունի իսկ՝ կաշկանդված է ու ազատ զգալու, ազատ մտածելու ու ազատ գործելու ոչ մեկ հնարավորություն ունի: Զգենք ուրեմն այդ ճակատը, որ գաղութահայության կամքեն և ընդհանրապես հայ ժողովուրդի կամքեն անկախ է: (Ընդհիրները չբարդացնելու համար մեր մտածումներու շրջանակեն դուրս կձգենք այն հարցը, թե գաղութահայությունը ի՞նչ չափով և ի՞նչ ձևով կրնա հավանական ազդեցություն մը, դեր մը ունենալ մեր ժողովուրդի՝ Հայաստանի այսօրվան ու վաղվան արտաքին քաղաքականության վրա: Հարց մը, որ պետք է քննության ենթարկել ամենայն զգաստությամբ ու լրջությամբ):

Գանք, ուրեմն, երկրորդ քաղաքականության գծին, այսինքն՝ հայ ժողովուրդի ներքին քաղաքականության խնդրին, որ, ըստ մեզ, այսօր կծանրանա խոշոր չափով մը գաղութահայության

ուսերուն վրա։ Բայց ի՞նչ կուզենք հասկնալ ներքին քաղաքականություն ըսելով, զոր չուզեր և չի կրնար վարել Խորհրդային Հայաստանի այսօրվան իշխանությունը, և զոր պետք է ուզե և կարենա վարել գաղութահայությունը։ Այս հարցին պատասխանելով, միաժամանակ նպաստած պիտի ըլլանք ազգային երևույթները, ու մանավանդ Հայաստանը, տեսնելու ու դատելու՝ մեր կերպը ճշտելու խնդրին։

Կ. ՊԱԼՃՅԱՆ

Բուխարեստ, «Հերկ», 1937, հոկտեմբեր

ՆԵՐՔԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Մեր ազգային կյանքը վերլուծելու նպատակով մեկնակետ առինք Քաջազնունին ու հասանք այն եզրակացության, որ **այսօր** մեր ժողովուրդի ներքին քաղաքականությունը խոշոր չափով մը և **էական** կետերու մեջ կը ծանրանա գաղութահայության վրա: Մեր հետապնդած նպատակն է ճշտել ու հիմնավորել այն պարտքը, այն պատմական դերը, որ գաղութահայությունը կոչված է ունենալու մեր ազգի այս ճակատագրական օրերուն, զոր կապրինք: Որովհետև մեր խոր զգացումն է, թե մենք, բովանդակ հայությունը իր բոլոր կազմակերպություններով, չէ ըմբռնած իր իսկական դերը, չունի հստակ ու լրիվ գիտակցությունը այն պատմական կոչումին, որ վիճակված է իրեն. մեր իրական կյանքին մեջ, գաղութահայ ազգային մարմիններու և կազմակերպությանց մեջ այդ գիտակցության ներկայությունը չերևար: Եվ սակայն անհրաժեշտ է որ գաղութահայությունը ոչ միայն իր կյանքը պահպանելու մասին խորհի,—ինչ որ բնականաբար նույնքան անհրաժեշտ է,—այլ նաև համահայկական պատմական իմաստ մը տա իր գոյության: Անշուշտ մեծ դժբախտություն է, որ բոլորս ալ մեր հայրենիքի՝ Խորհրդային Հայաստանի մեջ չենք ապրիր: Սակայն քանի որ մեզի տրված է անկե դուրս ապրիլ, պետք չէ ժամանակը կորսնցնենք, այլ մեր արտախորհրդային կյանքի բոլոր հնարավորությունները պետք է օգտագործենք առավելագույն չափով, ի խնդիր մեր ժողովուրդի ապագա ոգեկան ամբողջականության: Մենք կուզենք գաղութահայ կյանքի գոյության իմաստը գտնել ու այն հիմնավորել փորձել: Այդ իմաստը կկարծենք թե կարելի է գտնել ազգային ներքին քաղաքականության մեջ:

Ի՞նչ կը հասկնանք, ուրեմն, ներքին քաղաքականություն ըսելով:

Հավանաբար մարդիկ տարբեր ձևերով ըմբռնեն ներքին քաղաքականությունը ու տարբեր բովանդակություն տան այդ բառերուն: Շատեր, օրինակ, ներքին քաղաքականություն ըսելով կը հասկնան ներքին գործոց նախարարության մը ոստիկանական գործերը. ուրիշներ հավանաբար կը հասկնան կառավարության մը տարած քաղաքականությունը հանդեպ իր ժողովուրդին, կամ պետության մը ներքին զանազան գործերու ամբողջությու-

նը, ինչպես՝ բանակը, տնտեսությունը, դատարակությունը, հողագործությունը և այլն:

Մենք կուզենք ավելին հասկնալ: Ներքին քաղաքականություն ըսելով կուզենք հասկնալ մեր ժողովուրդի ներքին կյանքին, հետևաբար իրական կյանքին բոլոր երեսները՝ մեր անցյալին ու ապագային, մեր տնականության, մեր բարոյական-ոգեկան գոյության առնչությամբ: Պետք է գիտնալ, որ այս, լայն իմաստով, ժողովուրդի մը ներքին քաղաքականությունը չի նույնանար պետության մը ներքին քաղաքականությանը հետ: Պետությունը,—ինչ ձևի ալ ըլլա,—իր ներքին քաղաքականությամբ աշխատանքային մեկ մասը կը կատարե, հաճախ ձևական մասը. արտաքին պայմաններ կը ստեղծե միայն, ու ժողովուրդը ինքն է որ՝. ըլլա մասնավոր հաստատություններու, ըլլա ստեղծագործ անհատականություններու միջոցավ, բովանդակություն և կենդանություն կուտա անոր ու ճամփա կը բանա ապագային մեջ:

Չկարծվի, թե ժողովուրդի մը ներքին ուժը և կենսունակությունը պետության հետ կը շփոթվի: Իրականությունը այն է, որ պետության ներքին կենսունակությունը կախված է ժողովուրդեն, այսինքն ժողովուրդի՝ իր ներքին քաղաքականությունը կազմակերպելու, իր հոգին ամուր և միակամ պահելու աստիճանեն, օրվան խնդիրները ազգային հավաքական շահերուն պատմական հորիզոնին վրա տեսնելու կարողութենեն և մանավանդ բարոյական արժեքներ ստեղծելու հոգեկան հնարավորութենեն ու ճիգեն: Կենդանի օրինակ է մեր աչքերուն առջև Անգլիան: Հոն ամեն բան ծնունդ կառնե ժողովուրդեն ու անոր անհատներեն: Ավելի քան որևէ պետություն, անգլիական պետությունը չի նույնանար անգլիացի ժողովուրդին ներքին քաղաքականության հետ: Ան գիտակցությունը ունի այն բոլոր խնդիրներուն, որոնք կամրացնեն իր պատմական գոյությունը ու իր ազգային ամբողջությունը: Անգլիական պետությո՞ւնը. ոստիկան մը է ան. Հերբերտ Սպենսերի հռչակավոր «ոստիկան պետությունն» է, այն ալ ժողովուրդին հակակշռին տակ: Եվ սակայն ո՞վ կրնա ժխտել իմաստությունը անգլիացիին և փառահեղությունը իր պետության: Այս օրինակը հիշեցինք,—և կրնայինք ուրիշ պետություններուն ալ օրինակը բերել,—որպեսզի ցուցնենք, թե իրապես լայն իմաստով ըմբռնված ներքին քաղաքականությունը միայն պետությունը չի վարեր. և բնավ երբեք վիրավորական չէ որևէ պետության մը համար խոստովանիլ այդ իրողությունը:

Խորհրդային Հայաստանը մեր պետությունն է. բոլոր հայերուս պետությունը. ոչ իրավապես, սակայն իրապես: Մեր համոզումն է սակայն, ու կը կրկնենք, որ Խորհրդային Հայաստանը չի կրնար վարել,—և պետք չէ ձգել, որ միայն ինք վարե,—ամ-

բողջ հայ ժողովուրդի ներքին քաղաքականությունը, երկու պատճառով: Նախ՝ որովհետև որևէ պետություն ընդունակ չէ այդ գործը կատարելու, և երկրորդ՝ որովհետև մեր այսօրվան կառավարությունը ազգային տեսակետե կեդրոնաձիգ ուժ մը չէ: Ինչպես անգամ մըն ալ շեշտեցինք, Խորհրդային Հայաստանի վարիչները ու հոն ապրող քաղաքացիները, հետևաբար նաև մեր դրած խնդրի տեսակետեն մեզ հետաքրքրող՝ ստեղծագործելու կոչված հաստատություններն ու անհատները, սկզբունքով, չեն կրնար ազգային խղճի ապրումներ մշակել: Փաստական կացություն մըն է այս, գոնե այժմ:

Մեզի համար ներքին քաղաքականությունը կընդգրկե ազգին կյանքին բոլոր երեսները, բոլոր երևույթները, բոլոր խնդիրները համադրաբար: Տեսնելու մեր այս կերպը կը բղխի այն ըմբռնումեն, զոր ունինք ազգի մասին:

Ի՞նչ է ազգը:

Ահա հիմնական հարցումը, որուն պատասխանեն կախված է ազգային խնդիրները և Խորհրդային Հայաստանը տեսնելու և դատելու կերպը: Օրինակ, եթե մարդկային հասարակությունները դիտենք հորիզոնական բաժանումի մը տեսակետեն, այն ատեն աշխարհը պիտի տեսնենք բաժնված դասակարգերու և հետևաբար հաշվի իսկ չպիտի առնենք այն ուղղահայաց բաժանումները, որ ազգային բաժանումներ են: Այս պարագային բնական կերպով պիտի դավանինք դասակարգային տեսակետը ու պիտի ժխտենք ազգային տեսակետին գոյության իրավունքը: Եթե այսպես մտածենք, բնական է, որ ներքին քաղաքականության հարցը ինքնին կիյնա, և մեզի կը մնա բնավ նկատի չառնել մեր հայ ծագում ունենալու պարագան. լուծվիլ տեղացի ժողովուրդին հետ և լծվիլ պրոլետարիատի դասակարգային հեղափոխության պայքարին:

Մենք, սակայն, մարդկային հասարակությունները այդպես չենք տեսներ: Այլ կտեսնենք այնպես, ինչպես որ անոնք են **բնականեն**, այսինքն՝ բաժնված ազգային միավորներու: Բայց անմիջապես ըսենք, որ ազգային գոյություններն ալ տեսնելու տարբեր ձևեր կան: Այստեղ չենք ուզեր այդ տարբեր ձևերը քննության առնել: Մենք պիտի պարզենք մեր տեսակետը ամփոփ կերպով և այս հանդեսի էջերեն հաջորդաբար լայնորեն պիտի քննենք զայն, զանազան մակարդակի մասնակի հարցերու ձևին տակ, մեր ազգային ըմբռնումը ճշտելու ու խորացնելու միտումով, ու այդ առթիվ օգտվելով նաև աղբյուրներեն ու տեսություններեն այն նորագույն մտածողներուն, որոնք մեզի օգտակար կրնան ըլլալ մեր իրականությունը տեսնելու և դատելու մեր փորձին մեջ:

Մենք ազգերու գոյության օրգանական ըմբռնումը ունինք: Այսինքն՝ ազգը մեզի համար տեսակ մը օրգանիզմ է, որ ծնած է ու կապրի և կրնա որոշ պայմաններու տակ անհետանալ, այսինքն՝ մեռնիլ (Թեև ազգի մը պարագային մահը անհրաժեշտություն մը չէ. ազգեր կան, որ մեռած են. սակայն ուրիշներ ալ, մեռած կարծված, վերածնունդ մը ունեցած են, օրինակ՝ հույները, ճապոնները, մենք՝ հայերս, դեռ ուրիշներ): Ազգը օրգանիզմ՝ մըն է, սակայն ոչ միայն նյութական, այլ մանավանդ բարոյական-ոգեկան օրգանիզմ մը: Բնականաբար ազգը նյութական մարմին մըն ալ ունի. այդ՝ ցեղն է, կամ ավելի ճիշտ՝ **ցեղային որոշ խառնուրդ** մըն է, որ երկրամասի մը վրա, բնության որոշ ազդեցությանց և ցեղային խումբերու միջև կատարված ներազդեցությանց տակ, ժամանակի ընթացքին ստեղծած է ցեղային միավոր մը, որուն կուրծքին վրա հոգեկան երկունքի մը հետևանքով սկսած է բուսնիլ այդ ցեղային միավորի, հոգիի հնարավորություններուն և ուժին բույսը, այսինքն՝ մշակույթը, իր ամենեն լայն իմաստով: Ազգ մը ազգ դարձնողը անոր մշակույթն է, հետևաբար կրնանք նաև ըսել, որ ազգի մը հատկանշականը ոգեկան իրականությունն է: **Ցեղը հնարավորությունն է, ազգը՝ ինքզինքը մշակութորեն իրականացուցած ցեղային միավորն է:** Մշակույթը, այսինքն՝ ցեղային միավորի մը հոգիեն ծնած բարոյական-ոգեկան բոլոր արժեքներու համադրությունը ոգեկան օրգանիզմ մըն է. այս օրգանիզմը ինքն է ազգը բնորոշողը, ազգային հատկանիշը տվողը: Ազգը մշակույթ կրող, մշակույթ ծաղկեցնող ոգեկան իրականություն մըն է, ոգեկան օրգանիզմ մը, կենդանի մարմին մը: Ազգը թե օրգանական ամբողջություն մըն է, ուրեմն անոր ամբողջ մշակութային անցյալը, ամբողջ պատմությունը, ոչ թե մեռյալ հատվածներու շարք մըն է, այլ **այսօրվան** կենդանի ազգին զանազան, նույնքան կենդանի մասերը. ազգային իրականության մը մեջ ներկա է ամբողջ անցյալը որպես իրականացած համադրություն հոգեկան կարելիություններու և ներկա է նաև **ապագան,** որպես իրականանալի հնարավորություն:

Պատմության ընթացքին ժողովուրդները բնական կերպով ձգտած են դեպի մշակութային միավորության. անոնց ստեղծագործական ճիգերն ու աշխատանքը խմբված են կեդրոնական գիծի մը ուղղության վրա ու զարգացած են որպես իրար հաջորդող, դեպի առավելագույն կատարելության մը հասնող երևույթներ կամ կարելի է ըսել՝ այդ հոգեկան ստեղծագործության, մշակութային արժեքներու ամբողջությունը, ներդաշնակորեն աճած ու զարգացած է եկող ու գացող բոլոր սերունդներու միջո-

ցավ, որպես արտադրությունը միևնույն սաղմին: Ահա ատկե առաջ կուգա նաև **ոճը**, ազգի մը կյանքին ոճը:

Պատմության ընթացքին ժողովուրդները իրենց ոգեկան, մշակութային գոյությունը ստեղծած ու զարգացուցած են և արժեքներ հորինած, միշտ համաձայն ազգային-օրգանական օրենքի հրամայականին, նույնիսկ առանց ունենալու այդ գիտակցությունը: Որովհետև ազգային գիտակցությունը տակավ արթնցած է հոգիներու մեջ: Ազգային գիտակցությունը տեսակ մը ինքնաճանաչման պրոցես է, որ Եվրոպայի մեջ սկսած է ի հայտ գալ մանավանդ Վերածնունդեն ասդին ու իր կատարելության հասած է մեր օրերուն: Ազգային իրականությանց օրգանականության լավագույն ապացույցներեն մին է այն փաստը, որ, օրինակի համար, մեր Ե դարու ստեղծագործությունները, հակառակ անոր որ իրագործված են պատմական այնպիսի շրջանի մը, երբ արդի ըմբռնումով ազգային ինքնագիտակցությունը կը բացակայեր, կը կրեն, այնուամենայնիվ, առավելագույն և կատարելագույն չափերով, դրոշմը հայ ազգային հավաքականության ներքին ոգեկան աշխարհի օրենքին: Հայոց Ե դարը հայկական ազգային ոգեկան իրականության մեկ ճառագայթումն է, հայ հավաքական ոգիի ուժերու հորդումն է, բյուրեղացած՝ ստեղծագործության զանազան մարզերու մեջ կերտված գլուխգործոցներով: Այդ՝ հայկական ոճն է, այնպես, ինչպես կրցած է կոնկրետ իրականության վերածել Ե դարու հայ ժողովուրդը: Նույն ձևով ստեղծված են բոլոր հին և նոր իսկական մշակույթները, բոլոր մեծ ոճերը:

Նույնը կը պատահի նաև մեր օրերուն: Մանավանդ որ ժողովուրդները արդեն հասած են ինքնագիտակցության, այսինքն՝ ինքզինքնին սկսած են ճանչնալ որպես ոգեկան-մշակութային ստեղծագործ օրգանական միավորներ:

Չկարծվի թե մեր պարզած այս ազգային մշակութային տեսակետը որևէ ներքին կապ ունի այն քաղաքական ազգայնականության հետ, որ կը հայտնվի այսօր մեկ քանի պետություններու մոտ: Այդ պետությունները ազգային այս ոչ քաղաքական տեսակետը կօգտագործեն պարզապես որպես միջոց իրենց պետական-քաղաքական էմբերիալիստ նպատակներուն համար: Ասոր համար, սակայն, ազգության գաղափարն ինքը պատասխանատու չէ: Պետությունները միշտ ալ օգտագործած են, իրենց նվաճողական ձգտումներուն մեջ, զանազան գաղափարաբանություններ, ինչպես՝ քրիստոնեությունը միջին դարերու սկզբին, կաթոլիկությունը և բողոքականությունը միջին դարերու ընթացքին, խաչակրության գաղափարը նորեն միջին դարերուն, ազատության և եղբայրության գաղափարը 19-րդ դարու ընթացքին (Ֆրանսայի կողմե), օրթոդոքսության և հետո համասլավակյան

գաղափարները (ռուսերու կողմե) և այլն: Վերջապես նույնիսկ ընկերվարությունը և համայնավարությունը կշահագործվին էմբերիալիստ նպատակներով: Նույն բանը կընեն ֆաշական Իտալիան, հիթլերական Գերմանիան ազգայնականության գաղափարներու անունով: Իրականին մեջ, սակայն, մարդոց և մարդկային հավաքականություններու բիրտ և եսամոլ զգացումներն են, տիրապետելու բնազդն է, որ կգործե, ժամանակի ընթացքին փոխելով իր արտաքին դիմակը որպես արդարացման միջոց, որպես պատրվակ: Ահա թե ինչու համար պետք չէ շփոթել զուտ ոգեկան-մշակութային տեսակետեն դիտված ազգային գաղափարը, պետություններու արտաքին քաղաքականության հետ կապված «ազգայնականության» հետ: Ավելին կա դեռ: Այս ազգության գաղափարը կապ չունի նաև տնտեսական-ընկերային խնդիրներուն հետ: Որ հաճախ տնտեսապես տիրող դասակարգը ինքն ալ օգտագործած է ազգության գաղափարը իր դիրքը ամրացնելու համար, այդ ճիշտ է, սակայն այդ բնավ չի նշանակեր, որ ազգային գաղափարաբանություն մը, այսինքն՝ ազգային օրգանական ըմբռնումը չի կրնար հաշտվիլ ավելի արդար ընկերային-տնտեսական կարգերու հետ:

Մենք սկզբունքային ոչ մեկ արգելք չենք տեսներ. կատարելապես կարելի է երևակայել ազգային-ոգեպաշտ գաղափարաբանության մը կենդանի գոյությունը, տնտեսապես ընկերվարական կամ նույնիսկ համայնավար հասարակության մեջ:

Ուրեմն, որպեսզի մենք՝ հայերս, ներքին քաղաքականություն մը կարողանանք կազմակերպել, նախ պետք է հստակ գիտակցությունը ունենանք մեր ազգային ինքնության: Որովհետև միայն այդ գիտակցութենեն կրնան բղխիլ՝ մեր ներքին կյանքը կառուցանելու հոգեկան մթնոլորտը և ոգևորությունը, այդ կառուցումը հնարավոր դարձնող ատաղձներու ստեղծումը և, վերջապես, այդ կառուցումը իրականացնելու գործնական միջոցները գտնելու կամքը և ուժը: Ահա թե ինչու, մանավանդ մեր արտասահմանյան կյանքի ընթացքին, պետք ունինք ազգային ինքնագիտակցության գաղափարականին: Մնաց, որ այդ տեսակետը մեզի համար միաժամանակ գիտական ճշմարտության մը համազոր է, որուն արմատները կերկարին մինչև Արիստոտել:

Մարդկային կյանքը իրապես և էապես հասկնալու համար զայն պետք է դիտել որպես բարոյական, մշակութային իրականություն, իսկ ազգը՝ որպես այդ իրականության արժեքները ստեղծող ոգեկան միավորը, որպես մշակույթի կերպ (ոճ) ստեղծող հնարավորությունը, որովհետև մինչև այսօր ստեղծված բոլոր իրական մշակույթները (ոչ քաղաքակրթությունները ինչ որ ուրիշ բան են) ազգերու մշակույթներ են: Ու սերունդներուն և

անհատներուն կյանքի նպատակը և իմաստը պետք է նկատել՝ ծառայել այդ ազգային ոգեկան արժեքներու մշակման, զարգացման ու ծաղկման: Ասիկա ոչ միայն որպես ազգային պարտք, այլ նաև որպես մարդկային պարտք, որովհետև ազգը համամարդկության և մարդկայնության միակ հնարավորությունն ու կերպն է: Միայն մարդկային օրգանական իրականություն մը կրնա իրական մշակույթ մը ստեղծել, իսկ մարդկային ընկերության օրգանական իրականությունները ազգերն են:

Ահա մեր տեսակետը, մեր ոգեպաշտ սկզբունքը ու ըմբռնումը, որով կմոտենանք կյանքին Խորհրդային Հայաստանի իրականության մեջ, մեր ազգային կազմակերպություններն ու կուսակցությունները գնահատելու գործին և մեր ներքին կյանքը կազմակերպելու խնդիրներուն:

Կ. ՊԱԼՃՅԱՆ

Բուխարեստ, «Հերկ», 1937, նոյեմբեր

ՓՈԹՈՐԻԿ

Աշխարհի մեջ մեծ պատերազմ կա:

Հրդեհը երկրագունդին շուրջ կարշավէ:

Ու մենք՝ հայերս, գաղութներու մեջ մեկ մեկ անկյուն նետված, կը տխրինք կամ կոգևորվինք մերթ ընդ մերթ ու կսպասենք...

Կար ատեն, երբ մենք ալ կողմ էինք: Քանի՞ քանի անգամներ հավատացինք այս կամ այն պետության օգնության: Քանի՞ քանի անգամներ ինքզինքնիս «մեծերու» դաշնակից նկատեցինք: Քանի՞ քանի անգամներ բարեկամներ ունենալ կարծեցինք:

Վերջին անգամվանը գոնե, 1914—1918-ի պատերազմը, այնքան թարմ է մեր արյան հիշողության մեջ:

Այդ մեր «մեծ բարեկամները» ի՞նչ ձյուն բերին մեր գլխուն:

Ամբողջ մեր ժողովուրդը արյուն փսխեց:

Բայց ի՞նչ հարկ այլևս մեր հին ցավերը նորոգելու:

Ո՞վ պիտի լսե մեզ: Ո՛չ ոք:

Ուրեմն լռենք և մեր մեջքը ուղիղ պահենք:

Եվ մանավանդ եզրակացություն մը հանենք մեզի համար, թե մենք բարեկամ չենք ունեցած երբեք:

Այո՛, ա՛յս է ճշմարտությունը ու զայն պետք է բևեռի պես մեր գիտակցության մեջ գամենք:

Հայ ժողովուրդը բարեկամ չունի:

Այս չի նշանակեր, սակայն, որ պետք է քեն ընենք աշխարհին: Ո՛չ: Այդ ալ ուրիշ ծայրահեղություն մը պիտի ըլլար:

Որովհետև այս աշխարհը այսպես շինված է, ու եթե կուզենք մենք ալ ազգովին ապրիլ, պետք է հարմարինք կյանքի պայմաններուն: Թող մինչև հիմակվանը մեզի համար դաս մը եղած ըլլա. կյանքը և մարդիկ ճանչնալու դաս մը, որ Եվրոպան տվավ:

Հետևաբար, առանց երես դարձնելու կյանքին ու աշխարհին, ըլլանք զգույշ, ըլլանք չափավոր, ըլլանք հավասարակշիռ, բայց ըլլանք նաև արթուն և շարժուն՝ դեպքերու ընդմեջեն մեր շահերը հետապնդելու համար:

Մեր ազգի ու հայրենիքի շահերուն տեսակետին վրա կանգնած՝ նկատի չառնենք ո՛չ բարոյական և ո՛չ ալ գաղափարաբանական տվյալներ:

Քաղաքական կյանքի մեջ այդ տվյալներով առաջնորդվիլը, գոնե մեզի համար, այլևս աններելի շռայլություն մըն է: Այս ոգիով, ահա, ասպասենք, ու ինչպես Թալեյրան՝ այս նշանավոր քաղաքագետ մարդը սովոր էր ըսելու՝ «Զգենք, որ փոթորիկը անցնի»:

Այդ սպասման մեջ, սակայն, չմրափենք ու չընկնանք ճակատագրապաշտ:

Ներքնապես պահենք մեր միությունը ու զորացնենք մեր հայկական գիտակցությունը:

Դաստիարակենք մեր երիտասարդությունը և պատանեկությունը առողջ հայրենասիրությամբ մը:

Չհարուցանենք այլևս բրածո դարձած խնդիրներ, որոնք մեր գաղութներուն մեջ, քսան տարի շարունակ, ի զուր տեղը այնքան ավերներ գործեցին: Չհարուցանենք մանավանդ անձնական խնդիրներ, մանր հաշիվներ ու փոքրոգություններ:

Թող մեր հոգիները լսեն միայն ազգային հավաքումի հրավերը, որ այսօրվան մեր կյանքի սրբազան հրամանն է:

Երբ փոթորիկ կա աշխարհի մեջ, գլուխնիս ողջ պահենք, հոգինիս ամուր ու բոլորված հավաքական շահին շուրջ՝ աշխատինք միևնույն նպատակին համար, ամեն մեկս ինչպես որ կըրնանք, ինչքան որ կրնանք:

Աշխատինք, այս անգամ մեզի բարեկամ դարձնելով նախ՝ մեր գիտակցության ճիգը ու մեր հավաքականության ուժը, ապա՝ ժամանակը և դեպքերը:

Կ. ՊԱԼՃՅԱՆ

Բուխարեստ, «Հայ մամուլ», 1941, դեկտեմբեր 14

ԿԱՐՈՏ ՀԱՅՐԵՆԻ

Կանչում է կրկին, կանչում անդադար
Էն չքնաղ երկրի կարոտը անքուն,
Ու թևերն անա փռած տիրաբաք՝
Թռչում է հոգիս, թռչում դեպի տուն:
(Հովհ. Թումանյան)

Հսկա մեքենայի մը թևերով թռիչք առած, հորիզոններ ճեղքելով, իջանք Երևանի օդանավակայանը, ոտք դրինք հայ հողին վրա:

Երևա՜ն... Արարատյա՜ն դաշտ... Հայաստա՜ն... կանգնած եմ անա մեր նախնիներու հողին վրա ու կարոտակեզ կսեղմեմ ջերմ ձեռքերը իմ հայաստանցի եղբայրներուն: Դարերով կուտակված կարոտներ, հույզեր, տենչեր այժմ հանկարծ իմ մեջ կարթննան, մարմին կառնեն գիտակցությանս լույսին տակ և կալեկոծեն բովանդակ էությունս: Անանուն, անուշ հուզումներ ալիք-ալիք ուժգին կզարնվին սրտիս արևոտ ափերուն և հորդառատ ու քաղցրահոս կողողեն հոգիս. կտարածվին շուրջս ամեն կողմ, բոլոր անհատներեն անդին. կհպին ամեն ինչի, մինչև հորիզոնները հեռավոր... ի՜նչ սրբազան ապրումներ... կյանքիս առավելագույն երջանկության պահն է, զոր կապրիմ: Ես ալ կուզեմ կանչել՝ «Կա՛նգ առ, ոոպե՛, դուն այնքա՜ն գեղեցիկ ես»:

Երևա՜ն, իրականացած երազ:

Երևա՜ն, անթառամ ծաղիկ հայ ժողովուրդի հազարամյա անշեջ հույսին, համառ պայքարներուն, շինարար ոգիին, բացված Արարատյան դաշտի սրտին վրա, սեգ Մասիսներու և քառագագաթն Արագածի հավերժական նայվածքին ներքև:

Մեր մեքենան կսուրա մայրաքաղաքի պողոտաներուն վրայեն, օդանավակայանեն դեպի կեդրոն, դեպի «Ինտուրիստ» հյուրանոց: Լայն, մաքուր, ասֆալտապատ պողոտաներ գեղատեսիլ, ակասիաներու խիտ կանաչով եզերված, ընդարձակ հրապարակներ, գողտրիկ պուրակներ, հանրային պարտեզներ, շքեղ ցուցափեղկերով անհամար վաճառատուներ և շենքեր անթիվ, անհատնում:

Ամեն կողմ եռուզեռ, արտասովոր կենդանություն, շեն ու շենշող մթնոլորտ բյուրեղյա լույսի մեջ ողողուն: Տակսիներ, օթոբուսներ, հանրակառքեր, շքեղ տրոլեյբուսներ կսուրան մին մյուսին ետևեն, հսկայածավալ, անվերջանալի շքերթի մը պատկերը ներկայացնելով մեր առջև: Քիչ հետո Աբովյանի վրա եմ: Կբալեմ միևակ, Երևանի փողոցներեն: Շուրջս անհամար անցորդներ, խիտ ու ծիծաղ, առատ լույս և ջերմություն: Հետաքրքիր, ժպտալի հայացքներ զիս կողջունեն անձայն: Կնայիմ անոնց աչքերուն մեջ խորհուրդներով զեղուն, հայկական խորունկ աչքեր, կենդանի, վառ աչքեր, հյուրընկալ աչքեր...

Այնքա՜ն ըսելիքներ ունինք իրարու...

Կբալեմ կարծես երազի մեջ, դյութական աշխարհի մը դռները բանալով: Կկոխեմ փողոցի քարերուն վրա. որքան ջերմ են այդ քարերը: Ամեն մեկ քար սրտիս կհպի: Ամեն մեկ քարեն սիրտս հուզում մը կբաղե: Այստեղ քարերը և ամեն ինչ կենդանի են, ամեն ինչ կշնչե, կշարժի... Շենքերը, ծառերը, մարդոց աչքերը, երկինքի կապույտը հոգիին կխոսին անճանոթ և խորհրդավոր, սակայն քաղցր ու մտերիմ բարբառով մը, որ ջերմ հոսանքի մը նման կանցնի զգայարաններուս մեջեն, ծաղիկ ու երգ սփռելով: Սիրտս ուժգին կտրոփե, և կուրծքս նեղ կուգա: Աշխարհն ամբողջ շուրջս պար է բռնած:

Պատրա՞նք, թե՞ իրականություն: Անուշ երկյուղ մը կապրիմ, չըլլա՜ թե երազ ըլլա...

Եվ որպես գերագույն ստուգություն, հայացքս Մասիսը կը-փնտռե...

Ավելի ուշ, հյուրանոցեն դուրս կելլեմ և դեպի Պետական օպերան կուղղվիմ: Միևակս կբալեմ Երևանի փողոցներուն մեջեն:

Օպերայի հրապարակին վրա կխոսիմ երևանցիներու հետ: Այնքա՜ն ըսելիքներ ունինք իրարու, որ խոսելու հարկ չկա: Հույզերու հեղեղին մեջ բառերը կկոտրտին, կխեղդվին անկենդան խաղալիքներու նման...

Երևանցին հպարտ է իր մայրաքաղաքով. ան կխոսի շենքերու, գործարաններու և պողոտաներու մասին, թատրոնի և օպերայի մասին ու կըսե՝ «շինեցինք», «մենք շինեցինք» և կավելցընե՝ «պիտի շինենք»: Ամեն մեկ երևանցի այն զգացումը ունի, թե իր և իր նմաններուն հավաքական ճիգին և տքնության արդյունքներն են, զոր մենք՝ դուրսեն եկողներս, կտեսնենք այժմ: Ամեն շինարար գործ, ամեն կառուցում, ամեն ստեղծագործություն բոլորի «գործն է» և բոլորի սեփականությունը:

Նույնիսկ մարդիկը սեփականացուցած են: Երևանցին չըսեր միայն՝ «մեր Մասիսը, մեր ջուրը, մեր խաղողը, մեր կաուչուկը,

մեր համալսարանը», այլ կըսե նաև՝ «մեր Աճառյանը, մեր Իսահակյանը, մեր Հայկանուշ Դանիելյանը»...

Կզգաս, թե ամբողջ Երևանը, ամբողջ երկիրը բույն մըն է, որտեղ հայերը կապրին այդ բույնին սեփականատերը ըլլալու գիտակցությամբ: Սեփականատերը երկրին, անցյալին ու ապագային:

Գերանհատական գիտակցություն մը կիշխե բոլոր հոգիներուն վրա և մարդիկ կապրին իրենց անհատական կյանքին կեդրոնեն դուրս գտնվող բարձր նպատակի մը համար. կապրին համայնքի զգացումին մեջ և համայնքի շահերուն գիտակցությամբ:

Երևանի մեջ մարդիկ «մինակ» չեն. ամեն մեկուն կյանքը իր անհատական կյանքով չսկսիր և ոչ ալ անով կվերջանա: Հազարամյա հայ ժողովուրդն է, որ կապրի ու կշնչե ամենուն գիտակցության մեջ. հայ ժողովուրդը, որ մեկ անգամ ծնած է դարեր առաջ և որ այլևս վախճան չունի:

Չէ՞ որ իր հայրենիքին մեջ հայը չի մեռնիր...

ՎԱՉԳԵՆ ՎԱՐԴԱՊԵՏ

Բուխարեստ, «Պահակ», 1946, հունիս 16

ՆՈՐ ԱՇԽԱՐՀԸ

Մեր կյանքի պայմաններու և նյութական միջոցներու ներած չափով կը հետևինք Խորհրդային Միության շուրջ ստեղծված գրականության: Ու պետք է հաստատենք, թե մանավանդ վերջին տարիներու ընթացքին լույս տեսած գրքերը առավել կամ նվազ չափով կուգան ապացուցանելու՝ Ռուսաստանի մեջ մարքսիստ-ընկերվարությունը կառուցանելու փորձին անհաջողությունը: Իսկ հաստատողները հակաընկերվարականները չեն միայն, այլ նաև՝ զտարյուն մարքսիստներ, համայնավարներ, որոնք այդպիսիք ըլլալով հանդերձ, հավատարիմ մնացած են եվրոպական ընկերվարության բուն ոգիին, որ կը կայանա ամեն բանե առաջ մարդու ազատության, արժանապատվության զգացումներուն ու մարդկորեն բարվոք ապրելու կամքին մեջ:

Այս իրողության ի տես, ոմանք կը հրճվին, ոմանք կը հուսահատին, ուրիշներ կը վրդովին:

Մենք կուզենք միայն փաստերը արձանագրել, իրողությունը հաստատել: Կը ջանանք ճիշտ տեսնել, հասկնալ ու եթե կարելի է՝ եզրակացություններ հանել: Մենք նախապաշարումներ չունինք, ոչ ալ նախասիրություններ ու քարացած a priori գաղափարներ: Մեր միակ գետինը իրականությունն է, այնպես, ինչպես ան կա, իսկ այդ իրականությունը տեսնելու և դատելու միակ գործիքը մեր մտածումն է: **Մեզի համար ամեն բան մտածումի առարկա է ու ամեն մտածում՝ դատումի մը նախեզրը:** Թեև հանդարտ սրտով չէ, որ կը հետևինք այս բոլորին: Մեր հայրենիքը ևս ստիպված է մասնակցիլ այս փորձերուն ու ենթարկվիլ անոնց հետևանքներուն:

Մեր երիտասարդ սերունդին առաջին պարտականությունն է (մանավանդ մտավորական երիտասարդներուն) հետևիլ այն բոլոր երևույթներուն ու հեղաշրջումներուն, որոնց կենթարկվի մեր հայրենիքը, առանց շատ հուզվելու, առանց հուսահատելու ու առանց ճակատագրապաշտ հառաչանքներու: Վարժվինք իրողությունները դիտել իրենց ճակատեն, տղամարդորեն: Գիտնանք հարվածներ ստանալ, սակայն չմոռնա՛լ անոնց ցավը. գիտնանք պահել գիտակցությունը մեր կորսնցուցածին, մեր ոտնակոխ ազգային արժեքներուն, մեր իրավունքին, մեր արժանապատվության:

Գաղութահայ երիտասարդ սերունդը իր գիտակցությունով, իր բովանդակ հոգիով պիտի կերպով պիտի բռնե Խորհրդային Հայաստանի օձիքը, աչքերը սևեռած անոր: Ան մեկդի պետք է դնե ամեն կողմնակի և ձևական մտածում ու ապրի Հայաստանով, այսինքն՝ գոնե մտքով ու հոգիով մասնակից դառնա անոր կյանքի իրականության ու հեղաշրջման: Որովհետև ակներև է, որ կյանքը խորհրդային երկիրներու մեջ, ինչպես նաև այնտեղի մարդոց մտածումը, մեծ հեղաշրջումներու նոր պատմաշրջան մը սկսած են ապրիլ: Ու ով որ իր հայրենիքը կը սիրե, պետք է նախ քննական վերաբերմունքով մը հետևի այդ բոլորին: Խորհրդային Միության կյանքը, մանավանդ վերջին տարիներու ընթացքին, շեշտված դիալեկտիկ ընթացք մը ունի: Ընկերային կյանքի դիալեկտիկ ընթացքը անշուշտ օտար չէ Մարքսի և Լենինի վարդապետության, ոչ միայն օտար չէ, այլ այդ գաղափարը հիմունքն իսկ է համայնավարության: Գաղութահայ մտավորականը պետք է մասնակցի ուրեմն այդ դիալեկտիկ ընթացքին: Եվ այդ կարելի է, կկրկնենք, միայն քննական, գիտակցական վերաբերմունքի մը շնորհիվ, հանդեպ այսօրվան խորհրդային իրականության, պատվանդան ունենալով հայ ժողովուրդի պատմության ոգին ու հայ պետականության այլևս չմեռնելիք գաղափարը: Գաղութահայ նոր սերունդներու պատմական-ազգային ֆունկցիան ա՛յս քննական վերաբերմունքին մեջ կը կայանա: Ասիկա է, մեր պայմաններու մեջ, ճշմարիտ հայրենասիրությունը:

Այս նոր գրքին հեղինակն է **Իվոն**, ֆրանսացի համայնավար բանվոր մը, որ ոգևորված Խորհրդային Միությունով ու հափշտակված նոր կյանքի պատկերեն, կը սորվի ռուսերեն և 1923-ին կը մեկնի Խորհրդային Միություն: Հոն կը սկսի աշխատանքի, Մոսկվայի զանազան գործարաններու մեջ որպես որակյալ բանվոր: Ժամանակի ընթացքին Իվոն կը հասնի ավելի և ավելի բարձր դիրքերու: Կը կատարելագործե իր ուսումը, կը դառնա մասնագետ մը և միաժամանակ արժեքավոր համայնավար ուժ: Հաճախ իրեն կը հանձնվին կարևոր կուսակցական պաշտոններ: Կը ճամփորդե շատ հաճախ Խորհրդային Միության մեկ ծայրեն մյուսը, մինչև Կովկաս, մինչև Արխանգելսկ, մինչև Բայկալի շրջան ու Վլադիվոստոկ: Հակառակ այս բոլորին սակայն, կը պահե իր ֆրանսական հպատակությունը և շնորհիվ այս հանգամանքին, միայն ֆրանսական դեսպանատան հովանավորությամբ, մեծ դժվարություններով կը հաջողի վերջապես դուրս գալ երկրեն 1934-ին: Իվոն, հակառակ որևէ անբաստանության տակ չընկնելուն, հագիվ կրցած է երկու տարի տևող ձևակերպություններե և հարցաքննություններե վերջ, Խորհրդային Միութենեն մեկնիլ, իր օրինական ռուս կնոջ և երեխային հետ:

Ահա այս գրքին մեջ կը գտնենք կարծիքը ոչ թե հակառակորդի մը, ոչ թե մտավորականի մը, այլ թեքնիսիենի մը, որ ավելի քան տասը տարի ապրած ու աշխատած է նոր աշխարհը կառուցանելու հավատքով:

Ավելորդ է ըսել, թե այս գիրքը խիստ հետաքրքրական է: Գուցե ամենեն լավ գիրքն է Խորհրդային Միության իրական ներքին կյանքին մասին: Մանավանդ որ հեղինակը գրեթե բնավ մեկնություններ չավելցներ իր կողմն, այլ կը նկարագրե, կը բացատրե ներքին կյանքի մեքանիզմը, թիվեր կուտա ու շոշափելի փաստեր, քաղված բոլորն ալ խորհրդային աղբյուրներե, խորհրդային օրենսդրութենեն, պաշտոնական ճառերե ու թերթերե: Ավելցընենք նաև, թե Իվոն հակաընկերվարական մը չէ դարձած. հուսախաբված է սակայն խորհրդային ընկերվարութենեն:

Շատ դժվար պիտի ըլլար տալ այն բոլորը, ինչ որ հեղինակը կը ներկայացնե 278 էջերե բաղկացած ու խտացյալ կերպով գրված իր գրքին մեջ: Մենք պիտի ծանրանանք մանավանդ մեկ հիմնական երևույթի վրա, զոր կը գտնենք հատկանշական և խիստ կարևոր ընկերային, ինչպես նաև ազգային տեսակետե: Այդ երևույթը՝ այսօրվան Խորհրդային Միության կյանքին մեջ **դասակարգային նոր շերտավորումի մը և կազմակերպումի մը պարագան է,** զոր նկատած է նաև Անդրե Ժիդ իր վերջին երկու գրքերուն մեջ: Իվոն, սակայն, ընդհանուր խոսքեր չէ որ կընե, այլ շոշափելի ձևով կը ներկայացնե տնտեսական-ընկերային կյանքի կազմակերպումը Խորհրդային Միության, ուրկե կերևա ճշգրիտ կերպով նոր դասակարգային շերտավորումին իրողությունը ու զարգացումը:

Զմոռնանք, որ համայնավար հեղափոխության նպատակն էր դասակարգերու վերացումը: Ե՛վ Մարքսի, և՛ Էնգելսի համար ատիկա է հիմնական նպատակը: Կյանքը այնպես պետք է կազմակերպել, որ մարդիկ հավասար դառնան, հավասար չափով վայելեն կյանքի տնտեսական բարիքները, հավասար չափով իրավասություններ և իրավունքներ ունենան, հավասար չափով վայելեն ազատությունը: Համայնավարության հիմնադիրներուն համար ամեն չարիք կը բղխեր դասակարգերու գոյութենեն: Ուրեմն պետք էր դասակարգերը վերացնել ու իրականացնել անդասակարգ ընկերությունը: Ատիկա իրենց համար երկրային դրախտն էր, որ պետք էր իրականացնել ի գին ամեն բանի: Ահա թե ինչու համար Լենինը և իր կուսակցությունը պատերազմ հռչակեցին դրամատեր և մանր, քաղքենի դասակարգերու դեմ ու ոչնչացուցին զանոնք քանի մը տարվան մեջ:

Մնաց մեկ դասակագ. ուրիշ խոսքով՝ պահ մը իրականացավ անդասակարգ ընկերությունը: Ինքը՝ Ստալին, իր անցյալ տար-

վան մեկ ճառին մեջ պաշտոնապես կը հայտարարեր, թե Խորհրդային Միության մեջ այլևս հին դասակարգերու հետքն իսկ չկա, թե հեղափոխությունը իր առաջին շրջանը բոլորած է, իրականացուցած ըլլալով անդասակարգ ընկերությունը, ընկերվարական ընկերությունը: Ստալին սակայն չէր ըսեր, թե քանի որ դասակարգային թշնամին վերացած է ու իրականացած անդասակարգ ընկերությունը, տնտեսական հավասարությունը իրականացա՞ծ է արդյոք, մարդիկ նույն դրական պայմաններուն մեջ կապրի՞ն, մարդիկ հավասար ազատություններ ու իրավունքներ կը վայելե՞ն, ստեղծված ընկերությունը դրապես ընկերվարակա՞ն է:

Այս բաներու մասին Իվոն կը խոսի իր գրքին մեջ: Հեղինակը քանի մը դրական իրողություններ կը պարզե, որոնք կուգան ցուցնելու թե, թեև հին դասակարգերը մեռան, սակայն տնտեսական-ընկերային նոր պայմանները, նոր իրականությունները ու **նոր կյանքի զարգացման բնական ձգտումները սկսած են ծնունդ տալ չնախատեսված նոր շերտավորումներու,** որոնք հետզհետե շեշտված գիծեր կը ստանան, կամրանան ու տակավ կը դառնան նոր գերադաս ուժեր: Եվ ասիկա կը կատարվի իրերու բնական և անհրաժեշտ ընթացքով, գուցե և հակառակ մարդոց կամքին: Ահա հեղինակին պարզած իրողություններեն մի քանին: Զանազան դասերու պատկանող մարդիկ վարձատրված են 1937-ին հետևյալ ձևով. բանվորները՝ 150-են 250 ռուբլի, փոքր պաշտոնյաներ՝ 130-են 225 ռուբլի, պաշտոնյաներ և միջին մասնագետներ՝ 300—1000, պատասխանատուներ, մասնագետներ, բարձր պաշտոնյաներ՝ 1500—10,000 ռուբլի: Այս առթիվ հիշենք, որ Լենին, նոր պետությունը հիմնած ատեն, իր 1917-ի հռչակավոր ծրագրի կետերեն մեկուն մեջ (հինգերորդ թեզը) կըսեր, թե՝ «ամենաբարձր պաշտոնյաներու իսկ ստացածը պետք չէ գերազանցե լավ բանվորի մը միջին ամսականը»: Բոլոր ամսականներու վրա տուրքեր կան, որոնց ընդհանուր գումարը կը բարձրանա ամսականին 100-ին 15—21, այնպես որ բանվորին ձեռքը իրապես կը հասնի ոչ ավելի քան 120—200 ռուբլի ամսական:

Ամեն տեղ ու բոլոր մարզերու մեջ, և՛ ազատության տեսակետե, և՛ հավաքական բարիքները վայելելու տեսակետե, և՛ ճամփորդությանց մեջ (հանրակառքի, շոգեկառքի), և՛ թատրոններու մեջ, և՛ օդափոխությանց վայրերու մեջ, և՛ ճաշարաններու մեջ կը տիրե շեշտված բաժանումը անոնց միջև, որ բանվորներն են և անոնց միջև, որ այդ բանվորներու «տերերն» են: Այո՛, իսկական տերեր, որ կը կազմեն արդեն իսկական ընտրանի մը, ընտրյալ դաս մը, տեսակ մը նոր ազնվականություն՝ լավ դաստիարակված, լավ պատրաստված ու օժտված ղեկավարի բոլոր

դրական և բացասական կողմերով: Այս բարձր դասու մարդիկ, բացի իրենց մեծ ամսականներեն, կը ստանան նաև հավելյալ գումարներ, այսպես կոչված «տնօրինական ֆոնդեն»: Այս դասակարգը երթալով իր դիրքերը կամրացնե նաև շնորհիվ այն հանգամանքին, որ ընտրովի չէ, այլ նշանակված է իր դասու մարդոցմեն: Բանվորը որևէ հնարավորություն չունի ընտրելու իր ղեկավարը: Խորհրդային օրենսդրության մեջ տակավ կը սեղմվի ու կը զեղչվի ընտրությունը: Բանվորին միակ կյանքը՝ հլու, հնազանդ և անմրմունջ աշխատանքն է: Օրե օր գիտական մեթոդներ կը հնարվին, որպեսզի բանվորը իր առավելագույնը տա: Աշխատանքի ընթացքին անօգուտ շարժումները արգիլված են, և այն բանվորը, որ չի հարմարիր այս մեքենայացման, հետևանքները կը կրե: Ուրիշ պարագա մը, որ կը պարզե Իվոն, այն է, թե որևէ բանվոր կամ գյուղացի իրավունքը չունի իր աշխատանքը կամ աշխատանքի վայրը փոխելու: Ամեն բանվոր կապված է այսինչ գործարանին, այսինչ բաժնին: Ամեն գյուղացի դատապարտված է փակված մնալու այն տեղին վրա, որ նշանակած է իր կոլխոզը կամ սովխոզը: Աշխատանքը փոխելու կամ աշխատանքի վայրը փոխելու փափագն իսկ կասկածելի կը դարձնեն բանվորը: Իսկ որևէ բանվոր կամ գյուղացի եթե մեկնի իր գործարանեն կամ գյուղեն, կը նկատվի «աշխատանքի ճակատեն փախըստական», ու կը դատապարտվի այդ «դավաճանության» համար: Ընդհակառակը, երբ ղեկավարությունը հրահանգե տեղափոխությունը, բանվորը կամ գյուղացին չեն կրնար ընդդիմանալ:

Մինչդեռ ղեկավար դասակարգը կապրի բոլորովին այլ պայմաններու մեջ: Իվոն կըսե, թե այս դասու մարդիկ կատարյալ ճոխ և շռայլ կյանք մը կապրին: Մոսկվայի որոշ մեծ ճաշարանները անոնց մենաշնորհն են, ուր հաճախ ճաշկերույթներ, բանկետներ կը տրվին: Այս բարձր դիրքերը նշանակվի ըլլալուն հետևանքով կազմված է տեսակ մը դասակարգային հոգեբանություն, որով իրար կը պաշտպանեն, և նոր դիրքի մը, նոր պաշտոնի մը առիթը ներկայացած պահուն կը նշանակվի իրենց շրջանակեն կամ իրենց ընտանիքեն մեկը: Անուղղակի կերպով այս դիրքերը ժառանգական ալ դարձած են, որովհետև միայն բարձր դասի ընտանիքին տղան կրնա և՛ ժամանակ, և՛ նյութական ու բարոյական միջոցներ ունենալ իր հոր տեղը գրավելու համար: Այսպես, Իվոն կը հիշե, թե բազմաթիվ բարձր պաշտոնյաներ մասնավոր ուսուցիչներ կը վարձեն, որպեսզի իրենց զավակները լավ պատրաստվին ու հաջողին քննությանց և մրցումներուն: Մինչդեռ բանվորին երեխան տասնչորս տարեկանեն ստիպված է գործարան երթալ ու աշխատիլ:

Այս պայմաններու մեջ բանվոր մը կամ բանվորի մը զավակը միայն բացառաբար իր ընդունակություններու շնորհիվ կրնա բարձրանալ ու մուտք գործել ընտրյալներու դասին մեջ: Ճիշտ է, թե ընտրյալ դասն ալ, ինչպես բանվորն ու գյուղացին, սեփականություն չունի, սակայն հնարավորություն ունի օգտագործելու հավաքական սեփականությունը: Օրինակ, ամեն բարձր պաշտոնյա ունի օթո, մեքենավար, բնակարան, ամառանոց և այլն. անշուշտ ոչ որպես սեփականատեր, այլ որպես մեկը, որ իրավունքը ունի այդ բոլորը վայելելու հանուն իր **ընկերային պաշտոնին:** Իվոն կը գրե. «Ընկերային պաշտոնը», որ նոր մենաշնորհումներու արդարացուցիչ բացատրությունն է, իսկական փոխարինողն է երբեմնի ազնվականներու «արյունին» և քաղքենիին «դրամին»: Ասիկա նորագույն գիտական ձևն է «մարդը մարդուն շահագործելու» երևույթին»:

Ընկերվարությունը վերածված է պլանային աշխատանքի իրականության: Ընկերվարության գաղափարաբանության հիմունքները, սկզբունքները ու նպատակները ոչ միայն չեն իրականացած, այլ արմատախիլ եղած են նաև այդ գաղափարաբանության հոգեբանական հնարավորությունները: Ընկերվարության գաղափարներեն մնացած է մեկ բան՝ **պլանը:**

Պլան, որուն իրականացումը դարձած է կյանքի միակ գերագույն նպատակը: Պլան, որ կյանքը վերածած է մեքենական դրության մը՝ գիտական, չոր, անսիրտ և անհրապույր: Պլան, որ քշած է կյանքեն մարդկային հաճույքները, պատրանքը, երազը, խնդության պահերը, ազատ զգալու հոգեկան հնարավորությունը, քշած է նույնիսկ սերը: Իվոն կըսե, թե երիտասարդները ավելի ու ավելի քիչ կը զբաղին սիրահարությունով: Երկսեռ երիտասարդության խոսակցության նյութը ընդհանրապես պլանն է: Սերը հավասար դարձած է սեռայինի: Պլան, որուն գործադրության համար պետք են միլիոնավոր բանվորներ ու գյուղացիներ, ու պետք են նաև ղեկավարներ, հրամայողներ և ճարտարապետներ, որոնք առաջնորդեն ամբոխը դեպի աշխատանք՝ գիտական մեթոդներով: Պլան, վերջապես, որ վերածած է մարդիկը տնտեսական էակներու, բոլորն ալ հպատակները նյութին, մեքենային:

Եվ հատկանշական է, որ մարդիկ այլևս հաշտված են այս անհավասարության դրության հետ: Ղեկավար դասը հաջողած է տարածել նոր մեկնաբանություն մը, իր գոյությունը արդարացնելու համար: Անոնք կըսեն, թե «իրենք իրապես պատմական անհրաժեշտություն մըն են», ու իրենց «պարտականությունն է», որ կընեն: Թե հեղափոխական շարժումը, վարի դասին ըմբոստությունը չէ ընդդեմ բարձր դասին, ընդդեմ անարդարության և չարիքին. այս բոլորը արտաքին երևույթ է միայն. խորքին մեջ

խոսքը արդարության մասին չէ, ոչ ալ երջանկության, ոչ ալ ազատության, այլ տնտեսական դրության այն անհամաձայնության մասին, որ կար՝ թեքնիք զարգացման և տնտեսական կազմակերպման միջև, սահմանափակ ապառումի և հարատև զարգացման մեջ գտնվող արտադրության միջև:

Ահա գիտական հիմունքը բանվորական շարժման: Արդարությունը, ինչպես նաև ազատությունը գոյություն չունին որպես առանձին գոյավիճակներ. միամիտ պետք է ըլլալ պայքարելու համար արդարության կամ ազատության համար: Պետք է պայքարիլ, սակայն, տնտեսական կազմավորումը (armature) վերըստին համաձայնեցնելու համար թեքնիք զարգացման, քառսը փոխելու համար կարգ ու կանոնի: Կարելի՞ է միթե պատմական ընթացքին դեմ երթալ: Ատիկա ապարդյուն և անմիտ գործ մը պիտի ըլլար: Ճշմարիտ մարքսիստը պատմության հետ կընթանա: Իսկ այդ պատմական պրոցեսը իրագործողները իրենք ղեկավարներն են, որոնք այդ «ընկերային ֆունկցիան» ունին:

Խորհրդային Միության նոր ընտրանին կը տիրապետե ու կը ղեկավարե տնտեսական-ընկերային կյանքը «պատմության հրամանավ» այնպես, ինչպես միջին դարուն ավատապետը կիշխեր «Աստուծո հրամանավ»: Անունները են փոխված միայն:

Երբ գիրքը կավարտես, շրթունքներուդ վրա կուգա Արիստոտելի խոսքը, թե՝ «Ոչ մեկ քաղաքակրթություն հնարավոր չէ առանց ստրուկներու»: Արդյոք խորհրդային մեծ փորձը, քսաներորդ դարուն, պիտի գա հաստատե՞լ մեծ փիլիսոփային այս խոսքը: Իվոն կը զարհուրի այս նոր դասակարգային շերտավորումներեն, մանավանդ որ նոր ստեղծված դրությունը ամուր է ու երթալով կը հիմնավորվի, կամրանա: Ու ան կը վերջացնե՝ ըսելով. «Ոլբերգականը այն չէ, թե ռուս հեղափոխությունը հիմնական ոչինչ չէ տված վարը գտնվողներուն, որոնք իրմե կը սպասեին ամեն բան, այլ ոլբերգությունը հոն է, որ ոչինչ չտալով հանդերձ, ան կրցավ կառուցանել նոր և կենսունակ աշխարհ մը»:

Կ. ՊԱԼՃՅԱՆ

Բուխարեստ, «Հերկ», 1938, մայիս

ՆՈՐԸ

Ի՞նչ կա ավելի հմայիչ ու ավելի ոգևորիչ, քան **Նորին** գաղափարը:

Մարդն ու դարերը «Նորն» է, որ կերազեն: Ժողովուրդները մեծ ու փոքր «Նորին» ի խնդիր կպայքարին ու «Նորին» մեջ է, որ փրկություն կտեսնեն:

Մարդկային այս հավիտենական տենչն է, որ ստեղծած է տարիին ալ «Նորը»:

«Նոր տարին»՝ գուցե ամենեն խորապես մարդկայինը բոլոր տոներուն:

Եվ ահա Նոր տարի մը ևս՝ 1939-ը:

Ամեն Նոր տարվան սեմին, մարդիկ սովոր են հաշվեհարդարի մը ենթարկելու անցնող տարվան ընթացքին իրենց ձեռք բերած նվաճումները:

Անհատներն ալ, հավաքականություններն ալ այդ հաշվեհարդարը կընեն ու ապա իրենց նոր հույսերուն և իղձերուն թև տված՝ կուղղվին դեպի նոր օրերը: Երանի՜ այն ժողովուրդին, որ Նոր տարին կսկսի՝ անցնող տարվան իր աշխատանքին բերքովը ավելի հարուստ ու ավելի զորեղ դարձած:

Հայ ժողովուրդը, մեր ժողովուրդը, ի՞նչ ըրավ ու ի՞նչ ձեռք բերավ այս անցնող տարվան ընթացքին, կյանքի ստեղծագործության բնագավառին մեջ:

Ի՞նչ ըրավ և ի՞նչ ձեռք բերավ ան իր հայրենիքը զորացնելու և հարստացնելու համար: Ի՞նչ ըրավ ու ի՞նչ ձեռք բերավ հավաքական-ազգային միությունը ու ներքին ներդաշնակությունը ամրացնելու համար:

Ահա հարցեր, որոնց պարտավոր ենք մենք՝ այսօրվաններս, պատասխան գտնել: Մեզմե վերջ եկող սերունդներուն առջև պատասխանատու ենք մենք բոլորս, բոլոր հայերս, որ այսօր կապրինք Հայաստանի մեջ, հոս, Ռումանիո մեջ կամ այլուր:

Եթե մեր անցնող տարվան հայ կյանքի ճիշտ պատկերը տալ ուզենք, այդ պիտի ըլլա տխուր պատկեր մը:

Նախ՝ խզումը այն վտիտ կապերուն, որոնք կային գաղութներուն և Մայր Հայրենիքին միջև:

Հարց կուտաս ինքզինքիդ՝ ինչո՞ւ: Ինչո՞վ մեղավոր է գաղութահայը: Ինչո՞ւ այս անմարդկային ճակատագիրը աշխարհիս ամենեն լքված, ամենեն խաբված ու ամենեն հարվածված մարդուն համար, որպիսին է գաղութահայը, **մանավանդ այն հոծ ու ազնիվ զանգվածը հայ աշխատավորության, որ պատառ մը հացին ետևեն կվազե ու ավելի քան երբեք պետք ունի իր Հայրենիքի հոգածության:**

Երկրորդ՝ այն հալածանքները, որ շարունակվեցան Հայաստանի մեջ ընդդեմ այն ամեն հաստատության, գաղափարներուն ու անձնավորության, որոնք չափով մը գոնե հայ ազգային ոգիի շառավիղներն էին: Ստույգ է, որ Հայաստանի մեջ հասարակական գործիչներու և գրական մշակներու ամբողջ սերունդ մը փոշիացավ: Իսկ մենք դեռ չենք գիտեր, թե իրապես ինչո՞ւ: Ու ամբողջ մեր ողբերգությունը այդ մեր գիտնալ չկարենալուն մեջն իսկ է:

Գաղութներու մեջ նույնպես տխուր է տեսնել անհամերաշխությունը, որ կտիրե «կողմերու» միջև. կողմեր, որոնք եթե ազգային հավաքական շահերու գիտակցությունը ունենան, եթե մեկդի դնեն «սկզբունքային» խնդիրները ու ըլլան քիչ մըն ալ գործնապաշտ, պիտի տեսնեն, թե այսօր հիմնական խնդիրներ չկան, որ արդարացնեն այդ անհամերաշխությունը: Ընդհակառակը, հիմնական հարցերը բոլոր հայերուն համար ալ նույն արժեքը ունին, և, հետևաբար, շատ բնական պիտի ըլլար միացյալ ուժերով դիմավորել ճակատագիրը, մեր ժանիքավոր ճակատագիրը:

Այդ խնդիրներեն առաջինն է հայ գաղութներու ամուր կազմակերպումը մեր ազգային ինքնությունը պահպանելու համար: Երկրորդ՝ հայ տարագրին բնակության ու աշխատանքի իրավունքներ ձեռք բերելու գործը: Երրորդ՝ երիտասարդական կազմակերպությունները քաջալերելու պարտականությունը: Որովհետև չմոռցվի, թե ազգային դպրոցներու չափ կարևոր ու անհրաժեշտ են երիտասարդական-մարմնակրթական կազմակերպությունները («Հայ Մարմնակրթական Ընդհանուր Միությունը»), երաժշտական միությունները (ինչպիսին է մեր «Կոմիտասը») և մշակութայինները (ինչպիսիք են Ուսանողական միությունները, Ռաֆֆիները և ուրիշներ): Ասոնց կպակսին դեռ՝ գաղափարական միությունը, ազգի և ազգային հայրենիքի գաղափարներու ուղղությամբ ու նաև միատուղի, կարգապահ և կազմակերպված ձևով աշխատանքը:

Ինչ կվերաբերի առաջին և երկրորդ խնդիրներուն, գաղութները ողբալի վիճակի մեջ կգտնվին, ու 1938-ը ոչինչ նորոգեց. ու ոչ մեկ քայլ առնվեցավ՝ քար մը ևս ավելցնելու համար մեր ինք-

նապաշտպանության բերդին: Պակսեցան գաղութահայության՝ ոգիի միությունը, ազգային գիտակցության ուժը և միակամությունը:

Պակսեցավ անշուշտ նաև **դրամը:** Մեր ունևոր դասակարգին մեծ մասը դեռ չէ յուրացուցած մեր օրերուն այն նոր նշանաբանը, թե **դրամը, զոր ինք կը շահի՝ միայն իրը չէ, այլ նաև գործիք մը, որ պետք է ծառայե հավաքական շահերուն.** հետևաբար հայ դրամագլուխը պետք է ծառայե առաջին հերթին հայ հավաքականության շահերուն: Կթվի, թե մեր հարուստներեն շատերը վարժված չեն դեռ բավարար չափով մը զգալու, թե այս գործը ոչ միայն բարոյական պարտականություն մըն է, այլ իրենց համար նաև աղբյուր մը՝ հոգեկան գոհունակության ու երջանկության: Գալով մեր երիտասարդական շարժումներուն, անոնք անշուշտ որ ավելի հուսատու են:

Ի տես այս մշուշոտ պատկերին՝ հոգիդ կտարուբերի կյանքի ու մահվան միջև: Կզգաս, թե ինչպես հայուն հոգիին կյանքի թելերը կքակվին ու կկապվին անընդհատ: Պահ մը կկարծես, որ ամեն բան կշարժի, կսուզվի ու կկորավի...

Եվ սակայն ահա խիղճդ ու միտքդ կլսեն՝ ըլլա մեր հեռավոր հայրենիքեն, ըլլա նույնիսկ մեր շրջապատեն, կյանքին խլրտումը, հայրենի հողին ու ջուրին ձայնը. հայ ցեղին ստեղծելու բռնկումը: Կտեսնես հիմա Հայաստանը և դրացի երկիրները ավելի քան երկու միլիոն հայ ժողովուրդով, իր շինարարական ճիգերով: Հակառակ արտաքին ճնշումներուն և հարվածներուն, կտեսնես այնտեղ տոկալու ուժ, կարգապահ համբերություն և ապրելու ոգևորություն: Կտեսնես նոր սերունդը, որ կիսայտա, կմեծնա, կուժեղանա, որ կսորվի՝ տասնյակ ու հարյուր հազարավորներով: Կտեսնես նոր մշակներ գիտության և գրականության, որոնք Օշականի Սուրբին մեծ Գրքին մեջ նոր էջեր կբանան:

Այստեղ, գաղութներու մեջ, նույնպես կտեսնես նոր սերունդին ճիգերը, որոնք երբեմն անկարելին իսկ կփորձեն: Այդ ճիգերը ու անոնց շոշափելի արդյունքները բազմաթիվ են ու բազմազան. գեղարվեստ, գրականություն, հրապարակագրություն, երգչախումբեր, մշակութային միություններ, մարմնակրթանք և այլն: Նոր սերունդը հասակ կնետե, կհասուննա ու մեր կյանքին մեջ կբերե նոր իրականություն մը, կյանքի նոր ստուգություն մը: Այս բոլոր թարմ կյանքի ապացույցները, այժմ ի մի ձուլված՝ բոցավառ գետի մը նման կենարար, կհոսին հոգիիդ ու բոլոր երակներուդ մեջեն:

Եվ ահա Նոր տարին:

Օ՜, այստեղ, այս պահուն, մեր հոգին անկաշկանդ թև կառնե ու իսկահեղորեն կերազե...

Երազել...

Կհիշե՞ք «Վարդանի երազը», Խեմիթին երազը:

Երազել: Այդ՝ հայուն ճակատագիրն է:

Բայց երազն ալ, երբ առողջ բանականության մը ու խորունկ ապրումի մը խաւերեն կազմավորվող իղձի մը բևեռացումն է, մարդկային իդեալ իրականություն մը կդառնա, արժեք իրականություն մը:

Իսկ հավաքական կյանքի մեջ այդ երազը՝ ուրիշ իրականություններ ստեղծող ուժ մը:

Հայը ամեն տեղ կերազե...

Այդ ըսել է՝ ան կհավատա:

Այդ ըսել է՝ ան իր ներքին ստուգությունը ունի, զոր ոչ մեկ արտաքին ուժ չի կրնար խախտել: Այդ ըսել է՝ ան կամք ունի, վճռականություն և ստեղծելու ուժ:

Եվ ահա Նոր տարին, որ կրնա հայուն ալ ըլլալ:

Կ. ՊԱԼՃՅԱՆ

Բուխարեստ, «Հայ մամուլ», 1939, հունվար 6

ԿԵՆԴԱՆԻ ՀԱՅԱՍՏԱՆԸ

Անշուշտ որ արդի Հայաստանը,—Խորհրդային Հայաստանը,—փոքր երկիր մըն է: Կասկածե դուրս է, որ հայ ժողովուրդի և՛ պատմական, և՛ ազգագրական բացարձակ իրավունքն է ավելի մեծ երկիր մը ունենալ: Հետևաբար ամեն հայու արդար իրավունքն է ցանկալ, որ Հայաստանը դառնա ավելի մեծ:

Այս բոլորը ընդունելով հանդերձ, պետք է ընդունինք նաև, որ մենք՝ հայերս, քիչ մըն ալ կը չափազանցենք Հայաստանը անպայման մեծ, կարելի եղածին չափ մեծ տեսնելու մեր եռանդին մեջ: Ատեն եղած է, երբ լուրջ մարդիկ, ճերմակի վրա սև, Հայաստանը կոչած են «խոշորացույցով դիտվելիք» առարկա: Ուրիշներուն համար, այսօր ալ դեռ, Հայաստանը հուսահատական ըլլալու չափ փոքր է:

Այս տեսակ կարծիքները իրապես չափազանցություն են և բնավ երբեք չեն բխիր մեր հայրենիքի դրական իրականութենեն և ոչ ալ մեր ժողովուրդի օրգանական պահանջներեն: Եվ որովհետև երևույթը գրեթե ընդհանուր է, խորհած եմ, թե պատճառը ո՛ւր է:

Ինչո՞ւ համար մենք ենթակա ենք արդի Հայաստանը չափազանց փոքր տեսնելու:

Անշուշտ առաջին պատճառը հին պատմական Հայաստանի հետ անխուսափելի համեմատությունն է:

Երկրորդ պատճառը մեր ազգային քիչ մը սխալ դաստիարակությունն է (սխալ՝ չափազանցությանց իմաստով), որ բնական կերպով եկավ մեզի հասավ այն սերունդեն, որն իրոք պահ մը «ծովե ծով Հայաստանը» երազեց:

Այս երկու պատճառները, սակայն, բավական պիտի չըլլային այսօրվան Հայաստանի տարածությունը բանի տեղ չդնելու համար, քանի որ անոնք ներկա կյանքեն չեն բխիր, և մյուս կողմեն դուրսը գտնվող հայերը դուրսն են ոչ թե որովհետև Խորհրդային Հայաստանի սահմանները նեղ են:

Ուրեմն կխորհիմ, թե ուրիշ պատճառ մըն ալ պետք է եղած ըլլա,—գուցե պատրանք մը,—որ մեզ կմղե այն կարծիքին, թե Հայաստանը չափազանց փոքր է և ոմանց համար նույնիսկ զանցառելի քանակություն: Օր մը, երբ չէի ալ փնտռեր, առանց ուզելու գտա այդ պատրանք-պատճառը:

Պատմեմ:

Մեր վարժարանի մեջ Ռումանիո աշխարհագրության դաս կուտայի երրորդ դասարանին մեջ: Կխոսեի Օլթենիո նահանգի մասին: Եվ երբ խոսքը եկավ այս նահանգի տարածության, ցուցնելով քարտեզը՝ ըսի, թե Օլթենիան ամբողջ Ռումանիո մեկ տասներորդն է: Ու մտքի՝ գրեթե կամքես անկախ կապակցությամբ մը ավելցուցի. «Այսինքն՝ ճիշտ մե՛ր այսօրվան Հայաստանին չափ»: Անմիջապես տղայոց դեմքին վրա տրտմություն մը իջավ: Ես անդրադարձա, սակայն ուշ էր: «Կաֆ» մը ըրեր էի:

Էլեկտրական հոսանքի պես, փոքրիկ ուղեղներուն մեջ մեկեն մյուսը անցնելով, կազմվեցավ հետևյալ դատողությունը. **«Ուրեմն Հայաստանը Ռումանիայեն տասն անգամ ավե՞լի փոքր է»:** Ոչ ոք չարտասանեց այս դատողությունը, սակայն ես զայն կարդացի անոնց դեմքերուն վրա ու զգացի այն պարապությունը, որ ստեղծվեցավ անոնց հոգիներուն մեջ:

Կ. ՊԱԼՃՅԱՆ

Բուխարեստ, «Հայ մամուլ», 1989, ապրիլ 9

ԻՄԱՍՏՈՒՆ ՄԱՐԴ ՄԸ

Պատմությունը անշուշտ որ երբեք չի կրկնվիր նույնությամբ: Սակայն պատմությունը կարձանագրե նմանություններ զանազան շրջաններու միջև: Նման երևույթներ նման արդյունքներ կուտան:

Ահա թե ինչու շահեկան է անցյալի փորձառությունը՝ այսօրվան դեպքերուն համար: Պայման է, սակայն, որ այդ անցյալը մեզի պատկերացվի իր մերկ իրականության մեջ՝ առարկայորեն, առանց «մեկնաբանություններու» և առանց «տեսություններու»:

Անցյալը այսպես առարկայորեն ներկայացնող գիրքերեն մին է անշուշտ, վերջերս լույս տեսած «Talleyrand» հատորը, որուն հեղինակն է Անգլիո նախկին նախարար Duff Cooper (Կկարծեմ, որ պատմություն գրող հարմարագույն մարդիկ անգլիացիներն են, որովհետև անգլիացին գիտե «արձանագրել»):

Ինչպես վերնագիրն ալ կցուցնե, գիրքը կներկայացնե ֆրանսացի մեծ քաղաքական դեմք մը՝ Շարլ Մորիս Թալեյրան, որ ծնած է 1754-ին Լուդովիկ ԺԵ-ի օրով. 1775-ին, քսան և մեկ տարեկանին ներկա եղած է Լուդովիկ ԺԶ-ի թագադրության որպես ազնվական. 1789-ին մասնակցած է ֆրանսական Մեծ հեղափոխության, ըլլալով անոր դերակատարներեն մին. 1795—99-ին ծառայած է Directoire-ին, որպես արտաքին գործոց նախարար, դարձած է Նապոլեոնի ամենեն կարևոր մարդը Consulat-ի օրերուն, ինչպես նաև կայսրության հոչակումեն վերջ, գրեթե մինչև Նապոլեոնի անկումը, երբ, տեսնելով կայսրին սխալները, որուն փառասիրությունը ամեն սահման գլած անցած՝ կուզեր Եվրոպային տիրել, կհրաժարի նախարարի պաշտոնեն ու կսկսի դավել Նապոլեոնի դեմ. 1814-ին, Լուդովիկ ԺԸ-ն Ֆրանսա բերող գլխավոր դերակատարն է: 1815-ին, Վիեննայի համաժողովին դաշինքը կնքողն է. քաղաքական առաջին գծին վրա է նաև ատկե վերջ, Կարլոս Ժ-ի շրջանին ու նաև Լուդովիկ Ֆիլիպի օրով, երբ կվերջացնե իր քաղաքական ասպարեզը ութսուներկու տարեկանին՝ Անգլիո մեջ, որպես Ֆրանսայի դեսպան պատմական դեր մը ևս կատարելե հետո: Կը մեռնի 1838-ին, խոր ծերության մեջ, ձգելով հիշողություններու հատորներ, որոնք հրատարակված են 1891-ին:

Գլխի պտույտ պատճառող այս գործունեության ընթացքին Թալեյրան բնականաբար շահած է մեծ փորձառություն և հասած այն հազվագյուտ մարդոց աստիճանին, որ կկոչվի քաղաքական իմաստություն և հեռատեսություն:

Բնական է, անհնար է քանի մը տողերու մեջ ամփոփել 468 էջնոց գրքի մը այնքան ճոխ բովանդակությունը, սակայն կուզենք այստեղ ընդգծել քաղաքական մեծ մարդու մը մեկ քանի մտքերը ու կեցվածքը, որոնք դաստիարակիչ կրնան ըլլալ նաև մեզի համար այս մռայլ օրերուն մեջ, զոր կապրինք:

Ա.) Ան, հակառակ Նապոլեոնի ախորժակներուն, կպաշտպաներ, որ Եվրոպայի պետությունները և մանավանդ Անգլիան, պետք չէ խորտակել ու նվաստացնել: Եվրոպայի դիմագիծը պահելու համար հիմնովին անհրաժեշտ կգտներ պահպանողական Ավստրիո գոյությունը, ինչպես նաև մանավանդ ազատական Անգլիո ուժեղ դիրքը **Եվրոպայի մտային հավասարակշռության համար:** Ան օր մը կըսեր տիկ. Ռեմյուսային. **«Եթե Անգլիո սահմանադրությունը ոչնչացվի, այս լավ գիտցեք, որ աշխարհի քաղաքակրթությունը կցնցվի մինչև իր հիմքերը»:**

Բ.) Ուսումնասիրելով անցյալը և ապրելով իր քաղաքական կյանքի փորձառությունը, ահա թե ինչ խորհուրդ կուտար իր հայրենիքին. «Ֆրանսան պետք է ընդգրկե նոր քաղաքականություն մը, հրաժարելով այն ֆրանսական հին համառութենեն, որով ան կձգտեր դառնալ ամենաուժեղ պետությունը Եվրոպայի մեջ, մեծցընելով իր հողը: Ես սորվեցա, որ պետություններու համար, ինչպես նաև անհատներու համար, ճշմարիտ հարստությունը չի կայանար ուրիշներու ինչքը և հողերը գրավելու մեջ, այլ սեփական կալվածքը իմաստուն կերպով արժեքավորելու մեջ»: «Սորվեցա, որ բոլոր գրավումները, բոլոր ուժի և ճարպիկության միջոցավ կորզված հողերը, որոնք մեր հին նախապաշարումներու պատճառավ կնկատվին որպես քաղաքական դիրքի, առաջնության և գերակայության ապացույցներ, իրականության մեջ ուրիշ բան չեն, եթե ոչ քաղաքականության դառն խաղեր, ուժի կեղծ հաշիվներ, որոնց ճշմարիտ արդյունքը կըլլա ծախսերու բազմապատկումը, վարչական մեքենայի խանգարումը և ժողովուրդի երջանկության և ապահովության նվազումը, օրվան իշխանավորներու անձնական շահերուն և փառասիրության համար»: «Ֆրանսան, հետևաբար, պետք է մնա իր սեփական սահմաններուն մեջ, իր իսկ փառքին, իր արդարության, իր գոյության իմաստին, իր շահերուն համար, ինչպես նաև այն բոլոր ժողովուրդներուն համար, որոնք կուզեն իր միջոցով ազատ ապրիլ»:

Ի՞նչ է իրապես Նապոլեոնի կայսերապաշտական շրջանը, եթե ոչ փայլուն, սակայն դատարկ փառքի շրջան մը: Նապոլեոն, այո, ժողովուրդներու բանակներ ջախջախեց, պետություններ

գրավեց, Եվրոպան դողացուց տարիներ շարունակ և սակայն ի վերջո ինկավ: Բոլոր բռնակալներու վախճանն է այդ, երբ որ ալ ապրին անոնք, ինչ ազգի ալ պատկանին և նույնիսկ եթե իրապես հանճարներ ըլլան, ինչպես եղավ Նապոլեոնը: Ինչքան ատեն ժողովուրդները նվաստացված են, անիրավված ու բռնադատված՝ անոնց ազատ խորհելու ու ազատ զգալու բնական պահանջները, բնության ուժերը կկուտակվին ու օր մը, ուշ կամ կանուխ, կփոխեն կյանքի պայմանները:

Գ.) Թալեյրան, առաջնորդված այդ իդեալներով, կպայքարի Նապոլեոնի դեմ՝ փրկելու համար Ֆրանսան և կհաջողի: Կպայքարի նույնպես Պելճիկայի ազատագրման համար ու գրեթե միայն իր դիվանագիտական ճիգերուն շնորհիվ կհաջողի ստեղծել ու ապահով վիճակի մեջ դնել զայն:

Դ.) 1814—15-ի Վիեննայի հանաժողովին Թալեյրան կուզե փորձել Պոլոնիո, այսինքն՝ Լեհաստանի վերականգնումը ևս, որուն բաժանումը ոճիր մըն էր իրեն համար: Հակառակ իր ճիգերուն, սակայն, չի հաջողիր: Ի վերջո կհամակերպի պահել հին վիճակը, վստահությունը ունենալով, որ այս բաժանումը ժամանակավոր է: Ան կգրե. «Պոլոնիան բաժնված մնալով երբեք պիտի չկորսվի: Պոլոնացիները, դադրած քաղաքական ընկերություն մը կազմելե, պիտի կազմեն սակայն ընտանիք մը: Անոնք պիտի չունենան միացյալ հայրենիք մը, բայց պիտի ունենան լեզու մը: Անոնք, հետևաբար, միացած պիտի մնան ամենազորեղ կապերով: Օտար տիրապետություններու տակ պիտի հասնին այն քաղաքական հասունության, որուն չկրցան հասնիլ երկու հարյուր տարվա անկախության շրջանին. և երբ հասնին այդ հասունության, հեռու պիտի չըլլա այն պահը, երբ ազատագրված՝ պիտի միանան մեկ կենդրոնի մը շուրջ»:

Թալեյրանի մարգարեությունը իրականացավ հարյուր տարի հետո: Թալեյրանի բերանով պատմությունը ինքն է, որ կխոսի:

Այսօր ալ մեծ պետությունները փոքր ժողովուրդները պիտի կարենան սիրաշահիլ միայն հարգելով անոնց ինքնասիրությունը, անոնց անհատականությունը ու արդար իրավունքները. այլապես բռնի ուժն ու սարսափը ոխի ու վրեժի զգացումներ կկուտակեն ժողովուրդներու հոգիներուն մեջ, ու օր մը «մեծը» կկազմալուծվի:

Պատմության մեջ օրինակները բազմաթիվ են:

Այսօր ալ քիչ չեն այն ժողովուրդները, որոնք կապրին նվաստացված ու անիրավված կյանք մը: Այդ «մեծերը» արդյոք բան մը պիտի չուզե՞ն սորվիլ պատմության դասեն:

Կ. ՊԱԼՃՅԱՆ

Բուխարեստ, «Հայ մամուլ», 1939, հունիս 11

ԻՆՉՊԵ՞Ս ԿԸ ՍԿՍԻՆՔ

«Հայ մամուլը» նոր շրջան մը կթևակոխե:

Քանի մը երիտասարդներ, որոնք անծանոթ չեն մեր գաղութին, որոշած են այս թերթը դարձնել երիտասարդ սերունդին թերթը, խմբագրված կենդանի և առողջ ոգիով մը, մշակութային ուղիով:

Թերթիս նոր խմբագրությունը հավակնությունը չունի բացառիկ շարժում մը ստեղծելու կամ նոր ուղի մը բանալու մեր կյանքին մեջ, սակայն այն հաստատ համոզումը ունի, որ երիտասարդներու խոսքը, այսօր մանավանդ, կրնա իր զարթեցուցիչ և կառուցանող դերը կատարել մեր այնքան լճացած, այնքան «անհատականացած» կյանքին մեջ:

Մեր թերթը ամեն բանե առաջ պիտի հիշեցնե, որ մեզմե ամեն մեկը անբաժան մեկ մասնիկն է հայ հավաքականության ու հայ ճակատագրին:

Որովհետև աշխարհագրական սահմաններեն, ձևական-իրավական պայմաններեն և նույնիսկ մեր անհատական կամքեն վեր, կա մե՛կ հայ հավաքականություն, մե՛կ հայ հայրենիք, մե՛կ հայ ճակատագիր:

Անոնք մերն են, և մենք ալ՝ անոնցը:

Այս գերագույն բարոյականը զարթեցնել մեր, մանավանդ նոր սերունդին գիտակցության մեջ. ահա դաստիարակչական ամբողջ ծրագիր մը, որուն իրականացման պիտի ձգտի այս թերթը:

Մենք երբեք պիտի չմոռնանք նաև մեր խղճի պարտքը հանդեպ այս մեր երկրին, ուր շատերս ծնած ու մեծցած ենք և ուր գտած ենք կյանքի և մտավոր զարգացման բոլոր հնարավորությունները: Ոումեն ազնիվ ժողովուրդը իր անցյալով, որ այնքան նման է մերինին, իր արժեքներով և իր ապագայի երազներով մեր սրտին միշտ մոտ պիտի ըլլա:

Մեր թերթը կղզի մը պիտի չըլլա ինքն իր մեջ փակված, այլ հոն արձագանք պիտի գտնեն, առարկայականության սահմաններուն մեջ, ամեն նոր իրականություն ու արժեք, որ քաղաքակիրթ մարդկությունը կդարբնե ժամանակի ծանր սալին վրա, կյանքի նոր հորիզոններ բանալով մեր գիտակցության առաջ:

Վերջապես, մեր թերթը պիտի ըլլա նաև մեր գաղութին թերթը, և մանավանդ պիտի նվիրվի մեր երիտասարդական կազմակերպությանց առօրյա հոգերուն, ունենալով միայն մեկ նպատակ. դրական, շինիչ ազդեցություն մը ունենալ մեր համայնքի գործերուն վրա:

Ամեն երիտասարդ այս թերթը իրը թող նկատե ու վստահ ըլլա, որ իր առջև «Հայ մամուլի» դռները միշտ բաց պիտի ըլլան ճշմարիտ եղբոր մը տան պես:

Այս մտահոգություններով ու ցանկություններով, ահա, կը սկսինք գործի, այն վստահությամբ, որ մեր ընթերցողները,—տարեց թե երիտասարդ,—և մենք, պիտի կարենանք զիրար լավ հասկնալ ու ճանչնալ:

Կ. ՊԱԼՃՅԱՆ

Բուխարեստ, «Հայ մամուլ», 1941, նոյեմբեր 30

ՇՈՂԱԿԱԹ ԼՈՒՍՈ ԽՈՐԱՆ՝ ԷՋՄԻԱԾԻՆ

«Լո՛յծ զկօշիկս քո յոտից քոց, զի տեղիդ յորում կաս դու ի դմա՝ երկիր սուրբ է» (Ելից, Գ. 5):

Լուսաբնակ նախնիք մեր անխախտ կերպով հավատացին, թե Աստված կխոսի մարդկության հետ իր ընտրյալներուն միջոցով: Հավատացին, թե կան ժամանակներ, երբ երկինքը կմոտենա երկրին՝ տառապող մարդկության ցույց տալու համար փրկության ճանապարհը:

Եվ ահա, Որդին Աստուծո ու Փրկիչը մեր, շատ դարեր առաջ խոսեցավ մեր աշխարհին, Հայոց աշխարհին, մեծ Լուսավորիչ Գրիգոր Պարթևի հրաշք-երազով: Պատգամն էր երկնային, խոսքն աստվածային, որով իջավ ի Հայաստան աշխարհ, հյուսելով հրաշալի լուսե երազը Սուրբ Լուսավորչին:

Մենք զավակներն ենք այդ լուսե երազին:

Ու այսօր ալ, ինչպես մեր նախնիք, կխոստովանինք. «Յայսմ հաւատոց զմեզ ո՛չ ոք կարէ խախտել»:

Այստեղ, Արարատյան դաշտի սրտին վրա, Իջման այս Սուրբ Սեղանի առաջ, մեզ համար հայտնված է խոսքը: Այստեղ մորենին վառյալ է հրով, և չայրիր մորենին: Այստեղ է Մայր Աթոռ մեր «աստվածակերտ, սքանչելի, հրեղեն»:

Հա՛յ ժողովուրդ, խոնարհի՛ր հավատքով ու երկյուղածությամբ, վասնզի այստեղ «երկիր սուրբ է»:

Ազգիս Վեհափառ Հայրապետը, շատ տարիներ առաջ, այն ատեն վարդապետ, խոսելով Սուրբ Էջմիածնի մասին, ըսեր էր՝ «Քրիստոսի սիրո կրակը և լուսո ճրագը վառվեցին նաև մեր երկրում Սուրբ Լուսավորչի շնորհիվ, որ հիմը դրավ բոլոր հայ եկեղեցիների մայր՝ Սուրբ Էջմիածնի»:

Այսպես է իրոք: Դարեր շարունակ Միածնի Իջման այս Սուրբ Սեղանը եղավ սիրո և լույսի աղբյուր, ինչպես քերթողահայր Մովսես Խորենացին կվկայե՝ «Մերոյ լուսաւորութեան լուսաւոր վերակացուն» եղավ հայ ժողովուրդի մայր դաստիարակը Տիրոջ Ավետարանի վեհ ու ազնիվ գաղափարներու ուղիով: Եղավ նաև պահապան ու պաշտպան իր զավակներուն, պահա-

պան ու պաշտպան հայրենյաց օջախներուն, պահապան ու պաշտպան հայ պետության: Ճշմարիտ է և մեր հազարամյա պատմությամբ ևվիրագործված Առաքել Դավրիժեցու խոսքը, թե՝ «Ի վերայ Աջոյն և Էջմիածնի ամենայն Ազգն Հայոց կապեալ կան»:

Այսօր ևս տարբեր չէ իրականությունը:

Այսօր ևս Հայաստանյայց Եկեղեցին, իր հայրենասեր մեծ Հայրապետի ղեկավարությամբ, հայ ժողովուրդի կողքին է, հայ հարազատ պետության կողքին է, ազգային միասնականության, ազգահավաքման, հայրենաշինության, խաղաղության և հառաջդիմության լույս գաղափարներով ու ծրագիրներով առաջնորդված: Հայ ժողովուրդն ու Հայ Եկեղեցին անբաժանելի եղած են ու պիտի մնան: Մեկը առանց մյուսին պիտի չկարենար ապրիլ, առանց կորսնցնելու իր հարազատ դիմագծությունը:

Ահա թե ինչո՛ւ միայն Հայաստանյայց Եկեղեցվո ծոցին մեջ, միայն Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի կենարար լույսի մեջ հայ հավատացյալը կգտնե աղբյուրը երկնային շնորհներուն և ստեղծագործ հանճարին:

Հայաստանյայց Եկեղեցիեն դուրս, ինչքան ալ շողշողուն երևան ծիրանավորներու հրավերներն ու խոստումները, հայուն համար անոնք կմնան օտար ու հավետ խորթ: Հայ մարդը լավ գիտե, թե մեր ժողովուրդը ունի մե՛կ հարազատ Եկեղեցի՝ Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցին, որ ճշմարիտ ու անբաժանելի մասն է մեր Տիրոջ՝ Քրիստոսի մարմնույն:

Հայ ժողովուրդն ու Հայ Եկեղեցին գրեթե միասին ծնան որպես հոգեկան-մշակութային իրականություններ, միասին ապրեցան դարեր շարունակ, միասին աճեցան ու ծաղկեցան, միասին հյուսեցին մեծափառ երգը Հայոց Աշխարհի կյանքին: Եվ միասին ալ կուրծք տվին ճակատագրի ահավոր հարվածներուն, միասին տառապեցան երկար ու մարտիրոսացան...

Բայց վերջապես հասավ օրն այն մեծ երկունքի, երբ ճեղքվեցավ հանկարծ ծանր կապարը հայոց երկնակամարի, և հայ ժողովուրդը ողջունեց ցնծալի՝ իր նոր կյանքի արևը վառ:

Այսօր հայ շինարարի արտը դալար է, պարտեզը՝ ծաղկած, տունը՝ շեն ու սեղանի վրա լեցուն հաց և լույս:

Այսօր մեր Հայրենիքին մեջ ապրող ամեն մեկ հայու,—տեղացի թե հայրենադարձ,—ամենախոր ու ամենակենդանի զգացումն է այն, ինչ որ մեր բանաստեղծներեն մին արտահայտած է սա խոսքերով. «Մեռելներուս որպես խաչ, ես այս ծառը տընկեցի»:

Ու կբարձրանա պտուղներով լի, հպարտ ու նախշուն կենաց ծառը հայ ժողովուրդին՝ ժողովուրդներու մեծ եղբայրության, աշխարհի խաղաղ, արևոտ անդաստանին մեջ:

Տ. Գևորգ Զ Ամենայն Հայոց Կաթողիկոսը Էջմիածնի Մայր տաճարում (օծում է Վալգեն եպիսկոպոսի ճակատը)

(8 հուլիսի 1951 թ.)

Թող Տերը անսասան պահե ու փորձություններե հեռու՝ մեր Հայրենիքի կենաց ծառն այս:

Թող Տերը ամբողջ և անխոով պահե ժողովուրդներու բարի ու հզոր եղբայրությունն այս մեծ:

Թող Տերը անշարժ ու միշտ կանգուն պահե Մայր Աթոռն այս Սուրբ Էջմիածնի, և արևոտ, երկար, երջանիկ օրեր պարգևե մեր մեծ Հայրապետ Գեորգ Զ Ամենայն Հայոց Վեհափառ Կաթողիկոսին:

ՎԱԶԳԵՆ ԵՊԻՍԿՈՊՈՍ

Էջմիածին, «Էջմիածին», 1951, հուլիս

ՎԵՆԱՍԱԲԵՐ ՄԻ ԳԻՐՔ

Բեյրութի հայ կաթողիկե համայնքի առաջնորդ Հայր Սահակ եպիսկոպոս Կոգյանը լույս է ընծայել մի աշխատություն «Հայոց Եկեղեցին» խորագրով, որի 792 էջերի մեջ հեղինակը ճգնում է ապացուցել թե՝

ա) Հայաստանյայց Եկեղեցին առաքելական ծագում չունի: բ) Հայաստանյայց Եկեղեցին բաժանվել է ուղղափառ հավատից և դադարել իսկական քրիստոնյա Եկեղեցի լինելուց (ըստ նրա՝ Զ դարից սկսած): գ) Հայաստանյայց Եկեղեցին ընկել է մոլորության մեջ, դառնալով ինքնագլուխ և մնալով անկախ՝ Հռոմի գահից ու գահակալից, որն ըստ նրա՝ աշխարհի վրա միակ փոխանորդն է Քրիստոսի: դ) Հայ ժողովուրդը եղծել է քրիստոնեական հավատը՝ իր Եկեղեցուն տալով ազգային նկարագիր ու դիմագծություն, միմյանց հետ շփոթելով կրոնականն ու ազգայինը: Մեծարգո հեղինակը առանձին հաճույքով մեղադրում է Հայ Եկեղեցուն իբրև «ազգամոլ»:

Ահա, ուրեմն, համի Տյառն 1961, կաթողիկե դավանության մի ներկայացուցիչ՝ Հ. Սահակ Կոգյան, որը տքնում է ու միտք մաշում ամիսներ ու տարիներ, 330 անուն հայ և օտար գրքեր է պրպտում (գեթ ցանկանում է ա.դ տպավորությունը թողնել) հաստատելու համար վերոհիշյալ «ճշմարտությունները» Հայաստանյայց Եկեղեցու նկատմամբ... հազար և վեց հարյուր տարի հետո:

Թվում է, թե Հ. Կոգյանների համար այլևս լուծվել, վերջացել են հայ ժողովրդի կյանքի ու նրա ապագայի հետ կապված բոլոր հարցերը, և մնացել է միայն մեկ հարց, այն է՝ դատապարտել Հայ Եկեղեցին, որ նա հանդգնել է իրեն դավանել առաքելական և ապրել ինքնագլուխ, իբրև ազգային Եկեղեցի, ահա բազում դարերից ի վեր:

Ի՞նչ սիրտ պետք է ունենալ, մտածման ի՞նչ հորիզոն, հոգեկան ապրումների ի՞նչ ներաշխարհ, մեր օրերին զբաղվելու նման հարցերով: Ահա առաջին զգացումը, որը մենք ունեցանք Հ. Կոգյանի գիրքը մեր ձեռքը առնելով և կարդալով նրա նախաբանն ու «Բան հաճությանը»:

Մի պահ ընդունենք, թե Հ. Կոգյանին հաջողվել է անցյալ երկու հազար տարիների գրականության օվկիանոսից և պատմական դեպքերի ու մրրիկների միջից ճարել որոշ վկայություններ հօգուտ իր տեսակետների, թեև շատ անգամ նա խեղաթյուրել է փաստերի ճշմարիտ իմաստը: Սակայն առնվազն նույնքան վկայություններ կարելի է բերել՝ նույն պատմական շրջաններից և նույն գրականությունից, որոնք հերքում են Հ. Կոգյանի բոլոր փաստարկումները: Օրմանյան պատրիարքից շատ-շատ առաջ և նրանից հետո ևս, մեր նախնիք միշտ կարողացել են պաշտպանել Հայ Եկեղեցու ավանդությունները, ուղղափառ դավանությունն ու հեղինակությունը ընդդեմ բոլոր նման հարձակումների: Հիշենք միայն վերջին բանավեճը երեսուն տարի առաջ «Սիոնի» և «Բազմավեպի» էջերում, նույն հարցի շուրջ, հանգուցյալ Բաբգեն եպիսկոպոս Կյուլեսերյանի և Հ. Վարդան Հացունու միջև: Այդ բանավեճի արդյունքը եղել է այն, որ Հ. Հացունին ի վերջո ստիպվել է դադարեցնել իր հարձակումները, յուրայինների իսկ թելադրանքով: Միսիթարյան միաբանության մեր եղբայրների ծանոթ ողջմտությունն ու ազգասիրությունը հաղթանակել էին այն ժամանակ:

Հ. Կոգյանն իր գրքով փորձում է թողնել այն միամիտ տպավորությունը, թե կարծեք աշխարհիս բոլոր քրիստոնյա Եկեղեցիները և ժողովուրդները այսօր մեկ հոտ և մեկ հովիվ են, Հռոմի Քահանայապետի իշխանության ներքո, և միայն մեր ժողովուրդն է «մոլորության» և «հերձվածի» մեջ մնացել: Մինչդեռ ճշմարտությունն այն է, որ բոլոր ոչ-կաթողիկե մեծ ու փոքր Եկեղեցիները, բազում դարերից ի վեր, մոտավորապես նույն դիրքն ու ճանապարհն են ընդգրկել, ինչպես Հայ Եկեղեցին Ե դարից սկսյալ: Եվ Հռոմը գրեթե նույն մեղադրանքներն է շարադրում այդ բոլոր ոչ-կաթողիկե Եկեղեցիների դեմ և նույն հավակնություններով է հանդես գալիս նաև նրանց նկատմամբ:

Գրադարաններ կարելի է լցնել այս ուղղությամբ հրատարակված թեր ու դեմ գրականությամբ: Գրադարաններ կարելի է լցնել ոչ-կաթողիկե եկեղեցական գրականությամբ, գրի առնված դարերի ընթացքում մյուս Եկեղեցիների պաշտպան հեղինակների կողմից, որոնք կետ առ կետ հերքում են հռոմեադավանների փաստարկումներն ու մեկնաբանությունները: Ահա թե ինչո՛ւ նման հարցերին փոքր ինչ ծանոթ մարդկանց համար ծիծաղելի է դառնում Հ. Կոգյանն իբրև «ճշմարտության» պաշտպանի:

Մեր օրերում, ողջամիտ ամեն քրիստոնյա և քաղաքակիրթ ամեն մարդ, վերջապես հանգել է այն դատողը դատումին, թե նման «բյուզանդական» ամուլ վեճեր այլևս կարելի չէ հանդուրժել, դրանք նկատելով պարզապես մտածման և զգացմունքների

հիվանդագին երևույթներ: Հայաստանյայց Եկեղեցին երբեք չի մտածում ժխտել կամ արհամարհել քույր Եկեղեցիների ավանդություններն ու սրբությունները, բայց չի էլ հանդուրժում, որ ուրիշները ժխտեն և արհամարհեն իր ավանդություններն ու իր սուրբ զգացմունքները:

Հ. Կոգյանը ինչո՞ւ է գրի առել այս գիրքը: Հեղինակի իսկ խոստովանությամբ՝ սևացնելու համար մեծագործ Մաղաքիա Օրմանյան պատրիարքի հիշատակը և հիսուն տարի առաջ նրա հրատարակած «Հայոց Եկեղեցին» աշխատությունը: Հ. Կոգյանը գրում է. «Օրմանյանի նպատակն էր հռչակել Հայ Եկեղեցին անկախ Քրիստոսի փոխանորդեն, **այսինքն՝ Քրիստոսեն»:** Հ. Կոգյան չի ներում Կոստանդնուպոլսի հայոց պատրիարքին, որ հանդգնել է Հայ Եկեղեցին նկատել իբրև քրիստոնյա Եկեղեցի, և, ահա այդ պատճառով, սաստիկ բարկացած՝ շարադրել է իր գիրքը, վերականգնելու համար... ճշմարտությունը: Երջանկահիշատակ Օրմանյան պատրիարքը, իր գրչի արգասիքը հանդիսացող «Հայ Եկեղեցին» գրքով, ներկայացրել էր Հայաստանյայց Եկեղեցու ճշմարիտ նկարագիրը, պաշտպանելով և դրվատելով նրա ավանդություններն ու պատմությունը, նրա հոգևոր, մշակութային և ազգային արժեքներն ու հեղինակությունը Կոգյանների նմանների անարդար և ոչ քրիստոնեավայել զրպարտությունների և հավակնությունների դեմ:

Իր ժամանակին Օրմանյան պատրիարքը հայ ժողովրդի արթնացած խղճմտանքն է հանդիսացել: Եվ ինչքան ժամանակ Կոգյաններ գտնվեն, ոչ միայն Հայ Եկեղեցու ծոցից, այլև բոլոր քրիստոնյա Եկեղեցիների ծոցից ծնունդ կառնեն Օրմանյաններ, մինչև որ Կոգյանները վերջապես հասկանան, թե Քրիստոս և նրա Սուրբ Ավետարանը ո՛չ մեկ Աթոռի մենաշնորհները չեն և թե ո՛չ մեկ պատմական Աթոռ, ինչքան էլ առաքելական նկատվի այն, չի կարող հավակնություն ունենալ իր իշխանությունը տարածելու պատմականորեն ծնունդ առած ու զարգացած մյուս առաքելական կամ ոչ առաքելական Եկեղեցիների և նրանց ինքնագլուխ Աթոռների վրա:

Մեր այս տարվա զատկական քարոզում ասում էինք. «Դառնանք դեպի ճշմարիտ աղբյուրը սիրով միության՝ դեպի Քրիստոս, միակ և անփոխարինելի Գլուխը Սուրբ Եկեղեցիին: Եվ, մանավանդ, վերադարձնենք արքայության բանալիները իսկական Տիրոջը՝ մեր Փրկչին՝ Քրիստոսին, որպեսզի հույսը հավիտենական կյանքին բաշխվի բոլորին առանց խտրության, հավասարապես»: Հատկանշական է, որ Հ. Կոգյանը մեղադրում է Օրմանյան արքեպիսկոպոսին կրքոտության մեջ, բայց նա չի նկատում իր աչքի գերանը: Որովհետև անկարելի է Հ. Կոգյանի գիրքը կար-

դալ և չվրդովվել ի տես այն անհատակ կրքի և քինախնդիր ոգու, որ ցուցաբերում է հեղինակը Օրմանյանի անձի նկատմամբ: Հայր Կոգյանը առանց կարմրելու ի վիճակի է գրելու, թե «Օրմանյանի պատրիարքությունը արյունալի ջարդերու շրջան մը եղած է», թե «ծանր մեղադրանքներ բարդված են Աբդուլ Համիդի սիրելիին վրա», թե «ան կրցած է անտարբեր նայիլ հայ արյունին որ կհոսեր», թե «տասներկու տարիներ շարունակ կեղծած ու դավաճանած է իր պաշտպանության հանձնված և արդեն հարստահարված ու կողոպտված Հայ Ազգը» և այլն, և այլն:

Հիսուն և ավելի տարիներ առաջ, 1908-ի ժամանակաշրջանի պոլսահայ ժողովրդի գիտակության օրերին, մի քանի շվարած կամ շահախնդիր մարդիկ կարող էին նման մեղադրանքներ շարադրել Օրմանյան պատրիարքին դեմ, սակայն այսօր, հիսուն տարի հետո, երբ ճշմարտությունը շողում է արևի նման պայծառ, և Օրմանյան պատրիարքը ավելի քան արդարացած է պատմության և հայ ժողովրդի խղճմտանքի առաջ, Հ. Կոգյանն ինչպե՞ս է համարձակվում այդպիսի զրպարտություններ գրի առնել ու հրապարակել և նույնիսկ արժանանալ «Հաճության բան»-երի: Անշուշտ, անբեկանելի իրողությունն այն է, որ Հ. Կոգյանը, լավ իմանալով հանդերձ ճշմարտությունը Օրմանյան պատրիարքի իրապաշտ, իմաստուն և հեռատես ազգային քաղաքականության մասին, չիմանալ է ձևացնում և սիրտ ու արյուն չունեցող սարդի հոգեբանությամբ, անողոք մոլուցքով լցված, զրպարտություններ-ի իր ոստայնն է հյուսում՝ իր որսը խեղդելու և նրա անմեղ արյունը ծծելու ախորժակով:

Այս ի՞նչ քրիստոնեական սիրտ է, այս ի՞նչ բարոյականություն է, այս ի՞նչ վրիժառու ոգի է: Հ. Կոգյանների չար ու ցամաքած հոգին նույնքան հեռու է Քրիստոսի Ավետարանից, ինչքան հեռու էին միջին դարի հավատաքննիչների խարույկները ճշմարիտ հավատից: «Վա՜յ ձեզ, դպրաց եւ փարիսեցւոց կեղծաւորաց, զի սրբէք զարտաքին զբաժակին եւ զսկաւառակին, և ի ներքոյ լի են յափշտակութիւնք եւ անիրաւութիւնք» (Մատթ. ԻԳ, 25):

Հ. Կոգյանի գիրքը իր արտաքին տարազով ուղղված է «Օրմանյան պատրիարքի կյանքի և գրական գործի դեմ, սակայն խորքում այն ուղղված է շեշտակի կերպով Հայաստանյաց Առաքելական Եկեղեցու դեմ, Ամենայն Հայոց Հայրապետության և Սուրբ Էջմիածնի դեմ, և առհասարակ հայ ժողովրդի դեմ: Այն ուղղված է նաև Մեծի Տանն Կիլիկիո Հայաստանյայց պատմական Աթոռի դեմ: Հ. Կոգյանը իր երկրաչափական խելքով փորձում է ժխտել և քանդել Հայաստանյայց Եկեղեցու գոյության և պատմական զարգացման հիմքերը: Ասում ենք «փորձում է», որովհետև Հ. Կոգյանը և նրա բոլոր նմանները մեկտեղ հավա-

քած, անհունորեն տկար կմնան Հայաստանյայց Եկեղեցու և հայ ժողովրդի առնվազն հազար վեց հարյուր տարվա պատմության առաջ: Մոտ երկու հազար տարվա նվիրագործված ավանդություններ և իրողություններ անհնար է, որ որևէ մարդ կարողանա իրենց տեղից շարժել:

Այս տեսակետից ելնելով՝ պարզապես խղճալի ենք գտնում Հ. Կոգյանի անզոր փորձը: Մե՞ղք նրա թափած աշխատանքին, որ արժեր հատկացնել ավելի օգտակար և բարի գործի: Եվ ինչքա՜ն աղբյուրների է դիմել Հ. Կոգյանը, կտրվելու համար միակ աղբյուրից, որ հայ ժողովրդի խիղճն է: Ինչպե՞ս չհիշենք առաքյալի խոսքը, որ ասվել է բոլոր ժամանակների Կոգյանների համար. «Որ յամենայն ժամ ուսանին և երբեք ի գիտութիւն ճշմարտութեան ոչ հասանին» (Բ. Տիմոթ. Գ. 7):

Ապշեցուցիչ է պարզապես, թե Հ. Կոգյանն ինչպե՞ս չի անդրադառնում, որ բոլորովին անիմաստ է հազար և վեց հարյուր տարի հետո վեր կենալ ու հերքել փորձել դարավոր ավանդություններ և պատմականորեն գոյացած ու զարգացած իրողություններ հայ ժողովրդի կրոնական ու ազգային կյանքի մեջ: Ինչպե՞ս է, որ Հ. Կոգյանն ի վիճակի չէ հասկանալու և զգալու հայ ժողովրդի ճշմարիտ հոգեբանությունը և հայոց պատմության ոգին: Ինչպե՞ս է, որ Հ. Կոգյան չի անդրադառնում, թե Հայ Եկեղեցու առաքելականությունը և ինքնագլխությունը, ինչպես և Փրկչի իջման խորհուրդը ի Հայաստան աշխարհ, ամեն բանից առաջ և ամեն բանից վեր՝ ոգեկան ճշմարտություններ են հայ ժողովրդի համար, կենդանի հավատով և դարերի իմաստությամբ ու մարտիրոսությամբ պահպանված սրբազան ավանդներ, ապրելու և տոկալու ինքնապաշտպանության վահաններ, բազում դարերի պատմական փորձով սրբագործված:

Հայ պետք է լինել՝ կարողանալ հասկանալու և զգալու համար այս բոլորը, Հազկերտի օրերից սկսած մինչև մեր օրերը: Թվում է, թե այդ կարելի չէ սպասել Հ. Կոգյանից: Ընդհակառակը, նա խայտում է ու հրճվում ի տես իր ծխտող ու քայքայող իմացականության «հաջողությունների»: Տե՞ր Աստված, ի՞նչ չար ձեռք այս որոմն է ցանել Հ. Կոգյանի հոգու մեջ, անճանաչելի դարձնելով նրան իբրև հայ մարդ: Հ. Կոգյանը չի՞ իմանում արդյոք, որ հայ ժողովրդի լույս հավատը և ավանդությունները սրբություններ են և ոգեկան ճշմարտություններ, որոնց չի կարելի մերձենալ ոչ մանրէացույցով, ոչ կարկինով և ոչ էլ ցամաքած երակներով: Այո՛, սրբություններ են դրանք, ապրող, կենդանի զգացմունքներ և հույզեր, որոնք անգամ ավելի քան տասնվեց դարեր ապստամբյալ հիմքերն են կազմում ամբողջ մի ժողովրդի կրոնական հավատքի, քրիստոնեական մշակույթի և պատմական կյան-

քի. պատմական մի կյանք, լի հերոսական մաքառումներով և գերագույն զոհաբերումներով՝ ի փառս Աստուծո, Քրիստոսի և Ս. Ավետարանի:

Աստվածային կամ մարդկային ո՞ր օրենքներով եք ուզում խլել այդ բոլորը հայ ժողովրդից և անպայման օտար մի գլուխ պարտադրել Հայաստանյայց ազատ Եկեղեցուն: Ճիշտ է, թե մենք՝ հայերս համրանքով փոքր ենք, և այս աշխարհի վրա մեր Եկեղեցու միակ ուժը այդ փոքր ժողովուրդն է: Մենք, իբրև Եկեղեցի, ո՛չ ոսկի ունենք, ո՛չ բեհեզ, ո՛չ զենք, ո՛չ զորք, ո՛չ դրամատներ աշխարհի շուկաների վրա և ո՛չ էլ երկրային տիտղոսներ: Բայց մենք հպարտ ազգ ենք, հպարտ մի Եկեղեցի՝ մեր անցյալով, մեր սրբերով, մեր հերոսներով, մեր հոգևոր, իմացական գանձերով, մեր ներկա հայրենի վերածնունդով և ապագայի նկատմամբ մեր վառ երազներով ու իղձերով:

Հպարտ ենք, այո՛, որ մեր Եկեղեցին՝ Հայաստանյայց Եկեղեցին, որին Կոգյանները պիղծ ու մոլորյալ են հռչակում, իր կյանքի իսկ գնով, դարեր շարունակ պաշտպանել է քրիստոնեության և քաղաքակրթության սահմանները Արևելքի դռների առաջ: Մենք հայ ժողովրդի Եկեղեցին ենք, մենք Հայաստանցիների Եկեղեցին ենք, մի՛ փորձեք նվաստացնել մեզ, մի՛ փորձեք վիրավորել մեզ: Մեղք է և ամոթ: Եվ թողե՛ք, որ իր ազգային Եկեղեցիով հայ ժողովուրդը պահի ու պահպանի ոգեկան իր անկախությունը: Եվ մի՛ փորձեք շահագործել այն ներքին դժվարությունները, որոնք վերջին տարիներին ծագել են Հայ Եկեղեցու ծոցում, անցողիկ կերպով և արվեստականորեն: Այդ բոլոր արտաքին և մակերեսային երևույթներից վեր՝ մենք, բոլորս, հայերս, մեկ ենք: Մեր բոլոր նվիրապետական Աթոռներով՝ Էջմիածին, Անթիլիաս, Երուսաղեմ թե Կոստանդնուպոլիս, մեկ ենք և անբաժանելի՝ մեր Առաքելական Սուրբ Եկեղեցիով, մեր քրիստոնեական ուղղափառ դավանությամբ, մեր աստվածակառույց Սուրբ Էջմիածնով, մեր պատմության սուրբ մատյաններով և մեր Մայր Հայրենիքով:

Խոնարհեցե՛ք ձեր գլուխը Հայաստանյայց մարտիրոս Եկեղեցու և նրա նույնքան մարտիրոս Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի սեղանների առաջ:

Հ. Կոգյանի գիրքն ունի նաև մի ուրիշ տխուր կողմ: Մեր օրերին, երբ աստվածանաճռ, գովելի եռանդով բոլոր Եկեղեցիները և բոլոր լուսամիտ հոգևոր դեմքերը ողջ աշխարհում, խոսում են տարբեր Եկեղեցիների միջև սիրո և միության ոգին զարգացնելու մասին, երբ դարերով միմյանցից «մրրկաւ զատուած» և միմյանց դեմ պատերազմներ մղած Եկեղեցիները ձգտում են մոռանալ տխուր անցյալը և կամենում են հաշվի չառ-

նել այն ամենը, ինչ բաժանում է իրենց, և ընդգծում են այն, ինչ կարող է իրենց միացնել, ինչո՞ւ համար Հ. Կոգյանը, ճիշտ նման մի պահի, փորձում է պղտորել սրտերը, ինչո՞ւ է նա ուզում կրքեր հրահրել, ինչո՞ւ և ինչպե՞ս է, որ հաճույք է գտնում Հայ Եկեղեցին և հայ ժողովուրդը նսեմացնելու իր մտածման մեջ: Այսպիսի մի պահի, երբ նույնիսկ Հռոմի Եկեղեցին իր Սրբազան Քահանայապետով և ականավոր ներկայացուցիչներով խոսում է Եկեղեցիների փոխադարձ սիրո և հանդուրժողական ոգու ամրապնդման մասին, և Վատիկանի՝ առաջիկայում կայանալիք ժողովը, կարծվում է, թե առավելապես նվիրված կլինի քրիստոնեական սիրո և եղբայրության և աշխարհի խաղաղության գաղափարներին, հրապարակ է գալիս Հ. Կոգյանի այս վնասակար գիրքը:

Եվ վերջապես՝ ինչո՞ւ է այս գիրքը, երբ Հայաստանյայց Եկեղեցու հավատացյալ զավակները, առանց խտիր դնելու, լայն չափով և սիրով օժանդակում են նյութապես և բարոյապես հայ կաթողիկե եկեղեցականների ձեռնարկներին, և երբ Ամենայն Հայոց Հայրապետն իսկ խրախուսում է իր զավակներին այդ ուղղությամբ: Մենք համոզված ենք, թե Հ. Կոգյանի հրատարակած գիրքը առաջին հերթին կխռովի ու կտխրեցնի կաթողիկե հայերին և մանավանդ Մխիթարյան մեր եղբայրներին:

Հ. Կոգյանի գիրքը ո՛չ մի օգուտ չի բերում ո՛չ հայ ժողովրդին, ո՛չ գիտությանը և ո՛չ էլ իր Եկեղեցուն:

Հայ ժողովո՛ւրդ, կարդա՛ Հ. Կոգյանի ստախոս գիրքը և արթուն կերպով հսկի՛ր ու պաշտպանի՛ր քո լուսաբնակ ու նահատակ հայրերի Առաքելական Ուղղափառ Սուրբ Եկեղեցին և իմացի՛ր քո անելիքը:

Հայաստանյայց Եկեղեցին և Մայր Աթոռը, թեև մի պահ խորապես վրդովված և վիրավորված, կմնան սակայն անսասան իրենց ավանդական լայնախոհության և լավատեսության վեմի վրա և կշարունակեն սիրո և եղբայրության կոչ ուղղել Հայ Կաթողիկե Եկեղեցուն, նրա այժմյան հոգևոր հայրերին, ցույց տալով այն պայծառ և իսկապես աստվածահաճո ու ազգաշեն ոգին, որը բաց են արել երջանկահիշատակ Մխիթարներն ու Ալիշանները: Հայաստանյայց Եկեղեցին միշտ կմնա աղոթող վասն միության և համերաշխ գործակցության բոլոր քրիստոնյա Եկեղեցիների: Եկեղեցական միություն, այո՛, ճշմարիտ ավետարանական ոգով ու սիրով:

Ջատկական Մեր նույն քարոզում շեշտում էինք. «Մենք չենք հավատար Եկեղեցիներու միության իրականացման՝ քրիստոնեական որոշ Աթոռներու իշխանության տարածումով այլ Եկեղեցիներու վրա, ինչ ձևով ալ ըլլա այդ: Մենք կհավատանք Եկե-

ղեցիներու միության իրականացման՝ պատմականորեն ծնունդ առած ու զարգացած քրիստոնեական Եկեղեցիներու միջև, միմիայն ճշմարիտ և անկեղծ ավետարանական սիրով, ամեն մեկ Եկեղեցի պահելով իր աստվածաբանական մտածելակերպը, իր կանոններն ու ավանդությունները, իր ծեսերն ու ազգային նկարագիրը, իր եպիսկոպական դրությունը և ինքնագլուխ ղեկավարությունը: Ա՛յս է, Մեր կարծիքով, իրավ ճանապարհը դեպի միություն տանող: Միություն Քրիստոսի սիրով: Դառնա՛նք ուրեմն դեպի ճշմարիտ աղբյուրը սիրով միության՝ դեպի Քրիստոս, միակ և անփոխարինելի Գլուխը Սուրբ Եկեղեցիին»:

Հայաստանյայց Եկեղեցին ինչպես միշտ, այսօր ևս ցանկանում է եղբայրական սիրո հարաբերությունների զարգացում բոլոր քրիստոնյա Եկեղեցիների միջև, ներառյալ, անշուշտ, Հռոմեադավան Կաթողիկե պատմական մեծ Եկեղեցին, փոխադարձ հարգանքի և գնահատանքի պայմանների մեջ: Սկզբունք, որը բարեբախտաբար արդեն վերջապես ներդրագործված է և կենսագործման հունի մեջ մտած՝ կազմակերպումով և գործունեությամբ Եկեղեցիների Համաշխարհային Խորհրդի, որին մասնակցում են ամբողջ աշխարհի քրիստոնյա Եկեղեցիները, աստվածահաճո միասնության և եղբայրության ոգով: Մաղթելի է, որ Հռոմեադավան Կաթողիկե Եկեղեցին վերաքննի իր՝ այլևս ոչ ոքի չհամոզող բանաձևերը և քրիստոնեավայել ոգով ողջունի իր քույր Եկեղեցիներին ու հեռու չմնա քրիստոնյա Եկեղեցիների համաշխարհային եղբայրությունից:

Այն ժամանակ ճշմարտապես ուրախություն կլինի երկրի վրա և երկնքում:

Էջմիածին, «Էջմիածին», 1962, ապրիլ

ՀԱՅ ԺՈՂՈՎՈՒՐԴԸ ԵՎ ԻՐ ՄԱՅՐ ԵԿԵՂԵՑԻՆ

Հայաստանյայց Առաքելական Եկեղեցին, մայր դաստիարակը համայն հայ քրիստոնյա ժողովրդի, իր պատմական առաքելության ողջ ընթացքում մնացել է հաստատ ու հավատարիմ Քրիստոսի Ավետարանին, սուրբ ավանդությանց և Տիեզերական առաջին երեք ժողովների ուսմունքին, ժողովներ, որոնք վերջապես ամուր հիմքերն էին դրել ուղղափառ վարդապետության:

Իր պատմական առաքելության ողջ ընթացքում, Հայաստանյայց Եկեղեցին, նույնքան հաստատ ու հավատարիմ է մնացել իր ժողովրդին, նրա ոգեկան մղումներին, նրա իմացական որոնումներին, նրա բարոյական ու մշակութային հանճարին, նրա մաքառումներին վասն արդարության ու ազատության, շատ հաճախ ինքը՝ մեր Մայր Եկեղեցին հանդես գալով որպես դրոշակակիր ու մարտնչող ի խնդիր այդ իդեալների կենսագործման: Իր պատմական առաքելության ողջ ընթացքում, Հայաստանյայց Եկեղեցին մնացել է ու գործել հայոց կյանքի սահմաններից ներս, միայն հայ ժողովրդին նկատելով իր հոտը, երբեք չփորձելով ոտնձգություններ կատարել քույր Եկեղեցիների փարախից ներս: Հայ Եկեղեցին չի զբաղվել մարդորսությամբ: Հայ Առաքելական Եկեղցին ի սկզբանե եղել և մնացել է հայ ժողովրդի Եկեղեցին, եղել և մնացել է ազգային Եկեղեցի: Ազգ և Եկեղեցի հայոց մեջ կազմել են մեկ մարմին և մեկ հոգի, մեկ առաքելություն և մեկ նպատակ:

Այսպես է, որ Հայաստանյայց Եկեղեցին եղել ու մինչև այսօր մնացել է նաև պաշտպան հայրենյաց: Այսպես է, որ Հայաստանյայց Եկեղեցին իր ժողովրդի հետ 1915-ին գերեզման է իջել ու երեք տարիներ հետո Սարդարապատի հերոսամարտով իր ժողովրդի հետ հարություն առել, մի հերոսամարտ, որի ոգեշնչող ուժն է հանդիսացել Սուրբ Էջմիածինն իր Հայրապետով ու քաջարի միաբաններով: Իսկ քառորդ դար անց, նույն մեր Մայր Եկեղեցին, Սուրբ Էջմիածնի օրհնությամբ, նույն ոգեշնչումով և «Սասունցի Դավիթ» տանկային շարասյունով թև-թիկունք է եղել իր ժողովրդին, ի խնդիր Հայրենական մեծ պատերազմի հաղթությամբ պսակման:



Բուխարեստի հայկական եկեղեցին

Հայաստանյայց Եկեղեցին, սակայն, միաժամանակ նկատել է իրեն անբաժանելի մասը քրիստոնեական ընդհանրական Եկեղեցու, կամեցել է միշտ եղբայրական հաղորդակցության մեջ պահել իրեն քույր Եկեղեցիների հետ և հեռու է եղել անհանդուրժող ու այլամերժ ձգտումներից, մնացել է միշտ լայնախոհ ու ողջամիտ և ոչ երբեք մոլեռանդ, առաջնորդվելով՝

«Միութիւն ի կարևորս,

Ազատութիւն յերկրպագանս,

Սէր յամենայնի» իրավ ավետարանական սկզբունքներով:

Մեր Մայր Եկեղեցին երբեք չի հետապնդել ուրիշներին, պարտադրել «իր ճշմարտությունը», զի հոգու լույսով կարողացել է հասկանալ, թե հոգևոր կյանքի տիեզերքում այնքան ճշմարտություններ կարող են լինել, ինչքան հոգևոր իրավ ապրումներ: Ինչքա՜ն երջանիկ պիտի լիներ մարդկությունը, եթե ազատվեր «մեկ ճշմարտության» երկրպագուներից:

Այսպիսով մեր Մայր Եկեղեցին վաղուց, շատ վաղուց հարազատ արդիական էկումենիկ ոգով է ըմբռնել հարաբերությունները՝ պատմականորեն զարգացած բոլոր քույր Եկեղեցիների միջև:

Հայաստանյայց Եկեղեցին դիմել է ինքնապաշտպանության, միմիայն երբ այլ Եկեղեցիներ, դրդված փառասիրական և իշխանամոլության մղումներից և կամ քաղաքական շահերից, երկնից արքայության մենատերերը լինելու հավակնությամբ, փորձել են պառակտել մեր ժողովուրդն ու Եկեղեցին և բաժան-բաժան անել նրան, եղբայրը եղբոր դեմ հանելով և թշնամանքների որոմ սերմանելով մեր բարի քրիստոնյա զավակների ծոցում: Առանց այդ էլ փոթորկահույզ մեր ազգային պատմությունը քանի՜-քանի՜ անգամներ թատերաբեմ է հանդիսացել նման ողբերգությանց, որոնց արդյունքն է եղել այն իրողությունը, որ հայ ազգի Մայր Եկեղեցուց բաժանվել են նրա զավակներից ոմանք ու միացվել արևմտյան Եկեղեցիների, երբեմն նույնիսկ բռնի միջոցներով, զինու զորությամբ, ինչպիսին է եղել Լեհաստանի և Տրանսիլվանիո հայոց պարագան 18-րդ դարի սկզբներին: Սակայն Հայ Եկեղեցուն ընդհանրապես հաջողվել է ինքնապաշտպանության դիմել, և այսպիսով հայ ժողովրդի լայն զանգվածները, առաջնորդված իրենց ազգային առողջ բնազդով, կարողացել են ուղիղ կողմնորոշվել, մնալով մինչև այսօր հավատարիմ իրենց Մայր Եկեղեցուն, ավելի քան ինքնուն տոկոսի համեմատությամբ:

Այնուամենայնիվ, Հայաստանյայց Եկեղեցին, իրեն հատուկ լայնախոհությամբ, մի տեսակ հաշտվել է տխուր անցյալից ժառանգված այդ կացության հետ և այսօր իր ծոցից բաժանված եղբայրների ու քույրերի վրա չի նայում ծուռ աչքով և նույնիսկ չի

փորձում աշխատանք տանել նրանց վերադարձնելու Մայր Եկեղեցու գիրկը, ինչ որ բնական և ցանկալի գործ պիտի լիներ ազգային միասնության ամրապնդման տեսակետից: Սակայն նման ձգտում, գոնե մեր դարաշրջանում, չի դրսևորվել:

Մայր Աթոռս, հատկապես վերջին տասնամյակներին, առաջնորդվել է հարազատ եղբայրական սիրո մտորումներով, խտրություն չդնելով առաքելական, կաթոլիկ և ավետարանական հայերի միջև: Մեր բոլոր ուղևորությունների ընթացքում այցելել ենք նրանց Եկեղեցիները և Սուրբ Էջմիածնից բերած մեր օրհնություններն բաշխել նաև կաթոլիկ և ավետարանական մեր քույրերին ու եղբայրներին: Բազմիցս հայրական սիրով ու գնահատանքով այցելել ենք Սուրբ Ղազարի և Վիեննայի Մխիթարյան հայրերին, իսկ Եղեռնի հիսնամյակի առթիվ պաշտոնապես հրավիրել ենք կաթոլիկ հայոց Ամենապատիվ պատրիարքին և հայ ավետարանական Եկեղեցյաց վերապատվելի ղեկավարներին, իբրև Մեր ցանկալի հյուրերը:

Մայր Աթոռիս և Հայաստանյայց Եկեղեցու մյուս երեք նվիրապետական Աթոռների ամսաթերթերում երբեք լույս չեն տեսել հոդվածներ կամ ուսումնասիրություններ, որոնք կարողանային վիրավորել զգացումները մեր Եկեղեցու ծոցից բաժանված եղբայրների: Մեր Եկեղեցին, մեր Աթոռները և մեր հոգևորականները, գոնե վերջին տասնամյակներին, չեն հրատարակել որևէ աշխատասիրություն, որ պղտորեր մեր Մայր Եկեղեցու բարի հարաբերությունները հայ կաթոլիկ և հայ ավետարանական եղբայրների հետ: Մենք հույժ ուրախ ենք հաստատելու այս իրողությունը, որ արտահայտությունն է մեր Մայր Եկեղեցու իրավ ավետարանական ոգու, իրավ ազգային գիտակցության և էկումենիկ ուղիղ կեցվածքի:

Բայց տխրությամբ ստիպված ենք հաստատել, թե նույնը չի կարելի ասել պատասխանատու դիրքեր գրավող մի քանի հայ կաթոլիկ հոգևորականների մասին:

Այսպես՝ վերջին տարիների ընթացքում հետզհետե լույս տեսան Հայր Սահակ Կոգյան եպիսկոպոսի «Հայոց Եկեղեցին» ստվար հատորը[1], Հայր Կարապետ Ամատունի եպիսկոպոսի Ոսկան վարդապետ Երևանցու[2] և Հայոց Եկեղեցու[3] մասին գրած հայերեն ու ֆրանսերեն գրքերը և Լևոնյան վարժարանի ղեկավար Հայր Ներսես Սեթյանի Հայ կաթոլիկ Եկեղեցու վերա-

---

[1] **Հայր Սահակ Կոգյան**, Հայոց Եկեղեցին, 1961, Բեյրութ:

[2] **Հայր Կարապետ Ամատունի**, Ոսկան վարդապետ Երևանցին և իր ժամանակը, 1975, Վենետիկ:

[3] **Հայր Կարապետ Ամատունի**, L'Eglise arménienne et la catholicité, 1978, Վենետիկ:

բերյալ[1] հոդվածը գերմաներեն լեզվով: Այս բոլոր հրատարակությունների մեջ սև թելի պես անցնում է թշնամանքի ոգին Հայաստանյայց Եկեղեցու նկատմամբ, բոլորի ձգտումը լինելով հեղինակազրկել Հայաստանյայց Եկեղեցին և ի մասնավորի Մայր Աթոռ Սուրբ Էջմիածինը: Նրանք, միակողմանի և չափավորված վկայություններով, հատկապես փորձում են ժխտել մեր Մայր Եկեղեցու առաքելական ծագումը, նրա ինքնագլուխ ու անկախ լինելու պատմական իրողությունը և Սուրբ Էջմիածնի ընդհանրական հայրապետական Աթոռի վավերականությունը: Բացի այդ, Հայր Սահակ Կոգյանի վերոհիշյալ գիրքը նաև մի անխիղճ նկրտում է՝ հոշոտելու պայծառ հիշատակը Կ. Պոլսի մեծագործ Օրմանյան պատրիարքի, որին իր ժամանակին պատասխանեցին «Էջմիածին», «Հասկ» և «Սիոն» ամսագրերը:

Ինչո՞ւ այս անհոգի արշավանքը հայ ժողովրդի Մայր Եկեղեցու դեմ, ոչ միայն հայերեն, այլև օտար լեզուներով:

Այնպիսի մի պատմական ժամանակաշրջանում, երբ հայ ժողովուրդը, հազիվ ազատված մահվան անդունդից, իր նոր հայրենիքն է կերտում իր պատմական հողերի մի մասի վրա, Սարդարապատի ճակատամարտով հազար տարիների գերության շղթաները փշրած, երբ սփյուռքի հայությունը մահու-կենաց հերոսական պայքար է մղում իր հոգևոր ու ազգային ինքնությունը պահպանելու ի խնդիր, երբ սփյուռքի որոշ երկրներում մեր ժողովուրդը անավոր պատուհասների առաջ է կանգնած, երբ հայ ժողովուրդը ավելի քան երբեք հրամայականի առջև է գտնվում պահպանելու և ավելի ու ավելի ամրապնդելու իր ներքին միասնությունը, իր ներքին անբաժանելիությունը, երբ բոլոր քրիստոնեական Եկեղեցիները և նրանց պետերը, Հռոմի Սրբազան Պապից սկսյալ, ոգեշնչված են եկեղեցական էկումենիզմի գաղափարախոսականով և առաջնորդվում են Եկեղեցյաց միջև փոխադարձ հանդուրժողության և եղբայրական սիրո ու գործակցության զգացումներով և, վերջապես, երբ Հայաստանյայց Եկեղեցու, հատկապես Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի սիրո և հարգանքի զգացումները հետզհետե աճում են ու զարգանում Հռոմեական Կաթոլիկ Եկեղեցու և նրա Սրբազան Քահանայապետների նկատմամբ, ահավասիկ մեր օրերին գտնվում են հայ կաթոլիկ մի քանի հայրեր, որոնք սիրտ ունեն և ախորժակ, տարիներ ու տարիներ աշխատելու՝ նպատակ ունենալով հեղինակազրկել մեր Մայր Եկեղեցին ու վիրավորել ամբողջ հայ հավատացյալ ժողովրդին:

---

[1] **Հայր Ներսես Սեթյան,** Eine Rechtfertigung der armenischunierten armenischen Kirche aus der Geschichte, «Die Kirchen Armeniens» հատորի մեջ, Stuttgart, 1978.

Հայ ազգի համար այսպիսի բախտորոշ ժամանակաշրջանում, հայ հոգևորականը ինչքա՞ն դատարկված պիտի լինի ավետարանական սիրո զգացումից, ինչքա՞ն դատարկված պիտի լինի հայ ժողովրդի՝ մեր օրերի իրավ ապրումներից ու սպասումներից, ինչքա՞ն հեռու պիտի լինի ճշմարիտ էկումենիկ ոգուց, որ նստի ու տարիներ վատնի՝ վերարծարծելու համար շատոնց բրածո դարձած «բյուզանդական վեճեր», վեճեր, որոնք ոչինչ չեն ասում մեր օրերի մարդուն, առավել ևս մեր օրերի հայ մարդուն և ոչինչ չեն կարող ապացուցել, ինչքան էլ իրենց մտքի և գրչի մարզանքները ճարպիկ թվան ու ճշմարտանման: Վաղուց պատմության զամբ.ուղն են նետված նման վեճերն ու հավակնությունները, վաղուց մեր ողջամիտ ժողովուրդը դատապարտության սյունին է մեխել Նիկոլ Թորոսովիչյան ազգուրաց այլանդակությունը:

Հիշենք այստեղ Պողոս առաքյալի պատգամը, որ այնքան այժմեական է հնչում մեր պարագային. «Հեռո՛ւ վանիր հիմար խնդիրները և տոհմաբանությունները և հակաճառությունները ու կռիվները օրենքի շուրջ, որովհետև դրանք անօգուտ են և սնոտի: Հեռացի՛ր հերձվածող մարդուց մեկ կամ երկու անգամ նրան խրատելուց հետո.. իմացի՛ր, որ շեղված է այդպիսին և մեղանչում է, ինքն իսկ դատապարտելով իրեն» (Տիտոս Գ. 9—11):

Արդ, Մեր սպասումն է ու հրավերը, ուղղված մեր կաթոլիկ եղբայրներին և հատկապես Մխիթարյան ժրաջան հայրերին, հեռու մնալ Թորոսովիչյան չար ճանապարհից և առաջնորդվել Ալիշանյան ազգաշեն ու հայրենաշեն ոգով: Մեր սպասումն է ու հրավերը նաև, որ մեր կաթոլիկ եղբայրները չփորձեն պղտորել հարազատ էկումենիկ ոգով սկիզբ առած այն աստվածահաճո հարաբերությունները, որոնք հետզհետե զարգանում են Հռոմի մեծ Եկեղեցու և Հայաստանյայց Եկեղեցու միջև:

Ժամանակն է, որ մեր Եկեղեցիները վերջապես հրաժարվեն հին վեճերից ու հավակնություններից և աշխատեն ոչ թե իրար տկարացնել, այլ հետամուտ լինել իրար զորացնելու, իրար օգնելու անպայմանավոր սիրովը Քրիստոսի, այսպիսով զորացնելու համար քրիստոնեական համաշխարհային եղբայրությունը: Հայաստանյայց Եկեղեցին եղել և մինչև մեր օրերը մնացել է խորհրդանիշը հայ ժողովրդի ոգեկանության, հայ ժողովրդի հոգու անկախության, հայ ժողովրդի արժանապատվության ու հպարտության:

«Եկեղեցին հայկական բարձր բերդն է հավատքին իմ սպասերուս»:

Էջմիածին, «Էջմիածին», 1980, ապրիլ

ՏԱՆՆ ԿԻԼԻԿԻՈ Տ. ԳԱՐԵԳԻՆ Ա ԿԱԹՈՂԻԿՈՍԻ 80-ԱՄՅԱԿԸ

«Բյուր ողջույն, երկար կյանք անզուգական եկեղեցական, ջերմ հայրենասեր, բազմավաստակ գիտնական, ալեզարդ հոբելյարին»

«Էջմիածին» ամսագիր

Ո՞ր ռումանահայը հուզումով և հպարտությամբ չի հիշիր այն օրերը, երբ ասկե տասներկու տարիներ առաջ, մեր հարազատ Խորհրդային Հայրենիքեն այս երկիրը ժամանեց Տ. Գարեգին արբազան արքեպիսկոպոս Հովսեփյանը, այսօրվան շնորհազարդ հոբելյար Տանն Կիլիկիո Վեհափառ Կաթողիկոսը:

Ռումանիան առաջին երկիրն էր, որտեղ ոտք դրավ Սուրբ Էջմիածնի Մայր Աթոռի և մեր Մայր երկրի ներկայացուցիչը:

Եվ ի՜նչ ոգևորություն ու նոր շունչ բերավ ան մեր այն ատենվան մշուշոտ, անհորիզոն իրականության մեջ...

Մեր Հայրենիքի և Սուրբ Էջմիածնի աննման առաքյալը մեր հոգիները արևածաղկի նման դարձուց «դեպի Արարատի ստորոտում ծաղկող Հայրենիքը, դեպի թանկագին Մայր Հայաստանը, դեպի հայ ժողովուրդի կենդանության արևը»:

Տ. Գարեգին արքեպիսկոպոսը ներկայալ հոգևորականի և մեծ հայրենասերի ջահերը ձեռքին, երկրե երկիր, աշխարհե աշխարհ գնաց ու քարոզեց: Անցալ Ատլանտյանը ու հոն հայոց առաջնորդությունը վարելե հետո, 1943-ին Տանն Կիլիկիո Կաթողիկոս ընտրվեցավ, որուն տարագիր աթոռը Անթիլիասի մեջ կգտնվի այժմ:

Գարեգին Կաթողիկոս, անտարակույս, մեր օրերու մեծագույն հայերեն մին է թե՛ որպես հոգևորական, թե՛ որպես մշակութային և ազգային գործիչ:

Ծնած Լեռնային Ղարաբաղի Մարավուզ գյուղը 1867-ին, իր ուսումը կստանա Արցախի վանքերուն, ապա Գևորգյան Ճեմարանին և Լայպցիգի ու Մարբուրգի համալսարաններուն մեջ: 1897-ին, Եվրոպայեն Էջմիածին վերադառնալով, կնվիրվի Հայ Եկեղեցվույն, հայ դպրոցին ու մշակույթին, գիտական լրիվ պատ-

ռաստությամբ մը, իմացական բացառիկ կարողություններով և մանավանդ իրեն հատուկ այն ներքին եռանդովը, որ անշեջ մնաց իր հոգվույն մեջ հիսուն տարիներ շարունակ, միշտ նույն ջերմությամբ, միշտ նույն պայծառությամբ և առավելյալ թափով:

Վեհափառը վարդապետ կձեռնադրվի 1898-ին, Մկրտիչ Խրիմյան Հայրիկի օրով, եպիսկոպոս՝ 1917-ին, առաջնորդական պաշտոններ կվարե Թիֆլիսի և այլ թեմերու մեջ, իսկ 1915—17-ին Գևորգյան ճեմարանի տեսուչ կկարգվի: 1915—1920 թվականներու պատերազմներուն ընթացքին մեծ դեր կկատարե հայ կյանքին մեջ, մասնավորաբար Վասպուրականի գաղթականության նպաստի գործին կազմակերպման մեջ և նաև այն մահու և կենաց կռիվներու շրջանին, զորս հայ ժողովուրդը ստիպված էր մղել ընդդեմ թրքական իմպերիալիզմին, որ կսպառնար Ռուսահայաստանն ալ բնաջինջ ընել:

Մինչև իր արտասահման անցնիլը, այսինքն՝ 1920—1934, երբ խորհրդային կարգերու շնորհիվ երկրին մեջ կյանքի և աշխատանքի խաղաղ ու ապահով պայմաններ կստեղծվին, Գարեգին արքեպիսկոպոս Կնվիրվի իր այնքան սիրած մասնագիտական ուսումնասիրություններուն՝ պատմա-հնագիտական և հայ հին արվեստի գծով:

Բաց 1934-են վերջ ալ, Եվրոպայի մեջ, ամեն տեղ իր վարչական ու կազմակերպչական աշխատանքներուն հետ զուգահեռաբար, անդուլ կերպով իր ուսումնասիրությունները կշարունակե: Հայաստանի, Երուսաղեմի, Անթիլիասի, Վիեննայի ու Վենետիկի հայկական մատենադարաններն ու ձեռագրադարանները այն կեդրոններն են, ուր Վեհափառը ամիսներ ու տարիներ շարունակ պրպտած, ուսումնասիրած է հայ ժողովուրդի անցյալն ու հին արվեստը, գրչությունն ու մանրանկարչությունը մասնավորապես:

Հոբելյարին ցարդ հրատարակած գործերուն թիվը քանի մը տասնյակ հատորներու կհասնի: Մեծ է թիվը նաև իր այն աշխատանքներուն, որոնք հրատարակվելու համար հերթի կսպասեն: Անոնց մեջ ամենանշանավորներն են «Հիշատակարանք ձեռագրաց» հավաքածուն, բաղկացած երեք ստվար հատորներե և «Գրչագրական արվեստը հին հայոց մեջ» խոշոր գործը, որ Վեհափառին հեղինակություններուն գլուխգործոցը պիտի ըլլա:

Գարեգին Կաթողիկոս անզուգական և մեծ է նաև որպես քարոզիչ ու հռետոր, մեծ իր խոսքին պարզությամբը, ջերմությամբը և թռիչքովը: Հավատքին հուրը կա իր հոգիին մեջ, թե ունին իր զգացումներն ու մտածումները, և մեր ամբողջ պատմությունն է, որ իր հոգվույն մեջ կենդանություն և լեզու կառնե:

Գարեգին արք. Հովսեփյանցը՝ շրջապատված Բուխարեստի հայ ուսանողների միության անդամներով. ձախից առաջին շարքի երկրորդը՝ Լևոն Պալճյան վարդեն Ա Հայոց Հայրապետը

(Բուխարեստ, 1934 թ.)

Թեմական առաջնորդը ռումինահայ թեմի ավագ. իշխանությունների հետ

Իր ուխտին հավատարիմ մաքուր և ներշնչյալ հոգևորական, քաջ առաջնորդ Հովվապետ իր սիրելի ժողովուրդին, անհոգնաբեկ ու կշռադատ պրպտող հայ անցյալին, հմուտ և տաղանդավոր քննադատ հայ հին արվեստին, նվիրված ու խանդավառ հայրենասեր, ահա թե ով է մեր այսօրվան ալեզարդ հոբելյարը՝ Տանն Կիլիկիո Կաթողիկոս Գարեգին Ա.-ն:

Փա՜ռք, պատի՛վ և երկա՜ր կյանք մեծ Հայրապետին:

Հայ ժողովուրդը անհուն երախտագիտական զգացումով կը-խոնարհի անոր զմայլելի վաստակին առջև, և «պատվելով այս հոյակապ հոգևորականը, ազգը ինքզինքն է, որ կպատվե»:

ՎԱՉԳԵՆ ՎԱՐԴԱՊԵՏ

Բուխարեստ, «Հայաստանյան ճակատ», 1947, նոյեմբեր 16

Ի ՍԵՐ ՄԵՐ ԵԿԵՂԵՑՈՒ ՄԻՈՒԹՅԱՆ

1. Մեր բազմադարյան Եկեղեցին կազմական մի կանոնադրությամբ օժտելու անհրաժեշտությունը Մայր Աթոռիս մտահոգությունն է եղել դեռևս 1945 թվականից սկսյալ: Փորձեր են կատարվել մի քանի անգամ անցյալում, իսկ վերջին երկու տարիներին, Մեր առաջադրանքով, հատուկ մի հանձնաժողով կազմել է նախնական մի նախագիծ, որը կարող է հիմք ծառայել քննարկման:

2. Այս նախագծին պաշտոնական հանգամանք տալուց առաջ, Մայր Աթոռը և հանձնաժողովն ինքը անհրաժեշտ գտան հրավիրել Տանն Կիլիկիո Աթոռը, որպեսզի իր ներկայացուցիչներով մասնակցի նախնական նախագծի քննարկմանը, հանձնաժողովի անդամների հետ միասին, այն հույսով, որ միացյալ ուժերով հնարավոր կդառնա ընդունելի ձև տալ կանոնադրության նախնական նախագծին, և հետագայում այն կքննարկվի պաշտոնական մարմինների կողմից և ապա ի հարկին կհաստատվի Մեր կողմից:

3. Մի կանոնադրություն մշակելու հարցը վերջին երկու տարիներին դարձավ թղթակցությանց առարկա երկու Աթոռների միջև: Մենք ջերմապես պաշտպանեցինք մեր Եկեղեցին մի կանոնադրությամբ օժտելու գաղափարը, նաև Մայր Աթոռի ու Կիլիկյան Աթոռի միջև գոյատևող անհասկացողությունները վերացնելու տեսակետից: Ահա թե ինչ ենք գրել Մեր վերջին նամակում, ուղղված Տ. Տ. Գարեգին Բ կաթողիկոսին, 1985 թ. օգոստոսի 24-ին. «Հետևաբար կկրկնեմ իմ առաջարկը, որ հաճիք Սուրբ Էջմիածին ուղարկել Ձեր ներկայացուցիչները, որպեսզի մեր հանձնաժողովի անդամներուն հետ խառն հանձնաժողով մը կազմած, նախագիծը քննության ենթարկեն հոդված առ հոդված: Ամեն ինչ վերաքննելի է փոխադարձ համաձայնությամբ: Ձեր Աթոռը ամեն հնարավորություն ունի այս առթիվ իր տեսակետները ներկայացնելու: Այս առաջարկով ես, իբրև Մայր Աթոռի գահակալ, ուղղակի Ձերդ Սրբության կը դիմեմ, նաև ճամփա մը բանալու, 1957-են ի վեր մեր Աթոռներու եղբայրական գործակցությունը արգելակող հարցերը լուծելու համար: Այդ էր նաև Փարիզ մեր վերջին հանդիպման ժամանակ երկուքիս բաղձանքը, որն իր արտահայտությունը գտավ մեր հրապարակած հաղորդագրության մեջ...:

Որովհետև նման կանոնադրության մը մշակումով լուծած պիտի ըլլանք բոլոր այն հարցերը, որոնք առարկան կրնան հանդիսանալ մեր Աթոռներու միջև բանակցությանց: Ուրիշ խոսքով, միասնաբար Ձեզի հետ կանոնադրության մը նախագծին վրա աշխատիլ՝ կը նշանակե շարունակել մեր Աթոռներու բանակցությունները, լուծելու համար մեր առջև ծառացող հարցերը:

Հաջողեցանք՝ լավ, շատ լավ, չհաջողեցանք՝ կը նշանակե պետք է համբերությամբ ապասեանք ի լրումն ժամանակաց»:

4. Մայր Աթոռիս ձայնը ի վերջո լսելի դառնալով, Կիլիկյան Աթոռի գահակալը իր երեք լիազոր ներկայացուցիչները ուղարկեց Սուրբ Էջմիածին, սույն թվականի հուլիս ամսին:

Սակայն, ի հուսախաբություն Մայր Աթոռիս, Կիլիկյան Աթոռի լիազորները եկան ոչ թե մասնակցելու նախնական կանոնագրի քննարկմանը Մայր Աթոռիս հանձնաժողովի հետ, այլ եկան Մեզ ներկայացնելու իրենց տեսակետը, թե մեր Եկեղեցին կարիք չունի որևէ կազմական կանոնադրության: Կազմվեց համապատասխան արձանագրություն, իսկ վերջում Մենք Մեր ծանր մտահոգությունը հայտնեցինք այս ժխտական կացության առջև, 1956-ից ի վեր ծայր տված մեր եկեղեցական տագնապի վերաբերյալ վերլուծական մի ակնարկով, որի ձայնագրյալ ժապավենը հանձնվեց Կիլիկյան Աթոռի ներկայացուցիչներին՝ տանելու համար իրենց հետ Անթիլիաս, ի գիտություն Կիլիկյան Աթոռի Գահակալի:

Այս վերջին հանդիպումից հետո, ո՛չ Մենք, ո՛չ էլ Գարեգին կաթողիկոսը որևէ վերաբերմունք չճշտեցինք առ այսօր, ոչ էլ որևէ ձևով հրապարակ հանվեց Մեր փոխանակած նամակների բովանդակությունը, անտեղի ու սխալ մեկնաբանությանց դուռ չբացելու համար:

Ավելին՝ Կիլիկյան Աթոռի լիազորների Անթիլիաս վերադարձից հետո, հուլիսի 18-ին, ստացվեց Գարեգին Կաթողիկոսի հետևյալ հուսադրիչ հեռագիրը՝ ֆրանսերեն լեզվով. «Ձեզ խորապես շնորհակալություն ենք հայտնում այն հայրական ընդունելության և հոգատարության համար, որ Ձերդ Սրբությունը ցույց տվեց Մեր պատգամավորներին: Աշճյան սրբազանը և Տիար Արզումանյանը իրենց վերադարձին Մեզ տեղեկացրեցին բոլոր խոսակցությունների ընթացքում տիրող սիրո և միության շատ լավ ոգու մասին: Մենք շարունակելու ենք գործել համաձայնության և համագործակցության ճանապարհով, մեր Մայր Եկեղեցու անսասան միությունն ամրապնդելու համար: Սպասում ենք Ձերդ. Սրբության բարի լուրերին եղբայրական հարաբերությունների հետապնդման ու զարգացման համար կաթո-

ղիկոսական երկու Աթոռների միջև, միակ Եկեղեցու և մի ազգի ծառայության մեջ»:

Ահա սակայն այս օրերին, Մեր ձեռքը հասան հուլիս և օգոստոս ամիսներին հրատարակված բազմաթիվ աղմկարար խմբագրականներ և հոդվածաշարքեր կուսակցական մամուլի էջերում, հատկապես «Հայրենիք» օրաթերթում, առաջադրված կանոնադրության նախագծի վերաբերյալ, որի մեջ հոդվածների հեղինակները ցանկանում են տեսնել ինչ-որ դավադրություն Հայ Եկեղեցու և համայն սփյուռքահայության դեմ: Կարդալով այդ բոլորը՝ զարմացած մնացինք ու չկարողացանք հասկանալ, թե «Հայրենիք»-ի խմբագիրները ինչպե՞ս են ծանոթացել չհրապարակված այդ նախագծի բովանդակությանը և, հավանաբար, նաև վերջին երկու տարիներին Գարեգին Կաթողիկոսին հղած Մեր նամակներին:

Ահա մի քանի մեջբերումներ «Հայրենիք» օրաթերթի հոդվածներից և խմբագրականներից .

Ա) «Ծուղակներ կը լարվին, որպեսզի Սփյուռքը անգլուխ մնա» (4 հուլիս, 1986):

Բ) «Զգույշ դարբնվող դավերե...» վերնագրված խմբագրական (10 հուլիս, 1986):

Գ) «Դավը բացահայտ է ... Մայր Աթոռի կողմե նախաձեռնված «Հայ Եկեղեցու սահմանադրությունը» նորահնար գ.ուտ մըն է, ջնջելու համար ժողովրդապետական սահմանադրական կյանքը...» (18 հուլիս, 1986):

Դ) «Մայր Աթոռը կը ժխտե կաթողիկոսական անկախությունը և իրավասությունները Սսո կաթողիկոսության և կը պահանջե, որ կաթողիկոսության իր բոլոր իրավունքներեն և հանգամանքներեն հրաժարին կիլիկյան թեմերը...» (16 հուլիս, 1986):

Ե) «Հայաստանյայց Եկեղեցին կղերապետության մը վերածելու համար գործի լծված է Մայր Աթոռը իր եպիսկոպոսաց դասով... Սփյուռքը մատնելու համար ազգային, հանրային և ժողովրդավարական կարգուսարքե սնանկ ամբոխի մը կացության և զա.ն մատնելու համար ամբողջական քայքայումի» («Հայրենիք», 12 հուլիս, 1986):

«Հայրենիքի» խմբագիրները նման արտառոց վերագրումներ են կատարում Մայր Աթոռի հասցեին, մեջբերումներ անելով 1958-ին կազմված մի նախագծից, որը երբեք հաստատված և ընդունված չի եղել և որը այսօր, երեսուն տարիներ հետո, որևէ այժմեություն չունի: Մեր օրերին Մայր Աթոռի հանձնաժողովի կողմից պատրաստված նախնական նախագիծը որևէ կապ չունի 1958-ի նախագծի հետ, որ, սակայն, «Հայրենիք»-ը անպարկեշ-

տությունն ունի ներկայացնելու իբրև այժմ նոր պատրաստված նախագիծ:

5. Այս բոլոր խմբագրականների ու հոդվածների մեջ անվերջանալի կրկնություններով խոսվում է Մայր Աթոռի կողմից «ժողովրդապետական կարգուսարքի» իբր թե վերացման և «կղերապետություն» հաստատելու մասին Հայ Եկեղեցու կյանքում, ինչ որ բոլորովին չի համապատասխանում իրականությանը: Ապացույց, որ այսօր Սուրբ Էջմիածնի բոլոր թեմերը, իրենց ներքին կանոնադրությանց համաձայն, ղեկավարվում են ժողովական և ժողովրդավարական կարգ ու սարքով, բացի միայն Արգենտինայի շրջանից, որտեղ չի կիրառվում ժողովրդավարական կարգ ու կանոն:

Այսօր, Սիյուռքի տարածքի վրա չեք գտնի գեթ մի թեմ կամ եկեղեցական համայնք, որ ղեկավարված չլինի ժողովրդական ու ժողովրդավարական կարգով, կազմված չլինի ժողովրդի աշխարհական ներկայացուցիչներից, նաև այն մեկ-երկու շրջաններում, ուր գործում են հայրապետական պատվիրակներ, ինչպես օրինակ՝ Փարիզում և Վիեննայում, որտեղ եկեղեցական ղեկավար բոլոր մարմինները ընտրված են ժողովրդավար կարգով:

Հետևաբար, ի՞նչ է այս աղմուկը Ատլանտյանի ափերից, ի՞նչ նպատակ է հետապնդվում և ո՞ւմ օգտին:

Երևում է, որ «Հայրենիքի» խմբագիրները, կղերապետության մերժում ասելով, հասկանում են կուսակցապետության հաստատումը Եկեղեցու կյանքում, ինչ որ, այո, մերժելի է, և որի հետևանքով այսօր Կիլիկյան Աթոռի շատ ազատամիտ միաբաններ հոգեպես տառապում են: Ուրեմն, երբ դեռևս վերջնական ձև չի ստացել կանոնադրությունը, ոչ իսկ իբրև նախնական նախագիծ, երբ ամեն ինչ վերաքննելի է, երբ Մայր Աթոռը և Կիլիկյան Աթոռը որոնումի մեջ են ներքին միության և գործակցության ճանապարհ հարթելու համար, հանկարծ հեռավոր Ամերիկայից անպատասխանատու կուսակցական մարդիկ փորձում են փոթորիկ բարձրացնել՝ խափանելու համար մեր միասնական ճիգերը: Պարոնայք խմբագիրնե՛ր, ո՞վ է ձեզ լիազորել ոստիկանի և դատավորի հովեր առնելու մեր եկեղեցական կյանքում, ի՞նչ իրավասություն ունեք աղմկելու Եկեղեցու և հավատացյալ մեր ժողովրդի անունից: Ի սեր Աստուծո, հանգի՛ստ թողեք Եկեղեցին ու զբաղվեցե՛ք ձեր գործերով: Մեր խորհուրդն է նաև, որ առհասարակ ձեր գործունեության ճանապարհին փորձեք ազգային-եկեղեցական կյանքի իրողությունները տեսնել մեր օրերի լույսի ներքո, դատել կացությունները մեր օրերի ճշմարիտ տվյալներով, գործել մեր մայր երկրի ու ժողովրդի գերագույն շահերի գիտակցությամբ,

թոթափելով ձեր վրայից նախապատերազմյան անցողիկ վերի-վայրումները և շփոթ մտայնությանց հետքերը:

6. Եկեղեցու շահը պահանջում էր, որ կանոնադրության նախնական նախագծի հետ կապված թղթակցությունները առայժմ գոնե չհրապարակվեին մինչև վերջնական եզրակացության հանգելը: Մեր կարծիքով, «Հայրենիք»-ի խմբագիրների սանձազերծած աղմկարար խաչակրությունը ուղղակի վնասարարություն է մեր Եկեղեցու դեմ, Մայր Աթոռի դեմ ու նաև Կիլիկյան Աթոռի հեղինակության դեմ: Բայց քանի որ արդեն կարևոր չափով հրապարակ են հանվել կանոնագրի վերաբերյալ արտաքոց տեսություններ և անճիշտ ու անարդար մեկնություններ, խմբագրությունս պարտավոր է զգում հրապարակել Վազգեն կաթողիկոսի և Գարեգին Կաթողիկոսի միջև փոխանակված նամակները կանոնագրի նախագծի պատրաստության վերաբերյալ, ինչպես նաև լրիվ արձանագրությունները հուլիսի 7-ի և 8-ի նիստերի, Կիլիկյան Աթոռի լիազորների ներկայությամբ:

Այս փաստաթղթերը հրապարակում ենք՝ լուսաբանելու համար մեր Եկեղեցու հոգևորական դասին և ժողովրդին:

7. Մայր Աթոռիս և Կիլիկյան Աթոռի հարաբերությանց վերջին երեսուն տարիների տագնապալի ճանապարհին, անցյալ հուլիսին Կիլիկյան Աթոռի պատգամավորների ներկայացրած տեսակետները նկատում ենք մի հանգրվան, սակայն ոչ վերջին հանգրվանը: Մեր Աթոռների միջև կանոնական միության ու եղբայրական գործակցության վերականգնումը այնքան կենսական կարևորություն ունի մեր Եկեղեցու և մեր աշխարհացրիվ պանդուխտ ժողովրդի համար, որ բոլորս պարտավոր ենք ճանապարհներ որոնել իրականացնելու այդ միությունն ու գործակցությունը: Հայրենի սրբազան հողի վրա, Փրկչի Իջման տեղում հաստատ խարսխված Մայր Աթոռը, իր հարազատ ժողովրդի ծոցում, մնում է միշտ լավատես ու հավատում է, որ վաղ թե ուշ իրականանալու է բոլորիս ու բոլորի բաղձանքը, Ամենայն Հայոց Սուրբ Էջմիածնի օրհնության ներքև համախմբված տեսնելու համայն մեր Եկեղեցին, համայն մեր հավատացյալ ժողովուրդը:

«Այսուհետև եղբարք, ողջ լերուք, հաստատուն կացէք, մխիթարեցարուք, միաբան լերուք, խաղաղութիւն արարէք և Աստուած խաղաղութեան և սիրոյ եղիցի ընդ ձեզ»: (Բ Կորնթ. ԺԳ, 11):

Էջմիածին, «Էջմիածին», 1986, հոկտեմբեր

ԻՄ ՊԱՏԱՍԽԱՆԸ ՊՐ. Ա. Տ.-ԻՆ

«Պահակը» երկու խմբագրական գրեր էր գաղութահայ երիտասարդության մասին, որուն քանի մը տողով անդրադարձեր էի «Հերկի» մեջ, առանց որևէ անձնական վիրավորանք հասցնելու «Պահակի» պարոն խմբագրին:

Եվ ահա, նույն թերթի մեջ պր. Ա. Տ. երկար հոդված մըն է ստորագրեր, որուն նպատակն է ցուցնել, թե այս տողերը ստորագրողը շփացած, մեծամիտ, անքաղաքավար, բանագող, հայ պետության հակառակորդ, հայ ժողովուրդի համար կորսված մըն է և այլն:

Որակումները, զոր կընե պր. Ա. Տ., զիս չեն հուզեր, որովհետև պարզապես ձրի խոսքեր են՝ գրված չեմ գիտեր ինչ հետին մտքով: Կանցնիմ նաև ակնարկներուն վրայեն, զոր կընե ան իմ մտավոր պատրաստության մասին: Պր. Ա. Տ. ինձի համար գիտական հեղինակություն մը չի կրնար ներկայացնել:

Կուզեմ սակայն հոս ինքզինքս պաշտպանել կարգ մը ձրի ամբաստանությանց դեմ: Հոդվածի մը մեջ («Հերկ», թիվ 6), զբաղելով մեր ընդգրկելիք գաղափարական ուղղության խնդրով, մեզի համար աննպատակ կգտնեի մարքսիստներու ուղին. իմ խոսքը կվերաբերեր ազգության սկզբունքի և զգացումի բնականությունը և անհրաժեշտությունը ժխտող մարքսիստներուն և ոչ ընդհանրապես ընկերվարականներուն կամ ուցիալ-դեմոկրատներուն, ոչ իսկ Կարլ Մարքսին: Պր. Ա. Տ. բարկացեր է ու զիս կդրկե Օտտո Բաուերին, Ժան Ժորեսին, մոռնալով որ այս մարդիկ համաչնավար մարքսիստներ չեն: **Բացի այդ, կյանքի վարդապետություն մը չի դատվիր միայն իր տեսական կողմերով, այլ մանավանդ գործնական կյանքի մեջ իր առաջ բերած հոգեբանության և անոր հետևանքներուն տեսակետեն:** Ահա, ինչ որ պր. Ա. Տ. չուզեր հասկնալ:

Պր. Ա. Տ. կըսե նաև, որ իբր թե ես իրեն հայտնած ըլլամ, թե այդ գաղափարը կազմած եմ ընկերոջ մը ըսածներուն վրա: Ես իմ այդ ընկերոջ և նաև ուրիշ պարագաներու մասին խոսած եմ պարզապես քանի մը **կենդանի, կոնկրետ** օրինակներ բերելու համար: Պր. Ա. Տ. կխնդրեմ իր հետ իմ ունեցած խոսակցությունը և, հետևաբար, ես որևէ պատճառ չունիմ կարմրելու:

Պր. Ա. Տ. կխոսի նաև իմ և իմ ընկերներու հայրենասիրության զգացումներուն մասին ու կըսե, թե մենք զմեզ հեռու կպահենք հայ պետութենեն: Ուրկե՞ և ինչպե՞ս կհետևցնե այդ: Հայաստանեն հեռու ենք, այո՛, հոն երթալու որևէ հնարավորություն չունինք, անոր հետ որևէ կապ ունենալու ոչ մեկ կարելիություն ունինք և մեզի հետ ինքը՝ պր. Ա. Տ.-ն ալ: Եվ ասիկա մեր կամքեն անկախ և մեր կամքին հակառակ: Մենք ավելի սուր կերպով կզգանք, թե ինչպես նոր սերունդը կհյուծի՝ կենդանի հայրենիքի հետ կապի պակասեն: Եվ սակայն ի՞նչ ընել: Ինքը՝ պ. Ա. Տ. եթե միջոցը գիտե, թող հրապարակավ, **կոնկրետ կերպով** ըսե առանց ընդհանուր խոսքերու մեջ մնալու:

Ինչ որ գիս վրդովեց, այն գրպարտությունն է, թե «Հերկի» թիվ 10-ի մեջ լույս ընծայած իմ «Մարքսիստը» հոդվածին կեսը բանագողություն է: Իբրև թե այդ հոդվածիս առաջին մասը պարզապես արտագրած եմ իմ ուսուցիչներեն մեկուն դասընթացի տետրեն: Եվ պր. Ա. Տ. այսպիսի ծանր ամբաստանություն ընելե վերջ, բարոյապես բնավ պարտավորված չզգար իր ըսածը ապացուցանելու և հիմնավորելու: Կըսե ու կանցնի: Այս ի՞նչ բարոյական հասկացողություն է: **Կհրավիրեմ, որ պր. Ա. Տ. հրապարակավ փաստե իմ հասցեին ըրած իր ամբաստանությունը, իսկ եթե չկարենա,—և չի կրնար, քանի որ ճշմարիտ չէ,—կպահանջեմ, որ ըսածը ետ առնե** (Իր գործը դյուրացնելու համար ըսեմ, որ իմ ուսանող եղած շրջանին (1932—1936), ընկերային գիտությանց դասախոս պրոֆ. **Տ. Կուստի** մարքսիզմի մասին խոսած է ամբողջ մեկ տարի (1932—1933), որուն բովանդակությունը կրնա գտնել համալսարանի գրադարանը լիթոգրաֆիե եղած):

Եվ վերջ ի վերջո պր. Ա. Տ. ինչո՞ւ այդքան շատ կջղայնանա, երբ մարքսիզմին կմոտենամ քննադատորեն: Կհասկնամ հարգանքը հանդեպ մեծ մտածողի մը հիշատակին, սակայն վարդապետությունները քարացած իրականություն չեն և բնավ զարմանալի չէ, որ այսօր Մարքսը կքննադատվի հեղինակավոր գիտական մարդոց կողմե:

Անցավ գնաց այն նախապատերազմյան սոցիալ-դեմոկրատ Գերմանիան: Այժմ շատ բան փոխված է և՛ հոն, և՛ ամեն տեղ. նաև ձախակողմյան Ֆրանսայի մեջ. նույնիսկ Խորհրդային Միության մեջ: Անցան Օտտո Բաուերներու, Ժան Ժորեսներու օրերը: Պր. Ա. Տ., սակայն, հոն է դեռ ու կզայրանա, երբ այդ աշխարհին կդպիս: Պր. Ա. Տ. եթե կուզե, թող պահե իր աշխարհը, սակայն բնավ չզարմանա, որ ուրիշներ՝ որպես հետպատերազմյան մթնոլորտի մեջ կազմված երիտասարդներ, ուրիշ մտածողներե ազդված և նորագույն տեսություններ յուրացուցած, իրենց աշ-

խարիր կառուցանեն այն նոր տուեալներով, զոր մեր օրերը կուտան:

Ուրեմն պր. Ա. Տ. փափագող է այլևս լուրջ, ուղղամիտ և անկախ ձևով խոսքի նստելու: Շատ աղեկ, սակայն իր վերջին հոդվածին մեջ ինք այդ ապացույցը չի տար: Կխորհիմ թե, որպեսզի բանավեճն մը ընթերցողը բան մը շահի, պետք է խնդիրները չխեղաթյուրվին, իսկ մտքերը ճշգրիտ ու հստակ կերպով հայտնվին: Մինչդեռ պր. Ա. Տ. ավելի կթափառի դրված խնդիրներուն շուրջ՝ տեղ-տեղ անհասկնալի ըլլալու աստիճան: Ան կփոխե բառերուն և իմ հայտնած մտքերուն իմաստը՝ իր գործին եկածին պես և մանավանդ վեճի առարկա եղող խնդիրներու մեջ ամբաստանություններ կընե, **առանց ապացուցանելու:** Եթե պր. Ա. Տ. այս մեթոդով շարունակե, անշուշտ ավելորդ կդառնա մեր բանավեճը: Խնդրի մը մեջ սխալող կողմը քաջությունը պիտի ունենա սխալած ըլլալը ընդունելու:

Անա, օրինակ, ինչ կվերաբերի մարքսիզմին, պր. Ա. Տ. ըսելե հետո, թե ան բացարձակապես գիտական վարդապետություն մըն է,—ինչ որ երկբայելի է, որովհետև մարքսիզմը այսօրվան գիտության համար չհաստատված վարկածի մը վիճակին մեջ կգտնվի,—անմիջապես հետո կընդունի, թե «մարքսիզմը շատոնց պատմության սենթեսիկ ըմբռնումով ալ քննադատված է»: Այստեղ ըսեմ նաև, թե Վերներ Զոմբարտը, զոր պր. Ա. Տ. կհիշե որպես մեծ հեղինակություն, ասկե 8—9 տարի առաջ Բուխարեստ դասախոսություն մը ըրավ, նյութ ունենալով «Ի՞նչ մնաց Մարքսեն» և Մարքսի նախատեսությունները մի առ մի գիտական վերլուծումի ենթարկելե հետո, եզրակացուց, որ այդ նախատեսությունները կյանքի մեջ չեն իրականացած: Այդ դասախոսության ներկա էր և ինքը՝ պր. Ա. Տ.:

Արդ, ալ ինչո՞ւ կզարմանա պր. Ա. Տ., երբ ես մարքսիզմը քննադատողներու տեսակետները կլուրացնեմ: Եվ երբ ասոր համար գիս կամբաստանե իբրև բան չգիտցողի, արդյոք իրական աչքակապուկ խաղցողը ինքը չէ՞: Միթե Զոմբարտը և նորագույն ընկերաբաններու շարքը (մեջը ըլլալով ֆրանսական դըպրոցը) պատկառելի հեղինակություններ չե՞ն ներկայացներ և պետք չէ՞ խոնարհիլ անոնց առաջ:

Պր. Ա. Տ. այնքան տարված է իմ մտավոր պատրաստությունը ամեն գնով կասկածի տակ դնելու մտքով, որ կփորձե վարկաբեկել նույնիսկ այն հաստատությունը, ուր ես ուսանած եմ, հայտարարելով, որ Բուխարեստի համալսարանը 20—25 տարիով ետ մնացած է Արևմտյան Եվրոպայի նորագույն տեսություններեն: Ապացույց, անշուշտ, պետք չգար բերելու: Հոս ալ կրսե ու կանցնի: Ես չեմ կրնար հասկնալ, թե ինչպե՞ս կրնա

մեկը այդպիսի պատասխանատու խոսք ըսել գիտական հաստատության մը հասցեին, որուն **բացարձակապես անծանոթ է:**

Ի՞նչ, պր. Ա. Տ. Ռումանիան Հոնոլուլո՞ւ կարծեց:

Ուրիշ ապացույց մը, որ պր. Ա. Տ. չուզեր խնդիրներուն մոտենալ ըստ էության, այն է, որ հակառակ իմ պահանջիս՝ որևէ ապացույց չի բերեր իր իմ հասցեին ըրած բանագողության ամբաստանության խնդրույն մեջ: Փոխանակ ապացույցի և հստակ պատասխանի մը, ընդհանուր և բռնազբոսիկ խոսքերու մեջ կըկորսվի: Բանագողությունը այդպես չապացուցվիր, և պր. Ա. Տ. թող չկարծե, թե դատող, հանրային կարծիք գոյություն չունի:

Մեր վեճի նյութերեն մին էր նաև հայրենասիրության պարագան: Պր. Ա. Տ. զիս և իմ ընկերները կամբաստաներ, որ մենք զմեզ կամովին հեռու կպահենք **հայ պետութենեն** և, հետևաբար, կժխտեր մեր հայրենասիրությունը: Ես պահանջած էի իրմե, որ հրապարակավ և պարզ կերպով ըսե, թե ի՞նչ կուզե հասկնալ, երբ կըսե, թե զմեզ հեռու կպահենք հայ պետութենեն և մանավանդ ցույց տա **կոնկրետ** կերպով, թե ինչպե՞ս կարելի է այսօրվան պետության հետ կապ ունենալ: Պր. Ա. Տ. փոխանակ բուն խնդրին պատասխանելու, գիտակցաբար կշփոթե հայրենիքի և պետության գաղափարները և կգործածե մեկը կամ մյուսը իր գործին եկած եղանակով:

Ես «Հերկի» մեջ գրած էի և կկրկնեմ, որ «կարելի է Հայաստանեն հեռու ըլլալ, սակայն հայրենիքին համար, հայրենիքին հետ և անոր մեջ ապրիլ»:

Ուրիշ բան է, սակայն, հայրենիքովդ ու անոր համար ապրիս, հայրենիքը որպես ոգիացած պատկեր հոգիիդ մեջ կրես,—ինչ որ մենք կընենք,—և ուրիշ բան է կենդանի, այո՛, ֆիզիկական կապ պահես այդ հայրենիքիդ պետությանը հետ,—ինչ որ մեր համոզումով նույնքան կենսականորեն անհրաժեշտ է և բնավ գռեհիկ չէ, ինչպես կըսե «ՀՕԿ»-յան պր. Ա. Տ. «Պահակի մեջ»: Ու ասոր մեջ է, որ կամբաստաներ երիտասարդությունը և մեզ պր. Ա. Տ. և հետևաբար ան իրավունք չունի ուղղակի, հստակ և կոնկրետ պատասխանե մը խուսափելու: Պր. Ա. Տ. թող չկարծե, թե այնքան դյուրին է մեզ անհայրենասեր և հայ ժողովուրդի համար կորսվածներ հռչակել և հետո բառերն ու մտքերը փոխելով՝ պատասխանատվությենե խուսափիլ: Իսկ եթե պր. Ա. Տ., ինքզինքին հայրենասիրության տեսակ մը դատախազի դերը տված, այս բոլորը կգրե ընկերներուս դեմ, որպեսզի ատով իր հայրենասիրությունը ցուցադրե, չարաչար կսխալի: Որովհետև հայրենասեր ըլլալն ալ այդքան դյուրին բան չէ:

Շատ քիչեր արժանի են հայրենասեր կոչվելու: Մարդոց ստվար մեծամասնությունը,—որոնց մեջ և ես,—այդ պատվին

չենք կրնար արժանանալ, առանց ապացույցը տված ըլլալու՝ գերագույն զոհաբերության կամ նվիրումի մը: Եթե առիթը ներկայանա, չեմ գիտեր, թե մեզմե քանիներ՞ը պիտի կրնան այդ ապացույցը տալ: Բայց գիտեմ, օրինակ, որ պր. Ա. Տ. 1921-ին հատկապես հրավիրված ըլլալով՝ առիթը ունեցած է հայ նորակազմ պետության կրթական գործին ծառայելու և սակայն մերժած է հայրենիք մեկնիլ: Այսօր վստահ եմ, որ պր. Ա. Տ. կգոչա և այժմ կուզե երթալ:

Սակայն ինչո՞ւ չի կրնար մեկնիլ:

Թող պր. Ա. Տ. ինքը իր անկեղծ պատասխանը տա, ու այն ատեն գտած պիտի ըլլա այն ճիշտ և արդար պատճառը, թե ինչու մենք այսօրվան մեր պետական իրականութենեն հեռու ենք, և թե ինչո՞ւ դժգոհ ենք մեր հայրենիքի այսօրվան պետական ղեկավարութենեն: Եթե պր. Ա. Տ. գեթ այս հարցին մեջ կարենա իր հոգին պարպել, մաքրել այն կարգ մը պալմանադրական խոսքերեն և ֆորմուլներեն, որոնց բռնակալության տակ կգտնվի քանի մը տարիե ի վեր, այն ատեն պիտի տեսնե այն ազգային ողբերգությունը, որուն մեջ կապրինք ինքն ալ, ես ալ ու բոլորս ալ:

Այն ատեն, ահա, պր. Ա. Տ. պիտի կարենա հասկնալ մեր սերունդի ողբերգությունը և գուցե ատով իսկ պիտի գտնե ինքզինքը այնպես, ինչպես ես սկսեր էի զինքը ճանչնալ տարիներ առաջ:

Կ. ՊԱԼՃՅԱՆ

Բուխարեստ, «Հայ մամուլ», 1938, հունիս

ԱՄԵՆՈՒՍ Հ. Մ. Ը. Մ.-Ը

Իսկապես Հայ Մարմնակրթական Ընդհանուր Միությունը մեր ամենուս միությունն է: Ան ստեղծվեցավ անմիջապես 1918-են հետո, մեծ ոգևորության շրջանին, երբ հայ ժողովուրդը նոր կյանք մը կը սկսեր ամեն տեղ, բայց մանավանդ ազատ Հայաստանի մեջ:

Չմոռնանք, որ Պոլսո մեջ խումբ մը ողջամիտ մարդիկ Հ. Մ. Ը. Մ.-ին ծնունդ տվին ոչ թե գաղութներուն համար, այլ մեր Մայր երկրին՝ Հայաստանի համար:

Անոնք, որ Հ. Մ. Ը. Մ.-ը հիմնեցին, կամեցան երիտասարդ Հայաստանին պարգև տանիլ կազմակերպություն մը և ոգի մը, որուն դրոշին տակ պետք է բոլորվեր ամբողջ հայ պատանեկությունն ու երիտասարդությունը, դառնալու համար մարմնով՝ առողջ և կորովի, մտքով՝ պայծառ և արթուն, հոգիով՝ մաքուր և ամուր, նկարագրով՝ ուղիղ և գաղափարապաշտ. ու այսպես հատակ նետած այդ սերունդը պիտի կոչվեր հայ ազգին ու հայրենիքին իդեալներուն ծառայելու:

Այդ շրջանին ի՞նչ կանայ հույսեր կծաղկեին Հայ Մարմնակրթական այս Ընդհանուր Միության շուրջ:

Ավա՜ղ, սակայն, հիմնական նպատակը չիրականացավ:

Ու Հ. Մ. Ը. Մ.-ն ալ, հայ թափառականի ցուպը ձեռքին, կապրի դեռ օտար արևներու տակ:

Բայց անոր նպատակն ու ոգին մնացած են ու պետք է մընան նույնը:

Հ. Մ. Ը. Մ.-ը պետք է ապրի նույն ոգիով, պետք է հավաքվի նույն դրոշին տակ, պետք է մարմնով ու հոգիով պատրաստվի ծառայելու համար նույն իդեալին:

Ահա թե ինչո՛ւ Հայ Մարմնակրթական Ընդհանուր Միությունը եղած է ու կմնա ամենուն սիրած միությունը:

Ահա թե ինչո՛ւ բոլորս պետք է գուրգուրանք անոր վրա ու պետք է տանք անոր մեր անվերապահ, մեր ամբողջական օժանդակությունը:

Կ. ՊԱՂՃՅԱՆ

Բուխարեստ, «Հայ մամուլ», 1941, դեկտեմբեր 21

ՍՈ՛ՒՏ Է

Ամեն անգամ, երբ մեր երիտասարդության օտարացման խոսքը ըլլա, որպես գլխավոր պատճառներ կհիշվին արդի կյանքի ձևերը, նորագույն քաղաքակրթության պայմանները: Ու կըսվի, թե նախապատերազմյան շրջանին հայ երիտասարդը հայ կյանքին կապված կմնար, որովհետև կյանքը ավելի լուրջ ձևեր ուներ, թե մարդիկ այդ ատենները կապրեին գաղափարներով, մշակութային լուրջ խնդիրներով: Երիտասարդությունը այն ատեն ավելի կապված էր գրքին, գիտական աշխատանքին, գեղեցիկին ու գաղափարական գործին: Մինչդեռ այսօր կյանքը դարձած է վազք մը՝ նյութական բարիքին ի խնդիր: Մարդիկ դարձած են եսամոլ և գծուծ: Հետևաբար անոնց հոգիներն ալ՝ մակերեսային ու գաղափարազուրկ: Իսկ երիտասարդ սերունդը վերածված է իդեալե զուրկ, գաղափարական գործի համար ճիգ ընելու անտրամադիր, անընդունակ և կյանքի թեթև հաճույքներու մեջ կորսըված անհատներու բազմության մը:

Անհա այս է, կըսվի, նորագույն կյանքի պատկերը, և, հետևաբար, հայ երիտասարդն ալ շնչելով այս մթնոլորտին մեջ, դարձած է այդպիսի «մոդեռն» մարդ:

Հիրավի մեր մեջը կը վիտան երիտասարդներ, որոնք լըրջորեն համոզված են, որ **մոդեռն** մարդ ըլլալու համար այդպես պետք է ապրիլ: Մոդեռն կյանք ըսելով անոնք կհասկնան սինեմա, թեթև թատրոն, սպորտ, քիչ մը ռադիո, դանսինգ և այսպիսի բաներ, որոնց ընդհանուր մթնոլորտին մեջ անհատը կը կորսնցնե իր անհատականությունը, իր սեփական հոգին և այդ հոգիին հետ մեկտեղ նաև իր ազգային դիմագիծը: Կապազգայնանա ոչ թե այն իմաստով, որ կդառնա, օրինակ, ռումեն, ալ, իրականության մեջ, պարզապես անազգ անհատ մը, միջազգային տարր մը, որ օտար ազգին ալ խեր մը չի կըրնար բերել: Կդառնա ինքնութենե զուրկ տարրալուծված էակ մը:

Այս հասկացողության դեմ պետք է պայքարինք ու գեթ մասամբ փոխելու ձգտինք այսպես հասկցված կյանքի ձևերը, ոչ միայն որովհետև ան հայ երիտասարդը կտանի դեպի ապազգայնացում, այլ նաև այն պատճառավ, որ այդ հասկացողությունը սխալ է և սուտ է:

Սուտ է, որ այսօրվան մոդեռն կյանքը ա՛յդ թեթև կյանքն է:

Սուտ է, որ ներկա երիտասարդությունը միայն սպորտի և դանսինգի գերին է:

Սուտ է, որ մեր օրերուն գաղափարը, ազնիվ զգացումը ու երազը մեռած են:

Սուտ է, որ ներկա երիտասարդությունը կրիախի գիրքեն, լուրջ ընթերցումեն ու մտքի ճիգեն:

Մեր իրականության մեջ, սակայն, այդ սուտերը ճշմարիտ երևույթներու տեղ անցած են: Պատճառներեն մին այն է, որ մեր հայրենակիցները և մեր երիտասարդությունը մանավանդ, չեն ճանչնար օտար **իրական** կյանքը ու մտավորական մթնոլորտը: Եթե ռումեն **իրական** կյանքին հետևիս (և նաև մանավանդ ուրիշ արևմտյան ազգերու կյանքին), կտեսնես, որ ժողովուրդը և երիտասարդությունը կյանքի լրջության զգացումը ունին ու կապրին ստեղծագործ մթնոլորտի մը մեջ:

Հայ երիտասարդը եթե այդ մթնոլորտը շնչե ու ապրի **իրական ռումեն** կյանքը, ատով իսկ ավելի խոր կերպով պիտի գտնե ինքզինքը, իր հայկականությունը: Որովհետև հասարակական կյանքի ամեն լուրջ և ոգևոր կեցվածք կտանի դեպի ինքնաճանաչում և ինքնակերտում:

Գացե՛ք հրապարակային դասախոսություններու և պիտի տեսնեք, որ հսկա սրահներ կպայթին բազմութենե: Մարդիկ հեղեղի պես կուգան լսելու համար գիտական, գեղարվեստական, ընկերային, տնտեսական նյութերու շուրջ դասախոսություններ: Եվ մանավանդ երկսեռ երիտասարդությունը՝ կուգա: Այս բազմության մեջ իզուր կփնտռես մեր հայ «մտավորականները»: Հազիվ երկու-երեք հայու կհանդիպիս, այն ալ ոչ միշտ:

Գացե՛ք գրադարանները և ընթերցարանները, բոլորն ալ լեցուն են: Տաք հացի պես գիրքը լափողներուն թիվը անհամար է ռումեն կյանքին մեջ:

Հոն ալ գրեթե չես հանդիպիր հայերու:

Մենք չենք ըսեր, որ հայ մարդը, հայ երիտասարդը սպորտ չընե, չպարե ու թեթև հաճու՝քներե փախի ու փակվի նեղ աշտարակի մը մեջ: Ո՛չ, այդ բոլորը անհրաժեշտ են որպես զբոսանք:

Հիմնականը, սակայն, պետք չէ մոռնալ: Ամեն զբոսանքե առաջ և վերջը կա լուրջ աշխատանք, կա մշակումը մտքին ու զգացումին, կա աշխատանքը գաղափարին, կա գործը:

Մոդեռն մարդը այդ է:

Իսկ հակառակը սուտ է:

Սուտ մը, որ ինքնապաշտպանության զգացումե մղված, հնարած են մտքով ծույլերը ու հոգիով աղքատները:

Կ. ՊԱԼՃՅԱՆ

Բուխարեստ «Հայ մամուլ», 1938, դեկտեմբեր

ԲՆԱԶԴ ԵՎ ԳԻՏԱԿՑՈՒԹՅՈՒՆ

Ջղային դրությունը ստեղծած է գիտակցությունը (conscience): Ան կենդանական աշխարհի մեջ ամենատարածված և ամենաընդհանուր դրությունն է: Քանի մը սպունգի ցեղերե զատ, մյուս բոլոր կենդանիները օժտված են ջղային դրությամբ մը: Անոր հեղաշրջումը կարելի է տեսնել կենդանական աշխարհի զարգացման մեջ: Հիշատակված դրության նոր զարգացում մը միշտ կը համապատասխանե կենդանիին կյանքին մեջ ունեցած նոր հարաբերության բարդացումի մը: Ջղային դրության ամեն մեկ ծալքին մեջ կը կարդանք էջ մը կենդանիին անցյալ սերունդներու կյանքեն, ամեն մեկ ծալք անկյունաքար մըն է կենդանիի դարավոր կյանքին ընթացքին մեջ, որով ան կհետապնդե իր բնությ.ան և իր հնարավորություններուն կատարելագործումը:

Ջղային դրությունը այն միակ գիրքն է, որուն մեջ կրնանք կարդալ կենդանիի մը տեսակին (espèce) ամբողջ անցյալը: Ան միաժամանակ անհրաժեշտ գործիքն է գիտակցության: Գիտակցությունը հնարավոր դարձած և ծնունդ առած է մարդկային ցեղին ջղային դրության զարգացման շնորհիվ: Այս դրությունը կապահովե կենդանիին հարաբերությունները արտաքին աշխարհին հետ: Կենդանին իր նախնիքներեն կժառանգե որոշ արտաքին գրգիռներու առջև որոշ հակազդեցություններ, շարժումներ ընելու հնարավորությունները: Անա այդ հնարավորություններու ամբողջությունը բնազդ կը կոչվի: Շնորհիվ ժառանգաբար փոխանցված բնազդին, կենդանին կրնե ան, ինչ որ ըրեր էր իր ծնողքը. կը գործե ու կյանքի ընթացքին կվարվի ճիշտ այնպես, ինչպես հարյուրավոր սերունդներ ըրեր էին իրմե առաջ: Կենդանին անձնական փորձառություն չունի, իր ապրած կյանքեն նոր բան մը չի սորվիր: Անա թե ինչու կըսենք, թե կենդանին բնազդով միայն կապրի և չունի գիտակցություն, ինչպես մարդը:

Եվ ի՞նչ է, սակայն, այս գիտակցություն կոչվածը: Բնութենեն դուրս ո՞ւժ մըն է, որով օժտված է մարդը: Ո՛չ: Ինչպես վերն ալ հիշեցինք, ան նոր հնարավորություն մըն է, որ ստեղծված է մարդուն ջղային դրության նոր զարգացման շնորհիվ: Գիտակցության ծնունդը մարդու կյանքին մեջ տեսակ մը ոստում կը ներկայացնե, որով կը կազմալուծվի ջղային դրության հին

կազմավորումը, և ատով մարդը հնարավորությունը ձեռք կը ձգե՝ արտաքին աշխարհի գրգիռներուն անձնական ձևով մը պատասխանելու: Մարդը կը փշրե բնազդային, երկաթյա կաղապարը ու կը դառնա ազատ: Այս ազատությունը բացարձակ չէ սակայն: Որովհետև մարդը հիմա ալ կը գործածե նույն ջղային դրությունը: Միայն թե, փոխանակ մեքենական ձևով ենթարկվելու և հետևելու անոր, այժմ ջղային դրությունն է, նախկին բնազդներու դրությունն է, զոր ան կը ծառայեցնե օրգանիզմի գիտակցականացած պահանջներուն և նոր նպատակներուն:

Ջղային դրության հետ կապված անցյալը, սակայն, չի ջնջվիր, այլ միայն նոր իմաստ մը կը ստանա մարդուն կյանքին մեջ: Անցյալի ամբողջ ժառանգությունը մարդուն մեջ չի մնար որպես զուտ մեքենական գործունեության կերպ,—ինչպես կենդանիին պարագան է,— այլ այդ ժառանգությունը նոր զգացումներու աղբյուր մը կը դառնա, որ գիտակցությունը կը հարստացնե: Բնական է, որ սկզբնապես մարդը գտնված է հոգեպես շատ մշուշոտ իրականության մը մեջ, սակայն ժամանակի ընթացքին գտած է իր հատակությունը:

Կենդանին արտաքին աշխարհի մեջ կապրի բնազդաբար, շարժելու և գործելու իր ժառանգած կերպերովը, իսկ մարդը արտաքին աշխարհի մեջ կապրի իր ջղային դրության հետ իր նախնիքներեն ժառանգած շարժելու և գործելու հնարավորությանց նոր և գիտակցական գործածություն մը տալով՝ ըստ կյանքի նոր պայմաններուն: Ավելին. մարդը իր ժառանգած հնարավորությանց միջոցավ ի վիճակի կդառնա նաև անձնական փորձառություն մը ունենալու: Բնազդային դրությունը խորտակելե վերջ, ուրեմն, մարդը նույն ջղային դրությունը կը գործածե անձնական նպատակներու հետապնդման:

Մարդը կը ծնի տկար, առանց ծնողաց խնամքին ան չի կրնար ապրիլ, որովհետև իր մարմնի ուժերը տկար են: Նոր ծնած պահուն կը թվի, թե ոչ մեկ կարողություն չէ ժառանգած իր նախնիքներու փորձառութենեն: Սակայն կարճ ատենեն, կամաց-կամաց կը սկսին երևան գալ նախնիքներու փորձառությանց հետքերը: Կը տեսնես, թե ինչպես ան կը դառնա կրոնամոլ, կամ ճշմարիտը և արդարը սիրող, գեղեցիկը գնահատող և այլն. մեկ խոսքով, կը տեսնվի, թե ինչպես ան իր և դուրսի աշխարհին միջև զանազան և բազմապիսի հարաբերություններ կը սկսի հաստատել: Ջղային դրությունը փոխանակ բնազդներու մեքենական հակազդեցությունները ունենալու, այժմ դարձած է կենդանի, հարուստ իրականություն մը՝ անձնական **ես**ի զգացումի ներքին տակ: Ամբողջ անցյալը կը զարթնի մարդուն մեջ, որպես գիտակցական զգացումներու դրություն մը: Մարդկային գիտակ-

ցությունը, որեմն, կը կրկնե կենդանական աշխարհի ջղային դրության մեջ դարերու ընթացքին կուտակված բոլոր զգացումները, անձնական հուզումներու ձևին տակ: Գիտակցության միջոցավ այժմ մարդը կը զգա և կը հասկնա, ինչ որ իրմե դուրս է, մինչդեռ կենդանին բնազդո՛վ կը զգա, առանց հասկնալու:

Գիտակցությունը ինքն ալ, բնական է, զարգացում մը ունի: Նախամարդն ալ գիտակցության մը սկզբնավորությունը ուներ, որ սակայն շատ կը տարբերեր անշուշտ այսօրվան մարդուն գիտակցության աստիճանեն, և նույնքան հավանական է, որ քանի մը հարյուր սերունդ հետո, մարդկային գիտակցությունը շատ պիտի տարբերի այսօրվանեն, առանց սակայն նախորդ աստիճաններու դրոշմը կորսնցնելու: Որովհետև, թեև բնության մեջ հեղաշրջումը ընդհանուր օրենք է, սակայն միաժամանակ բնությունը չափազանց պահպանողական ալ է: Երկի ներքին հավասարակշռության անհրաժեշտութենե մը մղված, ան կը պահե որոշ հետքերը զարգացման բոլոր նախնական ձևերուն և հեղաշրջման հանգրվաններուն: Ամեն մեկ անհատ իր կյանքին մեջ (մանկության և պատանեկության մեջ մանավանդ) կը կրկնե ամբողջ տեսակին (espèce) զարգացման աստիճանները, ձևերը:

Ինչպես երեխան իր մորը արգանդին մեջ, կենսաբանական կյանքի ընթացքին, կը կրկնե բոլոր կենդանական աշխարհի աստիճանները ու կյանքի զարգացման ձևերը մինչև կատարելագույն ձևին հասնի, այսինքն՝ մարդկային աստիճանին, նույնպես և ծնունդեն հետո մարդը (այսինքն՝ երեխան ու պատանին) կապրի նոր հեղաշրջումի կյանք մը, այս անգամ հոգեբանական, որուն ընթացքին ան կը կրկնե մարդկային տեսակին հոգեկան գիտակցական զարգացման աստիճանները և ձևերը, մինչև այսօրվան քաղաքակիրթ հասուն մարդուն զարգացման աստիճանը: Այս պատճառավ մարդուն տղայության շրջանը, համեմատած կենդանիներու մանկության շրջանին, շատ երկար է: Որովհետև տղան ժամանակի պետք ունի, մինչև որ զարգացման աստիճանները կրկնե ու հասնի հասուն մարդուն վիճակին: Երեխայության շրջանը անհրաժեշտ շրջան մըն է մարդուն հոգիին, գիտակցության զարգացման համար:

Կենդանին երեխայության երկար շրջանի պետք չունի, որովհետև ան կը ժառանգե բոլոր իրեն անհրաժեշտ բնազդները ու կարճ ժամանակի մեջ կը հասնի այդ բնազդներու զարգացման վերին աստիճանին, այդ զարգացումը կապված ըլլալով կենդանիի միայն բնախոսական և մարմնական զարգացման: Մարդը, սակայն, իր գիտակցությունով բնության մեջ կյանքի նոր իրականություն մը կը հանդիսանա: Գիտակցության միջոցավ մարդը

կը ձերբազատվի բնազդներեն, կը բաժնվի հողեն ու կը մոտենա աստվածության, առանց սակայն անոր հասնիլ կարենալու, որովհետև իր անցյալ կենդանական կյանքովը, բազմաթիվ թելերով կապված կը մնա հողին, կենդանականին:

Մարդը ո՛չ կենդանի է, ո՛չ Աստված: Ու հոս է մարդուն և՛ փառքը, և՛ ողբերգությունը:

Կ. Պ.

Բուխարեստ, «Հերկ», 1938, փետրվար

ԻՆՉ ԿԱ՝ ՆՇԱՆԱԿԵ ԴԻԱԼԵԿՏԻԿԱ.

Դիալեկտիկա բառական իմաստով կը նշանակե խոսակցություն կամ վիճաբանության արվեստ: Ըստ Պղատոնի, դիալեկտիկան մեթոդ մըն է, որով կրնանք մտքով բարձրանալ դեպի ավելի ու ավելի ընդհանուր գաղափարներ և ընդհանուր սկզբունքներ: Դիալեկտիկա բառը գործածված է Պղատոնի նորագույն քննադատներու կողմե՝ անոր փիլիսոփայությունը մեկնաբանելու առիթով, ցուցնելու համար, թե ինչպես ոգին մեկնելով պարզ զգայնություններե (sensation) կը հասնի գաղափարներու. օրինակ՝ առարկայական գեղեցիկ գոյացություններե ոգին կհասնի գեղեցիկի ընդհանուր գաղափարին և այլն: Կարգ մը ուրիշ փիլիսոփաներու համար, սակայն, դիալեկտիկան ավելի նվազ կարևոր իմաստ մը ունի (Արիստոտել), կամ նույնիսկ պարզապես պատրանք մը կը նկատվի անոր դերը մտածումներու զարգացման գործողության մեջ (Կանտ): Այն փիլիսոփան, որ նոր ժամանակներուն վերստին մեծ չափով այժմեություն տված է այս բառին, 17-րդ դարու գերման մեծ փիլիսոփա Հեգելն է:

Հեգել սապես կը բնորոշե դիալեկտիկա բառը՝ ըսելով. «Ան գիտական կիրարկումն է մարդկային մտածողության բնության հատուկ տրամաբանական օրենքներու» („Die wissenschaftliche Anwendung der in der Natur des Denkens liegande Gesetzmaessigkeit"): Դիալեկտիկայի մեթոդին միջոցավ կրնանք տեսնել այն միությունը (unité), որ կա հակասություններու մեջ ու գտնել այդ միության հիմքը կազմող սկզբունքը ավելի բարձր աստիճանի մը վրա: Ան դիալեկտիկ պահ կկոչե հակասության պահը ու այդ հակասության մեկ եզրեն (terme) մյուս եզրը անցնելու գործողությունը:

Հեգել, ինչպես իրմե առաջվան փիլիսոփաները (մասնավորաբար գերման իդեալիստները), կուգա նոր լուծում մը տալ փիլիսոփայական մեկ հին ու անլուծելի մնացած հարցին, թե ինչ է արտաքին աշխարհը, մարդ անհատեն դուրս գտնվող աշխարհը: Ու Հեգել կը պատասխանե. «Աշխարհի բոլոր երևույթները և ամեն բան, որ գոյություն ունի, տրամաբանական գործողության

մը (procès) իրար հաջորդող պահերն են, որոնք մարդկային իմացականության մատչելի են ամբողջապես»: Ո՞րն է, ըստ Հեգելի, այդ տրամաբանական գործողությունը, որ կը բացատրե ու կը բանականացնե աշխարհի բոլոր երևույթները: Այդ իր հոչակավոր թեզ-անտիթեզ-սինթեզի պրոցեսն է: Ահա այս է, որ կանվանվի հեգելյան դիալեկտիկ մեթոդ: Ըստ Հեգելի, ամեն բան, ամեն երևույթ աշխարհի մեջ ենթակա է այդ դիալեկտիկայի օրենքին:

Օրինակ՝ գոյությունը թեզն է, որմե կը ծնի իր անտիթեզը, ոչնչությունը, ու երկուքին հակամարտութենեն կը ստեղծվի, որպես սինթեզ, հեղաշրջումը: Կամ՝ պատմության մեջ անհավասության շրջանի մը (թեզ) կը հաջորդե մոլեռանդության շրջան մը (անտիթեզ), որմե հետո կուգա չափավոր հավատքի շրջանը (սինթեզ): Ուրիշ օրինակ մը՝ մարդը համադրությունն է ոգիի և մարմնի: Նույնպես՝ բույսի մը բողբոջը թեզն է, ծաղիկը՝ անտիթեզը և պտուղը՝ սինթեզը: Տիեզերքի ծնունդն իսկ Հեգել այս եռանկյունով կը բացատրե: Այսպես՝ առաջ գոյություն ուներ գաղափարը, որ ծնունդ տվավ իր հակադիրին՝ հում նյութին և իբրև արդյունք այդ երկուքի հակամարտության՝ ծնավ, որպես համադրություն, նյութը, որ կա (ըստ Հեգելի, նյութը թե՛ հում նյութ է, թե՛ ոգի): Հեգել, ուրեմն, այս դիալեկտիկ մեթոդով կը բացատրե բոլոր երևույթները:

Իրմե հետո, ընկերային կյանքի երևույթներուն մեջ, կիրառած է այս դիալեկտիկ մեթոդը Կարլ Մարքսը: Ըստ Մարքսի, ընկերային կյանքն ալ իր դիալեկտիկան ունի. քաղքենի (bourgeois) դասակարգը թեզն է, որ ծնունդ կուտա իր հակառակորդ բանվոր դասակարգին (անտիթեզ), որ կուգա ժխտել, ոչնչացնել քաղքենի դասակարգը. այդ հակամարտութենեն ու հակասութենեն պիտի ծնի երրորդ վիճակը, որպես համադրություն (սինթեզ). այն է՝ մարդոց առանց դասակարգի ընկերությունը: Անշուշտ այս տեսությունը ոչինչ ունի գիտական, ու մտածումի պատմության մեջ անցած է շատոնց:

Մարքսիստները, անշուշտ, դիալեկտիկայի հեգելյան իմաստը իր ծայրահեղության տարին: Ամեն ընկերային, պատմական, մշակութային ու նույնիսկ գիտական երևույթ փորձեցին դիալեկտիկ մեթոդով բացատրել: Ամեն տեղ սկսան դիալեկտիկ պրոցես փնտրել, այսինքն՝ հակասություններու բախում: Հակասություններու բախման անհրաժեշտության գաղափարի ծիծաղելիությունը տաղանդավոր կերպով մեզի կը պատկերացնե Օտյանը իր «Ընկեր Փանջունի ի Ծապլվար»-ի մեջ: Երբ ընկեր Փանջունի երթալով «գրավել» Ռեա Սերգոյի տունը, կը տեսնե, որ դուռները

իր առջև կը բացվին, ու տանուտերը զինք ներս կը հրավիրե. ան կը մերժե մտնել ու կը պահանջե, որ դռները գոցվին, և ինք կոտրելով ներս կմտնե, որովհետև երկու դասակարգերը (ինք և Սերգո) պետք է իրարու բախեին, որպես անհրաժեշտորեն երկու հակառակություններ:

Կ. Պ.

Բուխարեստ, «Հերկ», 1937, հունիս

ԻՆՉ ԿԸ ՆՇԱՆԱԿԵ «ԲՈՒՐԺՈՒԱ»

Եթե կան ժողովուրդներ, որոնց մեջ բառերը ու գաղափարները կորսնցուցած են իրենց հարազատ ու ճշգրիտ իմաստը, անտարակույս որ անոնցմե մեկը մենք ենք: Մենք ազգովին, մանավանդ վերջին հիսնամյակի ընթացքին, մտած ենք կյանքի արևմտյան ձևերուն մեջ, քաղաքական, ընկերային, գրական, գեղարվեստական տեսակետներե: Կը վիճենք նման խնդիրներու մասին, առանց սակայն լավ ծանոթ ըլլալու այն մտածման գործիքներուն, բառերուն ու գաղափարներուն, զոր կը գործածենք: Կնմանինք այն բանվորին, որ իր ձեռքի գործիքը չի ճանչնար, զայն սխալ կը բռնե ու գեշ կը գործածե, և որպես հետևանք գործիքը իր բնական վիճակը կը կորսնցնե, կը ստանա արտաքոց ձևեր, ու շինած գործն ալ կըլլա անկատար ու հաճախ այլանդակ: Այս ուղղությամբ մեր ժողովուրդի մեջ պետք է կազմակերպել իսկական **վերադաստիարակության** (rééducation) պայքար մը:

Շառլ Մորաս ճիշտ կերպով կը նկատե. „C'est par les mots que l'on désigne les idées, c'est sur les idées qu'on raisonne, («բառերով են, որ ձևակերպվում են գաղափարները, գաղափարների շնորհիվ է, որ մարդիկ հասկանում են իրար»):

Այս անգամ կը փորձենք տալ «քաղքենի» բառին իմաստը, օգտվելով մանավանդ ժամանակակից մեծագույն տնտեսագետ և ընկերաբան Վերներ Զոմբարտի համբավ հանած «Der Bourgesis» գործեն և ռումեն ընկերաբան Շթեֆան Զելեթինի «Ռումեն քաղքենիության ծնունդը» արժեքավոր գիրքեն: Մեր նպատակը չէ, անշուշտ, քաղքենի դասակարգին հետ կապված խնդիրները վերլուծել, ոչ ալ անոր ապագայի մասին նախատեսություններ ընել, այլ միայն հիշել այդ խնդիրներն ու երևույթները, պարզապես «քաղքենի» բառին իմաստը կարելի եղածին չափ լրիվ ու կենդանի դարձնելու համար:

Քաղքենի դասակարգի ծնունդը. Բուրժուա (բուրգենզիս) կամ քաղքենի կը կոչվեր ի սկզբանե քաղաքի մը (բուրգ) բնակիչը: Քաղաքը, իր արդի ըմբռնումով, կազմված է միջին դարու ընթացքին, իշխանի մը բերդին կամ պալատին և կամ նույնիսկ վանքի մը պատերուն շուրջը: Այդ նոր բնակիչները ուրիշ բան

չէին, եթե ոչ նախկին գյուղացիներ, որոնք, ձգելով հողագործությունը, կը սկսեին զբաղիլ արհեստով մը, տնային ճարտարարվեստով կամ ապրանքներու փոխանակությամբ: Այդ նոր մարդիկ, սակայն, ժամանակի ընթացքին կը բազմանան ու կստանան բուրժուա (քաղքենի) անունը: ԺԳ-րդ դարեն ասդին սույն բառին իմաստը կընդարձակվի, ու բուրժու կը կոչվին բոլոր քաղաքներու բոլոր բնակիչները: Ժամանակե մը հետո, քաղաքներու ու համայնքներու բնակչության մեկ մասը կը սկսի տնտեսական կյանքի վերաբերյալ որոշ առանձնաշնորհումներ և ազատություններ վայելել, ու երբ անոնց թիվը կարևոր չափերու կհասնի, բուրժուա անունը կը սկսին կրել միայն անոնք, որ կը վայելեին լրիվ համայնքային իրավունքներ ու կը կազմեին տեսակ մը վաճառականական ազնվականություն:

Տնտեսական նոր շարժումը տակավ կը ծավալի իրերու բնական բերումով: Ապրանքները կը շատնան, արտադրությունը կավելնա, հետևաբար մեծ թափ կստանա նաև փոխանակությունը, կը ստեղծվին շրջուն ու մնայուն շուկաներ (պազարներ): Նախապես փոխանակությունը կըլլա միևնույն համայնքին մեջ, հետո, սակայն, փոխանակության շրջանակը կը մեծնա ու կանցնի դրացի համայնքին և անկեց ալ անդին: Մեկ խոսքով, տնային ճարտարարվեստը տեղի կուտա համայնքային ճարտարարվեստին ու աշխատանքի լայն բաժանումին, իսկ ներհամայնքային փոխանակությունը տեղի կուտա միջհամայնքային փոխանակության, այսինքն՝ մեծ վաճառականության: Ու որպես հետևանք այս տնտեսական խմորումներու ու նոր գոյավիճակին, քաղաքի մարդիկ տակավ կը ձերբազատվին իշխաններու հեղինակութենեն ու հովանավորութենեն և կը դառնան բուրժուա, մտնելով թագավորին ուղղակի հովանավորության տակ (bourgensis du roi):

Տնտեսական պատճառներու հետևանքով այս ընկերային շարժումը կը զարգանա՝ քաջալերվելով թագավորին կողմե, հակառակ իշխաններու դժգոհության ու հաճախակի բողոքներուն: Այսպիսով կկազմվի նոր դասակարգ մը, հարկատու թագավորին, իսկ մյուս կողմանե, որպես հետևանք այս երևույթին, կը թուլնա իշխանական ուժը: Ահա թե ինչու թագավորը շահ ուներ ընթացք տալու բնական կերպով ծնող ու զարգացող այս նոր դասակարգին: Ավատական դրությունն է, որ կը սկսի կազմալուծվիլ, իր ուժերը փոխանցելով, տնտեսական տեսակետե՝ քաղքենի դասակարգին, իսկ քաղաքական տեսակետե՝ թագավորին: Ուրեմն, նոր ընկերային երևույթներ կը զարգանան, զուգահեռ կերպով, որպես հետևանք միևնույն պատճառին: Այսինքն՝ տնտեսական արտադրության և այդ արտադրություններու փոխանակության հին պայմաններու, ձևերու ու հարաբերությանց փոփոխության:

Այդ փոփոխության հետևանքները կըլլան. ա) Ծնունդը նոր դասակարգի մը՝ քաղքենիության: բ) Թուլացումը իշխանություններու հեղինակության ու քաղաքական ազդեցության: գ) Ծավալումը վերապետի հեղինակության և որպես հետևանք՝ ծնունդն ու զարգացումը կեդրոնացյալ ազգային պետության: Այս տեսակետեն, պատմության մեջ ամենահատկանշական օրինակը ֆրանսական պետության կազմությունն է:

Նոր դասակարգի ծնունդին հետ կապված են նաև բազմաթիվ հոգեբանական երևույթներ, պատճառներ ու ձգտումներ: Հոգեբանական մարզին պատկանող նոր ծնունդ առած երևույթներեն ամենաբնորոշը դրամասիրության զգացումն է «նոր» մարդոց հոգիներուն մեջ: Պետք չէ կարծել, որ դրամը բոլոր ժամանակներու մեջ նույն կարևորությունը գրաված է մարդոց կյանքին ու հոգիին մեջ: Դրամի պաշտամունքը իր ծայրահեղության հասած է քաղքենի դասակարգի ծնունդեն ասդին, քաղքենի աշխարհին մեջ: Ահա թե ինչու ԺԴ դարուն, այսինքն՝ երբ քաղքենի դասակարգը արդեն կազմված էր, ժամանակակից մարդիկ կը սոսկային նոր կուռքին՝ դրամին գործած ավերներեն: «Դրամը,—կըսե այդ դարուն Բեատո Դոմինիչի,—շատ սիրված է մեծեն ու պզտիկեն, կրոնականեն ու աշխարհականեն, աղքատեն ու հարուստեն, վանականեն ու եկեղեցապետեն: Ամեն ինչ դրամին հպատակն է: Այս անդադրում ծարավը դեպի ոսկին, հոգիները կը տանի ամեն փորձության. ան կը բթացնե ըմբռնումը, կը կուրացնե գիտակցությունը, կը պղտորե միտքը, կը շեղեցնե կամքը, չի ճանչնար բարեկամ, չի սիրեր ազգական, չի վախնար Աստուծմե և մարդոցմե ամոթ չունի»: Այդ դարուն, ուրեմն, կսկսի զարգանալ դրամի պաշտամունքը, որ կտանի դրամատիրական ոգիի ստեղծման և զարգացման:

Դասական քաղքենին. «Քաղքենին իր իսկական դիմագծով սկսած է ծնիլ ԺԳ դարուն, Ֆլորենցիայի մեջ ու հասած է իր կատարելության ԺԴ դարուն», կըսե Զոմբարտ: Քաղքենիի առաջին կատարյալ տիպարը Լեոն Բատիստա Ալբերտին է, որն իր կարծիքներն ու սկզբունքները զարգացուցած է իր հռչակավոր «Del governo della famigina» գործին մեջ, գործ, որ քաղքենի ոգիի, մտայնության ու առաքինության ծննդյան վկայագիրը կարելի է նկատել: Ալբերտիի համար տնտեսությունը սուրբ բան մըն է, զայն պետք է վարել բանական կերպով: Մարդու տնտեսական գործունեության նպատակն է ծառայել ընտանիքին հոգևոր ու մարմնական իմաստով: Այս գիրքին մեջ ան կուտա կարգ մը կանոններ, որ բոլոր ժամանակներու քաղքենիին փիլիսոփայությունը և բարոյականը կը ներկայացնեն:

Անա այդ բնորոշումներեն մի քանին. 1) Ոչ մեկ ատեն ձեր պարտքերը ավելի մեծ թող չլլլան ձեր առնելիքներեն: 2) Միշտ ձեր ստացածեն ավելի քիչ տվեք, խնայեցեք: 3) Անհրաժեշտ պարտականությունները պետք է կատարել կարելի եղածին չափ արագ, ոչ կենսականները՝ հետաձգել կարելի եղածին չափ երկար: Կարևորագույն կարիքները ընտանեկան կարիքներն են: 4) Ամենամեծ մեղքը ժամանակ կորսնցնելն է: Ծուլութենեն կը ծնին անպատվություն և ամոթ: Քաղքենին աշխատասեր է:

Պ. Բենջամեն Ֆրանկլին, ուրիշ կատարյալ քաղքենի մը, կըսե. «Եթե կյանքը քեզի համար արժեք ունի, այն ատեն մի՛ վատներ ժամանակդ, որովհետև ժամանակը այն կտավն է, որմե շինված է կյանքը»: Ֆրանկլինի փիլիսոփայությունը կը խտանա երկու խոսքի մեջ՝ աշխատասիրություն և չափավորություն: Իսկ քաղքենիի առաքինություններն են՝ 1. Խնայողություն. 2. Լռել. 3. Կարգ-կանոն. 4. Վճռականություն. 5. Չափավորություն. 6. Զանասիրություն. 7. Ուղղամտություն. 8. Արդարադատություն, արդարամտություն. 9. Միջին ճամբեն քալել. 10. Մաքրություն մարմնի, հագուստի, բնակարանի. 11. Հանդարտություն. 12. Ժուժկալություն (սեռային կյանքի մեջ): 13. Խոնարհություն:

Զոմբարտ երկու տեսակի քաղքենի տիպար կը զատորոշե: Հին տիպար մը, մինչև 18-րդ դարու վերջերը և նոր մը՝ 19-րդ դարեն մինչև մեր օրերը: Հին ձևի քաղքենին ինքն ալ կը հետապնդե շահը, անհատական նախաձեռնության միջոցով ան ալ կը հաշվե ու կը շահագործե, սակայն ան չի դադրիր իր տնտեսական գործունեությամբ առողջ մարդկայնականության մը ծառայելե: Անոր համար տնտեսությունը միջոց է կյանքի նպատակին համար, ան գիտե զանազանել իր շահը ուրիշի շահեն ու այս վերջինը հաշվի առնել: Հին քաղքենիին համար, ուրեմն, տնտեսությունը ինքնանպատակ չէ, այլ ան պետք է ծառայե կյանքի արժեքներն ստեղծելու կամ ձեռք բերելու զանոնք: Տարբերություն կա հին տիպի և նոր տիպի քաղքենիներուն միջև տնտեսական կյանքը ապրելու ձևի տեսակետեն:

Հին քաղքենիին համար տնտեսական կյանքը աշխատանքով լեցուն, բարոյական իմաստ ունեցող, անհատական ուժերով տրբբելու ասպարեզ մըն է: Հին քաղքենին չի ճանչնար մրցակցություն և ուրիշի գործին մեջ միջամտություն: Այդ բոլորը օրենքներով կարգիլվին: Ապրանք մը ներկայացնել որպես ավելի աժան, քան ուրիշներունը, մրցելու մտոք՝ ամոթալի երևույթ կը սեպվեր ու այպանելի:

Նոր տիպի քաղքենին. Տակավ սակայն մտայնությունները կը հեղաշրջվին, ու 19-րդ դարուն կը հանդիպինք նոր տիպի քաղքենիին, որ պահելով հանդերձ շարք մը անհատական առա-

քինություններ, իր գոյության իմաստը տարբեր բնույթ կառնե՝ կյանքի նոր պայմաններու, մանավանդ գիտական և թեքնիք նվաճումներու հետևանքով: Նոր քաղքենին ավելի ու ավելի կը հեռանա լայն զանգվածեն, մեծ հարստություններ կը կուտակե ու, հետևաբար, ձեռք կը բերե նոր ուժեր ընկերային ու քաղաքական կյանքի մեջ:

Առաջին շրջանին մեջ նախաձեռնող քաղքենիին մեջ կը խտանան հերոսը, առևտրականը և քաղաքացին, իսկ երկրորդ շրջանին՝ քաղքենի բարոյական դիմագիծը կայլափոխվի. «տակավ, հոսանքը, որ դեպի ձոր կը տանի, կխտացնե առևտրականի բնույթը, ու կը կորսվի հերոսը», կըսե Զոմբարտ:

Այսպես, ուրեմն, հետզհետե կը զորանա քաղքենին և կը հասնի իր հզորագույն ձևին, այսինքն՝ դրամատիրության ու տընտեսական աշխարհակալության: Այս հսկան կը կոխե ամեն ինչ ու միշտ սանձարձակ՝ իր ճամբան կը շարունակե, մեռցնելով բնության՝ մարդուն կյանքի բանաստեղծությունը, ժխտելով ոգեկան արժեքները, հեգնելով մարդկային ազնիվ զգացումները և արդար իրավունքները:

Քաղքենիին քաղաքական դերը. Ուրեմն քաղքենիություն կը-կոչվի այն ընկերային դասակարգը, որ կը զբաղի ապրանքներով: Կան ապրանք արտադրողները, ապրանքները շարժման մեջ դնողները ու անոնց փոխանակությամբ զբաղվողները կամ բուն վաճառականները և կան, վերջապես, անոնք, որ դրամագլուխով կը նպաստեն ու ծավալ կուտան արտադրության և վաճառականության, այսինքն՝ դրամատերերը: Պետք է շեշտել, որ քաղքենի դասակարգը, վերև հիշված իր երեք ստորաբաժանումներով, որպեսզի բնականոն կերպով զարգանա, կարիք ունի անհրաժեշտորեն ընկերային-քաղաքական ազատ դրության մը, որպեսզի ազատ փոխանակությունը հնարավոր դառնա: «Քաղքենիության հատկանիշը, տնտեսական տեսակետեն փոխանակությունն է, իսկ ընկերային-քաղաքական տեսակետեն՝ ազատությունը»: «Քաղքենիությունը բույս մըն է, որուն արմատները կմեկնին փոխանակության հարաբերություններե և որուն ճյուղերը կը զարգանան ընկերային ազատ մթնոլորտի մը մեջ», կըսե Զելետին:

Իրապես քաղքենին, ուր որ թափանցե իր ապրանքներով, հոն կտանի իր հետը փոխանակության հետևանքները՝ ազատության, հավասարության և մարդկայնականության գաղափարները, որոնք կօգնեն ժողովուրդներուն՝ փրկվելու իրենց հին՝ ճորտային հարաբերություններեն ու բարձրանալու դեպի նոր, ավելի ազատ ու անկախ կյանք: Ահա թե ինչու, ուր որ քաղքենի դասակարգը ծնունդ առած է, բնական կերպով ու անհրաժեշտորեն անոր հե-

տևած է նաև ընկերային-քաղաքական ազատության պահանջը ու ի վերջո նվիրագործված ժողովրդապետական սահմանադրությանց միջոցավ, ըլլա խաղաղ ճանապարհով, ըլլա նույնիսկ հեղափոխությամբ:

Բոլոր նոր ազգերուն ազատագրության պայքարը ղեկավարողը ու ժողովրդապետական ազատ կարգերը հաստատողը եղած է քաղքենի դասակարգը: Երբ քաղքենին պայքարած է իր երկրի ազգային իշխանության բռնապետության դեմ ընկերային ազատ ու ժողովրդապետական կարգեր հաստատելու նպատակավ, հեղափոխությունը կոչված է **ընկերային հեղափոխություն:** Երբ քաղքենին պայքարած է իր երկրի օտար իշխանության մը բռնապետության դեմ, հեղափոխությունը կոչված է **ազգային ազատագրական** հեղափոխություն: Ազգային ազատագրության մը պահուն, քաղքենի դասակարգի չգոյությունը կամ դեռ թույլ ու անկազմակերպ վիճակը, դժբախտություն մը եղած է այդ ժողովուրդին համար:

Դիտելի է անշուշտ, որ այս եղած է նաև հայ ժողովուրդի պարագան: Մեր ազգային հեղափոխության պահուն չենք ունեցած ազգային ինքնագիտակից քաղքենի դասակարգ մը: Հեղափոխության գործը իրերու բերումով ստանձնած են կղերականներ, մտավորականներ, ընկերվարականներ, գյուղացիներ և իրենց բնության հատուկ միջոցներով պայքարած են ու չեն հաջողած սակայն: Երկրի մեջ հայ կազմակերպված բուրժուազիայի մը չգոյությունը գլխավոր պատճառն է մեր ազգային ազատագրության ձախողանքին:

Քաղքենիին ապագան. Ըսինք, թե քաղքենի դասակարգը ծնունդ առած է ԺԳ-րդ դարուն ու բնական կերպով զարգանալով՝ հասած է մեզի քաղքենի դրամատեր դասակարգի ձևին տակ իր ստորաբաժանումներով (մանր քաղքենի, մեծ քաղքենի): Հետևաբար պարզ է, որ քաղքենիության ու դրամատիրության երևույթը պատմական իրականություն մըն է, ընկերային տնտեսական կյանքի հատուկ պայմաններու տակ ծնած, թեքնիք նոր պայմաններու տակ զարգացած և սակայն ուրիշ նոր ընկերային-տնտեսական երևույթներու պատճառով մահվան ենթակա, կավելցնեն բոլոր տեսակի հակաքաղքենի տեսաբանները: Ասոնցմե առաջինը՝ Կարլ Մարքսը, անցյալ դարու կեսին նախատեսած էր քաղքենի դասակարգին մահը, բանվոր դասակարգի զարգացման հետևանքով: Ըստ Մարքսի, ընկերային կյանքը պիտի ընթանա համաձայն դիալեկտիկ գործողության մը, որով բանվոր դասակարգը պիտի գա ոչնչացնելու քաղքենի դասակարգը: Քաղքենի ու բանվոր դասակարգերու միջև պիտի սկսին դասակարգային բուռն պայքարներ (դասակարգային պայքարը Մարքս կը նմա-

ենեցնե դալակի մը. որ կուգա արագացնել ու դյուրացնել նոր ծնունդը), որոնց որպես հետևանք պիտի ծնի նոր ընկերություն մը առանց դասակարգերու, այսինքն՝ ընկերվարական ընկերությունը:

Մարքսի նախատեսությունները, սակայն, շատ քիչով իրականացան: Նույնիսկ այսօրվա Խորհրդային Միությունը հեռու է նմանելէ այն պատկերին, զոր Մարքս մարդկության ներկայացուցեր էր 70—80 տարիներ առաջ:

Ուրեմն եզրակացությունը ո՞րն է. քաղքենի դասակարգը բնական ձևով պիտի շարունակե իր կյանքը, որպես ընկերային անհրաժեշտություն. քաղքենի դասակարգը մահ չպիտի ունենա: Անշուշտ ճիշտ չպիտի ըլլար այդ ըսել, քանի որ ակներև են քաղքենի դասակարգին տարրալուծման նշանները ու բազմաթիվ՝ անոր թշնամիները: Այսօր հայտնի է, թե ոչ միայն ծայրահեղ ձախը, այլ նաև ծայրահեղ աջը հավասարապես մահացու թշնամիներ են քաղքենի դասակարգին, քաղքենի կարգերուն ու աշխարհայացքին: Այս երկու նոր ու հսկա ուժերուն գրոհին մեջ բռնված քաղքենի դասակարգը պիտի տոկա ու հաղթե՞:

Զոմբարտ կըսե. «Բայց վերջապես հսկան ինքը չպիտի հոգնի: Ինձ կը թվի, թե դրամատիրական ոգիին բնության մեջ ներքին մղում մը կա, որ դեպի կազմալուծում ու մահ կտանի: Ի՞նչ պիտի գա հսկայի մահեն հետո՝ չե՛նք գիտեր»: Ու գերմանական Նիբելունկյան առասպելին ակնարկելով՝ կավելցնե. «Գուցե այն ատեն աստվածները պիտի մեռնին: Ոսկին պիտի վերադարձվի Հռենոսի հորձանքին: Ո՞վ գիտե»:

Ահա թե ինչու նոր գալիքին մասին ոչինչ կրնանք ըսել: Ու խորհիլ, թե ինչքան իրավունք ունի եղեր մեր քաղաքական մտածողներեն Սապահ-Գյուլյանը, որ ինք ալ մարքսիստ մը ըլլալով հանդերձ, իմաստուն կերպով ըսեր է. «Գալիք սոցիալիստական ընկերության օրերում ի՞նչ տեսակի մի իշխանություն (հեղինակություն) կը լինի, նրա ամբողջական ձևավորության մասին հիմակվանից որքան քիչ խոսվի, այնքան է՛լ **ավելի գիտական** կը լինի»:

Կ. ՊԱՂՃՅԱՆ

Բուխարեստ, «Հերկ», 1937, սեպտեմբեր

ԻՆՉ ԿԸ ՆՇԱՆԱԿԵ ՈԳԻ

Ոգի բառին իմաստը կշփոթվի հաճախ, մանավանդ մեզ մոտ, հոգի բառին հետ: Լավ է, ուրեմն, նախքան ոգիին իմաստը տալը, ցուցնենք, թե ինչ չի նշանակեր ան, այսինքն՝ ճշտենք, նախ, թե հոգին ի՞նչ է: Բնական է, որ այսօր այլևս ոչ մեկ գիտական արժեք ունի այն համոզումը, թե հոգին մարմնին մեջ տեղավորված աներևույթ մարմին մըն է, որ մահվնե վերջ կբաժնըվի ու կերթա ուրիշ աշխարհ: Թեև այսօր ալ ժողովուրդի մեջ այդ «նյութական» հոգիի հավատքը կա: Ժողովուրդը հոգին կնույնացնե շունչին հետ. երբ մահամերձը իր վերջին շունչը տա, կըսեն՝ հոգին ավանդեց: Հին հելլեններու մոտ ևս այս ըմբռնումը կար: Այսօր, սակայն, հոգիի գիտությունը, այսինքն՝ հոգեբանությունը, երկար ճամբա մը քալելե ու ժամանակի ընթացքին բազմազան տեսակետներու վրայեն անցնելե վերջ, մոտեցած է ճշմարտության, գոնե ինչ կվերաբերի հոգիի բնորոշումին: Այսօր ալ դեռ հոգեբանները հետու են նույն տեսակետները, հոգին բացատրելու նույն ձևը ունենալե, սակայն ոչ ոք չի պաշտպաներ այն տեսակետը, թե հոգին մասնահատուկ «նյութ» մըն է, որ ժամանակավորապես տեղ գրաված է մարմնույն մեջ: Ավելին. ժամանակակից գիտունները հարցը անգամ չեն դներ հոգիի մը գոյության: Նոր հոգեբանությունը չուզեր գիտնալ, թե ի՛նչ է հոգին իր էության մեջ, ճիշտ այնպես, ինչպես բնագիտությունը չուզեր գիտնալ, թե ի՛նչ է, օրինակի համար, էլեկտրականությունը իր էության մեջ:

Բնագետը չի գիտեր, թե ի՛նչ է էլեկտրականությունը, զայն կճանչնա, սակայն, իր հատկությանց միջոցավ (ըսել թե էլեկտրականությունը ուժ մըն է, չի նշանակեր զայն բնորոշած ըլլալ լրիվ կերպով, այլ կը նշանակե բնորոշած ըլլալ անոր հատկությունը, որ մենք ուժ կկոչենք): Բուն գիտությունը ժամանակ չի կորսնցներ «էությունը» բնորոշելու, essence-ը գտնելու (ինչպես ապարդյուն կերպով կընեին միջին դարուն) հարցերով, այլ իրականությունը կուսումնասիրե, կը դիտե, կը փորձե ու կը մեկնաբանե ի հարկին, անոր արտաքին արտահայտություններեն: Այսպեսով ան ավելի ու ավելի կը մոտենա իրականության միջուկին ու հավանաբար նաև այս ճամբով քալելով, օր մը պիտի հասնի

նաև իրերու, իրականություններու էությունն ալ ճանչնալու։ Նույն բանը կընե նաև նորագույն հոգեբանությունը. անոր համար հոգին գոյություն ունի որպես հոգեկան արտահայտություններու, հոգեկան երևույթներու կամ որպես հոգեկան ապրումներու (ինչպես կը սիրեն ըսել հոգեբաններեն ոմանք) ամբողջություն մը։

Ուրեմն հոգի ըսելով այսօրվան գիտությունը կհասկնա զգացական, մտավորական, կամքի արտահայտություններու ամբողջությունը, մեջը ըլլալով նաև ենթագիտակիցը։ Հոգին այս իմաստով մասն է բնության, մարմնին նույնիսկ, քանի որ հոգին տեսակ մը շարունակությունն է մարմնույն՝ կատարելագործված ու այլափոխված ձևի մը տակ։

Մեր ըսածեն չհասկցվի սակայն, թե ներկա հոգեբանությունը նյութապաշտ ըմբռնումը ունի հոգիին։ Ներկա հոգեբանությունը, այո՛, շեշտված կերպով բնապաշտ է և իրապաշտ, առանց սակայն նյութապաշտ ըլլալու, ինչ որ բոլորովին տարբեր բան է։ Բնությունը մեկ ու ներդաշնակ իրականություն մըն է քանի մը աստիճաններու, քանի մը տարբեր մակարդակներու վրա զարգացած։ Այդ տարբեր մակարդակները անշուշտ իրարմե բխած, իրարմե ծնած են, սակայն **ուրույն** օրենքի մը հպատակ են ու այդ իրենց հատուկ օրենքով զարգացած են. հետևաբար ամեն մեկը տարբեր իրականություններ են, և կարելի չէ ամեն մեկուն գոյության իմաստը ըմբռնել ու էությանը թափանցել մյուսին հարաբերելով։ Բնությունը նախ և առաջ կազմված է կյանք չունեցող մարմիններե, ինչպես են՝ հողը, ջուրը, օդը, մետաղները և այլն։ Այս կյանք չունեցող նյութերեն ծնունդ առած է, սակայն, բուսական ու կենդանական աշխարհը, այսինքն՝ բնության ապրող իրականությունը։ Անկենդան բնությունը, ուրեմն, իրականության առաջին մակարդակն է (կամ աստիճանը), իսկ բուսական-կենդանական իրականությունը՝ երկրորդ մակարդակը։

Այս երկրորդ մակարդակի իրականությունը, առաջինի նյութեն կազմված ըլլալով հանդերձ, կը հպատակի բոլորովին տարբեր օրենքի մը, կյանքի օրենքին, և կարելի չէ զայն բացատրել իր **նյութական** բաղադրության քննությունով։ Կենդանի իրականության մը նյութը, ինչքան ալ խորունկ կերպով քննվի, կարելի չէ հասկնալ անոր յուրահատուկ սկզբունքը, օրենքները, կյանքի առեղծվածը։ Բնության մեջ գոյություն ունեցող անկենդան իրականության մակարդակները, ուրեմն, նույն նյութեն կառուցված և հորինված ըլլալով հանդերձ, հիմնովին իրարմե տարբերվող ու անվերածելի (irréductible) իրականություններ են։

Սակայն բնությունը հոս կանգ չառներ ու կենդանական աշխարհի մեջ կսկսի երրորդ մակարդակի մը, երրորդ իրականության մը հորինումը, որ իր կատարելության կը հասնի մարդուն

մեջ. այդ երրորդ մակարդակը հոգեկան իրականությունն է: Այն տարբերությունը, որ կա անկենդան ու օրգանական մակարդակներու միջև, նույն սկզբունքային հեռավորությունը ու տարբերությունը կա այս վերջինի ու հոգեկան իրականության միջև, թեև հոգին ինքն ալ տարբեր «նյութե» շինված բան մը չէ, և մարմնին կյանքով պայմանավորված գոյություն մը ունի: Հոգեկան ապրումներու աշխարհը յուրահատուկ աշխարհ մըն է, զոր ճանչնալու, հասկնալու և մեկնաբանելու համար կարելի չէ նյութական կամ օրգանական աշխարհներու չափերով ու օրենքներով մոտենալ:

Նյութապաշտ հոգեբանություն մը այսօր գոյություն չունի: Ոչ մեկ հոգեբան այսօր չի պաշտպաներ այդ ոչ գիտական տեսակետը: Կարգ մը երկիրներու մեջ, ուր նյութապաշտությունը տեսակ մը պաշտոնական փիլիսոփայություն է, փորձ եղավ նյութապաշտ հոգեբանություն մը հիմնել, սակայն փորձը ոչ մեկ արդյունք ունեցավ գիտության համար, ու փոխանակ հոգեբանություն մը հիմնելու, հիմնեցին բնախոսություն մը՝ réflexologie կոչված, որ գիտական կարևորություն ունի այսօր, ու անոր հիմնադիր գիտնականը՝ Իվան Պետրովիչ Պավլով, աշխարհահռչակ դարձավ Մոսկվայի մեջ իր կատարած փորձերով: Սակայն այս բոլորը բնախոսության գիտության համար են և ոչ թե հոգեբանության համար:

Խորհրդային Միության նյութապաշտները, ուզելով նյութապաշտ հոգեբանություն մը ստեղծել, պարզապես հոգեբանությունը ջնջեցին: (Փակագծի մեջ հիշենք, որ Մոսկվայի ականավոր բնախոս-հոգեբաններու շարքին մեջ կա նաև հայազգի Բ. Վ. Վանիցյան, որ հեղինակն է գրքի մը (Մոսկվա, 1935 թ.), ուր ան կզբաղի արհեստավոր մարդոց անհրաժեշտ բնական հատկությունները ճանչնալու կարևոր խնդրով, ստեղծելով ինքնուրույն մեթոդ մը,—Վանիցյան մեթոդ,—որ ուշադրությունը գրաված է Եվրոպայի հոգեբաններուն: Պ. Վանիցյանի գործին ռուսերեն բնագիրը կգտնվի Բուքրեշի համալսարանի Հոգեբանության ինստիտուտի մեջ. նկատի ունենալով այս ուսումնասիրության շահեկանությունը, որոշված է զայն ռումաներենի թարգմանել): Ուրեմն ներկա հոգեբանությունը, ուսումնասիրելով հանդերձ սերտ կապերը, որ կան մարմնույն (մանավանդ գեղձերուն) և հոգեկան երևույթներուն միջև, այս վերջինները կնկատե որպես տարբեր մակարդակի պատկանող իրականություն մը:

Կը խոսվի նաև հավաքական ընկերային հոգիի մը գոյության մասին: Ի՞նչ կնշանակե ընկերային-հավաքական հոգի:

Մենք տեսանք, թե անհատական հոգին անհատական հոգեկան ապրումներուն և արտահայտություններուն ամբողջությունն է. հետևաբար պետք է ընդունինք, թե ընկերային հոգին անհատական հոգեկան երևույթներու գումարն է: Կար ժամանակ, երբ մարդիկ այդպես կկարծեին. այսօր, սակայն, հոգեբաններ ու ընկերաբաններ հասած են այն եզրակացության, թե հավաքական հոգին պարզապես անհատներու հոգիներուն գումարը չէ, այլ անոնց համադրությունն է, այսինքն՝ գումարեն **ավելի** և **տարբեր** բան մը: Ամեն մեկ անհատի հոգեկան ապրումները դրսևորվելով ու հանդիպելով ուրիշ անհատներու հոգեկան ապրումներուն, անոնք ոչ թե կգումարվին, այլ իրար միանալով՝ կահին ու կը փոխեն նաև իրենց սկզբնական բնույթը. ատոր համար անա ըսված է, թե հոգեկան-հավաքական երևույթներու աշխարհին մեջ 1+1 հավասար չէ 2-ի: Այսպեսով միայն կարելի է բացատրել այն բազմաթիվ պարագաները, երբ մարդիկ տարբեր վարվելակերպ կունենան որպես անհատ իրենց մասնավոր կյանքին մեջ ու բոլորովին կը փոխվին և ուրիշ մարդ կը դառնան (իրենց կամքեն անկախ), երբ հավաքական կյանքի մեջ կմտնեն ու կգործեն: Հավաքական կյանքի մեջ, մարդոց անհատական հոգիներու միջև անհամար ու բարդ միջգործողություններ տեղի կունենան, որոնց արդյունքը կըլլա ստեղծումը հավաքական-ընկերային ապրումներու և արտահայտություններու, զոր իրենց ամբողջության մեջ հոգեբանները կկոչեն ընկերային հոգի: Բնական է, որ անհատական հոգին ու ընկերային հոգեկան արտահայտությունները զիրար զարգացնելու կնպաստեն:

Առանց ընկերային կյանքի, կասկած չկա, որ անհատական հոգին շատ ցած աստիճանի մը վրա պիտի մնար: Շատ մը անհատական կոչված հոգեկան արտահայտություններ ու հատկություններ հնարավոր պիտի չըլլային առանց ընկերային կյանքի մը, ինչպես օրինակ՝ լեզուն և այլն: Անա, ուրեմն, բնութան մեջ պետք է զանազանել, որպես տարբեր իրականություն մը, ընկերային-հավաքական հոգեկան իրականությունը՝ անհատական-հոգեկանին կողքին: Թե ինչ հարաբերություն կա անհատական ու ընկերային իրականությանց միջև, այդ մասին կարծիքները կբաժնվին, և ընկերաբանները, ըստ իրենց հայեցակետին, զանազան մեկնություններ կուտան: Մենք սակայն հոս կանգ կառնենք, որովհետև կկարծենք, թե բավարար չափով մը պարզեցինք հոգի բառին իմաստը, ինչ որ մեր առաջադրած նպատակն էր արդեն:

Բայց մենք դեռ միայն հոգիի մասին խոսեցանք, ու կմնա, որ գծենք **ոգի** բառին սահմանները: Ոգին, ուրեմն, հիմնովին կը տարբերի հոգիեն: Եվրոպացիք բնավ չեն շփոթեր զանոնք:

Ֆրանսացիք հոգիին կըսեն âme, ոգիին՝ esprit, գերմանացիք՝ Seele և Geist, իսկ հույները psihe ու pnevma:

Ինչպես տեսանք, հոգին ճշգրիտ ու գրեթե գիտական իմաստ մը ունի, կապված մարդ անհատի բնության հետ. ոգի բառին իմաստը շատ ավելի բարդ ու դժվար բնորոշելի է: Ճշգրիտ բնորոշում մը տալ գրեթե անկարելի է պարզապես այն պատճառով, որ այս բառը գիտական բնույթ չունի: Ստորև պիտի փորձենք տալ անոր քանի մը իմաստները, որով ան կգործածվի կյանքի մեջ:

1) Ոգի բառը նախ կրոնական իմաստ մը ունի, մանավանդ իր ածականացած ձևին մեջ: Օրինակ, երբ կխոսինք անհատի մը կամ ժողովուրդի մը մասին, որ կրոնական խոր ապրումներ ունի, կըսենք, թե անոնք ոգեկան (կամ ոգևոր) կյանք մը կապրին (vie spirituelle): Մենք՝ հայերս, սակայն, ոգևորի իմաստով «հոգևոր» բառը կը գործածենք, ինչ որ թյուրիմացություն մըն է, թյուրիմացություն մը, որ նվիրագործված ըլլալ կը թվի:

2) «Ոգին» կհակադրվի երբեմն զգացողության (sensibilité) գաղափարին ու կը նույնանա բանականության իմաստին հետ: Հին հույներու մոտ այսպես էր: Ոգիին կըսեին նաև nous (նուս), ինչ որ բանականություն կնշանակե:

3) Ինչպես հիշեցինք արդեն, ոգին անանձնական իմաստ մը ունի՝ տարբերվելով հոգիեն: Այս իմաստով է մանավանդ, որ ան խոշոր տեղ մը կը գրավե մարդկության մտածողության պատմության մեջ: Անանձնական իմաստով՝ ոգի կը նշանակե մտածող իրականություն մը, անդրերկրային, բնազանցական (transcendantal) իրականություն մը, հակադիր նյութին: Ոգին՝ որպես անտիթեզը նյութին: Ատոր համար այն փիլիսոփաները, որոնք աշխարհի գոյությունը բացատրելու համար (ի՞նչ է այս աշխարհը, ո՞րն է «իրական» իրականությունը հարցումին պատասխանելով) կառչած են միայն նյութին, կոչված են նյութապաշտներ, իսկ այն փիլիսոփաները, որոնք նույն խնդիրը լուծելու համար դիմած են տարբեր սկզբունքի մը, ավելի բարձր հատկություններով օժտված իրականության մը, զոր կոչած են ոգի, անվանված են ոգեպաշտ փիլիսոփաներ:

4) Վերջապես, փոխաբերական իմաստով, «ոգի» բառը կգործածվի նաև հիմնարկության մը, մարդկային հավաքականության մը կամ գաղափարաբանության մը կեդրոնական գաղափարը ցույց տալու համար: Օրինակ, երբ կըսենք՝ օրենքներու ոգի, դասակարգային ոգի, ազգային ոգի, ընկերվարական ոգի և այլն:

Ինչպես կը տեսնենք, ընդհանրապես առնված, «ոգի» բառը հեռու է ճշգրիտ իմաստ մը ունենալե: Զանազան մտածողներ,

հիներ և նորեր, տարբեր իմաստներ ու բնորոշումներ կուտան անոր: Այնպես որ, եթե ավելի խոր կերպով ու ճշգրիտ ձևով հասկնալ ուզենք «ոգի» բառին իմաստը, պետք է մոտենանք ամեն մեկ մտածողի տեսության ու իմանանք ամեն մեկուն տված իմաստը այդ բառին: Այս գործողությունը մասամբ անհրաժեշտ է ամեն մտավորականի համար, որովհետև կյանքի մեջ ու կյանքի խնդիրներուն հանդեպ մտավորական հիմնական կեցվածք մը ունենալու և հետևողական կերպով զայն պահելու համար անհրաժեշտ է նաև քննութենե մը անցնել ոգիի մը գոյության հարցը, ճշտել մեր վերաբերմունքը ու կազմել, ըստ կարելվույն, որոշ ըմբռնում մը անոր գոյության, գոյության կերպին կամ չգոյության մասին:

Կ. Պ.

Բուխարեստ, «Հերկ», 1937, հոկտեմբեր

ԻՆՉ ԿԸ ՆՇԱՆԱԿԵ ԻԴԵԱԼԻԶՄ

Ժողովրդական հասկացողությամբ իդեալիզմ կամ գաղափարապաշտություն կկոչվի քիչ շատ բարձր նպատակի մը իրագործման անշահախնդիր հետապնդումը: Ժողովուրդին համար իդեալիստ է այն մարդը, որ իր կյանքին մեջ բարձր նպատակ մը ունի ու կը ձգտի զայն իրագործել:

Իդեալիստ բառին բուն իմաստը, սակայն, ուրիշ տեղ պետք է փնտրել ու պետք չէ շփոթել վերև հիշված ժողովրդական ըմբռնումին հետ: Վարդապետություններ կան, օրինակ, որոնք հակահիդեալիստական են, և այդ չի նշանակեր, սակայն, որ անոնք կյանքի մեջ նպատակներու իրագործման ձգտումին հակառակ են: Ահա թե ինչու ամեն անգամ, որ իդեալիզմ բառը կգործածենք, լավ է ճշտենք անոր իմաստը:

Այժմ փորձենք քանի մը խոսքով ընդգծել իդեալիզմ կամ գաղափարապաշտություն բառին գիտական կամ, ավելի ճիշտ, փիլիսոփայական իմաստը: Հոս ալ թեև ան մեկ իմաստ չունի ու ինչ-ինչ փոփոխություններ կկրե, նայած թե ո՛ւր կգործածվի և մանավանդ նայած թե ո՛ր մտածողը կգործածե զայն: Համենայն դեպս, սակայն, գաղափարապաշտություն բառը գրեթե միշտ հակադիր իմաստը ունի իրապաշտության (réalisme):

Գեղեցկագիտության մեջ (esthétique) իրապաշտությունը այն տեսությունն է, որ կհանձնարարե արվեստագետին՝ և՛ որպես նպատակ և՛ որպես միջոց ընդօրինակել բնությունը կարելի եղածին չափ հարազատորեն. մինչդեռ իդեալիզմը կպահանջե հակառակը. որ արվեստագետը ուղղե բնությունը, զայն կերպարանափոխե, իրական բնությունը գործածելով միայն որպես միջոց իր սեփական գաղափարը արտահայտելու համար: Ըստ գաղափարապաշտներու, արվեստը գեղեցկությունը պետք է փնտրե երազի մեջ, մեզի մոռցնել տալով իրականը ու այսպեսով մեզ մխիթարե: Փիլիսոփայության մեջ, իմացաբանական իմաստով, գաղափարապաշտությունը կնշանակե ընդունիլ, որ մարդկային մտածումը չի ճանչնար ուրիշ բան, քան այն, ինչ որ կա այդ մտածումին մեջ: Ուրիշ խոսքով, մտածումը չի կրնար հասնիլ արտաքին իրականության ճանաչման: Ուրիշ տեսության մը համաձայն (Իմմանուիլ Կանտ), արտաքին իրականություն մը ապա-

հովաբար գոյություն ունի (ինչ որ ինք կանվանե noumène), սակայն մարդկային միտքը կը ճանչնա այդ իսկական իրականության արտաքին երևույթը միայն (ինչ որ ինք կանվանե phénomène): Ավելի բացարձակ իմաստով մը՝ գաղափարապաշտություն կկոչվի այն տեսությունը, ըստ որու արտաքին իրականությունը ուրիշ բան չէ, եթե ոչ մեր սեփական մտածումները, մեր սեփական մտապատկերները: Գոյություն չունի արտաքին աշխարհը, այս աշխարհը ինքը մեր մտածումին դրսևորումն է: Միակ իրականը մտածումն է: Այս բնազանցական իդեալիզմին հասած է անգլիացի փիլիսոփա Ջորջ Բերքլեյ: Նույն եզրակացություններուն հասած են մանավանդ Կանտի հաջորդները՝ Իոհանն-Գոտլիբ Ֆիխտե, Ֆրիդրիխ-Վիլհելմ Շելլինգ և Գեորգ-Վիլհելմ Հեգել: Այս երեքը տիպար գաղափարապաշտ փիլիսոփաներ են, որ կը հիշվին որպես բացարձակ իդեալիստներ: Հեգել կըսեր. «Եթե իրականության և իմ գաղափարիս միջև անհամաձայնություն կա, ավելի գեշ՝ իրականության համար»: Թող ուրեմն իրականությունը ինքզինքը ուղղե և համաձայնի գաղափարին:

Հետաքրքրական է այսպես կոչված պատմական իդեալիզմը, որուն հակադրած է Կարլ Մարքս իր պատմական նյութապաշտության տեսությունը: Ըստ այս մտածողին, քաղաքականության մը բոլոր տարրերը, բոլոր երևևներն ու արժեքները, ինչպես են՝ դասակարգեր, ընտանիք, համայնք, իշխանություն, սովորություններ, կրոն, բարոյականություն, արվեստ, գիտություն, փիլիսոփայություն և այլն, կը պայմանավորվին ու կը ղեկավարվին տնտեսական երևույթներու կողմե: Ամեն ինչի վրա կիշխե տնտեսականը, ամեն ինչ հպատակն է անոր: Տնտեսականը կյանքի հիմնական երևույթն է, զոր Մարքս կկոչե ստրուկտուր, իսկ մյուս բոլոր վերև հիշված երևույթները, անոնց արտահայտության զանազան ձևերը կկոչե ինֆրաստրուկտուր: Մինչդեռ պատմական իդեալիզմը ճիշտ հակառակը կենթադրե, այսինքն՝ կընդունի, թե ճշմարիտը դարերու պատմության ընթացքին մարդկային բնության բարձր արտադրություններն են, կրոնական և բարոյական ըմբռնումները, արվեստները, գիտությունները, փիլիսոփայությունը, մեկ խոսքով՝ մարդկային մտավոր-բարոյական կյանքն է, որ թափանցած է տնտեսական կյանքի տարրերուն մեջ, ազդած է անոնց վրա ու դրած իր դրոշմը:

Գաղափարապաշտության հայրը, սակայն, կը մնա Պլատոնը՝ առաջին մեծ իդեալիստը ու ներշնչողը բոլոր հետագա գաղափարապաշտ մտածողներուն: Որովհետև Պլատոն իրականութենեն ալ շատ չէ հեռացած, ան կը նկատվի տեսակ մը իրապաշտ իդեալիստ: Պլատոն իր գաղափարապաշտ ըմբռնումը պատկերավոր

ձևով մեզի կը ներկայացնե իր հռչակավոր «Քարայրի այլաբանություն» (allégorie) հատվածին մեջ, որ մարդկության մտածումի կոթողներեն մին է ու կը մարմնացնե գաղափարապաշտ ըմբռնումին հավիտենական իմաստը:

Պլատոն կը խոսի իր մեկ աշակերտին. «Երևակայե քարայր մը՝ փորված հողին մեջ և լայն բացված դեպի լույսը: Երևակայե այդ քարայրին մեջ շատ մը մարդիկ, որ հոն կը գտնվին իրենց մանկութենեն ի վեր. ծանր շղթաներ այնքան ամուր կապած են անոնց ոտքերը և վիզերը, որ անոնք ստիպված են անշարժ մընալ իրենց տեղը: Այս կապանքներուն պատճառավ անոնք նույնիսկ գլուխնին չեն կրնար դարձնել ու կրնան տեսնել այն միայն, ինչ որ իրենց դիմացը կը գտնվի: Լույսը կուգա կրակե մը, որ կվառի մարդոց ետին, որոշ հեռավորության մը վրա, քիչ մը բարձր: Կրակին և շղթայակապներու միջև երևակայե ճամբա մը, որուն երկայնքին դրված է տեսակ մը պատ: Երևակայե նույնպես, որ այդ պատին ետևեն կանցնին մարդիկ, որոնք պատեն վեր բռնած կկրեն զանազան բաներ, ինչպես՝ մարդոց արձաններ, առարկաներ՝ տեսակ-տեսակ ձևերով»:

«Շղթայակապ մարդիկը, ուրեմն, կտեսնեն քարայրի խորքի պատին վրա այդ բոլորին շուքերը միայն, կարծելով, որ այդ է իրականությունը: Այդ դատապարտյալները, ուրեմն, երբեք պիտի չկրնան հասկնալ, որ իրականությունը այլ բան է, քան իրենց տեսած շուքերը»:

«Երևակայե այժմ,—կը շարունակե Պլատոն,—որ կազատենք այդ մարդիկը շղթաներեն և տանջանքներեն: Քակենք անոնց կապանքները, ամեն մեկունը, ստիպենք իրենցմե մեկը, որ վեր ելլե իր տեղեն, իր գոտիը ետև դարձնե, շարժի ու դիտե լույսը ճակատեն...: Լույսի ճառագայթումին պատճառավ ան պիտի չկրնա տեսնել այն իրերը, որոնց շուքերը տեսած էր մինչև քիչ մը առաջ... Իսկ եթե մեկը իրեն ըսե, թե հիմա է, որ իրական իրերուն առջևը կանգնած է և թե ցարդ ինքը ուրվականներ միայն տեսած էր, ի՞նչ պիտի խորհի ան: Չե՞ս կարծեր, որ ան ապշած պիտի մնա ու պիտի մտածե, թե առաջվան տեսածները ավելի իրական են, քան այժմ տեսածները: Եվ եթե մեկը զինքը ստիպե, որ նայի ուղղակի կրակին, արդյոք պիտի չցավի՞ն իր աչքերը, աչքերը պիտի չդարձնե՞ կրկին դեպի ետև, դեպի շուքերը, զորս կրնա դիտել: Ու եթե ան բռնի կերպով առաջնորդվի դեպի լույսը դժվար ելևեջի ապառաժոտ ճամբուն վրայեն, մինչև որ հասնի արևի լույսին, արդյոք ան պիտի չգանգատի՞ ու չտանջվի՞ չափեն ավելի շատ: Եվ լույսին հասնելով՝ արդոք արևին փայլեն կուրացած իր աչքերը պիտի կարենա՞ն տեսնել իրապես իրական

իրերը: Կկարծեմ՝ ո՛չ... գոնե սկիզբը: Ան պետք պիտի ունենա նախ վարժեցնելու իր աչքերը, որ դեպի վեր նային»:

«Տե՛ս, սիրելի Գլաուկոն, այս է նաև մեր մարդկային վիճակին պատկերը: Այս աշխարհը, որ կերևի մեր աչքերուն, նման է քարայրի բնակարանին, իսկ շղթայակապին բարձրացումը դեպի վեր ու հիացումը բարձունքին վրա գտնվող իրական իրերուն՝ մեր հոգիին ճամփան է դեպի բանական (intelligible) աշխարհի մը շրջանակները»:

Կ. Պ.

Բուխարեստ, «Հերկ», 1938, հունվար

ՄԱՐՔՍԻՍՏԸ

Հոս հոն, կյանքի մեջ հաճախ կը հանդիպիս մարքսիստին:

Մարքսիստը անպայման համայնավար մը չէ, կրնա պատկանիլ այս կամ այն կուսակցության և կամ ոչ մեկուն: Միշտ սակայն խորունկ մտածողի հովեր ունի. դեմքին վրա պարտվածի հեգնող ժպիտ մը և մտքին մեջ գաղափար մը: Գաղափար մը, որ ի, են համար աշխարհը և կյանքը հասկնա ու ծառայող բանաձին է: Այդ գաղափարը կը կայանա այն համոզումին մեջ, որ մարդկային կյանքին մեջ ամեն երևույթ, ամեն դեպք իր խորունկ պատճառները ունի, պատճառներ, որոնք **զուտ տնտեսական** են:

Ըստ մարքսիստին, պետություններու, ժողովուրդներու և ընդհանրապես մարդկային կյանքը վարողը տնտեսական գործոններն են: Մնացածը, այսինքն ոչ-տնտեսական գործոնները՝ ինչպես են կրոնականը, բարոյականը, քաղաքականը, գեղեցիկը, գիտականը՝ պարզ, մակերեսային արտահայտություններն են, դրսևորումներն են տնտեսականին:

Տնտեսականը, անհատին ու դասակարգին տնտեսական շահը, ահա գաղտնիքը կյանքին ու աշխարհին, որով մեր մարքսիստը կը կարծե ի վիճակի դարձած ըլլալ «կյանքի ձայնը լսելու և ազգային ու համամարդկային երևույթներու ծալքերը տեսնելու»:

Ողբերգակա՞ն միամտություն:

* * *

Այս իմաստով, այսօր մարքսիստ ըլլալ կը նշանակե Մարքսը հասկցած չըլլալ, կը նշանակե անտեղյակ ըլլալ Մարքսի տեսության աղբյուրներուն և մանավանդ արդի գիտություններու արդյունքներուն:

Կարլ Մարքս, անցյալ դարուն մեծագույն մտածողներեն մին, բացի զուտ տնտեսական տեսություններեն, որոնցմով ան դարձած է ու պիտի մնա անփոխարինելի աղբյուր մը բոլոր տնտեսագետներու համար, ուզած է ըլլալ նաև նոր կյանքի մը մարգարեն: Ան խոր կերպով ուսումնասիրած է մանավանդ Անգլիո դրամատիրական պատմաշրջանը և այդ դրամատիրական աշխարհի մեջ

տեսած ու հաստատած երևույթներեն եզրակացուցած օրենքները ընդհանրացուցած է բոլոր ժողովուրդներու, բոլոր պատմաշրջաններու նկատմամբ ու հասած այն ընդհանուր և բացարձակ եզրակացության, որ տնտեսական շահը կյանքի այն միակ հիմնական գործոնն է, որ կը վարեն պետությունները ու մարդկային կյանքը իր բոլոր երեսներով:

Մյուս կողմեն, Մարքս բազմակողմանի հմտություն ունեցող գիտուն մը ըլլալով — ինչպես ամեն մեծ համադրող միտք, իր մտածումին մեջ ամփոփված ու համադրած է իր ժամանակվան գիտություններու արդյունքները՝ հասնելով մտային հսկա կառուցման մը, կյանքի նոր համադրության մը:

Այդ նոր կյանքին մարգարեական տեսությունը ծանոթ է մեզ պատմական նյութապաշտության անվան տակ, իսկ մարգարեացված կառուցումը այդ նոր կյանքին՝ գիտական ընկերվարության կամ համայնավար կառուցումն է մարդկային ընկերության:

Մարքսը, ուրեմն, մեկնելով դրամատիրական կարգերու իր ուսումնասիրությունները և մյուս կողմեն հիմնվելով անցյալ դարու գիտությանց եզրակացությանց վրա, կառուցած է նոր, վերացական աշխարհ մը: Այդ աշխարհը հսկա մեքենայի մը կը նմանի, որ շարժման մեջ դրված է զուտ տնտեսական օրենքներու ուժով. աշխարհ մը որուն մեջ մարդիկ հավասար են իրարու, չկան դասակարգեր, չկան ցեղային ազգային կամ այլ հակամարտություններ ու անվերածելի (irréductible) տարանմանություններ, ուր մարդիկ վերածված տնտեսական էակներու (homo oeconomicus), կապրին ու կը գործեն որպես մասնիկները հընկային:

Պետք է խոստովանիլ թե որևէ մտածող ու համադրող մեծ միտք անցյալ դարու կեսին, եթե Մարքսի մտահոգություններեն մեկնելով, նույն մթնոլորտի մեջ, նույն ուսումնասիրությունները կատարեր, պիտի հասնեի հավանաբար նույն կամ նման եզրակացություններու: Եվ արդեն Մարքսը միակ մարգարեն չէ: Մարդկային նոր ընկերության մը առաքյալներու շարքը երկար է և՛ Մարքսեն առաջ և անկե վերջ: Մարքսը, սակայն, ամենեն մեծն է իր գործով ու իր ազդեցություններով ապագային վրա: Իսկ տնտեսագիտության տեսակետեն, ինչպես վերն ալ շեշտեցինք, անշուշտ որ Մարքսը պատմության մեջ պիտի մնա որպես հսկա մը:

Մեր այս հոդվածի մտածումներու շարքին մեջ հետաքրքրողը տնտեսագետ Մարքսը չէ, այլ մարգարե Մարքսը, որուն կը հետևի մեր օրերու մարքսիստը:

Այդ մարգարեությունը, այսօր ալ կարելի՞ է հիմնավորված նկատել: Ա՛յս է հարցը: Ահա այս խնդրին վրա պահ մը կանգ առնենք ու քննենք զայն իր շատ ընդհանուր գծերուն մեջ:

Հիրավի, դրությունը այսօր հիմնովին տարբեր կը ներկայանա մեզի:

Նախ չկան այն դրամատիրական աշխարհը և կյանքը, որ կային անցյալ դարուն: Մարքսի օրենքները ու եզրակացությունները ճիշտ էին դրամատիրական ա՛յն աշխարհին մեջ զոր ինք ուսումնասիրած էր: Այսօր ա՛յդ դրամատիրությունը, ա՛յդ քաղքենիությունը կը մեռնին և կուրվագծվին կյանքի նոր պայմաններ, նոր ձևեր, նոր վիճակներ, ուր Մարքսի երևույթները չեն կրկնվիր նույնությամբ, ուր Մարքսի նախատեսությունները չեն իրականանար, ուր Մարքսի օրենքները չեն պատշաճիր: Այսպես կը հաստատեն մեր ժամանակներու տնտեսագետներն ու ընկերաբանները, որոնց շարքին պետք է հիշել տնտեսագետ Վերնըր Զոմպարտը, որ նվիրված է հատկապես մարքսիստական ուսումնասիրությանց:

Մարքսի սխալը հոն է եղած, որ որոշ ընկերության մը որոշ պատմաշրջանի մեջ տեսած երևույթներեն եզրակացուցած օրենքները ընդհանրացնել փորձած է: Ակներև է որ հոս Մարքսը գիտական չէ: Որովհետև գիտության մեջ օրենք մը օրենք մնալու համար անհրաժեշտ է, որ անփոփոխ մնան նույն երևույթները, նույն պայմանները, որ ոչինչ պակսի ու ոչինչ ավելնա անոնց վրա: Մարքսի տեսությունը պարզապես գիտական վարկած մըն էր և ինչպես ամեն գիտական վարկած, արժեք մը կրնար ներկայացնել փորձնական կիրառումե մը հետո միայն: Ու հանցանքը Մարքսինը չէ, որ եվրոպական բուն գիտական ոգիին օտար հոգեբանության տեր ժողովուրդ մը, վարկածը վերածեց դոգմի ու հասավ հոն ուր հասած է այսօր:

Բայց Մարքսը, մանավանդ կյանքը հասկնալու իր կերպին մեջ, բացարձակ ժամանակավրեպ է:

Մարդկային և ընկերային բնությունը հասկնալու տեսակետեն բնական է, որ Մարքսը կրած է ազդեցությունը իր ատենվան գիտության ու յուրացուցած է անոր ոգին ու վերջին եզրակացությունները:

Անցյալ դարուն, մարդկային բնության գիտությունը — կենսաբանություն, ինչպես նաև մարդկային հոգիին գիտությունը — հոգեբանությունը, մարդը կը ներկայացնեին որպես տեսակ մը մեքենա, պարզ նյութական մասնիկներե բաղկացած մոզայիք մըն էր ան ու կը գործեր գրեթե մեքենական օրենքներով: Այդ հոգեբանությունը մարդը և անոր բնությունը լրիվ կերպով հասկցած ըլլալ կը կարծեր ու կը հավակներ նաև հայտարարելու թե մարդը ու անոր կյանքը կարելի է փոխել ըստ մեր ցանկության, համաձայն մեր մեկ վերացական տեսության, այնպես, ինչպես ըստ ցանկության մեքենա մը պիտի նորոգեինք, քանդեինք կամ

ձևափոխեինք, համաձայն ճարտարապետի մը հատակագծին կամ ծրագրին:

Այս մտայնության տեսակետեն խիստ հետաքրքրական է 19րդ դարու մանկավարժությունը, ուր տիրապետած է գերման մեծ մանկավարժ Հերպարտը իր հոչակավոր մեթոդական տեսություններով: Հերպարտ, մանկավարժության պատմության մեջ այն մտածողն է, որ բացարձակ կարևորություն մը ընծայած է մեթոդին, այսինքն ուսուցման առարկաները դասավանդելու կերպին: Ուսուցումը և նաև դաստիարակությունը կախում ունեին ավանդման մեթոդեն գրեթե անկախ տղուն հոգեկանեն, անկախ ուսուցանողի խառնվածքեն, անկախ ընկերային-բարոյական պայմաններեն:

Մտավոր-հոգեկան-բարոյական զարգացումը, ըստ Հերպարտի, տղուն մտքին մեջ մտապատկերներ ստեղծելու ու այդ մտապատկերներու ընկերակցությունները կազմավորելու մեջ կը կայանա: Այսպիսի ըմբռնման մը մեջ, ի մասին տղուն հոգեկանին ու անոր մտքի, զգացումներու և կամքի զարգացման նկատմամբ, անշուշտ որ բացարձակ և ամենազոր տեղ պիտի գրավեր այն մեքենական կերպը, որով դաստիարակը պիտի կազմավորեր մտապատկերներու ընկերակցությունները, այսինքն մեթոդը:

Մանկավարժության մեջ ուրեմն կը տիրեր տեսակ մը ճարտարապետի մտայնություն՝ տղուն հոգեկան աշխարհը «կառուցանելու», հոգեկան «շենքը բարձրացնելու» մասնիկ առ մասնիկ, աղյուս առ աղյուս:

Անցյալ դարը մարդուն և անոր կյանքին մասին ճարտարապետի ըմբռնումը ուներ:

Շահեկան են նաև տասնիններորդ դարու փորձական գիտություններու արդյունքները: Բնագիտությունը (physique), տարրաբանությունը (chimie) իրենց լավատեսության շրջանը կապրեին. այդ գիտությանց մարդիկը վերջնականապես ապացուցած ըլլալ կը կարծեին նյութին տիեզերական արժեքը. ամեն բան նյութ էր և միայն նյութ: Հիմնական և միակ իրականությունը նյութն էր ու մնացած բոլոր մյուս երևույթները անոր զանազան ձևերը, անոր մակերևույթին դրսևորումներն էին. իսկ նյութին վերջին, անտարրալուծելի մասնիկը հյուլեն էր (atome): Նյութը հյուլեներու ընկերակցություն մըն էր, աշխարհն ու տիեզերքը նյութական իրականություն մը: Օրգանական աշխարհն ալ նյութի մասնիկներու սարզ մեքենական ընկերակցություն մը, մարդուն հոգին իսկ նյութին մեկ արտահայտությունը, բացատրված մեքենապաշտ ըմբռնումով մը:

Ինչպես կը տեսնենք, ուրեմն, ժամանակի բնագետները, իրապես գիտական տվյալներու և փորձերու վրա հենված, կը

ներկայացնեին իրոք շատ հստակ ու տրամաբանական տեսություն մը: Կյանքը, աշխարհը և բովանդակ տիեզերքը հսկա կառուցում մըն էր նյութական հյուլեներու:

Բնական է, փիլիսոփաներն ալ պիտի չուշանային օգտագործել գիտության այս արդյունքները: Գիտական այս եզրակացություններու վրա հենված ու ժամանակի գիտական ոգիեն առաջնորդված, անցյալ դարու ընթացքին, մանավանդ Գերմանիո մեջ, ծաղկեցավ պատկառելի շարք մը փիլիսոփաներու, որոնք եկան ու գիտության արդյունքները հիմնավորեցին փիլիսոփայական նյութապաշտ կառուցումներով: Հիրավի անցյալ դարը բազմաթիվ մեծ ու փոքր նյութապաշտ փիլիսոփաներ տված է, մանավանդ Գերմանիո մեջ: Թեև նույն Գերմանիո մեջ նվազ պատկառելի չէ այն փիլիսոփաներու շարքը, որոնք կը գտնվին իդեալիստ գծին վրա:

Վերջապես ընկերային գիտություններն ալ նույն ըմբռնումներն ունեին մարդկային ընկերային բաղադրության մասին, ինչ ըմբռնում որ ունեին կենսաբանը օրգանական կյանքի մասին, հոգեբանը՝ մարդկային հոգիին մասին, բնագետը՝ աշխարհի ու տիեզերքի կազմության մասին: Հոս ալ նույն մեքենապաշտ ըմբռնումը ընկերության, նույն ճարտարապետի մտայնությունը կյանքը փոխելու խնդրին մեջ, սկսած մանավանդ Ժ. Ժ. Ռուսոյեն:

Հետաքրքրության համար հիշենք հոս հայազգի Սբիրու Հարեթին՝ իր ատենին գնահատված մեկ ընկերաբանական գործը՝ «Ընկերային մեքենականությունը», որ ինչպես երնագիրն ալ կը ցուցնե, արդյունքն է 19րդ դարու մտայնության և մթնոլորտին:

Մարդկությունը, ուրեմն, իր գիտություններով, իր փիլիսոփայություններով, իր մտայնությունով կը սպասեր ճարտարապետին, որ մարդկային ընկերությունը գործնականապես վերակառուցանելու ընդհանուր ծրագիրը գծեր: Այդ ճարտարապետները չուշացան երևան գալ: Կարլ Մարքսը անոնցմե մեկն է և ամենեն հեղինակավորը, որ ստանձնեց այդ դերը: Կարլ Մարքսը արդյունքը ն է իր ժամանակի գիտություններուն, փիլիսոփայության ու ոգիին: Ատոր համար ան իր ընկերվարությունը իրավամբ կոչեց գիտական ընկերվարություն: Եվ իրոք, անցյալ դարու լույսին տակ պետք էր գիտական նկատել անոր կառուցումը:

Այսօր, սակայն, մեր դրած խնդրի տեսակետեն, Մարքսը ժամանակավրեպ դարձած է իր «գիտականությունով»: Ով որ քիչ շատ ծանոթ է ժամանակակից գիտությանց արդյունքներուն, հաստատած պիտի ըլլա, որ անոնք հիմնովին կը տարբերին անցյալ դարու արդյունքներէն:

Բնագիտությունը, որ **նյութին** գիտությունն է, նյութին իրականությունը կասկածի տակ դնող ու **ժխտող** եզրակացության հասած է: Նորագույն գիտնականները, հիմնված՝ ավելի գիտական պայմաններու տակ ու խիստ կատարելագործված գործիքներով կատարված փորձերու, հետազոտությանց, նոր գյուտերու և նոր հաստատված երևույթներու վրա տակավ կը հեռանան հյուլեական հին տեսություններեն ու կը գտնեն, որ նյութական հյուլեն վերջին իրականությունը չէ, այլ կազմված է իր կարգին չափազանց բարդ իրականություններէ, որոնք սակայն իրենց տարրալուծված, կազմալուծված վիճակին մեջ, **չունին նյութին հատկությունները.** այսինքն ուրիշ խոսքով, ցարդ նյութական սեպված հյուլեն կազմված է ոչ-նյութե,—նյութական մասսան արդյունքն է շարժուն ուժին (energie cinetique),—այսինքն նյութը՝ շարժման մեջ եղող ուժին վիճակն է:

Այս ուղղությամբ է անա որ կընթանա նորագույն գիտությունը ամեն տեղ ու կը շարունակե իր աշխատանքը՝ ավելի խորը թափանցելու համար՝ այդ ոչ-նյութին, այդ ուժ-իրականություններուն:

Ավելին, տիեզերքը ուսումնասիրող բնագետ-աստղագետները ավելի ու ավելի կը հեռանան այն տեսակետեն, թե նյութը իր ոչ-օրգանական գոյության մեջ կյանք չունեցող, անկենդան իրականություն մը, գոյացություն մըն է:

Ամերիկայի մեծագույն գիտնականներեն աստղագետ Հել, կը գտնե նույնիսկ թե տիեզերքը կենդանի օրգանիզմ մըն է, որ կապրի, որ ցարդ անօրգանական կարծված նյութը կյանք մը ունի, կը հեղաշրջվի, որ օրգանական և անօրգանական բաժանումը, որ սովոր ենք ընելու, շատ հարաբերական իմաստ մը ունի: **Բուն, հիմնական իրականությունը կյանքն է, տիեզերական ուժի մը հավիտենական շարժման երևույթը:**

Նյութը, ուրեմն, այսօրվան գիտության վերջին եզրակացություններու լույսին տակ, ոչ-նյութական ուժերու, նույնիսկ կենդանի իրականություններու արտահայտություններեն մին է:

Գիտունները այս եզրակացությանց սկսած են մոտենալ դեռ նույնիսկ անցյալ դարեն, սկսած Լանկեեն և Սբենսերեն: Իսկ մեր օրերուն բնագիտության մեջ իրական հեղափոխություն մը առաջ բերած են Պերզըլոյի, Մաքս Բլանքի և նորագույն բնագետներ Հայսրնպերկի, Դավիտսնի, Մաքս Ապրահամի գյուտերն ու փորձերը: Բոլոր նոր հետազոտությունները, փորձերը ու կարծիքները կը տանին դեպի ոչ նյութապաշտ մոնիզմ մը:

Որով նյութապաշտությունը այլևս հնարավոր իսկ չէ պաշտպանել: Արդեն գիտցված բան է, որ մեր օրերուն, իրապես նյու-

թապաշտ փիլիսոփա գոյություն չունի ոչ մեկ տեղ, ոչ իսկ Խ. Միության մեջ:

Կենսաբանությունը, հոգեբանությունը ևս, այսօր ճիշտ հակառակ ըմբռնումը ունին մարդուն և անոր հոգիին: Այսօր, հոգեբանության գիրքերու մեջ անցյալ դարու տեսությունները կը հիշվին ցուցնելու համար թե ինչպես **պետք չէ** ըմբռնել մարդկային բնությունը, ցեղերը և անոնց հոգեկան աշխարհի օրենքները: Մանկավարժության մեջ, օրինակ, թեև Հերպարտի Մեթոդական աստիճանները ի զորու կը մնան, սակայն անոնք այսօր բոլորովին տարբեր իմաստ ունին և կը վերաբերին միայն դասավանդության թեքնիք մասին: Նորագույն մանկավարժները (նույնիսկ հերպարտի հաջորդները), առանց բացառության, թե Եվրոպայի, թե Ամերիկայի մեջ, առիթ չեն փախցներ ըսելու համար, որ տղուն հոգին կարելի չէ նկատի չառնել ու անհնար է այդ հոգին փոխել, շտկել, շինել, կառուցանել, վերացական ծրագրի մը համաձայն: Վերացական տեսությունները, գրական-փիլիսոփայական նախասիրությունները տեղի տված են իրականության առաջ, փորձնական հոգեբանության և կենսաբանության արդյունքներուն առաջ:

Նույն բանը կարելի է ըսել ընկերային գիտության մեջ, ուր գիտունները շատոնց հեռացած են հին, մեքենապաշտ, ճարտարապետի ըմբռնումներեն:

Ոչ մեկ նորագույն լուրջ ընկերաբան չի զբաղիր «նոր ընկերության» մը կառուցումով: Անոնք ավելի խորապես ծանոթացած ըլլալով մարդկային բնության ու ընկերային կյանքին ցարդ թաքուն մնացած ծալքերուն, շատ լավ գիտեն թե այդ իրականությունները չեն փոխվիր մտացածին ծրագիրներով, թե իրենց հատուկ օրենքները ունին բարդ և բազմակողմանի (ոչ միայն տընտեսական) ու այդ օրենքներուն հպատակելով միայն կարելի է բան մը դեպի լավը փոխել:

Ոչ մեկ նորագույն ընկերաբան չըմբռներ ընկերությունը այնպես ինչպես կըմբռներ Մարքսը:

Հատկանշական է, որ նույնիսկ «գիտական սոցիալիզմի կառուցման» հայրենիքին մեջ, մեկ հատիկ հեղինակավոր ընկերաբան կամ մտածող չկա, որ այս իմաստով հարազատ ըլլար Մարքսին:

Կը թվի թե Խ. Միության մեջ մարդիկ ավելի սուր կերպով, ավելի ողբերգական կերպով հասկցած են Մարքսի նյութապաշտության, տնտեսապաշտության խորունկ պատրանքը: Միայն ստախանովյան երևույթը բավական է հասկնալու համար, որ նույնիսկ հոդ, մարդիկ փորձեր կընեն «ստամոքսը ամեն բան է»ի սկզբունքը մեղմելու և հոգիի ճամփաներուն հետևելու հա-

մար: Ստախանովյան շարժման սկզբնավորության ստեղծված խելահեղ խանդավառությունը ակներև կերպով կը ցուցներ, թե գիտակցորեն հետապնդված տնտեսական նպատակներեն անդին ու անոնցմե վեր, մարդիկ այդ շարժման մեջ իրենց սեփական հոգիի բարոյական ոգևոր փրկության ճանապարհները կը փորձեին փնտրել:

Որովհետև Մարքսը ինչ ալ ըսե, **մարդկային կյանքը ամեն բանե առաջ բարոյական իրականություն մըն է, միշտ և ամեն տեղ:**

Մարքսը և անոր ժառանգորդները, բնական է, իրենց հիմնական պահանջին մեջ իրավացի էին. անոնք կուզեին մարդկային ընկերությունը վերածել ավելի արդար և ավելի բարոյական իրականության մը, ուր չըլլան բռնակալություններ, չըլլան աղաղակող անհավասարություններ, ուր մարդը մարդուն չիշխէ, մարդը մարդը չշահագործե, ուր մարդը ըլլա, վերջապես, ազատ և երջանիկ: Մարքսը կուզեր հին կարգերը քանդել, կառուցանել նորը՝ համաձայն իր մտապատկերին, համաձայն իր մարդկային տրամաբանական օրենքներուն, բանական ճանապարհներով, մեթոդներով: Երկրային իրականությունը կուզեր վերածել դրախտի:

Անդասակարգ հասարակարգը, «համայնավար-սոցիալիստական» կարգերն էին դրախտը: Եվ սակայն դրախտի տեղ մեր աչքերուն առաջ կը տեսնենք այսօրվան Խ. Միությունը: Իր մտածումներուն մեջ, Պասկալ տեղ մը կըսե. «Մարդը ոչ հրեշտակ է ոչ անասուն, և դժբախտությունը հոն է, որ ով որ ուզե հրեշտակ դառնալ, կը դառնա անասուն»: (L'homme n'est ni ange ni bête, et le malheur veut que qui veut faire l'ange fait la bête.): Եւ Մարքս ուզեց դրախտը երկրի վրա քերել ու մարդերը հրեշտակ դարձնել...

Ողբերգական է մարդուն ճակատագիրը: Բայց, ո՞վ գիտե, գուցե հոս ալ՝ մեր իմացական ուժերեն վեր իմաստ մը կա մեզ համար անիմանալի:

Նորագույն ընկերաբանները անկեղծությամբ և գիտնականի համեստությամբ կը խոստովանին մարդուն անզորությունը մեկ անգամեն ընկերությունը փոխելու: Անցյալին մեջ ընկերային խնդիրները «վերլուծած» են բանաստեղծներ ու վիպասաններ, որոնք խեղաթյուրած, չափազանցած են երևույթները. ասոնց վրա ավելցած են վերացական մտածողները, փիլիսոփաներ, որոնք եկած են տեսություններով իրականությունը փոխելու:

Նոր ընկերաբանությունը վերջնականապես ձերբազատված է «գրականությունից» և «փիլիսոփայությունից» ու կը փորձե նախ ծանոթանալ ու հասկնալ մարդը, անոր ընկերային բնությունը, հասարակության կյանքի օրենքները և այլն: Քայլ առ քայլ հետե-

վելով իրականության՝ հազիվ կը համարձակի ան ուղղումներ առաջարկելու: Ընկերային գիտությունները դեռ իրենց գործին սկիզբին կը գտնվին և անշուշտ ապագային մեջ պիտի կարենան խորացնել իրենց աշխատանքները, պիտի սկսին թափանցել ընկերային կյանքի բազմակողմանի իրական ծալքերը ու միայն այն ատեն կարելի պիտի ըլլա հիմնական և մնայուն արժեք ունեցող նոր ուղիներ ստեղծել:

Նորագույն դաստիարակը համոզված է, որ կարելի է տղուն հոգեկան իրականության մեջ բան մը փոխել, անոր բնավորությունը, նկարագիրը ուղղել ու անոր զարգացումը բարոյական գծի մը վրա բերել միայն այն պարագային, երբ կը գտնենք և կը հասկընանք այդ տղուն հոգիին ու բնության օրգանական ձգտումները, օրենքները և գիտենք հպատակիլ անոնց ու օգտագործել զանոնք: Այնպես ալ ընկերային իրականության մեջ — որ նույնպես հոգեկան իրականություն մըն է—կարելի չէ ոչինչ ուղղել, առանց այդ ընկերային իրականության օրգանական օրենքներուն հպատակելու, առանց հաշվի առնելու այդ կյանքի կենսաբանական, տնտեսական, և մանավանդ հոգեբարոյական բնական ձգտումները: Այո՛ և տնտեսականը, սակայն ո՛չ միայն տնտեսականը:

Քաղքենի-դրամատեր ընկերության կյանքին մեջ գերակշիռ դարձավ տնտեսականը: Այդ մթնոլորտին մեջ ստեղծվեցավ մարքսիզմը, որ գերագնահատեց տնտեսականը, ու ամեն բան նպատակը դարձուց տնտեսական շահին: Իրականացավ պահ մը «omnia pecuniae obediunt»ը*:

Կրկնենք անգամ մը ևս, որ այդ բացատրելի էր 19-րդ դարուն համար:

Այսօր, սակայն, մնալ այդ մտայնության մեջ, առնվազն միամտություն և հետամնացություն է:

Տնտեսականի բացարձակ գերակշռության գաղափարը, որ պահ մը գրաված էր գրեթե ամբողջ քաղաքակիրթ ժողովուրդները, ստեղծեց ուժեղ հակազդեցություններ, ըլլա կրոնական, ըլլա գեղարվեստական, ըլլա քաղաքական, ըլլա մանավանդ բարոյական տեսակետներեն: Որովհետև այս երևույթները ևս մարդուն օրգանական բնության մաս կազմող բաղկացուցիչ տարրերեն են, իրագործիչ հավիտենական գործոններն են մարդուն կյանքին ու հոգիին: Ահա այդ գործոններու խառվքն է, որ կապրինք մենք այսօրվան մարդերս (մանավանդ արևմուտքի մեջ), ու անոնց ըմբոստությունն է, որ տակավ կը կազմակերպեն քաղաքակիրթ ժողովուրդները:

Այս գործոններու հակազդեցություններն ստեղծված հակամարտություններն են, որ կապրի քաղաքակիրթ մարդկության խիղճն

---

* Ամէն բան կը հպատակի դրամին:

ու գիտակցությունը: Մարդկային ընկերությանց կյանքը պիտի խաղաղի այն ատեն, երբ հավասարակշռություն մը —գեթ հարաբերական — վերահաստատուի՝ տնտեսականի, քաղաքականի, բարոյականի, կրոնականի և գեղարվեստականի միջև: Որովհետև ամեն պատմաշրջան, մանավանդ ամեն մշակութային պատմաշրջան, մարդկային անհատական ու ընկերային բնության օրգանական գործոններու հավասարակշռության արդյունքն է. հավասարակշռություն մը, ուր գործոններեն մեկը կրնա համեմատաբար գերակշիռ ըլլալ, սակայն երբեք չի կրնար անոնցմե մեկը բացարձակ գերակշռող դառնալ, որովհետև այդ պարագային կյանքը կայլասեռի:

Անցյալ դարու մեջ, տնտեսականը գերակշիռ դեր մը ունեցավ: Ոմանք փորձեցին տալ անոր բացարձակ գերակշռություն ու արմատախիլ ընել մյուս գործոնները, մյուս արժեքները: Այսպեսով սակայն, հավասարակշռությունը խախտվեցավ ու այսօր քաղաքակիրթ մարդկությունը կապրի այդ տագնապը: Ան կը փնտրե նոր հավասարակշռություն մը: Այլևս, սակայն, տնտեսականը չէ որ գերակշիռ դեր պիտի ունենա: Ու լավ է, որ այդպես պիտի ըլլա:

Ահա նորագույն ընկերային գիտություններու ցուցմունքները իրենց ընդհանուր գիծերուն մեջ:

Հետևաբար, եզրափակելով, կրնանք ըսել, որ այն գիտությունները, որ կը ծառայեին Մարքսի տեսությունը հիմնավորելու ու գիտականացնելու, այսօր իրենց եզրակացությունները հիմնովին շրջած ըլլալով կու գան հիմնավորելու ոչ-նյութապաշտական, ոչ-տնտեսապաշտ տեսություններ: Տնտեսականի բացարձակ գերակշռության գաղափարը վերջնականապես արմատախիլ եղած է քաղաքակիրթ մարդկության գիտակցության ու մտածումին մեջեն:

* * *

Ապահովաբար, եթե Մարքսը մեր օրերուն ապրեր, ի տես նոր իրականությանց, նոր երևույթներու և մանավանդ ծանոթանալով գիտությանց նորագույն եզրակացություններուն, ինքը առաջին հակամարքսիստը պիտի դառնար:

Եւ ո՛վ գիտե, ի՞նչ պիտի խորհեր ան ա՛յն մարդու մասին որ **այսօր** մարքսիստ է:

Բայց մանավանդ ի՞նչ պիտի խորհեր, երբ հանդիպեր հայ մարքսիստին...

Կ. ՊԱԼՃՅԱՆ

Բուխարեստ, «Հերկ», 1938, մարտ

ՄՏԵՐԻՄ ՆԱՄԱԿՆԵՐ ՀԱՅ ԾՆՈՂՔՆԵՐՈՒՆ

Այս տողերը ստորագրողը, հայ ծնողք, օգտակար ըլլալ կուզե քեզի՝ տասնհինգ օրը անգամ մը, այս թերթի էջերեն, հետդ խոսքի նստելով: Մեր խոսքին նյութը պիտի ըլլա քու զավակդ և անոր դաստիարակությունը:

Չեմ գիտեր, ինչքան տրամադիր ես զիս լսելու, սակայն պիտի փորձեմ քու ուշադրությունդ կեցնել իմ ըսելիքներուս վրա, որովհետև վստահ եմ, թե մայր մը կամ հայր մը չպիտի մերժեն զբաղիլ խնդիրներով, որ կվերաբերին իրենց ամենասիրելի էակին, իրենց զավակին: Նույնիսկ եթե երբեմն ըսածներուս համաձայն չըլլաս և հակառակ կարծիք ունենաս դուն, կխորհիմ, որ կրկին օգտակար պիտի կարենամ ըլլալ քեզի:

Ճշմարիտ և ուղիղ ճամփան կարելի չէ մեկ անգամեն գտնել: Պետք է զայն փնտրել: Իսկ իմ փափագս ալ այդ է, սիրելի ծնողք: Կառաջարկեմ քեզի, որ հետդ մեկտեղ, սկսինք փնտրել այն ճամփան, որով պետք է առաջնորդես զավակդ, մատաղ հասակեն իսկ: Ճամփա մը, որ ըլլա ճշմարիտ և ուղիղ, որ քու զավակդ դարձնե կատարյալ մարմնով ու հոգիով, որ ունենաս «բարի զավակ մը», ինչպես կըսե մեր ժողովուրդը: Նորեն կը կրկնեմ, որ այս հոգնությունը պիտի ստանձնես,—ու պետք է ստանձնես,—որովհետև ավելի քան որևէ մեկը, դո՛ւն կսիրես զայն:

Սիրել:

Ահա այն մոգական ուժը, որ մեր մեջ միշտ ներկա է և միշտ վառ պետք է ըլլա մեր սկսելիք գործին ամբողջ տևողությանը: Առանց անոր, պիտի թափառեինք խավարին մեջ և ի զուր պիտի փնտրեինք ճամփանիս:

Չկարծես, սակայն, որ սիրելը դյուրին բան է: Սիրել ըսելով, ոմանք կհասկնան տղուն քմահաճույքները գոհացնել, կամ ֆիզիկական գուրգուրանք, որ հաճախ չափազանցությանց կերթա ու վտանգավոր կդառնա երեխային զգացումներու զարգացման համար:

Ուրիշներ ալ կան, որոնք սիրելը վտանգավոր կգտնեն ու իրենց կամքին կուզեն հպատակեցնել երեխան, բռնի միջոցներով զսպելով անոր մեջ ու խլելով անկե ազատ զգալու, ազատ մտածելու և կամենալու բնական պահանջը ու իրավունքը:

Ահա երկու ծայրահեղություններ:

Առաջինը շփացնել ըսել է, երկրորդը՝ տղուն հոգին վայրենացնել, որոնք երկուքն ալ ի վերջո կտանին նույն տեղը, դեպի տղուն նկարագրին փճացումը: Ծնողք մը, որ իր զավակը էապես կսիրե, պետք չէ, որ այսպես վարվի: Սերը պետք է ըլլա գիտակցական:

Էակ մը սիրել, կնշանակե անոր արժեք մը տալ. կնշանակե անոր հոգիին մեջ գոհարը փնտրել, գտնել ու զայն արժեքավորել: Ամեն երեխայի հոգիին ծալքերուն մեջ լուսավոր անկյուններ կան, թաքնված ուժեր կան, ստեղծագործ մղումներ կան, բարիին սերմը կա, զոր պետք է փնտրել գիտնալ ու գտնել, զոր պետք է պահել գիտնալ ու զարգացնել, զոր պետք է մշակել գիտնալ ու կատարելագործել:

Հա՛յ ծնողք, սիրե՛ զավակդ:

Ու սիրո արդյունքը՝ իսկական հրաշակերտ մը, քու ստեղծագործությունդ պիտի ըլլա:

Այս սիրով, ուրեմն, սկսինք մեր մտերիմ զրույցները:

Բազմաթիվ դաստիարակչական սխալներ կկատարվին հաճախ, որպես հետևանք այն բանին, որ ծնողքները չեն հասկնար իրենց զավակը իր երեխայական պահանջներով ու ապրումներով: Տարեցը միշտ կկարծե, թե երեխան «սլզտիկ մարդ» մըն է, որուն հոգեկան կյանքը աստիճան առ աստիճան հարստացնելով նոր ծանոթություններով ու ապրումներով, ան պիտի դառնա «մեծ մարդ»: Այլ խոսքով, մենք՝ տարեցներս, կկարծենք, թե երեխան ոչ լրիվ մարդ մըն է, որ ժամանակի ընթացքին պիտի դառնա լրիվ մարդ մը, ամբողջ մարդ մը: Երեխան կնմանեցնենք շենքի մը, որ նոր սկսած է կառուցվիլ, որուն վրա ամեն օր աղյուս մը կավելնա, ու շենքը կսկսի բարձրանալ, մինչև որ ան պատրաստ ըլլա: Այն ատեն այլևս երեխան կատարյալ մարդ մը կը-նկատենք: Ու հետևաբար կխորհինք, թե դաստիարակել՝ կնշանակե տղուն հոգիին մեջ աղյուս մը ավելցնել, դուրսեն ներս միջամտություններ ընել: Այս «ճարտարապետի» մտայնությամբ, տղուն հոգին ձևավորել ու շտկել ուզող ծնողք մը գործի կանցնի ու կաշխատի երկու ուղղությամբ:

Ա.) Հետևողական կերպով ու հաճախ տղուն համար տանջանք պատճառող միջոցներով, կզսպե, կմեռցնե երեխային համար բնական եղող արտահայտություններ ու ելույթներ, զոր կնկատե ուժի ավելորդ և աննպատակ վատնում: Տղուն կարգիլվի աղմուկ հանել, կարգիլվի վազել, խաղալ, առարկաներ խառնել և այլն:

Բ) Արգելքներու դրության հետ զուգահեռաբար, ծնողքը կաշխատի երկրորդ ուղղությամբ մըն ալ՝ այս անգամ ծանոթու-

թյուններ, գիտելիքներ ու մտքեր ներմուծելով հարկադրաբար տղուն հոգիին և ուղեղին մեջ: (Այս ուղղությունը, դժբախտաբար, պահված է դեռ այսօր ալ շատ մը երկիրներու դպրոցական ծրագիրներուն մեջ):

Այս պարագային ծնողքը (կամ դպրոցը) ինքզինքին հարց չի տար, թե արդյոք այն ծանոթություններն ու մտքերը, զոր ինք կուզե տղուն ուղեղին մեջ «տեղավորել» որպես երեխային հոգին լեցնող «աղյուս» մը, կնամապատասխանե՞ն այդ ուղեղին զարգացման աստիճանին ու հոգեկան ներքին պահանջներուն: Կարծես թե տղուն հոգին ճերմակ տախտակ մը ըլլար, որուն վրա կարելի է գրել ինչ որ կուզես, կամ կակուղ մոմ մը, որուն կարելի է տալ որևէ ձև՝ ըստ դաստիարակող անձին նախասիրության:

Այս սխալ ուղղությունները, այսինքն՝ տղուն բնական ձգտումներուն առաջ արգելքներ դնելու և մյուս կողմեն անոր հոգիին մեջ մեքենական կերպով ինչ-ինչ «գիտելիքներ» հարկադրաբար մուծելու մեթոդները կբխին այն սխալ հասկացողութենեն, զոր հիշեցինք մեր խոսքերուն սկիզբը: Այսինքն՝ կբխին անկե, որ մեր ծնողքները կկարծեն, թե երեխան «պզտիկ» և «անկատար» մարդ մըն է, և երեխային հոգեկան ապրումները կդատեն իրենց տարեցի հոգեկան ապրումներուն չափով: Այս տեսակ «դաստիարակության» մը արդյունքը կըլլա այն, որ ծնողքներուն (դպրոցներուն) կատարած աշխատանքները ու ճիգերը կմնան անզոր: Արտաքնապես կթվի, թե տղան հնազանդ է ու հոգեպես հասունցած, հարստացած, սակայն այդ բոլորը իրապես կմնան մակերեսին վրա, և հոգին՝ անոնց անհաղորդ:

Երեխային հոգիին խորքին մեջ, խեղդված վիճակի մեջ, կանին բնական ձգտումները, ու որոշ տարիքի մը, երբ ծնողքը կըկարծե, թե արդեն իր «շինությունը» ավարտելու մոտ է, հանկարծ սարսափով կտեսնե, թե ինչպես ժամանակի ընթացքին այնքան խնամքով տղուն հոգիին մեջ իր մուծած ու շարած «աղյուսները» կը փլին, տարիներու աշխատանքը ոչինչի կամ,—ինչ որ ավելի գեշ է,—ավերակի մը վերածելով: Իսկ տղան իրապես չդաստիարակված մեծցած կըլլա, որուն հետևանքները,—որ պարագայե պարագա կտարբերին,—հաճախ ծանր կրնան ըլլալ անոր ապագա կյանքին համար: Որովհետև նման դաստիարակչական սխալները այլևս կարելի չէ ուղղել:

Ահա ասոր համար մեր ժամանակի մանկավարժները առիթը չեն փախցներ ըսելու և շեշտելու, թե երեխան պետք չէ դատել տարեց մարդու ակնոցովը և անոր հոգեկան ապրումներուն պետք չէ մոտենալ տարեց մարդու հոգեկան օրենքներովը: Երեխան «փոքր» մարդ մը չէ, տարեց մարդուն «մանրանկարը» չէ, ան ալ իր տեսակին մեջ **կատարյալ էակ մըն է, ինքնու-**

ոյն բնություն մըն է, իր հատուկ օրենքներովը, զոր պետք է ճանչնալ, անոր հոգիին արտահայտությունները հասկընալու համար: Երեխան պակաս մարդ չէ, քան տարեցը, այլ **տարբեր մարդ մըն է,** որ ներքին օրգանական զարգացման մը ընթացքով,—մարմնական, մտային և հոգեկան իմաստով,—պիտի փոխվի տարեց մարդու:

Տարեց դառնալու մղումները երեխային մեջ բնական կերպով կան արդեն: Ծնողք-դաստիարակին միջամտությունը պիտի ըլլա ոչ թե միջամուխ ըլլալ այդ բնական զարգացման գործողության, այլ պարզապես **արտաքին լավագույն պայմաններ ստեղծել ու բարոյական գծի մը վրա բերել տղուն ներքին բնական ձգտումները,** առանց հարկադրանքի մը զգացումը տալու անոր:

Մեծ ճշմարտություն մը կա այն խոսքին մեջ, զոր ըսած է մանկավարժ մը, թե՝ «Լավագույն դաստիարակը ան է, որ չուզեր դաստիարակել»:

Կ. Պ.

Բուխարեստ, «Արագ», 1937, նոյեմբեր

1942-Ի Ն

Նո՛ր տարի, Նո՛ր տարի:

Նոր տարի կըսենք քեզի, թեև դուն ոչ նոր ես և ոչ ալ հին՝ ժամանակին մեջ անսկիզբ և անվերջ:

Նոր տարի կըսենք քեզի, որովհետև կուզենք մենք նոր ըլլալ:

Մեր մարդկային անկատարության զգացումին, մեր մարդկային ստրկության, մեր մարդկային մեղքերուն ու տիղմին պահանջն ես դուն:

Որովհետև թեև անկատար՝ ունինք սակայն կատարելության գիտակցությունը, թեև ստրուկ՝ ունինք սակայն ազատության տենչը, թեև տիղմի մեջ՝ ունինք սակայն սրբության և բարիի զգացումը:

Մարդեր ենք, որ կտառապինք ու մեր հոգեկան փրկության ի խնդիր կկառչինք քեզի, ո՞վ մշտադալար Նոր տարի:

Ուն երբեք պիտի չմեռնիս, դուն նորեն և նորեն պիտի վերածնի՛ս ու վերանորոգվիս, որովհետև մեր հոգիին մեջ երբե՛ք պիտի չմարի ավելի լավին հավատքը:

Քանի՞ քանի քեզի նման Նոր տարիներ մեզ հուսախաբ ըրին. և սակայն մենք չհուսահատեցանք ու երբե՛ք պիտի չհուսահատինք:

Մեր անդարմանելի լավատեսության և անմար հավատքին մեջ քեզ ենք ստեղծած, Նո՛ր տարի:

Մեր մարդկային **պայմանն ես դուն:**

Նո՛ր տարի, Նո՛ր տարի, որ անա կուգաս, տե՛ս, ինչքա՞ն լույս կա մեր աչքերուն մեջ, ինչքա՞ն կանաչ հույսեր կրկին կը ծլին մեր սրտերուն վրա, ինչքա՞ն նոր կյանքի ուժեր կը հոսին մեր երակներուն մեջ:

Մեր անհատական գիտակցութենեն անդին գտնվող անտեսանելի ուժերով, մենք կհավատանք բարիին ու գեղեցիկին հաղթանակին, կը հավատանք արդարության ու ազատության գալուստին:

Մեր մեջ, մեր անցողական էության մեջ, մեր ցեղն ու մեր պատմությունն է, որ կը վերածնի:

Որովհետև մարդ ենք: Ավելին՝ որովհետև հայ ենք:

Նո՛ր տարի, տո՛ւր մեզի ուժ, կորով ու ներշնչում, որ դառնանք զինվորները այդ մեծ գաղափարներուն, այդ մեծ զգացումներուն:

Այդ պայքարը մարդկայնության ստուգությունն է, կյանքի վեհ խորհուրդն է, մեր կյանքն իսկ է:

Նո՛ր տարի, Նո՛ր տարի, գիտցի՛ր, որ հայը կրկին կհավատա, կրկին կապրի:

Կ. ՊԱԼՃՅԱՆ

Բուխարեստ, «Հայ մամուլ», 1942, հունվար 1

ՆՇՄԱՐՆԵՐ ԷՋՄԻԱԾՆԻ ՄԱՍԻՆ

Կարդացինք Էջմիածնի Ամենայն Հայոց Կաթողիկոսին վերջին կոնդակը և մեր Եկեղեցվո բարեկարգության մասին զեկույցը:

Ամենայն Հայոց Կաթողիկոսը իր դարերու բարձունքին վրայեն կխոսի...

«Շնորհ, սէր և խաղաղութիւն, աստուածային այցելութիւն և երկնային ողորմութիւն հանգիցէ ի վերայ ձեր, ի վերայ ազգիս Հայոց և Հայաստան Աշխարհիս»:

Մեսրոպն է, որ կխոսի...

Կզգաս, թե ինչպես անոր խոսքը կհասնի մինչև անծանոթ, անթափանցելի և խորհրդավոր խորերը հոգիիդ...

Հոն կհիշվի Աշտիշատի հայ Եկեղեցվո ժողովը 365-ին, Շահապիվանի ժողովը 447-ին, Պարտավի ժողովը 768-ին, Երուսաղեմի ժողովը 1651-ին և այլն:

Հոգիդ կարծես կմեծնա, կիտրանա, կերկարի ժամանակին մեջ, դեպի մեր ժողովուրդին այդ 1651-ը, 768-ը, 447-ը, 365-ը, ու պահ մը մեջդ կզգաս վերակենդանացած ամբողջ անցյալը, ամբողջ հայ ժողովուրդը...

Կասկած չկա, թե մեր Եկեղեցին միակ հաստատությունն է, որ ամենաամբողջական ձևով Հայ Ազգին հազարամյա միավորությունը կներկայացնե որպես կենդանի վեմ:

Հայ Եկեղեցվո բարեկարգության մասին կարծիք հայտնելու որևէ հեղինակություն չունինք բնականաբար:

Սակայն Էջմիածնի զեկույցը կարդալով՝ հանդիպեցանք հոն քանի մը մտքերու, զորս ընդգծել կուզենք, նկատելով զանոնք շատ շահեկան և հատկանշական այսօրվա համար:

Ահա այդ խոսքերը. «Նպատակին ծառայելու համար՝ նոր հոգևորականությունը զինված պիտի լինի նորագույն գիտությամբ, ունենա փիլիսոփայական և քրիստոնեական լայն աշխարհայացք:

Նա հիմնականորեն ծանոթ պիտի լինի ներկա բնական գիտությունների, իմաստասիրության և սոցիալական գիտություններին եզրակացություններին, ուսումնասիրած պիտի լինի քրիստոնեական կրոնի հիմնական սկզբունքները:

Նոր հոգևորականությունը կարողություն պիտի ունենա ըմբռնելու իր ժամանակաշրջանի ոգին և ողջությունը, պիտի հաս-

կանա, թե ո՞ւր է գնում ընդհանուր շարժումը և իրեն հանձնված նավի ղեկը այնպես ուղղի, որ նավը խաղալիք չդառնա ժամանակի տարբեր հոսանքներին»:

Հայրապետական այս պատգամ-կարգախոսը մեզ՝ ռումանահայության համար երկու նշանակելի կետ ունի:

Ցավ ի սիրտ պետք է խոստովանինք, որ ռումանահայ համայնքի հոգևորական դասը, դիտված իր ամբողջության մեջ, «հեռու է բազմակողմանիորեն կրթված, ժամանակի և անտիկ դարերի հոգևոր հարստությունները իր մտքի մեջ ամբարած, այդ ամենի հիման վրա տիպար-հոգևորական դարձած լինելու այն երազելի կերպար-իդեալից», զոր կմատնանշե Ամենայն Հայոց Հայրապետը: Այս գետնին վրա ռումինահայ մեր հոգևորականության «անելիքները» դեռ շատ են և այդ «պակասությունքը» լրացնելու ձևը միակն է. աշխատանք գրքի հետ, հոգևոր և աշխարհիկ գրականության հետ, աշխատանք գիտության հետ:

Մտավոր այսպիսի զորավոր պաշար ունեցող հոգևորականն է միայն, որ ճշտապես կկարողանա կողմնորոշվիլ «իր ժամանակին տիրող իրադրությանց պայմաններում», կկարողանա անսխալ կերպով առաջնորդել իրեն վստահված բանավոր հոտը, որպեսզի այն «խաղալիք չդառնա ժամանակի տարբեր հոսանքներին» և հաջողությամբ կարողանա հասնիլ երջանկության էջմիածնական նավահանգիստը, ի հեռուկս բոլոր հակառակորդներու:

Կեցցե՜ Էջմիածինը:

Բայց ափսոս որ այս տողերը կվերաբերին միայն կղերական դասին...

Կ. Պ.

Բուխարեստ, «Հերկ», 1938, նոյեմբեր

ՆԵՄԱՐՆԵՐ

Հայրենասիրություն:

Մեր հայրենասիրությունը երազված **զգացում** մըն է միայն: Ցնորքի ու կենդանի որոնումներու խառնուրդ մը:

Անձանոթ, սակայն մտերիմ զգացումներու, անորոշ, սակայն ազնիվ մտածումներու, անկարող, սակայն հարատև ճիգերու հանդիպման վայր մը, ուր կիյուսվի երազը մեր բոլորին...

Մեր հայրենասիրության մեջ Դոն Կիշոտի ողբերգութենեն բան մը կա:

Բայց այս ալ ապրելու ձև մըն է:

Եթե կուզեք, բանաստեղծորեն ապրելու ձև մը:

* * *

Գերմանիա և անոր հետ ամբողջ քաղաքակիրթ աշխարհը կտոնեն մեծ երաժիշտ Վոլֆգանգ Ամադեուս Մոցարտի մահվան հարյուր հիսուն-ամյակը:

Մոցարտ իր այնքան նուրբ, ճկուն, երանգավոր և լավատես երաժշտությամբ մարդկության համար անմահ գանձ մըն է:

Մոցարտի երաժշտության հատկանիշներեն մին այն է, որ մատչելի է ամեն տարիքի մարդոց, նույնիսկ երեխաներուն:

Այս անցնող շաբաթը «Մոցարտի շաբաթ» հռչակված էր նաև Ռումինիո մեջ:

* * *

Մեր նախորդ թիվին մեջ, ի միջի այլոց, դիտել տվեր էինք, թե՝ «քաղաքական կյանքի մեջ բարոյական կամ գաղափարաբանական տվյալներով առաջնորդվիլը, գոնե մեզի համար, անհերելի շռայլություն մըն է» (Տե՛ս ներկա ժողովածուում զետեղված «Փոթորիկ» հոդվածը. **Ս. Ճ. Վ.**):

Վերև հիշված դատումին առաջ վրդովվիլը իսկապես գեղեցիկ զգացում մըն է: Մենք այդ նախադասությունը գրելով, սակայն, չհաստատեցինք, որ այդ դատումը արդար է: Մենք ըսել չուզեցինք, թե այդպես պետք է ըլլար: Մենք ըսինք և կպնդենք

ալ, թե այդպես է՝: Այս է իրականությունը: Դատն և բարբարոս իրականություն: Սակայն իրականություն մը, որ հաստատված է ամբողջ պատմության ընթացքին, իրականություն մը, զոր կհաստատեն բոլոր ճշմարիտ պատմագիրները:

Հետևաբար պետք է գիտակցությունը ունենանք ճշմարիտ իրականության:

Այդ չի նշանակեր, բնականաբար, բարոյական և գաղափարաբանական տվյալներուն, մեր ներքին կյանքին մեջ, իրենց կենտրոնական տեղը չտալ:

Այլ բան է մեր ներքին կյանքը, այլ բան է քաղաքական հարաբերական կյանքը դուրսի աշխարհին հետ:

Առաջինը մեր հոգին ու մեր իդեալներն են, իսկ երկրորդը միջոց է, գործիք է, հաշիվ է:

* * *

Այս մտքերու կապակցությամբ ավելցնենք նաև ուրիշ միտք մը:

Այն է, թե՝ քաղաքական կյանքի մեջ երևույթները, ընդհանրապես, սխալ է բարոյականով չափել:

Ճիշտ այնպես, ինչպես, օրինակ, սխալ է գեղարվեստը դատել բարոյագիտական տվյալներով կամ տնտեսական սկզբունքներով:

Ամեն բանե առաջ, սխալը հոգեբանական է: Որովհետև քաղաքական երևույթը,—իր լայն առումով,—մարդուն **տիրապետելու** բնազդին արտաքին արտահայտությունն է:

Եվ ինչպես բոլոր մարդկային հիմնական բնազդները, ինչպես սեռային բնազդը, տիրապետելու բնազդն ալ կանգ չառներ բարոյական դատումի մը առաջ:

Գուցե պիտի գա օր մը, երբ այս տիրապետելու բնազդը բարոյականին ենթարկվի ու անկե առաջնորդվի: Մենք կհավատանք ատոր: Սակայն մինչև այդ օրը գալը կյանքը տեսնենք այնպես, ինչպես որ է:

* * *

Վերջերս դասախոսության մը ներկա եղա «Դալլեսի» մեջ: Դասախոսն էր հայտնի տնտեսագետ, նախկին նախարար և դեսպան, համալսարանի պրոֆ. Թաշքը: Նյութն էր «Ռումին նորագույն պետության զարգացման աստիճանները»:

Խոսելով 1828, 1848 և 1877-ի շրջաններու մասին, երբ ռումին ժողովուրդը քայլ առ քայլ մոտեցավ իր այսօրվան պետության, վճռական օժանդակությամբը հատկապես Անգլիո և Ֆրան-

սայի, ան ըսաւ հետևյալը. «Հարգելի՛ ունկնդիրներ, չկարծվի, սակայն, որ այդ պետությունները իրենց օժանդակությունը տվին, որովհետև մեզի բարիք ընել կուզեին, կամ թե գաղափարի մը կծառայեին: Ո՛չ: Այլ որովհետև իրենց քաղաքական և տնտեսական շահերը այդ կը պահանջեին»:

Եվ իբրև եզրակացություն ավելցուց. «Երբ փոքր ժողովուրդ մը օժանդակություն մը կապասե մեծ պետութենե մը, ամեն բանե առաջ պետք է այդ պետության ցուցնե այն քաղաքական և տընտեսական շահը, որ ան կրնա ունենալ՝ օգնելով այդ փոքրիկ ժողովուրդին»:

Պրոֆեսորին միտքը կվերաբերի մեզի՝ հայերուս ալ:

Պ.

Բուխարեստ, «Հայ մամուլ», 1941, դեկտեմբեր 7

ՄՏԱԾՈՒՄՆԵՐ

Միայն մարդկային, օրգանական իրականություն մը կրնա իրական մշակույթ մը ստեղծել, իսկ մարդկային ընկերության օրգանական իրականությունները ազգերն են:

1937

Ամեն մշակույթ արդյունք է հասարակության մը կյանքի ուժերու ներքին ուժականության և ներդաշնակության:

1938

Մարդը իր ոգեկան ուժերով դուրս կթռի նյութական աշխարհի պատճառականության շրջանակեն ու իր ազատ կամքով կհետապնդե ու կստեղծե նոր նպատակներ:

1940

Մեծ է արվեստի ուժը: Օ՜, եթե մարդկությանն և պետությանց ղեկավարները դաստիարակված ըլլային արվեստի բարձր հասկացողությամբ, գուցե մեր ճակատագիրն ալ տարբեր ըլլար:

1940

Կրոնական բուն զգացումը իր խորքին մեջ ազգային բնույթ չունի: Բայց իր պատմական կազմավորման, զարգացման և դրսևորման մեջ, այո, տվյալ ժողովուրդի մը հոգեվիճակին հատուկ ուրույն ձևերը ստացած է, այսինքն՝ ժողովուրդին հոգեկան և պատմական զարգացման հատուկ դրոշմը:

1945

Քրիստոսի Եկեղեցին գաղտնիքներ չունի ոչ ոքի համար. անոր բոլոր արտահայտությունները և գաղափարները կրնան բոլորին սեփականությունը ըլլալ: Քրիստոնեությունը ժողովրդական կրոնք մըն է և չընդունիր որևէ խմբակցական, առանձնաշնորհյալ դասակարգային, կաստայական դրություն կամ հոգեբանություն:

1945

Աղոթքները և երաժշտությունը լոկ միջոցներ են բուն հոգևոր ապրումին բարձրանալու համար:

1945

Ձեռքին կատարած գործերուն հետքերը դեմքին վրա կկարդացվին:

1947

Ամեն գերեզմանաքար մահվան դեմ թումբ մըն է:

1947

Մարդը միշտ կորսվող մըն է և միշտ գտնողի մը կկարոտի: Հավիտենական գտնողը և փրկիչը միշտ Հիսուսն է:

1948

Ձեր երեխաներու հոգիներուն մեջ ինչ որ սերմանեք, այն կհնձեք վերջը: Բարոյական նկարագիրը թանկագին մարգարիտ մըն է, որ լուսաշող ադամանդի նման կփայլի ուր որ ալ գտնվի՝ համեստ հյուղակի կամ ապարանքի մեջ. ան կլուսավորե, կկառուցանե, բարիք կտարածե իր շուրջը:

1948

Տիեզերքը ամբողջ ներդաշնակություն է և խաղաղություն: Ամեն մարդկային աններդաշնակ արարք, խռովություն, չարիք՝ խախտումն են տիեզերական ներդաշնակության օրենքին:

1949

Խաղաղությունը պարզապես անշարժություն չէ և ոչ ալ կրավորական կեցվածք, ոչ գերեզմանային խաղաղություն: Հասարակական կյանքի մեջ խաղաղությունը կենդանի ուժերու, ապրող ու գործող ուժերու ներդաշնակ գոյավիճակն է՝ արդարության պայմաններու մեջ, բարոյական օրենքի ներքո:

1949

Մարդը զԱստված փնտրող էակ մըն է:
Կա՞ Աստված...
Եթե զայն կփնտրենք՝ այդ ստուգություն է:

1950

Եթե մերժենք Աստուծո առջև խոնարհիլ, ստիպված կըլլանք մարդոց առջև խոնարհելու:

1950

Հույսը պարտվածներու ապաստարանը չէ և ոչ ալ կրավորական հաշտվողական ընկրկում, այլ՝ ներքին հոգեկան ուժերու կրակը արծարծող և նույնիսկ փոթորկող երկնաշնորհ զգացում:

1951

ԶԱստված փնտռելու համբուն վրա հայ ժողովուրդը կոթողած է Սուրբ Էջմիածինը իբրև գերագույն ստուգությունը իր հավատքին և իր հոգվո փրկության:

1951

Ամեն ծնունդ մի հրաշք է: Բոլոր մայրերը կույս են:

1952

Ամեն սուրբի մարտիրոսություն Քրիստոսի անմահությունը կապացուցանե:

1952

Խաչափայտը ինչպես պատմության ընթացքին հանախ կորսվեցավ, այնպես ալ հանախ աշխարհի վրա կկորսվին արդարությունն ու ազատությունը: Եվ մարդկությունը վերստին կգտնե խաչը, որպեսզի մարդը մարդեն չվախնա, որպեսզի մարդը մարդուն չշահագործե, որպեսզի մարդը մարդուն չստրկացնե, որպեսզի մարդը չխլե իր նմանին ազատությունը:

1952

Բնության օրենքներու համաձայն, սակայն անոնցմե վեր, ծնունդ է առած ու պատմականորեն զարգացած մարդկային իրականությունը, որ կհատկանշվի մանավանդ մարդկային կրոնական, բարոյական ու մշակութային արժեքներով:

1952

Բոլոր սուրբերը, բոլոր հերոսները միամիտ են, քաջ են և բարի:

1952

Կեղծիքի և սուտի մեջ կյանքը կապականի, կայլասերի: Հոգին կխաթարվի. կյանքը կդառնա տխուր և անտանելի լուծ, կշիջի ապրելու հանույքը. լույսը կնվազի: Կենաց ծառը կթառամի, պտուղ չի տար: Բայց ի վերջո, կյանքի թագուն ուժերը կճեղքեն խավարը սուտին ու կեղծիքին, և կծագի արևը ճշմարտության ու արդարության:

1952

Ինչքան ժամանակը անցնի, այնքան ավելի ճշմարտվում են Հ. Քաջազնունու դատողությունները Խորհրդային Հայաստանի վերաբերյալ: Նույնիսկ կարելի է զարմանալ, թե ինչպե՛ս է, որ նա, միայն ինքը, Հայ Հեղափոխական Դաշնակցության ծոցից ծնունդ առած ղեկավար, կարողացել է այնքան հանդգնորեն իրատես քաղաքական մարդ լինել: Եվ գուցե ավելի արդար կլիներ ասել, թե Քաջազնունին է, որ ներկայացնում է իր կուսակցության հեղափոխական հավատամքը և հայրենասիրական խիղճը:

Եթե 1920-ից հետո ապրեին Զավարյանն ու Ռոստոմը, Զորբայն ու Վռամյանը, անտարակույս Քաջազնունու կողքին կլինեին:

1953

Քրիստոնեությունը հաղթանակի կատար մըն է աշխարհի մեջ՝ մարդկային բարոյական կարգի մը հաստատման ճամբուն վրա:

1953

Հայ ժողովուրդը աշխարհում մի մշակութային հուշարձան է: Նրա ապահով պահպանումը պարտքն է ոչ միայն մեր՝ հայերիս, այլև քաղաքակիրթ մարդկության:

1954

Ինչքան ոչ գիտական պիտի ըլլար նյութական աշխարհի երևույթները բացատրել փորձել հոգեկան տվյալներու հիման վրա, նույնքան ոչ գիտական է մարդկային հոգե-բարոյական երևույթները բացատրել փորձել նյութական աշխարհին վերաբերող օրենքներով:

1956

Կենսաբանության մեջ ծանոթ օրենքը ի զորու է նաև մարդկային հոգեկան կյանքի ծնունդի ու զարգացման ընթացքի կապակցությամբ, այսինքն՝ ամեն մի ծնող ու ապագայում ապրող անհատի հոգեկան կյանքի զարգացման ընթացքում նշանակալից չափով կրկնվում է պատմությունը տվյալ անհատի ազգային հավաքականության հոգեկան զարգացման: Ամեն հայի մեջ կրկնվում է հայ ժողովրդի հոգու պատմական զարգացման ընթացքը:

1956

Մարդը գիտակցությունը ունի սխալական և մեղուցյալ լինելու և միաժամանակ ներքին մղումը՝ սխալից, մեղքից ձերբազատվելու, արդարանալու, կատարյալին մոտենալու, կատարելու-

թյան հասնելու երազը, տենչը. ահա մարդկային մակարդակը, որ բնության մեջ նոր մակարդակ է, նոր որակ: Նյութի և մարմնի պայմանավորումի օրենքի տակ լինելով հանդերձ, մարդը ներքին մղումը ունի դրանցից ձերբազատվելու, դրանք հաղթահարելու ճիշտ այնպես, ինչպես նույն մարդը ներքին մղումը ունի արտաքին աշխարհի, բնության ուժերը հաղթահարելու և դրանց տիրապետելու: Եվ գուցե ճշմարիտ կլիներ ասել, թե երկրորդ մղումը հետևանքն է առաջինի:

1957

Խաղաղության իդեալը՝ տիեզերական ներդաշնակության ցոլացումն է մարդու հոգու մեջ:

1957

Քրիստոնյաների համար աթեիստական քարոզչությունը ոչ թե վնասակար, այլ օգտակար և նույնիսկ անհրաժեշտ մի տվյալ է: Բոլոր ժամանակներում կրոնական հավատքը և անհավատությունը միատեղ են աճել ու զարգացել:

1957

Թող ոչ ոք հույս չդնի ինձ վրա անարդար գործերով և ոչ ոք ինձանից չհուսալքվի արդար գործերով:

1957

Կրոնական հավատքը և անհավատությունը մարդկային իմացականության երկու բևեռներն են:

1957

Կրոնական հավատքին կարելի է տիրանալ ամենօրյա մտորումներով, որոնումներով և նույնիսկ տարակուսանքներով: Հավատքը ներքին մշտական այս վիճակների համադրությունն է հարատև շարժման մեջ և ոչ թե կայուն ու կրավորական վիճակ:

1958

Այնպես, ինչպես ճշմարիտ մի գեղանկարիչ չի կարող ներշնչվել ու չի կարող նկարել առանց իր նկարած առարկայի կենդանի ներկայության, այնպես էլ քարոզիչը չի կարող ներշնչվել ու քարոզել առանց ունկնդիր ժողովրդի ներկայության:

1958

Անհավատ դառնալ հանախ կնշանակե՝ սկսել զԱստված փնտրել: Տարակուսանքը երբեմն հրաշքներ կգործե Դամասկո-

սի ճամփաներուն վրա: Եվ ամեն մարդ իր հոգիին մեջ անծանոթ արահետ մը կկրե դեպի Դամասկոսի ճամփան տանող:

1958

Հոգին նյութին երազն է. երազի ընդմեջեն է, որ կտեսնենք նյութական աշխարհը:

1958

Պետք է պեղել Ավետարանը. այդ կնշանակե մարդու հոգին պեղել Ավետարանի լույսով:

1958

Ազգությունները մարդկային հավաքականությունների՝ պատմականորեն զարգացած ամենաբնական ու ամենաստեղծարար գոյության կերպերն են, որոնք բյուրեղանում են տվյալ ազգությունների մշակույթով: Ազգությունները մարդկային հավաքականությունների մշակութաստեղծ միավորներն են:

1958

Մի նմանիք անոնց, որոնք Ավետարանի պատգամները վերածած են ուրիշներուն վաճառելի ապրանքի...

1959

Երանի՜ այն երիտասարդներին, որոնք գիտեն՝ ի՛նչ կարդալ, ե՛րբ կարդալ և ինչքա՛ն կարդալ:

1959

Երբ պատահի օր մը, որ աշխարհի վրա այլևս չգտնվի հայերեն խոսող, այն ատեն գիտցեք, որ հայ ազգը մեռած է:

1959

Բաժանում Սուրբ Էջմիածնից՝ ժխտումն է հայապահպանման առաքելության:

1959

Աստված խոսած է ու կխոսի մարդկանց միջոցով: Նույնիսկ իր Որդին, որպեսզի աշխարհին խոսի, հարկ եղավ, որ մարդանա:

1959

Անհավատները ասում են՝ «Ցո՛ւյց տվեք ձեր Աստվածը, տեսնենք, շոշափենք զայն»: Բայց մենք չենք կարող նրանց ցույց տալ քարաշեն մի կուռք:

1959

Կթվի թե կարելի չէ այսօր ալ բանաստեղծություն հորինել հայկական հարազատ շունչով, առանց մեր աստվածաշունչ գրաբարին, առանց Նարեկացիին, առանց Շնորհալիին:

1960

Աստված այնքան սիրեց մարդկանց, որ աշխարհ իջեցրեց իր Որդուն: Հայ ժողովուրդը այնքան սիրեց Միածին Որդուն, որ հավատաց նրա էջքին ի Հայաստան աշխարհ:

1960

Հայ հոգևորականի կրոնական հավատքը առավելապես կը-դրսևորվի ու կպայծառանա իր հոտին ծառայելու ճանապարհին վրա: Առանց անձնվեր ու անշահախնդիր գործնական ծառայության Եկեղեցվո հովանիին ներքո, անոր կրոնական հավատքը կա՛մ կեղծ է և կա՛մ՝ անգո:

1960

Սուրբ Էջմիածնի հետ անհաղորդ եղող, բայց հայ Եկեղեցին փառաբանողները, ինչքան էլ որ գեղեցիկ խոսեն, կեղծ կհնչի: Սուրբ Էջմիածնին հակադրվողների խոսքն ու գործը անհրաժեշտորեն հայ Եկեղեցու դեմ ուղղված խոսք ու գործ են:

1960

Վերցրե՛ք Արարատը, փուլ կգա Հայաստանը: Վերցրե՛ք Սուրբ Էջմիածինը, փուլ կգա հայ Եկեղեցին: Հին խոսք, ճշմարիտ խոսք, բայց այս խոսքի մեջ կա նաև մի անխորտակելի լավատեսություն և ստուգություն. այն, թե՝ ինչպես անհնար է Արարատը փլցնել, նույնպես և անհնար է Սուրբ Էջմիածինը սասանել իր տեղից, իբրև ոգեղեն Արարատ:

1960

Սուրբ Էջմիածինը է՛, ինչ որ այսօր է, ինչ որ եղած է, ինչ որ պիտի լինի:

1960

Հոգին նման է էլեկտրական լամպի մը, որուն մեջ եթե հոսանք իջնե, լույս կուտա:

1960

Կան ապակրոնական մարդիկ, ինչպես որ կան, օրինակ, ապաերաժշտական կամ ապաքաղաքական մարդիկ. պետք չէ զանոնք մեղադրել:

1961

Ճշմարտապես քրիստոնյա են այն ժողովուրդները, որոնք դարերի փորձով ստեղծել են քրիստոնեական ինքնատիպ մշակույթ և իրենց ծոցից ծնունդ են տվել վավերական արքերի:

1961

Մարդկայինը ամենավավերական ապացույցն է Աստուծո գոյության:

1961

Հայ ժողովուրդը ևս իր տառապած ձեռքերի մեջ կրում է արքայության բանալիները:

1961

Առանց մարդու Աստված չկա, որովհետև առանց Աստուծո մարդ չկա:

1961

Աստված գոյություն ունի մարդկային բարոյական աշխարհի մեջ իբրև գերագույն գրավական և ստուգություն բարոյական արժեքների:

1961

Քարոզիչը նախօրոք պետք է կազմի իր քարոզի ծրագիրը և ճշտի հիմնական մտքերը այնպես, ինչպես նկարիչը նախ կատարում է գործի գծագիրը և ճշտում հիմնական գույները: Եվ ինչպես նկարիչը աշխատանքի ընթացքում, ներշնչանքից թելադրված, գույներին տալիս է բազում երանգներ, այնպես էլ քարոզիչը քարոզելու ընթացքում է, որ ներշնչանքի ճանապարհով իր մտքերը երանգավորում է հուզականության բազում ձևերով, բազում աստիճանավորումներով:

Երանգներն են, որ գույներին տալիս են կենդանություն, ջերմություն, կախարդանք: Բուն ստեղծագործությունը կայանում է երանգավորման արվեստի մեջ, ինչպես նկարչության, այնպես էլ քարոզխոսության մեջ: Այդպես է, որ մտքերն ու խոսքերը կվերածվեն հուզումների:

1962

Իրական աշխարհում մարդը տեսնում է այն, ինչ որ կա, սակայն չի բավարարվում դրանով և իդեալական տեսիլքներով հետապնդում է իրականացած տեսնել այն, ինչ որ պետք է լինի:

1962

Խորամանկությունները նմանվում են մարդու իմացականության կտավի վրա ավելացված կարկատանների, որոնք հետզհետե խաթարում են բուն կտավը, եղծում մարդու ոգեկան-իմացական ճշմարիտ կերպարը:

Հիսուսի շապիկը մի կտորից էր գործված, չուներ ո՛չ կար և ո՛չ էլ կարկատան: Խորամանկություններով մարդիկ կարող են կյանքում ունենալ անցողական հաջողություններ, սակայն տևական մեծ հաջողություններ՝ երբեք:

1962

Ամեն ճշմարիտ մեծ ստեղծագործող իր մեջ զգում է արարչական ուժի ներկայությունը:

1962

Կրոնական հոգեկան երևույթը, մտածում լինելուց, այսինքն՝ իմացական երևույթ լինելուց առաջ, հուզական երևույթ է:

1963

Ես չեմ դատապարտում քաղաքական սխալները 1918—20-ի ժամանակաշրջանի Հայաստանում, սակայն դատապարտելի եմ գտնում նույն սխալների շարունակումը մինչև մեր օրերը:

1964

Ճշմարիտ կրոնական հավատքը՝ կայուն, կրավորական, քարացած հոգեկան վիճակ չէ, այլ՝ հարափոփոխ, մշտապես վերանորոգվող հոգեկան վիճակ: Հավատքը՝ ինքնակերտման հոգեկան պրոցես է:

1964

Աստուծո գաղափարը և նրա գոյության կերպը մարդիկ ըմբռնում են ու բացատրում համաձայն իրենց իմացական զարգացման աստիճանի: Այս իմաստով ճշմարիտ է Զովանի Պապինիի դատողությունը, թե՝ ամեն դար իր ավետարանը ունի:

1965

Արարչին տենչալը առավել ազնվարար է ու կենարար, քան Արարատին հասնելը:

1965

Եթե Արարատը արդի Հայաստանի մեջ լիներ, պիտի կորցներ իր գոյության ազգային առաքելությունը:

1965

Խոսքերը, վերացական գաղափարները կարող են մեզ բաժանել, կենդանի գործերը, սակայն, մեզ կմիացնեն: Առողջ ընկերության մեջ խոսքը պետք է լինի պատկերը գործի: Եթե խոսքը հնարավոր չէ գործի վերածել, ապա լավ է, որ այդ խոսքը չասվի, որպեսզի հնարավոր լինի գործի կատարումը չխանգարել:

1965

Տարակուսանքը մարդկային է, որպես ճանապարհ:
Հավատքը մարդկային է, որպես նպատակ:

1966

Լոկ խոսքի սահմանների մեջ մնացող հարցերը կեղծ հարցեր են: Արտասահմանի հայերը հաճախ բաժանված են իրարից՝ սխալ դրված հարցերով, կեղծ հարցերով: Նրանք նմանվում են միջնադարի ոսկի փնտրող ալքիմիկոսներին:

1966

Մարդկային աշխարհի մեջ կարելի չէ ոչինչ բարի ու գեղեցիկ ստեղծել առանց սիրո, առանց արդարության, առանց ազատության: Քրիստոսի լեռան քարոզը թող մարդկության ապագա սահմանադրության հիմքը դառնա:

1968

Սփյուռքի հայերը, եթե իրավ հայեր են և կամենում են Հայաստանի համար շինարար գործ տեսնել, այդ կարող են անել միայն ներկա մեր հայրենիքը ամեցնելով և զորացնելով, այսինքն՝ ներգաղթելով ու երկրի վերելքին սատարելով: Նաև իրենց հոգեկան կապը ամուր, անբաժան պահելով մայր երկրի, մայր ժողովրդի հետ, գոնե Սուրբ Էջմիածնի հետ: Մնացածը ինքնախաբեություն է և երբեմն նույնիսկ վնասարարություն:

1968

Խաղաղությունը կյանքի ուժերի, ամբողջական և շինարար ուժերի ներդաշնակ գոյավիճակն է՝ արդարության, բարոյական օրենքի լույսի ներքո... Խաղաղության հետ են բոլոր գարունները, աշխարհի բոլոր մայրերը, բոլոր երեխաները:

1968

Հայ Եկեղեցին ու ժողովուրդը դարեր շարունակ պաշտպանեցին իրենց հոգևոր ու ազգային ինքնությունը և անկախությու-

ՆԸ քրիստոնեությամբ՝ ընդդեմ Պարսկաստանի և Քաղկեդոնը մերժելով՝ ընդդեմ Բյուզանդիոնի... Անգիտություն է քաղկեդոնական հարցերը քննարկել ու հասկանալ փորձել միմիայն աստվածաբանական տեսություններով:

1968

Երբ մի հայ հոգևորական խոր հավատով, անկեղծորեն դավանում է միմիայն զուտ կրոնականը և ապրում ու քարոզում է միմիայն Աստուծո խոսքը, հեռու մնալով աշխարհիկից, ազգայինից և ընկերային, քաղաքական հարցերից, մենք իրավունք չունենք նրան մեղադրելու մոլեռանդության մեջ. ընդհակառակը, պետք է գնահատենք ու քաջալերենք նրան: Սակայն, երբ այդ հոգևորականը քննադատական-հարձակողական ոգի ու գործելակերպ է ցուցաբերում այլ հոգևորականների նկատմամբ, որոնց ապրումների առարկան են նաև ազգայինն ու ընկերային-քաղաքականը, այդ դեպքում մենք պետք է մերժենք նրա այդ կեցվածքը ու դատապարտենք նրա անհանդուրժողությունը:

1968

Ամեն անգամ, երբ քրիստոնեական Եկեղեցի մը կկառուցվի, մենք կհիշենք աշխարհը Քրիստոսի Ավետարանով վերակառուցելու մեր առաքելության մասին:

1968

Մեր կրոնական հավատքը և մենք, իբրև Եկեղեցի, այնքան տկար չենք, որ դեմ-հանդիման համայնավար գաղափարախոսության, փորձվենք մեր գոյության իրավունքը դրսևորել անհանդուրժող կամ թշնամական ոգով:

1968

Ապրեցե՛ք և գոյատևեցե՛ք այնպես, ինչպես Աստված է ձեզ ստեղծեր, և այնպես, ինչպես մեր Եկեղեցին ու դարերն են կերտեր ձեզ և ոգեշնչեր: Մենք հոգի կրող և հոգի ստեղծող ազգ ենք: Մեր հոգիի հայելիին մեջ կրոնական հավատքն է, մեր ազգային մշակույթն է, աշխարհի կյանքով ապրելու ու գործելու մեր ազատ կամքն է՝ աստվածակառույց Սուրբ Էջմիածնի օրհնության ներքև: Հայ ըլլալ և հայ ապրիլ. ահա աշխարհի հոգևոր-բարոյական գեղեցկություններեն մին:

1968

Սպասելի է, որ մենք՝ հոգևորականներս, ավելի հավատք ունենանք մեր սուրբ գործի նկատմամբ, ավելի գաղափարական

բովանդակություն դնենք մեր կյանքին և մեր աշխատանքին մեջ, առանց անձնատուր ըլլալու արծաթին, անկարգության, ծուլության և եսակենտրոն հակումներու: Սուրբ սեղաններեն մենք կքարոզենք մեր ժողովուրդին սեր և եղբայրություն, գութ և ներողամտություն ու բարոյական առաքինություններ: Կդատապարտենք արծաթասիրությունը, փառասիրությունը, սուտն ու կեղծիքը, նախանձն ու ատելությունը: Մեր կոչումն է այդ, մեր սեպուհ պարտքը: Եվ մեր խոսքը պետք է ըլլա իրավ արտահայտությունը մեր բովանդակ էության և մեր սեփական կյանքին: Այլապես խոսքը կդառնա մեռյալ, և մենք կրնանք նմանվել «խոսքի վաճառականներու», որոնց մասին արգահատանքով կխոսի Պողոս առաքյալը (Բ. Կորընթ. Բ. 17):

1968

Աստված մեռած չէ և ոչ ալ մարդը՝ մարդուն մեջ: Մենք կհավատանք, թե մարդիկ կոչված են աստվածաճանաչության և անմահության:

1968

Մի՛ վստահիք անոնց, որոնք պատասխանատվութենե հեռու կանգնած, տաքուկ անկյուն մը քաշված, սոփեստ մարգանքներով կզբաղին՝ «բյուզանդական» վեճեր ստեղծելով բարեմիտների շրջանակներուն մեջ:

1969

Կրոնական երևույթը, ինչպես գեղարվեստական երևույթը, կարելի չէ գիտութեամբ ո՛չ հիմնավորել և ո՛չ ալ ժխտել:

1969

Հայ ափյուռքը ինք ևս հայ ժողովուրդ է և կներկայացնե քանակ ու որակ, իբրև մասը հայաստանցի ժողովուրդի մարմնույն այնքան ժամանակ, որ ան կպահե այդ գիտակցությունը:

1969

Հայրենիք ստեղծելը հերոսություն է, հայրենիք շենցնելը՝ առաքինություն:

1971

Անտարակույս է, թե այսօր հայ Եկեղեցին իր ծոցին մեջ ունի բազմաթիվ հավատավոր, առաքինի, նվիրյալ հոգևորականներ, սակայն ոչ բավարար չափով: Փոքր չէ թիվը մեր մեջ նաև հոգևորականներու, որոնց մասին նույն բանը պիտի չկրնանք

ըսել: Մեր հայրապետության այս տասներեք տարիներու ընթացքին հաճախ ապրած ենք ծանր հուսախաբություններ, սկսյալ Մեր Աթոռեն մինչև ամեն կողմ, դեպի արևելք և դեպի արևմուտք...

1972

Աստված պահի մեզ «խելացի» մարդկանցից, որոնք զուրկ են բարոյականի զգացումից:

1972

Երբեմն որոշ աստվածաբաններ, էկումենիկ շարժման զարգացման ճանապարհին, խոչընդոտ կնկատեն ազգայնության գաղափարը եկեղեցական կյանքին մեջ: Նույնիսկ տեսակ մը մեղադրանք կուղղեն այն Եկեղեցիներուն, որոնք իրենք զիրենք ազգային Եկեղեցի կդավանին, ինչպիսին է նաև Հայաստանյայց Առաքելական Եկեղեցին անա հազար և հինգ հարյուր տարիներե ի վեր առնվազն: Նման մեղադրանք բանաձևողները կբացահայտեն սխալ ըմբռնում մը ազգային երևույթի նկատմամբ, ինչպես և մարդկային ընկերությանց պատմական զարգացման նկատմամբ՝ Եկեղեցվո առնչությամբ:

1972

Հստակ կերպով ընդգծենք, որ բնավ պետք չէ շփոթել ազգայինի գաղափարը ազգայնականության մտայնության հետ, որ ազգայինի հիվանդագին, այլասերած մեկ դրսևորումը կհանդիսանա, ինչպես տեսնվեց այդ մեր դարուն, նացիզմի և ռասիզմի մեջ: Ճշմարիտ և բնական ազգայնությունը ոչինչ ունի ընդհանուր ռասիզմի և նացիզմի հետ և նույնքան հեռու է անոնցմե, ինչքան հեռու է, օրինակ, ճշմարիտ գիտության ոգին նույն գիտությունը մարդասպանության ծառայեցնողներեն:

Ազգայինը ժողովուրդի մը՝ բնական, բարոյական և մշակութային լինելու, ապրելու և գործելու կերպն է: Հետևաբար ինչպե՞ս կարելի է այս բոլորեն բաժնել, հեռացնել Եկեղեցին, այսինքն՝ հավատացյալ ժողովուրդը:

1972

Միամիտ և մակերեսային մտայնություն է կարծել, թե Եկեղեցիներու միության հարցը միմիայն դավանաբանական բանաձևերու վերաքննության հարց է: Հազար հինգ հարյուր տարիներ հետո, դավանաբանական բանաձևերու վերաքննարկումը մենք ժամանակավրեպ կնկատենք, խորհելով, որ մեր օրերու մարդիկ նույնիսկ ի վիճակի չեն այն մտապատկերները և ապրումները ունենալու, ինչ որ ունեցեր են հին քրիստոնյաները տասնհինգ և ավելի դարեր առաջ: Այդ բանաձևերը մենք այսօր կրնանք հասկընալ իբրև լոկ գաղափարային իմացումներ, ինչ որ անկենդան

կմախքն են միայն այն կենդանի ապրումներում, փոթորկվող հավատքի հույզերում, մտապատկերներում և տեսիլքներում, որոնք բուն բովանդակությունը կազմած են դավանաբանական բանաձևերում, այն ժամանակներու մարդոց գիտակցության մեջ: Եվ տակավին կուզենք ավելցնել, որ այդ բանաձևումները քննության և վերաքննության առարկա դարձնել մեր օրերու մարդկային իմացական-հոգևոր զարգացման պայմաններու մեջ, մտավորական անխոհեմություն է: Երկյուղ ունինք, թե դավանաբանական հարցեր հրապարակ բերելը, բանաձևերը քննության և վիճաբանության առարկա դարձնելը մեր հավատացյալներու կյանքին մեջ, կրնա տկարացնել առանց այն ալ անոնց տկարացած հավատքը:

1972

Թող չմեղադրվի մեր Եկեղեցին որպես ազգայնական, ո՛չ: Մենք պարզապես կուզենք ապրիլ իբրև ազգություն այնպես, ինչպես մեզ ստեղծեր են Աստված և պատմությունը: Մենք պարզապես կուզենք ապրիլ մեր ուրույն հոգևոր կյանքի փորձառությամբ. մենք պարզապես կուզենք ապրիլ մեր քրիստոնեական ազգային մշակույթի արժեքներով:

1972

Մարդ արարածը վերջնապես կենսագործված իրականություն չէ: Ամեն մարդ է՛ ոչ միայն ինչ որ է այսօր, այլև է ա՛յն, ինչ որ կարող է լինել վաղը՝ լավ կամ վատ:

1972

Իսրայել Օրիի, Ներսես Աշտարակեցիի և Խաչատուր Աբովյանի օրերեն սկսյալ, հայ ժողովուրդի քաղաքական ճակատագրի հիմնական տվյալները ոչ միայն չեն փոփոխված, այլև առավել շեշտված են, մանավանդ 1915-ի եղեռնեն և Ալեքսանդրապոլի դաշնագրի մահաբույր ուրվականեն հետո:

1972

Աստվածաբանական կեղծ հարցերն ու փառասիրություններն են, որ ծնունդ տված են մոլեռանդությանց, մոլորությանց և ոճիրներու, ընդհանուր Եկեղեցվո պատմության ընթացքին:

1972

Դժբախտ է այն մարդը, որի ճակատին ոչինչ չէ գրված և որի վրա ամեն ինչ կարելի է գրել. մի օր մի բան, ուրիշ օր՝ այլ բան:

1973

Իբրև ժողովուրդ մենք պիտի կարողանանք գոյատևել առավելապես մեր ազգային մշակույթի նոր արժեքներով՝ հայրենի հողի վրա։

1974

Հայրենասիրությունը աշխատանք է և հավատք ու լավատեսություն դեպի մեր հայրենիքի ներկան ու նրա ապագան։

1974

Ստի սահմանները նեղ են, անօրինականության օրերը՝ հաշված։ Ինչ որ հրաշալի է մարդկային կյանքում, այն իրողությունն է, որ ի վերջո ճշմարտությունը և արդարությունը կհաղթանակեն ու բոլոր տեսակի շղթաները կփշրվեն։

1974

Մարդն իր ժամանակը կարող է ապրել՝ և՛ կառուցանելով, և՛ քանդելով, և՛ բաշխելով, և՛ հափշտակելով, և՛ սիրելով, և՛ ատելով, և՛ խաղաղությամբ, և՛ պատերազմելով։

1974

Հայաստանը մի երկիր է, ուր կարող են գալ, ովքեր որ կկամենան, և ուր կմնան, ովքեր որ կկարողանան։

1974

Հայ մարդը կարող է ապրել և՛ Վարդանի պես, և՛ Վասակի պես։

1974

Ամեն մարդու մեջ մի գերեզման կա՝ ծանր քարով փակված. այդ քարի ծանրությունը մեր տկարություններն են ու մեր մեղքերը։ Մեզանից ամեն մեկը կարող է այդ քարը թավալեցնել ու փրկել իր հոգին բարի ու շինարար գործերով։

1974

Մարդու հոգին չի գոհանար միայն տնտեսական բարիքներով ու գիտության լույսով։ Ամեն մեկ մարդու ներաշխարհին մեջ խորան մը կա երազանքի, իր կյանքի նյութեղեն պայմանեն վեր բարձրանալու, նյութի կապանքներեն դուրս գալու և ուրիշ ճշմարտություններ որոնելու՝ կյանքի ու մահվան սահմաններու վրա, հավերժության հույսով իր հոգին մխիթարելու ի խնդիր։

1975

Հայ ժողովրդի հոգու աշխարհում կենդանի են մնացել թե՛ Վարդանը և թե՛ Վասակը, մինչև մեր օրերը: Եվ Վարդանը Կարմիր շարունակում է իր պայքարը Վասակի դեմ:

1975

Մեր օրերում ինչքան մոտեն ծանոթանանք հետեփեսոսյան քրիստոսաբանական վեճերում, քաղկեդոնական և հակաքաղկեդոնական ուղղություններու միջև, այնքան ավելի կհամոզվինք, թե ինչքան ողջմիտ և ուղիղ է Օրմանյան պատրիարքի այն պայծառ տեսակետը, թե քրիստոսաբանական հարցը իր ուղղափառ վերջնական լուծումը գտած էր Եփեսոսի ժողովի Կյուրեղյան բանաձևումներով:

Այսօր մեզ կմնա մեր հիացումը հայտնել մեր Եկեղեցվո հայրերու հիշատակին, որոնք տակավին Ե դարուն ըմբռնեցին այս ճշմարտությունը:

Մեր օրերում մտավորական պարկեշտությունը կթելադրե մեզի, որ նման վեճեր այլևս չհարուցվին: Բայց եթե անհրաժեշտ պիտի նկատվի էկումենիկ ոճով ու ոգիով համաձայնության եզր մը գտնել քաղկեդոնական և ոչ քաղկեդոնական քրիստոսաբանական բանաձևումներու միջև, միակ ուղիղ և գործնական ճանապարհն է վերադառնալ Կյուրեղյան բանաձևումներուն, կանգ առնել այնտեղ ու այլևս չվիճիլ: Այլապես, եթե փորձենք հաշտեցման ճամբա բանալ հետեփեսոսյան դարեր տևող վեճերու մեկնաբանությանց և բանաձևումներու լաբիրինթոսի մեջեն, պիտի նշանակեր կեղծ հարցերով զբաղիլ և վեճերը անվերջ շարունակել:

1975

Բոլոր քրիստոնյա Եկեղեցիները մենք կնկատենք մեր հարազատ քույր Եկեղեցիները, բոլորի հանդեպ հարգանք ու գնահատանք ունինք: Բոլոր Եկեղեցիները պետք է մոտենան իրարու, ճանչնան և սիրեն զիրար:

Այո՛, տագնապի մեջ է աշխարհը, և մարդկությունը՝ ցավատանջ որոնումներու մեջ: Բոլորը կտառապին հոգեկան ստուգությանց, հավասարակշռության ծարավեն: Այս իրադրությունը հրավեր մըն է մեզի՝ հոգևորականներուս ուղղյալ, որ բանանք մեր աչքերը փնտռելու և գտնելու համար միջոցները, որոնք պիտի կարողանան հագեցնել ծարավը մեր օրերու մարդուն: Այդ կնշանակե շարունակել մեր քրիստոնեական առաքելությունը նոր կերպով, նոր ոգիով, այնպես, իբրև թե Ավետարանը ավետվեր հատկապես արդի աշխարհին համար: Կխորհինք, թե շատ ճշմարտություն կա Ջովաննի Պապինիի խոսքին մեջ, թե՝ ամեն դար իր ավետարանը ունի:

Եկեղեցիով դիալոգի մեջ գտնվիլ աշխարհի և կյանքի հետ, Եկեղեցիով մնալ արդի աշխարհին մեջ ու անոր հետ, կնշանակե նաև, որ Եկեղեցին դիալոգի մեջ գտնվի այն հասարակության հետ, որ իր հավատացյալներու անմիջական շրջանակը կկազմե: Մեր պարագային կնշանակե հաղորդակցության մեջ գտնվիլ հայ ժողովուրդին հետ, անոր ներաշխարհին հետ, անոր հոգևոր ապրումներուն, իղձերուն և երազանքներուն հետ: Մեզի համար արդի աշխարհը նախ և առաջ մեր արդի հավատացյալ ժողովուրդն է: Աշխարհին ու մարդկության հետ մենք կառնչվինք մեր փոքր ածուի միջոցավ: Մեր Եկեղեցին, հետևաբար, դիալոգի մեջ պիտի ըլլա նախ իր ժողովուրդին հետ ու այդ ճամբով նաև մարդկության հետ:

Անհեթեթ պիտի ըլլար մեր մեջ խոսիլ աշխարհի հետ դիալոգի մասին և անտեսել մեր սեփական ժողովուրդը, որուն ծոցին մեջ կոչված ենք գործելու: Մեզի հանձնված հոտը, հայ ժողովուրդը՝ այդ մեր աշխարհն է:

Հայ Եկեղեցին թե՛ իր կրոնական պատմական առաքելությամբ և թե՛ արդի աշխարհի հետ դիալոգի մեջ գտնվելու անհրաժեշտությամբ, պետք է առավել սիրով ու վճռականությամբ նվիրվի իր սեփական ժողովուրդին և անոր հոգևոր կյանքի շինության գործին: Նվիրվիլ և ծառայել հայ ժողովուրդի հոգևոր կյանքի շինության գործին, այդ կթելադրե մեզի նաև պահպանել հայ Եկեղեցին իր հայկական ազգային նկարագրով: Մեր համոզումն է, թե աշխարհի հետ դիալոգի մեջ գտնվելու ձևերեն ու պայմաններեն մեկը է դավանիլ ազգություններու գոյության իրողությունը որպես օրինաչափ, բնական իրողություն: Մարդկային հասարակական կյանքի գոյության և կեցության պատմականորեն ամենաբնորոշ ձևը ազգայինն է:

1980

Հայոց պատմությունը համաշխարհային իմաստով արժեք կներկայացնե իբրև պատմությունը ժողովուրդի մը, որ հանուն քրիստոնեական հավատքին և հանուն ազատության երկու հազար տարիներե ի վեր կմարտնչի: Եթե քրիստոնեական հավատքի պահպանումը և հանուն ազատության պայքարը դատարկ խոսքեր չեն և իսկապես համամարդկային արժեք կներկայացնեն, այն ժամանակ հայոց պատմությունը իր պատվավոր տեղը ունի համաշխարհային պատմության բեմին վրա: Հայոց պատմությունը դյուցազներգություն մըն է հանուն Քրիստոսի և հանուն ազատության: Եվ այդ պատմությունը պետք է ավանդել, սորվեցնել մեր նոր սերունդին, որպեսզի ան ճանչնա ինքզինքը և հպարտ ըլլա իր ազգությամբ:

Ազգերու պատմությունը իրար հաջորդող հանգրվաններու շղթա մըն է: Ապագան կապված է անցյալի ժառանգությանց ներկայի միջոցավ. չտեսնել ու չհասկնալ ներկան, չգնահատել ու չնպաստել անոր զարգացման՝ կնշանակե չաշխատիլ ապագայի համար:

Կխորհինք, թե շգտակար է որդեգրել գործելու այնպիսի եղանակ, որ այսօր ոչ իրագործելի գաղափարները և ծրագիրները արգելք չհանդիսանան ազգապահպանման համազգային ճիգերուն և ծրագիրներուն, որոնց կենսագործումը հնարավոր է մեր օրերուն:

Մենք համրանքով փոքր ենք և ցրված, չունինք ոսկի և արծաթ, չենք կրնար զմեզ աշխարհին պարտադրել զինու զորությամբ: Մեր զենքերը մեր հոգևոր և մշակութային արժեքներն են, որոնցմով պիտի կարողանանք շարունակել իմաստ տալ մեր ազգային գոյությանն: Ու մենք կհավատանք, թե տակավին թաքուն և անսպառ ուժեր կան հայ ազգի հոգեկան ներաշխարհին մեջ: Պեղել հարկ է զանոնք և լույս աշխարհ բերել: Հայ ժողովուրդը տակավին իր խոսքը ունի ըսելու աշխարհին:

Սուրբ Պողոս առաքյալ մեզի կպատվիրե հնազանդ ըլլալ մեկս մյուսին Քրիստոսի երկյուղով, Քրիստոսի սիրով: Արդարև, ով իրավ հավատք և սեր ունի առ Աստված և դեպի սուրբ Եկեղեցին, ան կհարգե, կսիրե իր եղբայրը, անոր մեջ տեսնելով արտահայտությունը իր սեփական ապրումներուն և իր մարտակիցը ի խնդիր իր սեփական իղձերու իրագործումին: Հիշենք կրակե խոսքերը Հովհաննես առաքյալին. «Եթե մեկը ըսե, թե զԱստված կսիրե, բայց իր եղբայրը կատե, անիկա ստուտ է». «ով որ զԱստված կսիրե, կսիրե նաև իր եղբայրը» (Հովհ. Դ 22—21):

1979

Ինչպես Քրիստոս երրորդ օրը մեռելներեն հարություն առավ, այնպես ալ հայ ժողովուրդը երեք տարի հետո հարություն առավ և կոչվեցավ նոր կյանքի, գրեթե հրաշքի համազոր պայմաններու մեջ: 1915-ի Ապրիլին հաջորդեց 1918-ի Մայիսը: Եվ այնպիսի պահու մը, երբ երկրորդ եղեռն մը կսպառնար մեր վերապրող ժողովուրդին, Արևելահայաստանին. արյունաքամ ժողովուրդի մեր զավակները մեկտեղվեցան, բռունցքի մը վերածվեցան անխորտակելի և ստեղծեցին, կոթողեցին հայոց պատմության երկրորդ Ավարայրը՝ Սարդարապատի ճակատամարտը:

Որևէ հայ արվեստագետ արտասահմանի մեջ՝ բանաստեղծ, գրագետ, երաժիշտ կամ նկարիչ, եթե պիտի ուզե իսկապես առընչվիլ հայ ազգային մշակույթին հետ և տեղ մը գրավել, չափով մը գոնե, հայ արվեստի պատմության մեջ, պետք է հերոսական ճիգ ի գործ դնե իր ներշնչումը և ստեղծագործական ավիշը ստանա-

լու՝ արդի ապրող ու զարգացող հայոց հայրենիքի և հայաստանցի ժողովուրդի կյանքի ակունքներեն:

Անհրաժեշտ չէ ամեն գնով և միշտ՝ ազգայինը, հայրենասիրականը շեշտել գեղարվեստական ստեղծագործության մեջ: Վասընգի երբեմն այդ ճանապարհով գեղարվեստականը կրնա վերածվիլ ճառախոսության կամ բարոյախոսության: Գրական գործ մը կրնա շատ ազգայնաշունչ ըլլալ, սակայն եթե արվեստի մակարդակի վրա չէ, կմնա ճառ և ոչ թե արվեստի գործ: Միսաք Մեծարենց նույնքան հայ ազգային բանաստեղծ է, ինչքան Սիամանթոն և գուցե բանով մըն ալ ավելի:

Թող բոլոր ազգերը և պետությունները գնահատեն զիրար իբրև եղբայրներ և օգնեն իրարու այս աշխարհի վրա, որ իր բազում բարիքներով բոլորին կպատկանի հավասարապես, այս արևին տակ, որ բոլորը կլուսավորե հավասարապես, միևնույն Աստուծո օրհնության ներքև, որ բոլորին կբաշխվի հավասարապես:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Երկու խոսք 5
Քսան տարի հետո 7
Ո՞ւր ես Լուսավորիչ 11
Ինչի կը հավատանք 13
Ռուսահայ, թրքահայ 16
Մեր հայրենիքը 17
Հայրենասիրություն 24
Քրիստոնյա ըլլալ 27
Քաջազնունին և մենք 31
Ներքին քաղաքականություն 37
Փոթորիկ 44
Կարոտ հայրենի 46
Նոր աշխարհը 49
Նորը 56
Կենդանի Հայաստանը 60
Իմաստուն մարդ մը 62
Ինչպե՞ս կը սկսինք 65
Ծողակաթ լուսո խորան՝ Էջմիածին 67
Վնասաբեր մի գիրք 70
Հայ ժողովուրդը և իր մայր եկեղեցին 78
Տանն Կիլիկիո Տ. Գարեգին Ա կաթողիկոսի 80-ամյակը 83
Ի սեր մեր եկեղեցու միության 86
Իմ պատասխանը սրբ. Ա. Տ.-ին 91
Ամենուս Հ. Մ. Ը., Մ.-ը 96
Սո՛ւտ է 97
Բնազդ և գիտակցություն 99
Ինչ կը նշանակե դիալեկտիկա 103
Ինչ կը նշանակե «բուրժուա» 106
Ինչ կը նշանակե ոգի 113
Ինչ կը նշանակե իդեալիզմ 119
Մարքսիստը 123
Մտերիմ նամակներ հայ ծնողքներուն 133
1942-ին 137
Նշմարներ՝ Էջմիածնի մասին 139
Նշմարներ 141
Մտածումներ 144

Հատորը կազմեց՝ ՍԱՒՐԵՆ ՎԱՆԵՑԻՆ
Խմբագիր՝ Պ. ՇԱՀԲԱԶՅԱՆ
Տեխն. խմբագիր՝ Դ. Ն. ՍԻՐԵԿԱՆՅԱՆ
Սրբագրիչ՝ Ժ. Մ. ԱԴՈՆՑ

Հանձնված է շարվածքի 20.04.1993 թ.: Ստորագրված է տպագրության 29.07.1993 թ.: Տպագրական 10,25 մամուլ, թուղթ խոր տպագրական, տպաքանակ 3000, 70×108 1/8, պատվեր 72:

Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի տպարան